



Հ.Մ.Ը.Մ.

ՍՈՒՐԻՈՑ ԵՐԱ ԿԱՐՉՈՒՄԻՆ



Մարզաշաբաթ



Հ.Մ.Ը.Մ.

ՄԻԻՐՈՅ ԵՐԶ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՄԱՄՈՒԼԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

2018



ՕՐՀՆԵ՛ՆՔ ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Հայութիւնը սրտի բերկրանքով արձագանգեց Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մէկ դարու հրաշալի գործունէութեան 100 ամեակին:

Սուրիահայեր, հակառակ եօթամեայ տագնապին, անհուն ուրախութեամբ իմացան իրենց սիրելի՛ Հ. Մ. Ը. Մ.ի տօնակատարութեանց առնչութեամբ եւ արդէն սկանատես կամ մասնակից են անոր նախաձեռնութեանց:

Սուրիոյ Շրջանային Վարչութեան բանաւոր զեկոյցին եւ գրաւոր ծրագիրին ճամբով հիացումով ծանօթացայ դարադարձի իրենց գործադրելի ծաւալուն ծրագիրին, որ կը յայտնաբերէր մէկ կողմէ հաւաքական կազմակերպչական լուրջ ու բժախնդիր աշխատանք, միւս կողմէ կը դրսեւորէր անոնց վճռակամութիւնը, ամենայն գեղեցկութեամբ ու արդար հպարտութեամբ, արժանաւորապէս ներկայացնելու հարիւր տարիներու նուիրումի իսկական պատկերը:

Այս շրջագիծին մէջ, աշխատասեղանիս վրայ ունիւմ նաեւ հրատարակութեան պատրաստ Հ. Մ. Ը. Մ.ի գաղափարական վաստակը ամփոփող հատոր մը: Անոր մէջ ընդգրկուած են «Արեւելք» օրաթերթի մարզական շաբաթաթերթի՝ «Մարզաշխարհ»ի խմբագրականներ, որոնք, կէս դարու հեռաւորութեան վրայ, հայ մարմնակրթական մամուլի նոյնքան գնահատելի ծառայութիւնը՝ սուրիահայ երիտասարդ սերունդներու դաստիարակութեան ընթացքը կը գծագրեն մեր տեսադաշտին վրայ:

Հարիւրամեակի եւ սոյն գիրքի հրապարակումին առիթով, գնահատանքս եւ օրհնութիւնս, մտածումներս ու ապրումներս կ'արձանագրեմ որպէս շնորհաւորութիւն Հ. Մ. Ը. Մ.ի մեծ ընտանիքին, մաղթելով անոնց բարի երթ եւ արեւահամ ու պայծառ հորիզոն:

Արդարեւ, հայ ինքնութեան կերտումի դարաւոր փորձառութեան մէջ արտասովոր դպրոց մը կայ, որ իր իւրայատուկ դրոշմն ու ներդրումը ունեցաւ հայ նորահաս սերունդներու դաստիարակչական յոյժ կենսական առաքելութեան մէջ:

Արդէն երիտասարդական իր առաջին հարիւրամեակը յաջողութեամբ ամբողջացուց, այժմ կը պատրաստուի նոր կամքով ու կորովով, նորոգուած խինդով ու խանդով, յարատեւութեան նաւու իր առագաստները պարզած երթալու աւարայրեան հերոսներու գիտակցութեամբ՝ յառաջ:

Հ.Մ.Ը.Մ.ը հարիւր տարի անընդմիջաբար, հայ արիները նահատակութեան ճանապարհէն յաւերժութեան ու անմահութեան առաջնորդելու յանձնառութեամբ, սովորական որակումով բոլոր տեսակի «դպրոցներէն» տարբեր, բարոյական ու կարգապահական բարձր արժանիքներով, առողջ մարմնին, յստակատես մտքին ու պայծառատես հոգիին պարզեւեց բարձրանալու եւ իր հետ վեր՝ դէպի վեհն ու վսեմը բարձրացնելու իտէալը մարմնաւորեց:

Մեր ազգային կեանքի բազմերես ծառայութեանց մէջ ներգրաւուած հայորդիներուն ընտրելագոյնները անկասկած Հ. Մ. Ը. Մ.ի «դպրոց»ին բարի պտուղներն են:

Օրհնե՛նք հարիւրամեայ երիտասարդ ու մեր ժողովուրդը երիտասարդացնող Հ. Մ. Ը. Մ. :

Բիւր յարգանք քեզ եւ օրհնութիւն Հ. Մ. Ը. Մ. :

Աղօթիւք՝
Շահան Արք. Սարգիսեան
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմին

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը 2018-ին բոլորեց իր 100 ամեակը: 1918-ին Հայաստանի Հանրապետութեան կերտումով ծնունդ առաւ Հ.Ս.Ը.Մ.-ը, որ առաջին հերթին ծառայողական աշխատանքով տարագիր հայութեան զաւակներուն տէր կանգնեցաւ, անջատաբար գործող մարզական խումբերը մէկ դրօշի տակ համախմբեց եւ հարիւր տարիներ շարունակ մարմնակրթական ու սկաուտական դաստիարակութեամբ իրերայաջորդ սերունդներուն մօտ վառ պահեց ազգային-եկեղեցական արժէքները եւ փրկեց անոնց այլասերումի ու ձուլումի վտանգէն:

Հ.Ս.Ը.Մ.-ի Սուրբոյ Շրջ. Վարչութեան Մամուլի յանձնախումբը 100 ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս անհրաժեշտ նկատեց յատուկ կարեւորութեամբ լուսարձակի տակ առնել Հ.Ս.Ը.Մ.-ի մարզական եւ սկաուտական կեանքը արտացոլացնող «Արեւելք Մարզաշխարհ» շաբաթաթերթին ունեցած յոյժ կարեւոր դերակատարութիւնը 1957-1963 տարիներուն, յուշ երեկոյ մը կազմակերպելով:

Այս առիթով գեղեցիկ գաղափարը ունեցանք հատորով մը հանրութեան ներկայացնել «Արեւելք Մարզաշխարհ»ի փունջ մը խմբագրականներ, որոնք կը բովանդակեն այժմեական դաստիարակչական նիւթեր եւ հիմնականօրէն կը ձգտին տիպար մարզիկ եւ սկաուտ, մաքուր նկարագիրի տէր հայ երիտասարդներ պատրաստել, անոնց մէջ սերմանելով ազգային ու մարդկային արժէքներ: Քաղուած խմբագրականները ներկայացուած են բնագիրին համաձայն:

Գիրքի հրատարակութեան նպատակն է այսօրուան պատանին եւ երիտասարդը քաջատեղեակ պահել սուրիահայութեան մամուլի հարուստ բովանդակութեան եւ պատառիկներ ներկայացնելով դաստիարակչական եւ ազգային ոգին փոխանցել իրենց:

Մեր խորին շնորհակալութիւնը կ'ուղղենք Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերջ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանին, որ իր հովանաւորութեամբ քաջալեր հանդիսացաւ սոյն նախաձեռնութեան:

Շնորհակալական խօսք Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջ. Վարչութեան, որ ողջունելով այս ձեռնարկի գաղափարը նեցուկ կանգնեցաւ բոլոր աշխատանքներուն:

Բիւր յարգանք Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիր սերունդին եւ հարիւրամեայ երիտասարդ Միութեան շարքերէն ներս ծառայող բոլոր Հ.Մ.Ը.Մ.-ականներուն:

Հ.Մ.Ը.Մ.-ը իր պանծալի պատմութեամբ պատուաբեր անցեալէն կ'ուղղուի դէպի յաղթական ապագայ:

100-ամեակդ շնորհաւոր Հ.Մ.Ը.Մ.: Դալար երթ դէպի նոր հարիւրամեակներ:

Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջ. Վարչութեան
Մամուլի Յանձնախումբ

ՈՂՋՈ՛ՅՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ

Ա.Վռամեան

«Ի ժամանակի դիցն Ամանորայ ամենաբեր նորոց պտղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղոջ պաշտէին՝ յուրախութեան Նաւասարդաւոր»:

(Ագաթանգեղոս)

«Վաղարշ՝ տօն աշխարհախումբ կարգեաց սկզբան ամի նորայ ի մուտ Նաւասարդի»:

(Խորենացի)

Հայ մարզիկը ողջունելու կ'երթամ այսօր:

Բայց ո՞ւր:

Եւ աչքերուս առջեւ, անցեալի խորհրդաւոր մշուշին մէջէն, դանդաղ ու հանդիսաւոր կը բարձրանայ տակաւ վարագոյրը երկու հազարամեայ հնութեան մը:

Եւ հո՛ն հեռու հեռուները, ծովերէն ու սարերէն անդին, Նպատի ստորոտը, Ձիրաւի դաշտին մէջ, Դիցաւանի առջեւ, կ'ընդնշմարեմ յանկարծ Հայաստանի բոլոր ծագերէն թափուած, բիւր բիւրոցը՝ «Տօն աշխարհախումբը»՝ որ եկած է պաշտելու Վանատուր Դիցը, «ի մուտն Նաւասարդի»:

Արքայ եւ Դշխոյ, Քուրմ եւ Քրմանուշ, Նախարար եւ Տիկին, Սեպուհ եւ Դրանիկ, զօրք եւ արհեստաւոր, շինական եւ ծառայ, ամբողջ Հայաստանն է որ խոնուած է այդ օրը հոն՝ ուրախանալու, խաղալու եւ երգելու, մարզելու իր մարմինն ու միտքը:

Զի մեզ պէս թուլամորթ չէին անոնք՝ մեր պապերը, այդ հուժկու եւ ահարկու Արմէնները, որոնք Քրիստոսէ ինը դար առաջ անցան Գայլ գետը եւ խաղաղ ու յամառ թափանցումով մը դէպի առաջ՝ յուշիկ-յուշիկ ստեղծեցին Հայաստանի, Տաւրոսի ու Պարիսարի միջեւ, բարձրանալով մինչեւ Կուր Գետը:

Այդ երկար ու դարեւոր ազգակերտումին մէջ՝ գիտակցութիւնը կրեցին անոնք իրենց ոյժին ու հայ կոչեցին իրենք զիրենք, այսինքն *պէտք* երկրի մը, գոր իրենք ձուլած էին, այլազան եւ իրերամարտ տարրերէ:

Ուժեղ էին անոնք, եւ ինչպէ՛ս գիտէին ուրախանալ:

Ըմբիշներու մրցում, ձիարշաւ, մկանախաղ, վագք եւ քանի քանի խաղեր, որոնց հետքը պահած չէ պատմութիւնը, կը ծառայէին անոնց մարմինը ուժովցնելու եւ գեղեցկացնելու:

Շքեղ ու մեծագանկ մեհեաններ, սփռուած Արածանիի եւ Եփրատի, Երասխի եւ Տիգրիսի գեղածիծաղ հովիտներուն մէջ կամ Վանայ լճին անտառախիտ երիզներուն վրայ, ժամադրավայր էին, դարեր շարունակ, ցեղին երիտասարդութեանը:

Կուպիտ ոյժը չէր միայն որ մեր պապերը բարձրացուց կէս-վաչկատուն, կէս-խաշնարած վիճակէն, իրենց յետագայ քաղաքակրթութեանը:

Գեղեցիկին սերը, բնութեան սերին մէջ գիտցան անոնք գտնել ու պաշտել, աստիճան մը, որուն չկրցինք մենք տակաւին հասնիլ:

Վարդաւառը, ծաղիկներու հանդէսը, ի՛նչ սիրուն ու միամիտ գուրգուրանքով մը կը տօնէին անոնք: *Վարդը* անոնց խորհրդանշանն էր, հայուն ազգային ծաղիկն եղաւ *մանուշակ*ին հետ:

Եւ այդ աշխարհախումբը բազմութեան առջեւ, հին Արամէնը, իր բազուկներուն եւ սրունքներուն ոյժն ու ճարպիկութիւնը չէր միայն որ կու գար ցուցադրելու եւ մարզելու... Ո՛հ:

Գուսաններ՝ բամբիռներու նուագով, պատկառոտ այդ բազմութեան առջեւ կու գային երգելով վերյիշելու իրենց մեծ ու քաջ նախնիքներու գործերը, թէ ինչպէս ծնաւ Վահագն կրակէն ու ծովէն ու վիշապներ քաղեց, թէ ինչպէ՛ս Հայկը յաղթեց Բէլին ու հիմը դրաւ նոր հայրենիքին...

Մեր այսօրուան ախտերուն պէս, արբեցումի եւ կերուխումի, օտար ու լկտի երգերու նուաստիչ մթնոլորտը չկար հոն: Հին հայը գիտէր ուրախանալ:

Դարեր անցան անկէ ետք, մեհեանները անհետացան տաճարներու արշալին առջեւ, բայց ժողովուրդը չորժեց իր հին աստուածներուն:

Ս. Կարապետը չմոռցուց Վահեվահեան տօներն ու դիցաւանի մրցումները, եւ այսօր ալ, քսանեւեօթը դարեր ետք, հայ ժողովուրդը մոռցած չէ իր Նաւասարդը...

Սիւնեցի գեղջուկը նուիրական փոխիւնդը կը կտրէ ամէն տարի Նաւասարդի առաջին օրը, իսկ «Մշու Սուլթան Ս. Կարապետ»ի տօնին, Վարդավառին, հայ գուսանը եւ հայ ըմբիշը կը տնագեն տակաւին մոխիրը հի՛ն հի՛ն աւանդութիւններու...

Բայց տունկը չի մեռնիր, երբ արմատը խոր ու ամուր է, եւ ահա ի յայտ կու գայ նորէն ցեղին խանդն ու կորովը:

Անհուն գորովով ու սփոփանքով է որ կու գամ ծափելու ձեզ, համբուրելու ձեր ճակատը, ո՛վ դուք բոլորդ, պատանիներ եւ երիտասարդներ, որ այսօր օտար ափերուն վրայ, ցեղին աւանդութիւններն են որ կու գաք վերականգնելու:

Որքան մեծ է ձեր բաժինը հայ վերակերտումի ծանրա-ծանր բայց նուիրական գործին մէջ:

Ցեղին ուժեղացումն է, ցեղին գեղեցկացումն է, ցեղին ազնուացումն է որ կը ձեռակերտէք դուք տղա՛ք, յամառ ու պինդ քալեցէ՛ք ձեր ճամբան:

Պատուաստեցէ՛ք զգաստ եւ կայտառ ուրախութիւնը մեր յարկերուն տակ, անողոք վանելով հոնկէ բոլոր ոգիները, ոգելից ըմպելիներէն մինչեւ չարոզի խորհուրդները: Քալեցէ՛ք, տղաք, եւ աչքերնիդ դարձուցէ՛ք պահ մը դէպի Աշտիշատ եւ Դիցաւան, ձեր մեծ պապերուն ստուերներն են որ կը հսկեն ձեր վրայ:

Փա՛ռք եւ ողջո՛յն Նաւասարդեան խաղերուն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 1

ՄԵՐ ՈՒՂԻՆ

Պ. Միսիրեան

Վերջին ժամանակներուն շատ քիչ է թիւը այն թերթերուն, «առաքեալներուն, եւ նոյնիսկ մարգական պաշտօնական մարմիններուն, որոնք կ'երգեն «դաստիարակիչ գործօրինը» մարզի մը, որ աւելի մօտ է երկնքի քան թէ երկրին: Անոնք աչք կը գոցեն այն բոլորին վրայ, որ մեր արդի ընկերութեան մէջ կ'աստիճանագրկէ մարմնամարզը եւ կը խաթարէ հազարաւոր մարզիկներուն կարագիրը: Որով, անոնք չեն տեսներ (կամ չտեսնել կը ձեւացնեն) ոչ մարմնամարզին ընկերային դարմաններ ներմուծելու ձեւը եւ ոչ ալ մարզիկներուն դաստիարակչական պայմաններ տրամադրելու անհրաժեշտութիւնը:

«Մարմնամարզը բարոյական կատարելագործումի դպրոց մըն է: Ան կը կերտէ նկարագիրը, խմբային ոգին եւ քանի մը ուրիշ առաքինութիւններ»: Եւ սակայն... այս կամ այն մարզիկը մրցումի իջնելէ առաջ պայմաններ կը դնէ, նիւթական վարձատրութիւն կ'ակնկալէ կամ կը պահանջէ: Ֆութպոլը կարգապահութեան ոգին կը զարգացնէ, բայց այս երիտասարդ ֆութպոլիստները ոչ ոքի կը հնազանդին: Ոչ Աստուած, ոչ տէր: Անոնք հպարտ են մարզիկ ըլլալուն համար, «հսկաներ» են, որով պէտք է պարտադրեն իրենց կամքը: Փորձի պահէ՞րը, շատ թեթեւ պէտք է ըլլան եւ հանգստաւէտ պայմաններու մէջ:

«Առողջ միտք առողջ մարմնի մէջ»...սակայն դաշտի վրայ մարմնամարզը կը զարգացնէ՞ դատողութիւնն ու տրամաբանութիւնը: Դաշտէն դուրս, մարմնամարզը խորհրդածութեան կ'առաջնորդէ՞: Հարց տուէք մարզիկներուն, հետաքրքրուած են իրենց դաշտով, ակումբով կամ

միութիւնով: Ինչպէ՞ս կազմակերպուած են անոնք: Ինչպէ՞ս հիմնուած: Որոնցմո՞վ կ'առաջնորդուին եւ միջավայրն ու մթնոլորտը ծանօթ պէտք է ըլլայ բոլորին, նոյնիսկ մարզիկներուն:

Մեր ժամանակներուն, մարմնամարզը բազմաթիւ հարցեր կը յուզէ եւ հորիզոններ կը բանայ, բայց ի՞նչ բան կ'երազեն մարզիկները եւ ի՞նչ նիւթերու շուրջ կը խօսին: Մետալին միւս կողմը դիտած, դաստիարակները կամ վարչութիւններն ու մարմինները որքանո՞վ կ'օժանդակեն մարզիկներուն եւ ինչ ուղղութիւն կու տան անոնց:

Միթէ՞ մարզիկները պէտք է անգիտանան վերոյիշեալ բոլոր հարցերը: Երբ որ մարզական միութիւն մը կամ խմբաւորում մը կը ստեղծուի, արդեօ՞ք նպատակը երիտասարդութեան առողջապահական եւ ֆիզիքական տոկունութեան առաջադրանքներ ընելու մէջ կը կայանայ: Պէտք չէ՞ որ մարզիկը տեղեկանայ եւ զինուի բոլոր անոնց դէմ, որոնք անձնական շահերու հետամուտ են եւ ոչ թէ իր բարեկաման գոյավիճակին: Դեռ երկա՞ր սպասելու է կամ արտօնելու, որ դաստիարակներն ու մարմինները իրենց երգը երգեն մարզիկին ընկերային դաստիարակութեան եւ անոր գովաբանութեան առնչութեամբ, երբ իրականութեան մէջ, հակառակ մարզական միութեանց, դպրոցներու (ոմանց) թափած ճիգին, այս դաստիարակութիւնը գրեթէ ոչնչութիւն է, մարզիկը կը մեծնայ միութեան մէջ, խաղալիք դառնալով սուտ առաքեալներուն:

Եւ որո՞ւն է յանցանքը: Անկասկած որ սխալը կարելի չէ մարմնամարզին վերագրել: Ան փաստած է արդէն իր բարեկրթիչ յատկութիւնը, ծնունդ տալով միլիոնաւոր հեղինակաւոր մարզիկներուն, որոնք անոր մէջ գտած են «պայման» մը, որ զիրենք դարձուցած է աւելի տոկուն, աւելի ձկուն կամ աւելի արագ: Բայց անոնք չեն բաւարարուած

միայն իրենց մարմինը մարզելով, անոնք վերլուծած են մարմնամարզը, դիմած են անոր բուն աղբիւրին եւ օգտագործած են զայն իրենց յառաջդիմութեան համար:

Մարմնամարզին համբարը տարիէ տարի ծաւալ կը ստանայ: Միլիոնաւոր մարդիկ կան, որոնք միայն մարզանքով կը զբաղին: Ազգային կամ միջազգային կեանքին մէջ զիրենք հետաքրքրող միակ լուրը մարզական արդիւնքներն են: Անոնք կ'ապրին նախնական դիցաբանութեամբ մը, որ իրենց համար ամէն ինչ կը ներկայացնէ. կրօնք, բարոյական, ընկերային վարդապետութիւն, քաղաքականութիւն:

Եւ ինչպէ՞ս չայսպանել, որ մարդիկ կ'ուզեն մտային այս վիճակէն օգտուիլ եւ անձնական շահեր հետապնդել:

Ժողովուրդին մարզական դաստիարակութիւնը կը դառնայ հանրային առողջութեան սատարող գործ մը ուրեմն պարտաւորիչ:

Մարմնամարզը քանի մը առանձնաշնորհեալներու ժամանցը չէ այլեւս: Ան մուտք գործած է մասսային կեանքէն ներս:

Թերթին պարտականութիւնն է ամբողջ ոյժերովը օգնել այն վեհ շարժումին, որուն ձեռնարկած են մարզական միութիւններն ու դպրոցները:

Ո՛չ, մարմնամարզը կրօնք մը չէ, ոչ ալ բարոյագիտութիւն մը: Ան կրնայ պատշաճիլ որեւէ կրօնքի, բարոյագիտութեան կամ ընկերային վարդապետութեան...

Հոս է որ պիտի գործէ անկողմնակալ եւ անկեղծ մարզաթերթը: Ան պիտի ձուլուի մասսային հետ, պիտի տայ անոր մարմնամարզին իսկական ըմբռնումն ու ուղին, դիմակագերծ ընէ սուտ առաքեալները՝ ի լոյս աշխարհ բերելով անոնց կեղծիքն ու վնասակար գործունէութիւնը, սատարէ ազգային նկարագրի վերելքին եւ զօրավիզ կանգ-

նի բարձր եւ շինիչ գաղափարներով տոգորուած ամէն
մարզական շարժումի:

Այս պիտի ըլլայ նաեւ մեր առաջադրանքն ու նպա-
տակը:

* * *

«Արեւելք Մարզաշխարհ» Ա. տարի, թիւ 1

ՇՈՒԷՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐՉԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Կարօ Շահինեան

Շուէտական մարզանքը մուտք գործած է մեր մէջ 90 ական թուականներուն, իր նախնական ձեւերով:

Միացեալ Ընկերութեան տնօրէններէն Մ. Փորթուգալեան եւ Մկրտիչ Սարեան, Թուրքիոյ մէջ, իրենց ենթակայ վարժարաններուն դասացուցակին մէջ կարելոր տեղ մը տուած են շուէտական մարմնամարզին, իր նախնական ձեւերով: Այդ թուականներէն առաջ, ինչպէս Եւրոպայի, նմանապէս մեր մէջ, կարելոր տեղ գրաւած եւ ընդհանրացած էր միայն ծանր մարմնամարզը (ագրոպասի): Սակայն երկու տասնեակ տարի յետոյ, 1908-ին գրեթէ ամէն տեղ, միաժամանակ ընդունուեցաւ Լինկի մարմնամարզի եղանակը, որ ըսել է Շուէտական մարզանքը:

Մեր մէջ այս նոր մարզանքին ջատագովող եւ տարածիչները եղած են փրոֆ. Պ.Մելիքեան եւ Յ.Թ.Հինդլեան: Փրոֆ. Պ.Մելիքեանը, 1908-ին, ընդունելով Իզմիրի Մետրոպեան Վարժարանին մարմնամարզի ուսուցչութեան պաշտօնը, իր առաջին գործն եղաւ դարձնել մարզարանի նախկին ծանր մարմնամարզի գործիքները՝ *պարփիքս*, *բարալէլ օղակներ* եւ ծանրաբարձրութեան գործիքներ, տեղի տալով աշակերտութեան դժգոհութեան եւ յուսախաբութեան:

Մենք, աշակերտներս դժգոհութեամբ կը հետեւէինք փրոֆ. Մելիքեանի միօրինակ եւ մեզ համար միանգամայն ձանձրանալի շուէտական ռիթմիք մարզանքներուն: Եւ այնքան յառաջ գացինք, որ սկսանք ամբաստանել այս նոր

ուսուցչապետը, որ իբր թէ ագրոպաթիք մարմնամարզե-
զադափար չունենալուն համար է որ այդ մարզանքը
արգիլեց ու գործիքները փճացուց:

Այսօր, մօտ կէս դար անցած է այդ թուականէն ու մենք,
հայերս, կրնանք պարծենալ որ շատ մը քաղաքակիրթ
ազգերու կարգին առաջիններէն կրնանք համարուիլ, որ
շուէտական մանկավարժական եղանակը իւրացուցած եւ
գործադրած ենք մեր վարժարաններուն մէջ:

Ինչպէս յայտնի է շուէտական մարզանքը կազմուած է
գիտական եւ մանկավարժական սկզբունքներով, ուր նկա-
տի առնուած են՝ բնախօսութիւն, կենսաբանութիւն,
մարդակազմութիւն (սննդառութիւն, շնչառութիւն, արեան
շրջանառութիւն), ջրաբուժութիւն, յօդագարութիւն, հոգե-
բանութիւն, գեղեցկագիտութիւն եւայլն:

Այս նոր մարմնամարզի ջատագովներն ու տարա-
ծողները եղած են շարք մը գիտուններ եւ փրոֆեսորներ,
ինչպէս Լինկ, Նիւկենս, Լըռու, Տոքթ. Փօլ, Գլենարա եւ Էմիլ
Անտրէ:

Եզրակացութիւն.- թէեւ շուէտական մարզանքը
կազմուած է գիտական սկզբունքներով, բայց ան մատչելի է
բոլորին, իր պարզ մեթոտով եւ կանոններով: Սեռը,
տարիքը, ժամանակը, միջավայրը եւ այլ պարագաներ բնաւ
արգելքներ չեն այս մարզանքը իւրացնելու եւ գործադրելու
անհատապէս թէ հաւաքաբար: Ինչպէս տկար կամ հաշ-
մանդամ անձ մը, նոյնպէս առողջ մարդիկ, մանուկ, հասուն
թէ ծեր, ի վիճակի են այս մարզանքը կատարելու տունին
մէջ, գրասենեակի մը անկիւնը, բացօդեայ տեղ մը, առանց
հագուստ կապուստի եւ մարզական այլ ձեւականութեանց
մտահոգութիւնն ունենալու: Իսկ անոր արդիւնքը եւ օգտա-
կարութիւնը գերազանց է հաւասարապէս բոլորին համար
ալ: Եւ որ գլխաւորն է, այս մարզանքը գերծ է ա յն վտանգ-

ներէն եւ արկածներէն, որոնք յաճախակի են մարզական ուրիշ խաղերու եւ ճիւղերու մէջ:

Կարելի է վստահօրէն պնդել, որ շուէտական մարզանքը նախադուռն է կամ նախապայմանը միւս բոլոր մարզանքներուն:

Նոյնիսկ մարզանքի մասնագիտութեան հետեւողները նախ եւ առաջ պարտաւոր են հետեւելու շուէտականին՝ իրենց մարմնի բոլոր մասերը հաւասարապէս աճեցնելու, զարգացնելու եւ զօրացնելու համար: Որովհետեւ անոր եղանակը եւ հրահանգները այնպէս մը դասաւորուած են, որ հնարաւորութիւն կը ստեղծեն ամէն մարմնի կազմուածքին յարմար եւ արդիւնաւէտ շարժումներ ընելու, բնախօսական ներդաշնակութեամբ:

Տարիներու փորձերով եւ սերունդներուն մարմնակրթութեամբ հաստատուած է, որ շուէտական մարզանքը ընդունակ է շնչառութիւնը զարգացնելու, արեան շրջանառութիւնը կանոնաւորելու, մարսողութիւնը դիւրացնելու, ինչպէս նաեւ առաջին առնելու շատ մը հիւանդութեանց՝ պահպանելով մարմնի բնական վիճակը, որ ըսել է առողջութիւնը: Ու դարձեալ այս մարզանքին շնորհիւ է, որ ջղային դրութիւնը կը զօրանայ, շարժման մէջ դնելով մկանները: Արդէն յայտնի է, որ առանց ջիղերու որեւէ շարժում, մանաւանդ մարզական բարդ շարժումներ կարելի չէ ընել: Ջիղերն են որ կը հրամայեն մկաններուն, զանոնք մղելով բազմազան շարժումներու: Աւելին ըլլալով՝ շուէտական թեթեւ ու կանոնաւոր մարզանքը ուղղակի բուժակ մըն է, մարմնական եւ մտային յոգնածութիւնը փարատելու համար:

Իր բազմապիսի դրական արդիւնքներով շուէտական մարզանքը կա՛յ ու կը մնայ իբրեւ մարմնակրթական գիտական եւ մանկավարժական ամէնէն օգտակար եւ

ամենէն դիրամատչելի մարզական եղանակ մը, որ լայնօրէն տարածուած եւ ընդունուած է քաղաքակիրթ համայն մարդկութեան կողմէ:

* * *

«Արեւելք Մարզաշխարհ» Ա. տարի, թիւ 7

ԶՕՐԱԻՈՐ ԸԼԼԱԼ

Պ. Միսիրեան

Այս է մարզիկին իրական երազը: Միշտ ատելի գորաւոր ըլլալ: Մարզական որեւէ ճիւղի մէջ, գորաւորագոյն անձը կը կոչուի ախոյեան:

Ոյժը նախ կու գայ կենսունակութենէն: Մարզիկ մը կը զարգացնէ իր կենսունակութիւնը: Մարզիկը, կ'ըսեն, ամենէն առաջ «ֆիզիքական ճիգին ուժգնութիւնն է»: Ճիշդ է: Իսկական մարզիկը, ամբողջ ոյժը ի գործ կը դնէ: Ոյժը կը տիրապետէ եւ հիացումի առիթ կու տայ: Այս ճիգը կը պատկերանայ, կոփամարտիկի մը հզօրագոյն թափին մէջ մրցումի վերջաւորութեան, կամ վազողի մը վերջնասույրին, կարմիր թելէն քանի մը մէթր առաջ: Մարզիկ մը, որ ամբողջական ոյժը նժարին մէջ չի նետեր, կը պախարակուի: Մարմնամարզի մէջ, պախարակումի գագաթնակէտը կեղծիքն է: Իսկական մարզիկը, որ դիմափոխ ընկերութեան մը ախտերէն վարակուած չէ, ինքզինքը գէշ պիտի զգայ, կենսունակութիւնը կորսնցուցած միջավայրի մը մէջ:

Աշխատի՛լ: Ահա նախապայմանը կեանքի բնական ընթացքին՝ զտարիւնի մը համար, որ անկարող է «կէս գործ կատարել»: Չի կրնար ըմբռնել՝ թէ մարդ կեանքին հանդէպ ինչպէս յոգնածութեան նշաններ կրնայ ցոյց տալ, որեւէ բան չըրած, պայքարի մտնելէ առաջ: Մարմնամարզի ոգին, ապրելու տենչին մեծութիւնն է, որ առարկութիւն չի վերցնէր: Ան կը պարտադրէ կեանքի կշռոյթ մը, որ երբեք չի կրնար յարմարիլ բարոյաւքուած երիտասարդներուն, որոնք այլեւս որեւէ բանի հաւատք չեն ընծայեր: Մարզական չափա-

տրութիւնը գոյութիւն չունի: Խնդիրը չի կայանար աճապարանքի մէջ, սակայն մարզական կեանքը չի կրնար դանդաղութեան հետ հաշտ երթալ: Արիւնը արագ կը շրջագայի շարժման մէջ եղող մկաններուն մէջ: Արագութիւնը՝ շարժումը ազնուացնող մասն է: Վազքի ժամանակ քայլերը գեղեցիկ չեն երեւնար թէ որ որոշ թափ մը չունենան:

Ոյժը՝ ինքն իր վրայ ամբողջական տիրապետութիւն ունենալն է, այսինքն՝ ինքզինքը զսպել կարենալ, մրցումին կամ վազքին տէր դառնալու համար, պէտք է հարիւր անգամ կրկնել նոյն շարժումը, գունդը կամ սկաւառակը քսան սանթիմէթը աւելի հեռուն նետելու համար: Հարկ է միտքը վարժեցնել այն կարգադրութեան, որ հինգ խաղցողներուն մղում կու տայ հակառակորդին կողովին տակ: Կռիւի ամենատաք շրջանին, ձախ-աջ հարուածել գիտական պարզարիւնութեամբ: Դէմ դիմաց մնալով յառաջապահին հետ, որ տասը մէթրէն գնդակը կը քաշէ, նետուիլ ճիշդ յարմար պահուն, ճշգրիտ կէտին, ուր շանթահարիչ գնդակը պիտի զսպուի ձեռքով: Ինչ զօրութիւն: Իրաւարարը *օֆ-սայտ* կը սուլէ յառաջապահին ի վնաս: Ան սխալած է: Յառաջապահը կ'ուզէ բողոքել, երբ ընկերներէն մէկը կը լռեցնէ զայն: Յառաջապահը կը վանէ իր բարկութիւնը, անշուշտ կիրքը կրնայ յաղթել եւ շահը ապականել մարզական ոգին, սակայն մարզադաշտին վրայ, ասիկա յանցանք մըն է բոլորին աչքին, նոյնիսկ յանցաւորին:

Տէրը ըլլալ իր սեփական մարմնին, հոգիին, այս է մարզիկին էական փառամոլութիւնը-աւելորդ, ջղային շարժումները, որքան շուտ կը նկատուին մարզիկի մը կողմէ: Ամենօրեայ կեանքին մէջ, իսկական մարզիկ մը չանգիտանար ոչ լքում եւ ոչ կիրք, սակայն անոր կամքի հաւանութեան

ենթարկուելու ատակութիւնը անկասկածօրէն աւելի մեծ է, եթէ վարժուած է մարմնամարզի ոգին սիրել: Երբ ան մարմնական ոյժի մասին կը խօսի, չի մտածեր ոչ մկաններ խաղացնելու եւ ոչ ալ կուրծքը ուռեցնելու մասին, այլ բարելաւելու իր արագութիւնը, տոկունութիւնը, ճկունութիւնը: Երբ կը խօսի մտային ոյժի շուրջ, չի մտածեր «ուշիմ ըլլալու» մասին: Որոշ պահերուն, այս արտայայտութիւնը ոչինչ կը նշանակէ: Կարելորը մրցումի մը կամ գործողութեան մը ընթացքին, որոշումի պահերն են: Չի բաւեր վազվզել դաշտին վրայ, պէտք է նպատակակէտին ճամբան գտնել: Միակ ճամբան, որ դէպի նպատակակէտ կ'առաջնորդէ: Գալով նկարագրի ոյժին, մարզիկը գիտէ թէ ինչ ըսել կ'ուզէ, երբ ակռաները սեղմած է մրցումը չլքելու համար, կամ միութեան պատիւը փրկելու: Ուրիշ ոեւէ մէկէ աւելի լաւ գիտէ արգելքին վրայ գրոհ տալ:

Բայց, ինքնագսպումը ոչինչ կը դառնայ, եթէ գերազանցելու բաղձանք չկայ: Իսկական մարզիկը կը լռեցնէ նախանձը եւ անվերապահօրէն կը հիանայ «ձիրք ունեցողին վրայ»: Չկայ մարմնամարզ՝ առանց գլելու տենչին: Աւելի՛ արագ, աւելի՛ բարձր, աւելի՛ զօրաւոր: Գերազանցելու այս բաղձանքը բնագոյաբար արհամարհել կու տայ ամէն ինչ, որ կրնայ սպառնալ ընկերութեան մը կազմին, կ'արհամարհէ շահելու մարմաջը, որ ծնունդ է ամենացած մղումներու եւ երբեք չի ձգտիր մեծութեան ու վեհութեան:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 13

ՏԻԶԻՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շաքէ Անտիլեան

Ոյժ բառը պէտք է պաշտամունքի առարկայ եղած ըլլայ մեզի:

Դարերու ընթացքին եւ նոյնիսկ հիմա, այն ժողովուրդը, որ ոյժ չունի չի կրնար ոչ միայն յարգանք պարտադրել իր թշնամիներուն եւ բարեկամներուն, այլեւ չի կրնար տէր կանգնիլ իր իրաւունքներուն եւ ինքնաբերաբար կը դադրի գոյութիւն ունենալէ իբրեւ ազգ: Եթէ ժողովուրդ մը ոյժի, կորովի գիտակցութիւն չունենայ, չի կրնար բարձրանալ, զարգանալ եւ հետեւիլ իր դարու պահանջներուն:

Եւ որովհետեւ մենք չունինք ոյժ ներկայացնող պետութիւն մը, հայ ոյժը այսօր կազմակերպուած կերպով ի յայտ կու գայ տղոց համար Հ.Մ.Ը.Մ.-ի միջոցաւ, իսկ աղջիկներու համար Հ.Մ.Ը.Մ.-ի որպէս քոյր կազմակերպութիւն՝ Օ. Խաչի Արծուիկներու միջոցաւ:

Մարմնակրթանքը՝ ոչ միայն ֆիզիքապէս կրթուիլ, այլ նաեւ իր մէջ կ'առնէ հոգեպէս եւ բարոյապէս կրթուելու դաստիարակութիւնը:

Ուստի հարց տանք թէ կեանքի մէջ մարմնակրթանքը ի՞նչ կարեւորութիւն ունի... մարմնակրթանք բառը չի նշանակեր միայն մարզանքի միջոցաւ մարմինը մարզել, մկանները զօրացնել եւ առողջական վիճակը բարելաւել, այլ՝ իրականութեան մէջ շատ ընդարձակ է անոր օգտակարութիւնը: Ան մեծ չափով կ'ազդէ անձի մը մտքին, բնաւորութեան եւ ալ աւելի անոր ազդեցութիւնը անհատականութեան զարգացման վրայ:

Առնենք առաջին անգամ խաղը՝ մարմնակրթանքի ամենապարզ ձեւն է: Խաղի միջոցաւ կը կազմուին մրցում-

ներ՝ խումբերու միջեւ անոնք իրարմէ կրնան բնորոշուիլ իրենց կանոններով եւ մասնագիտականութեամբ: Ամէն մարգախաղ նոյն արդիւնքին չի յանգիր, հոգեբանական կամ մարմնակրթական նոյն ազդեցութիւնը չի գործեր, ուստի՝ խաղերն ալ բաժնուած են զանազան մասերու:

Մանկական եւ Դպրոցական Խաղեր.-

Յիշեալ խաղերը շատ անհրաժեշտ են տղոց, այսինքն՝ աշակերտներու: Այս խաղերն են որ ենթական կը պատրաստեն կեանքին, ներմուծելով անոր մէջ ընկերական կեանքի սկզբունքները: Նման խաղերու մէջ է, որ տղան պիտի չափէ իր ոյժը եւ պիտի ճանչնայ իր արժէքը, իր առաւելութիւններն ու տկարութիւնները եւ աշխատի զանոնք դարմանել՝ իր ընկերներու մակարդակին, այսինքն՝ աստիճանին հասնելու համար: Խաղի միջոցին է, որ կը վարժուինք կարգապահութեան՝ ենթարկուելով խաղի օրէնքներուն:

Խմբական Խաղեր.-

Կը նպաստեն համաձայնաբար եւ միասնաբար յաղթահարելու կեանքի դժուարութիւններուն:

Անհատական Խաղեր.-

Կը ներշնչեն ինքնավստահութիւն եւ կը զարգացնեն ենթակային անհատականութիւնը:

Պայքարի Խաղեր.-

Օրինակ կոփամարտը մարդը կը պատրաստէ տոկալու ցաւերու եւ դժուարութեանց:

Ընդհանուր առմամբ մարմնակրթանքը կը զօրացնէ ֆիզիքականը, կ'ազդէ բարոյականին վրայ կը բարելաւէ բընաւորութիւնը եւ մանաւանդ կը զարգացնէ մտային յատկութիւնները:

Արդ՝ ո՞վ կրնայ ժխտել, որ վազքը, գնդախաղը, լուդո-դոութիւնը մեծապէս կ'օժանդակեն ֆիզիքականի բարե-

լիաման եւ ուժեղացման, ենթակային տալով արագավարժութիւն, առաձգականութիւն, տոկունութիւն, ոյժ եւ ճշգրտութիւն, ինչպէս նաեւ մարմնի եւ ներքին գործարաններու գործունէութեան կանոնաւորում:

Խաղը եւ մարզանքը մեր սովորութիւնները փոփոխութեան կ'ենթարկեն եւ պահանջուած պայմաններուն կը յարմարցնեն, օրինակ,- կը պարտադրեն որ մարզիկը կանուխ քնանայ, հանգիստ ընէ, ուտելիքին ուշադրութիւն դարձնէ, յաճախ լոզանք առնէ, ապա թէ ոչ ան պիտի չկարենայ տոկալ խաղերու յոգնութեան:

Մարնակրթանքի բարիքը ամէնէն աւելի ի յայտ կու գայ մարզիկի նկարագրին ազնուացման տեսակէտով: Օրինակ- ձեր ենթարկումը խաղի պարտադրած կարգապահական կանոններուն: Իր նպատակը իրականացնելու համար ինքզինք կը զրկէ բազմաթիւ հաճոյքներէ, մինչդեռ միւս կողմէ կը դառնայ յարատեւող եւ քաջ, մարմինը մարզուելով՝ միտքը կը դառնայ ողջախոհ, ուստի՝ կարող կ'ըլլայ սիրել ամէն ինչ եւ ապրիլ չափաւորութեան սահմանին մէջ:

Արդ՝ ով հայ ծնո՛ղք, յանձնէ՛ զաւակդ Հ.Մ.Ը.Մ.-ի, որպէսզի ան մարզուի եւ ֆիզիքապէս եւ հոգեպէս:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 23

Անձնուէր Ղեկավարներ

Կարօ Շահինեան

Անձնուիրութիւնը մարդու մը ամէնէն մեծ ու յատկանշական առաքինութիւններէն մէկն է: Ուրիշի մը երջանկութեանը եւ բարօրութեանը համար մտածող, աշխատող եւ նուիրուող անհատը, ամէնուն կողմէ կը սիրուի, կը յարգուի, այդպիսիները միշտ ժողովուրդներու կողմէ կը փնտռուին եւ կ'ընտրուին իբրեւ ղեկավարներ եւ կամ առաջնորդներ:

Հայ Ազգը անցեալին եւ ներկայիս այդպիսի անձնուէր ղեկավարներ եւ առաջնորդներ ունեցած է, որոնք իրենց ունեցած ֆիզիքական, մտային եւ նիւթական պաշարը եւ կարողութիւնը տրամադրած եւ ի սպաս դրած են իրենց ժողովուրդին բարօրութեանը եւ օգուտին համար: Ճշմարիտ ազգասէր եւ անձնուէր ղեկավարները անոնք են, որոնք մէկդի դրած իրենց անձնական համոզումները, նախասիրութիւնները, շահերը եւ կամ բարեկամական եւ խնամիական կապերը, միայն ու միայն կը նուիրուին այն ժողովուրդին կամ դասին շահերուն, որուն ղեկավարելու պաշտօնը վստահած են իրեն:

Անցեալին այսպիսի ղեկավարներ ունեցած է նաեւ հայ մարմնակրթութիւնը, որոնց անշահախնդիր եւ ազգանուէր ծառայութիւնը միութեանս պատմութեան մէջ արձանագրուած է ոսկի տառերով:

Հայ մարմնակրթական Ընդհ. Միութեան անձնուէր ղեկավարներու շարքին հոս կ'ուզեմ յիշատակել, ի մէջ այլոց, երեք ուխտապահներու անունները, որոնք ամէն բան զոհեցին հայ նոր սերունդին, ֆիզիքապէս, մտաւորապէս եւ

հոգեպէս դաստիարակութեան գործին համար: Այդ ազգասէր ուխտեալները կը կոչուէին Շաւարշ Քրիսեան, Վահան Չերազ եւ Գրիգոր Յակոբեան: Ասոնցմէ առաջին երկուքը սոյն նպատակին համար նահատակուելով, գործնականապէս նոր սերունդին օրինակ հանդիսացան անձնագոհութեան վեհ գաղափարով: Իսկ վերջնոյն գոհողութիւնները ամէն հին Հ.Մ.Ը.Մ.-ականի ծանօթ է: Ան թէև բախտը ունեցաւ իր ցանած սերմերուն արդիւնքը քաղելու արտասահմանի մէջ, բայց իր մուրազին չհասաւ, աչքերը փակեց օտար հողի վրայ:

Հայ Մարմնակրթութիւնը իր շարքերուն մէջ այսպիսի անձնուէր մարզիկներու, մարզիչներու եւ սկաուտներու շարան մը ունեցած է, որոնք զանազան առիթներով մեծ ծառայութիւններ մատուցած են Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, որ ըսել է հայ ժողովուրդին:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 26

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹՅՒՆԸ

Լ. Մասպանաճեան

Մեր խօսքը 6 ամիսներէ ի վեր լոյս տեսնող «Արեւելք Մարգաշխարհ»ի մասին է:

«Արեւելք Մարգաշխարհ», շաբաթաթերթին հրատարակութիւնը պահանջ մըն էր մեր շրջանին համար, հոն ցոլացնելու ընդհանրապէս Սուրիոյ եւ ըստ կարելոյն միջազգային մարզական կեանքը, եւ մասնաւորապէս Հ.Ս.Ը.Մ.-ի մասնաճիւղերու գործունէութիւնն ու մարզական նուաճումները:

Հայ կեանքին մէջ մարզական մամուլը կը սկսի 1910 թուականներուն Պոլսոյ մէջ, գլխաւորութեամբ Շաւարշ Բըրիսեանի եւ ափ մը մարզասէր հայ երիտասարդներու: Դժբախտաբար 1915ի արհաւիրքի օրերը վերջ կու տան «Մարմնամարզ»ին եւ հրատարակիչներուն:

Մինչեւ այսօր ալ հայ իրականութեան մէջ 1910-14 Պոլսոյ մէջ հրատարակուող «Մարմնամարզ»ի տարողութիւնն ու բովանդակութիւնը ունեցող մարզաթերթ եթէ ըսենք թէ չունեցանք եւ չունինք, սխալած չենք ըլլար:

Սփիւռքի եւ մասնաւորաբար Հ.Ս.Ը.Մ.-ի քառասնամեայ գոյութեան եւ գործունէութեան պատմութիւնը գրի առնելու համար վաղը պէտք պիտի ըլլայ քաղաքէ քաղաք պտտիլ, գոյութիւն ունեցող կամ պատմութեան անցած մարզական միութեանց արխիւները -եթէ կան- մէկիկ մէկիկ աչքէ անցնել:

Բարեբախտաբար այս շատ կարեւոր եւ հիմնական աշխատանքը Հ.Ս.Ը.Մ.-ի Շրջանային Վարչութիւնը յանձն առնելով նիւթական եւ բարոյական ամէն զոհողութիւն մեր

շրջանի Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղերու 1925-էն սկսած գործունէութիւնը կրցած է կարելի մանրամասնութեամբ ամփոփել եւ մէկտեղել:

Այս տարի Հ.Մ.Ը.Մ.-ի քառասնամեակի առթիւ «Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.»ի անունով խնամուած եւ պատկերազարդ հատոր մը պիտի հրատարակուի, ուր ամփոփուած պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ.-ի ամբողջ պատմութիւնը:

Կ'ըսեն, կը քննադատեն թէ՛ «Արեւելք Մարգաշխարհ»ը բովանդակութեամբ տկար է: Դիտել կու տան թէ՛ հրապուրիչ չէ, կը գանգատին, որ գունաւոր պատկերներ չունի եւ ինչու չէ «Նոր Կեանք»ի նման իր էջերը չի տրամադրեր լայնքով ու երկայնքով հոլիվուտի կիսամերկ *արթիստներուն*:

Սիրելի ընթերցող, մանուկ մը խնամելով, սնուցանելով, գուրգուրալով է, որ հասակ կ'առնէ ու կը մեծնայ:

Ներկայ նիւթական եւ բարոյական պայմաններուն մէջ պէտք չէ ակնկալել, որ կրնանք եւրոպական չափանիշով մարզական թերթ ունենալ: Եւ երբեք ձեր մտքէն իսկ միանցնէք, որ «Արեւելք Մարգաշխարհ»ը հայելին ու ննջարանը կրնայ ըլլալ սինեմայի արթիստներուն: «Արեւելք Մարգաշխարհ»ը պիտի անդրադառնայ ի հարկէ շարժանկարի աշխարհին, ներկայացնելով շաբթուայ ժապաւէններու տեսութիւնները եւ օրը օրին պիտի տայ օտար եւ հայ արուեստագէտներու կենսագրութիւններն ու անոնց յաջողութիւնները: «Մարգաշխարհ»ի զարգացումն ու գոյատեւումը կախում ունի իր ընթերցողներու իրեն հանդէպ ցոյց տուած հոգածութենէն, նիւթական եւ բարոյական օժանդակութենէն:

Եթէ մարգասէր հասարակութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.-ի անդամները *Արեւելք Մարգաշխարհը* կ'ուզեն տեսնել որոշ բարձրութեան վրայ, ինչ որ կասկածէ վեր է, որ այս թերթը

յարատեւ է եւ դառնայ սփիւոքի հայ մարզական լուսագոյն թերթերէն մին, թող իրենց առաջին պարտականութիւնը նկատեն շաբաթը մէկ հաստ գնել:

Խորապէս համոզուած ենք, որ Պէյրութի *Ազդակ Մարզականը* եւ Հալէպի *Արեւելք Մարզաշխարհը* մեծ դեր ունին կատարելիք մեր երկու մեծ գաղութներուն մէջ:

Մարզական, սկաուտական շարժումներու եւ գիտելիքներու առնչութեամբ այս գոյգ թերթերը մեր մարզիկներու մարզական եւ մանաւանդ աթլէթի խաղերու ուսուցման գործին մէջ մեծ ծառայութիւններ կրնան մատուցանել: Պէտք է անվերապահօրէն քաջալերենք այս գոյգ հրատարակութիւնները, որպէսզի անոնք ինքնաբաւ դառնալով կարողանան օրէ օր զարգանալ, ճոխանալ եւ աւելի բովանդակալից դառնալ:

* * *

«Արեւելք Մարզաշխարհ» Ա. տարի, թիւ 27

ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Կարօ Շահինեան
Պ.Այրեւ

«Մարգաշխարհ»ի 29 Հոկտեմբերի թիւին մէջ, վերի խորագիրը ստորագրած է Վ. Նաւասարդ:

Հին ցաւ եւ հին վերք: Պարապ տեղը մենք մարզիկներս տարիներէ ի վեր կը պոռանք կոկորդնիս պատռելու աստիճան, թէ մենք հայերս աշխարհի առաջին մարմնակրթութեան հիմնադիրներէն եղած ենք, պարապ տեղը կը գրենք թէ Թուրքիոյ մէջ մենք եղած ենք մարմնամարզի հիմնարկուն եւ նոյնիսկ օտարներու ուսուցիչները: Պարապ տեղը կը խօսինք թէ՛ ասկէ երեք քառորդ դար առաջ տակաւին միացեալ ընկերութեան շրջանին Թրքահայաստանի յետամնաց գաւառներուն մէջ իսկ հայ վարժարաններու մէջ մարմնակրթական մեթոտը որդեգրուած էր: Միացեալ ընկերութեան տնօրէններ, Փորթուքալեան, Մ. Սարեան, Նաթանեան, Վանի Վարժապետանոցի եւ Կեդրոնականի, Էրզրումի, Սանասարեանի, Մուշի, Ս. Կարապետի, Հաճընի, Այնթապի, Տարսոնի, եւայլն. վարժարաններու դասացուցակի մաս կազմած է մարմնամարզը: Ցաւալի է մանաւանդ ներկայ դարուս մեր վարժարաններու դասացուցակներէն մարմնամարզի դասաւանդութեան բացակայութիւնը հաստատել:

Ազգապահպանում կը հոլովենք միշտ, փրկութիւն նոր սերունդի՝ կ'աղաղակենք, բայց ամէն մարդ իր գիտցած կերպով կը վարէ ճակատագիրը հայ ազգի ապագան եղող մեր նոր սերունդին դաստիարակութիւնը: Մոռնանք անցեալը. գէթ օրինակ առնէ մեր յարգելի ուսումնական խորհուրդը ներկայէն, երբ ամէն Ազգ ներկայիս այնքան մեծ

կարեւորութիւն կու տայ մարմնակրթութեան, ամէն տեղ յանկերգ եղած է սա խօսքը «Առողջ մարմին Առողջ մտքի մէջ», սակայն գործնականի չէ վերածուած: Մենք պիտի թելադրենք ու մաղթենք մեր մարզիչներուն գրել այս մասին: Վ. Նաւասարդի օրինակին հետեւիլ, եւ հող պատրաստել մարմնակրթանքը պարտադիր դարձնելու մեր վարժարաններէն ներս:

Զօրաւոր եւ առողջ սերունդ մը ունենալու համար պէտք է ֆիզիքականի հոգ տանիլ: Մարզանքը պիտի նպաստէ միեւնոյն ատեն հայ ցեղի մարմնական եւ բարոյական ազնուացման:

«Հայ Սկաուտ»ը կ'ըսէ,- Ուրիշ ժողովուրդներու համար մարմնակրթանքը կրնայ նկատուիլ եթէ ոչ պերճանքի այլ հաճելի եւ օգտակար ժամանցի միջոց մը: Եւ մեզ հայերուս համար մարմնակրթանքի եւ մարզանքի հաւաքական խաղերը հաճելիին եւ օգտակարին վրայ աւելցուցած են առաջին օրէն սկսեալ ազգային մեծ պարտականութեան խորհուրդը:

«Հայ մարզական շարժումը երբեք նպատակ չէ ունեցած գոհանալ միայն ու միայն մարզելով մարմինը.- այլ միեւնոյն ատեն ան նկատուած է հայ անհատին մէջ ազգային կորովը, գործակցութեան, համերաշխութեան ոգին, ազգային հրպարտութիւնը զարգացնելու ուժեղ, անսայթաք միջոցներէն մէկը եւ լաւագոյնը»:

Հայ մարմնակրթութիւնը պատնէշ մըն է ուժացման եւ օտարացման հզօր ազդեցութիւններուն դէմ, հայուն դիմադրական կորովը պահելու եւ բարձրացնելու, իսկ անոր խարխիւր կը կազմէ Հայ Վարժարանը: Անկէ է որ նոր սերունդը պիտի ստանայ սէր դէպի մարմնակրթանքը: Անպատասխանատուութիւն է, չըսելու համար դաւաճանութիւն՝ անհոգօրէն վարուիլ հայ նոր սերունդին, այսքան կենսա-

կան հարցին մէջ: Եւ ես չեմ յուսար որ ազգային պատաս-
խանատու մարմինները, նկատի պիտի չառնեն այս հարցին
մէջ «Մարգաշխարհ»ի նկատողութիւնները, ըսել չտալու
համար կրկին «Ձայն բարբառոյ յանապատի»:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 28

Հ.Մ.Ը.Մ. ՈՅԺ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ

Լ. Մասպանաճեան

Հ.Մ.Ը.Մ.-ի 31-րդ Միջ-մասնաճիւղային մրցումները այս տարի ալ կրկին Հալէպի մէջ տեղի պիտի ունենան: Աւանդական դարձած այս հանդիպումները հայ ժողովուրդի եւ ի մասնաւորի Հ.Մ.Ը.Մ.-ի նման մեծ կազմակերպութեան համար կենսական նշանակութիւն ունեցող ձեռնարկ է:

Երեսուն մէկ տարիներէ ի վեր անընդհատաբար շարունակուող այս գեղեցիկ հանդիսութիւնները տարուէ տարի աւելի մեծ ծաւալ ստանալով դարձան մեր հին Նաւասարդեան տօները յիշեցնող փառատօներ:

Մերձաւոր Արեւելքի մէջ ցրուած հայ ժողովուրդին համար Հ.Մ.Ը.Մ.-ի գոյութիւնն ու գործունէութիւնը վսեմ ու փրկարար դեր կատարեց:

Ան կազմակերպեց երիտասարդութիւնը, դաստիարակեց զայն, սորվեցուց անոր կարգապահութիւն, հնազանդութիւն, անձնագոհութիւն եւ հայրենասիրութիւն: Ան իր հրապարակային հանդիսութիւններով, ֆութպոլի պասքէթպոլի եւ զանազան խաղերու մրցումներով ծանօթացուց հայութիւնը իր շրջապատին:

Մերձաւոր Արեւելքի մէջ մարզական եւ սկաուտական շարժման եւ ծաւալման ռահվիրան Հ.Մ.Ը.Մ.-ը եղաւ:

Սփիւռքի հայկական կեանքը ուսումնասիրող պատմաբանը անպայմանօրէն խորապէս պիտի անդրադառնայ Հ.Մ.Ը.Մ.-ի գործունէութեան եւ մանաւանդ Միջ-մասնաճիւղային մրցումներուն:

Մենք ուրախ ենք, որ այս երկիրներուն մէջ, օրէ օր կ'աճի եւ կը զարգանայ մարմնակրթական միութեանց թիւն

ու գործունեությունը: Մեր բարեխնամ պետությունն ալ իր կարելի նիւթական եւ բարոյական աջակցությունը չի զլանար այս ուղղութեամբ:

Քանի ուժեղնայ եւ կազմակերպուի մարզական կեանքը այս երկիրներուն մէջ, այնքան աւելի կը սերտանայ համագործակցությունը:

Որքան աւելնայ եւ շատնայ իրաւ մարզիկներու եւ մանաւանդ սկաուտներու թիւը, որոնք այս երկիրներու ապագայ քաղաքացիներն ու ղեկավարները ըլլալու կոչուած են, այնքան աւելի հաստատ եւ ամուր հիմերու վրայ դրուած կ'ըլլան հայրենիքի սիւները:

Քանի ուռճանայ եւ բազմանայ այս երկիրներու երկսեռ երիտասարդությունը, մեր ապագայ բանակները կը դառնան գերազանցապէս կարգապահ, զոհաբերող եւ առողջ:

Ահա այս գիտակցութեամբ եւ համոզումով է, որ երեսուն մէկ տարիներէ ի վեր, հակառակ կարգ մը մարդոց Հ.Մ.Ը.Մ.-ի միջ-մասնաճիւղային մրցումները արգիլել տալու տխուր եւ դաւադիր աշխատանքներուն, մեր սիրելի պետությունը ընթացք տալով իր իսկ բարձրաստիճան ներկայացուցիչներուն, ներկայութեամբ եւ աջակցութեամբ քաջալերած է Հ.Մ.Ը.Մ.-ը:

Պիտի շարունակէ իր գործը Հ.Մ.Ը.Մ.-ը աւելի ինքնավստահ եւ հաստատակամ, օգտակար ըլլալու ազգին եւ հայրենիքին: Պիտի շարունակէ իր ճամբան խրոխտ եւ հրպարտ, ոտնահարելով բոլոր տեսակի խութերն ու արգելքները:

Ս. Զատկին նախորդող օրերուն Հալէպ պիտի գան Հ.Մ.Ը.Մ.-ի բոլոր արենոյշ, արծուիկ, սկաուտ եւ մարզիկները: Հեռաւոր քաղաքներէն, գաւառներէն եւ գիւղերէն, հազարաւոր քիլօմէթր հեռաւորութենէն պիտի գան եւ համախմբուին այս մեծ ընտանիքի զաւակները հոս, որպէսզի

միասնաբար տօնեն Յարութեան Ս. Տօնը եւ Հ.Մ.Ը.Մ.-ի քառասնամեայ փառատօնը:

Անգօր են գրիչները, բացատրելու եւ պատկերելու համար այն յուզիչ տեսարանները, որոնք կը պարզուին մեր աչքերուն առջեւ այդ օրերուն:

Տեսէք սա հարիւրաւոր արծուիկ, արենոյշ եւ սկանուտները, որոնք ժամերով կը սպասեն հասնող օթոպիւսներուն, որպէսզի իրարու ձեռքէ խլելով տուն տանին, յոգնած, բայց զուարթ ու խնդումերես իրենց քոյրերն ու եղբայրները:

Հապա, դէմքով իրարու անծանօթ, բայց հոգիով ու զգացումներով հարազատ հազարաւոր մարզիկներու ողջագրումը: Այս հսկայ ձեռնարկի յաջողութեան ի խնդիր հարիւրաւոր Հ.Մ.Ը.Մ.-ականներու ցուցաբերած նուիրումն ու զոհողութիւնը հայու անաղարտ զգացումները իր մէջ կրող ռեւէ անհատին մէջ յուզման եւ ուրախութեան պահ մը չստեղծէ ր:

Առօրեայի, ազգային, հաւաքական թէ անհատական տաղտկալի եւ յաճախ յուսահատեցուցիչ մթնոլորտէն, ազդեցութիւններէն պահ մը ձերբազատուիր, միայն ու միայն որպէս հայ մարդ դիտէ տողանցող մեր նորահաս սերունդը, կեանքով ու աւիւնով լեցուն հայ մատղաշ բանակը, անոր անմեղ հոգիին, երակներուն եւ սրտին մէջ խայտող հայու արիւնը, դիտէ անոր աչքերուն եւ քալուածքին մէջ, ցեղին յարատեւութիւն եւ վստահութիւն ներշնչող կամքի ոյժը:

Ողջո՛յն Հ.Մ.Ը.Մ.-ի 31-րդ Միջ-մասնաճիւղային փառատօնին:

Ողջո՛յն այս մեծ միութեան քառասնամեայ փառաւոր գործունէութեան:

Ողջո՛յն Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքի բոլոր զաւակներուն:

Քալենք անսայթաք մեր ճամբան, որ ճամբան է Հայ ժողովուրդի կենսունակութեան եւ յարատեւման:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 33

ՅԻՇԷ՛ ՄԱՐԶԻԿ

Ե.

43 տարի առաջ մարդկային կառուաննէ՛ր անցան այս ճամբաներէն:

43 տարի առաջ ազգ մը իր գողգոթան քալեց՝ Աստուած որդո՛ւ համբերութեամբ:

43 տարի առաջ, աշխարհ կարծեց, թէ դէպի մահ մեր երթը՝ վերջինն էր: Ալ պիտի անցնէինք պատմութեան:

43 տարի վերջ, հայորդի՛, դիտէ՛ բազուկդ պողպատ, նայէ բռունցքիդ կրանիթեայ, եւ յիշէ՛:

Յիշէ՛ մեռելները մեր, յիշէ՛ մտքի ու սուրի մեծերը մեր, յիշէ՛ ազգդ: Մաս առ մաս կազմող ամէն մանրամասնութիւն եւ մտաբերէ՛ որ անոնք նետուած էին մահուան:

Նայէ, նայէ՛ բարտի հասակիդ, զօրաւոր կազմուածքիդ, արու կեցուածքիդ, զգայ աչքերէդ ժայթքող բոցի զօրութիւնը, ներշնչուէ ոյժէդ, ներշնչուէ կամքէդ եւ յիշէ՛:

Դուն զաւակն ես մորթուելու դատապարտուած ազգի մը:

Դուն զաւակն ես ժողովուրդի մը՝ որուն մահը կը տենչան մարդիկ:

Դուն զաւակն ես ցեղի մը՝ որ սակայն հակառակ իր բոլոր դժբախտութիւններուն, տառապանքին, տանջանքի դատապարտուած իր ճակատագրին, ունի ներքին անբացատրելի ուժանակութիւն մը՝ որմէ կը պարտուի մա՛հն անգամ:

Հակառակ սաղայելական հազա՛ր սաղրանքներու, հակառակ աներեւակայելի հազար գողգոթայի, հաւատաւոր, կամքո՛ վ լեցուն ու ինքնավստահ կը ճակատի աշխարհի՛ն դէմ, ի խնդիր կեանքի, ի խնդիր ազատութեա՛ն:

Յիշէ՛ անցեալդ մարզիկ:

Եւ աւելի, եւ հազար անգամ եւս ոյժ տուր մկանիդ,
կարծրացո՛ւր հոգիդ ու պատրաստէ զայն նուիրական ու
սրբազան սրբագործումի: Քանի՛ Շաւարշ Քրիսեան, Հայկ
Ճոլոլեան եւ ուրիշներ ինկան մահուան ճամբուն վրայ:

Սակայն նաեւ քանի՛ Վ. Չերազ, Մերճանոֆ, Քրիս
Ֆեներճեան որպէս խտացած վրէժխնդրութիւն հալածեցին
դահիճները ցեղիդ:

Այո՛, մարզի՛կ, նայէ բազուկիդ, նայէ՛ մկանիդ եւ յիշէ՛.-

Ազգդ երէկ փորձեցին գերեզմանել.- պարտի՛ս ուժա-
նակուիլ՝ գալիք օրերու ի խնդիր...

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 35

ԿՈԹՈՂԸ

Լ. Մասպանաճեան

Մարգաշխարհի սոյն թիւի կողքը ձեզ կը ներկայանայ յաջողութեամբ պսակուած մեծ ձեռնարկի մը նկարով:

Հ.Մ.Ը.Մ.-ի Գամիշլիի մասնաճիւղի նորաշէն ակումբն է ան:

Գամիշլին Սուրիոյ եւ Լիբանանի երրորդ հայաշատ քաղաքն է: Տասը հազարէն աւելի հայութիւն նիւթական եւ բարոյական շատ ծանր զոհողութեանց գնով հաստատուած է հոն ստեղծելով նաեւ տնտեսութիւն ու ազգային կեանք:

Հազիւ երեսուն հինգ տարուայ պատմութիւն ունեցող այս նորաշէն քաղաքը, իր յիսուն հազարէ աւելի բնակչութեամբ, այսօր մեզ կը ներկայանայ որպէս կարեւոր ու գլխաւոր կեդրոններէն մին, Սուրիոյ ապագայ տնտեսական եւ երկրագործական մեծ կարելիութիւններով օժտուած:

Հայ ժողովուրդը Սուրիոյ այս հեռաւոր անկիւնին մէջ ալ իր ընտանեկան բոյնն ու խրճիթը շինելու ատեն չէ մոռցած նաեւ անոնց կողքին կառուցանել եկեղեցի, դպրոց եւ ակումբ:

Գամիշլիի հետզհետէ աճող հայ գաղութը ընթացք տալով կրօնական, կրթական, ազգային, մշակութային ու մարզական նուաճումներու համար անհրաժեշտ հաստատութիւններու վերակառուցման ու հաստատման, շինած է հազար երկսեռ աշակերտութիւն պարփակող ներկայանալի նախակրթարան մը, ինչպէս նաեւ փոխ առաջնորդարան եւ եկեղեցի:

Անհրաժեշտ էր նաեւ ընդարձակել ու ներկայանալի ձեւ մը տալ ակումբին, որպէսզի աւելի զարկ տրուէր մշակութային ու մարզական կեանքին:

Երագուած ակումբը շինելու ծրագիրը նիւթական եւ բարոյական մեծ գոհողութեանց կը կարօտէր: Հիմնայատակ պէտք էր ընել հինը՝ նորը կանգնելու համար: Նուագագոյն կը նախատեսուէր 30-35 հազար ս. ոսկիի ծախք մը:

Ո՞վ պիտի հայթայթէր այս գումարը, եւ ինչպէ՞ս: Բայց կամենալ կարենալ ըսել է, որոշել ու գործի ձեռնարկելը արդէն իսկ յաջողութեան նախապայման է:

Այս գեղեցիկ ծրագիրը իրականացնելու առաջադրութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի Ս. Օգն. Խաչի եւ Ակումբի վարչութիւնները սոյն նպատակի ծառայելու նպատակաւ խնայուած 5000 ս. ոսկիով գործի ձեռնարկեցին:

Անոնց միակ յոյսն ու յենարանն էր հայ ժողովուրդը: Վստահ էին անոնք, որ նման ազգօգուտ ձեռնարկի մը յաջողութեան համար հայ ժողովուրդը իր քսակը լայն պիտի բանար:

Եւ ահա ակնկալութիւնն ու յոյսը դարձաւ իրականութիւն: Կարճ ժամանակի մը մէջ, շնորհիւ ազգասէր եւ սրտցաւ ազգայիններու առատաձեռն ու կամաւոր նուիրատուութիւններուն նախաձեռնողները խանդավառուեցան:

Հոս նուիրատուներու անունները յիշատակել աւելորդ կը գտնենք, նկատելով որ աստենին այդ անուանացանկը «Արեւելք» օրաթերթի մէջ հրատարակուած է:

Պատիւ Գամիշլիի հայութեան, որ կրցաւ հոյակապ ակումբ մը կանգնեցնել, գերազանցելով կեդրոն քաղաքներու ակումբներուն: Նախատեսուած 30-35 հազարը հասաւ 55-60 հազար ս. ոսկիի պատկառելի գումարին:

Ակումբը 20 մէթր երկարութիւն եւ 10 մէթր լայնքի վրայ երկյարկանի շէնք մըն է, իր յարակից անհրաժեշտ մասերով: Անոր գեղեցիկ եւ դալար տանիքը երրորդ յարկ մը կարելի է նկատել:

Ներկայացումներու, բանախօսութեանց եւ հանրային զանազան ձեռնարկներու համար լաւապէս կահաւորուած այս ակումբը, տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.-ի, Ս.Օ.Խաչի եւ հայութեան հաւաքատեղին դարձած է:

Մեր նոր սերունդը այս ակումբի մէջ հասակ պիտի նետէ: Հոս պիտի սորվի հայ մնալու եւ հայութեան տեւականացման ի խնդիր գոհաբերուելու ու աշխատելու գեղեցիկ եւ նուիրական սկզբունքները:

Ապրիք Հ.Մ.Ը.Մ.-ական սերունդ: Հազար ապրի մեր անման հայ ժողովուրդը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 36

ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Լ. Մասպանաճեան

Մարզական շարժումը Սուրիոյ մէջ հազիւ 40 տարուայ կեանք մը ունի: Ա. Համաշխարհային պատերազմի վերջաւորութեան 1918 Նոյեմբեր 11ին երբ Անգլիական ոյժեր գրաւեցին այս երկիրը, այդ թուականին սկսաւ մարզական կեանքը Սուրիոյ մէջ:

Մեր նպատակը սոյն յօդուածով Սուրիոյ մարզական շարժման եւ զարգացման պատմականը ընել չէ, այլ կ'ուզենք թուրքիկ ակնարկ մը նետել անցեալի եւ ներկայ մարզական կեանքին վրայ:

Սուրիան անցնող քառասուն տարուայ եւ մանաւանդ օտար ոյժերու այս երկրէն վերջնականապէս հեռացուելէն վերջ, 1946-էն մինչեւ այսօր, մեծ յառաջդիմութիւն արձանագրած է մշակութային, կրթական, ճարտարարուեստի, արուեստներու եւ արհեստներու մարզին մէջ:

Եկող եւ գացող կառավարութիւններն ալ իրենց կարելի նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը չեն զլացած երկրի կրթական, տնտեսական, ճարտարարուեստական եւ մարզական կեանքի բարգաւաճման եւ զարգացման համար:

Քաղաքակրթութեան ու այլեւայլ մարզերու մէջ յառաջդիմութիւն արձանագրող Սուրիան այսօր դժբախտաբար մարզական գետնի վրայ եթէ չըսենք նահանջի մէջ է, առնուազն տեղ քայլ կ'ընէ:

Սկաուտիզմի, աթլէթիզմի, ֆութպոլի, պասքէթպոլի, թենիսի խաղերն ու մասնակցող մարզիկներու չափանիշերը եւ ցուցաբերած արդիւնքները այս երկրի քաղաքակրթութեան եւ արժէքին համապատասխան չեն երբեք:

Մարմնակրթութիւնը զարգացնելու, ֆութպոլի պաս-
քէթպոլի տիպար խումբեր, աթլէթի իսկական մարզիկներ
պատրաստելու նպատակաւ յատկացուած նիւթաբարո-
յական եւ ֆիզիքական զոհողութիւններ ակնկալուած ար-
դիւնքը չեն տար:

Այսօրուան Սուրիոյ ֆութպոլի խումբերը ընդհանուր
առմամբ աւելի տկար եւ անկազմակերպ են քան երէկ:

Այսօր Սուրիոյ մարզիկները մարզական խաղերու մէջ
աւելի քան նահանջի մէջ են: Ըստ ձեւի գոյութիւն ունեցող
սկաուտիզմը ըստ էութեան շատ հեռու է իր իսկական
կոչումէն:

Հակառակ արդիական մարզադաշտերուն, ֆութպո-
լիստին եւ մարզիկին մարմնակրթական միութեանց
ընծայած ձեռնտու պայմաններէն, ներկայիս սկաուտի,
մարզիկի, ֆութպոլիստի վայելած գուրգուրանքին եւ դի-
րութիւններուն, Սուրիոյ մէջ մարզական կեանքը նահանջի
մէջ է:

Ոմանք թերեւս մեր այս մատնանշումները չափա-
զանցուած գտնեն:

Պէտք է խոստովանինք, որ պետական վարժարան-
ներուն մէջ սկաուտիզմի եւ մարմնակրթանքի զարգացման
եւ տարածման համար հիմնական ու հետեւողական աշ-
խատանք կը տարուի:

Սկաուտիզմի եւ մարմնակրթանքի մասնագէտ ուսու-
ցիչ ուսուցչուհիներ մեծ աշխատանք ու ճիգ կը թափեն
հասակ նետող նոր սերունդի ֆիզիքական զարգացման եւ
նկարագրի կերտումին համար:

Ընդհակառակը համայնքային ու մասնակի վարժա-
րաններուն մէջ գրեթէ զանց առնուած է աշակերտի ֆիզի-
քական դաստիարակութեան շատ հիմնական գործը: Երկու
տասնեակ տարիներ առաջ մարմնակրթութեան համար

մասնաւոր պիտճէ եւ ժամանակ տրամադրող դպրոցներէն շատեր, այսօր այս շատ հիմնական առարկան դասացուցակէն դուրս հանած են:

Բայց մենք նիւթէն շեղեցանք, այսօր մեր նպատակը դպրոցներու մարմնակրթական խնդիրներով զբաղուիլ չէ առայժմ:

Սուրիոյ մէջ այսօր կա՞յ ֆութպոլի խումբ մը, որ արդիական օրէնքներով եւ մարզումներով պատրաստուած է: Խաղացողները ֆութպոլիստէ մը պահանջուած ֆիզիքական եւ բարոյական արժանիքները կը ներկայացնեն: Կա՞ն մարզիկներ, որոնք իսկական մարզիկի նկարագիր ունին եւ կը մարզուին միջազգային օրէնքներով, գէթ մօտենալու համար միջազգային մրցանիշերուն:

Կա՞յ աթլէթի խաղերու հանդէպ հետաքրքրութիւն:

Սուրիան կրցա՞ւ նոյնիսկ միջ-արաբական աթլէթիք Մրցումներուն իր արժանի տեղը գրաւել:

Կը կարծենք, որ տրուած հարցումներուն պատասխանները դժբախտաբար դրական ըլլալէ շատ հեռու են:

Բայց մենք չլրացուցինք դէռ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 37

ՅԱՐԱՏԵԻՈՒԹԻՒՆ

Լ. Մասպանաճեան

Հռչակաւոր դաշնակահարի մը անգամ մը հարց տուին թէ ո՞րչափ ժամանակ տուած էր այդչափ ճարտարութիւն ձեռք բերելու համար: «Օրը տասներկու ժամ ժամանակ տալով եւ քսան տարի շարունակելով», պատասխանեց մեծ արուեստագէտը: Ի՛նչ դժուար պայման անոնց համար, որ գուրկ են յարատեւութենէ:

Ո՛չ ընդածին հանճար, ո՛չ բարձր դաստիարակութիւն, ոչ ալ մեծաքանակ հարստութիւն եղած է շատ մը մեծ մարդոց յաջողութեան գաղտնիքը, այլ յարատեւութեամբ միայն անոնք ապահոված են իրենց յաջողութիւնը կեանքի պայքարին մէջ: Յարատեւութիւնը մեծագոյն ազդակը եղած է անոնց յաջողութեան եւ վերելքին:

Չկայ որեւէ զբաղում կամ արուեստ որ իրեն յատուկ դժուարութիւնը չունենայ: Ուստի յարատեւութիւնը անհրաժեշտ է ամէն գործի մէջ:

Ո՞րչափ երիտասարդներ կան՝ որ քիչ մը դժուարութեան առջեւ կը կասին, կ'ընկրկին եւ յուսահատ կը ձգեն ու կը փախչին:

Այն մարդիկ որ գուրկ են յարատեւութենէ, յաճախ իրենց ձախողութիւնները կը վերագրեն բախտին, աննպաստ պայմաններուն եւ անյաղթահարելի դժուարութեանց:

Մեծ մարդիկ գրեթէ անխտիր յարատեւութեամբ հասած են իրենց փառքի գագաթնակէտին: Արուեստի, արհեստի եւ մանաւանդ մարզական կեանքի մէջ յաջողութիւններ արձանագրելու համար յամառ յարատեւութիւն եւ զօրաւոր կամք անհրաժեշտ է:

Կարելի է հազարաւոր օրինակներ տալ, յարատեւութեան շնորհիւ մեծութիւններու հասած ջութակահարներու, նկարիչներու, արուեստագէտներու, գիտաբարներու, մարզիկներու, որոնք յաճախ զրկուած են տարրական միջոցներէ, նիւթականէ, քաջալերանքէ եւ բարոյական աջակցութենէ:

Ներկայ երիտասարդութեան կը պակսի յարատեւութեան կամքը: Անոնք կ'ուզեն որոշ բարձրութեան մը հասնիլ, կ'ուզեն լաւ դաշնակահար, նկարիչ, գրող, արուեստագէտ ըլլալ: Մեր մարզիկներն ու ֆութպոլիստները կ'ուզեն բարձր մրցանիշեր հաստատել, լաւ ֆութպոլ եւ պասքէթպոլ խաղալ, կը փափաքին ժողովուրդի հիացման առարկայ դառնալ առանց պահանջուած յարատեւութիւնն ու աշխատանքը ի գործ դնելու: Չկայ յաջողութիւն առանց յարատեւութեան: Կ'ուզեն ս հասնիլ նշանակելտիդ, պիտի յարատեւես առաջադրութեանդ մէջ: Փափաքներն ու ցանկութիւնները, իտեալներն ու օգտակար ձեռնարկները չեն իրականանար առանց յարատեւութեան:

Այսօր երիտասարդութիւնը որքա՛ն մեծ առիթներ եւ միջոցներ ունի կեանքի բոլոր մարզերուն մէջ մեծութիւններ դառնալու եւ այդ ձեւով օգտակար հանդիսանալու իրենց ընտանիքին, ազգին եւ հայրենիքին:

Ներկայ դարուս, ամէն միջոց եւ կարելիութիւններ կան մանաւանդ երիտասարդութեան համար, իրագործելու ու հասնելու նիւթական եւ բարոյական այն բարձրութեանց, որոնց կը ցանկան:

Յարատեւութիւն, այս թող ըլլայ մեր պատանեկութեան եւ երիտասարդութեան նշանաբանը: Արհեստաւոր ըլլաս թէ դպրոցական, մարզիկ ըլլաս թէ ֆութպոլիստ, ջութակահար ըլլաս թէ նկարիչ, քեզմէ բարձրերուն եւ տաղանդաւորներուն նայելով մի՛ յուսահատիր: Առաջին փորձե-

րուդ կրած ձախողութիւններէն մի՛ յուսալքուիր: Բարի նախանձով եւ յաջողելու հաստատակամութեամբ յարատեւէ՛:

Արուեստի, արհեստի եւ մարզանքի այլազան ու բազմազան ճիւղերու մի՛ հետեւիր: Քու ֆիզիքական եւ մտային կարողութեանց համապատասխան ընտրութիւն ըրէ՛, եւ առանց յուսահատելու յարատեւէ, վստահ եղիր անպայման պիտի յաջողիս: Բարի եւ օգտակար բաներու մէջ ցուցաբերած յարատեւութիւնդ ականայ քեզ պիտի փրկէ նաեւ գէշ եւ վնասակար բաներու մէջ ցոյց տուած յարատեւութենէդ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 39

Հ.Մ.Ը.Մ.-ի ՄԱՐԶԱՐԱՆ-ՊԱՐՏԷԶԸ

Լ. Մասպանաճեան

Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի մասնաճիւղի մարզարան-պարտէզը իր տեսակին մէջ միակն է Սուրիոյ մէջ: Ան իր մէջ կ'ամփոփէ զոյգ պասքէթպոլի, մէկ թենիսի, մէկ վոլիպոլի դաշտեր, ինչպէս նաեւ ֆութպոլի խումբի մը մարզումին համար յարմարութիւն ներկայացնող դաշտ, եւ աթլէթ խաղերու փորձերուն յատկացուած բաժիններ: Կայ նաեւ մարմնամշակումի յատուկ ընդարձակ սենեակ մը՝ լրացուցիչ բոլոր գործիքներով:

Այսքան գեղեցիկ եւ կատարեալ մարզադաշտին կից, նոյն շրջապատին մէջ ընտանեկան պարտէզ մը կայ, զոյնզոյն ծաղիկներով, ծառերով եւ կանաչութեամբ զարդարուած: Խաղաղաւէտ անկիւն մը գեղեցկատեսիլ, ուր կրնաս առօրեայի մտային եւ ֆիզիքական յոգնութենէ մը վերջ իրական հանգիստ մը առնել վայելելով հայկականութիւն բուրող այս միջավայրը: Կայ նաեւ փոքրիկներու յատուկ զանազան խաղերու յատկացուած առանձին անկիւն մը: Իսկապէս մեծ հաճոյք է հոս նստիլ ու դիտել մեր նորահաս երկսեռ սերունդի մարզական փորձերը, անոնց մարզանքն ու խոյանքը, եռուզեռն ու խանդավառութիւնը: Բառին բովանդակ առումով հայկական օճախ մը ստեղծուած է, ուր մանուկներէն սկսած մինչեւ տարեցները ինքզինքնին կը զգան իրենց տանը մէջ:

Այս մարզարան-պարտէզին մէջ է, որ հասակ կը նետէ մեր նորահաս սերունդը, վայելելով Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ զոհողութիւններով ստեղծած ամէն տեսակ դիւրութիւնները:

Այսօրուայ գեղատեսիլ եւ Հ.Մ.Ը.Մ.-ին պատիւ բերող մարզարան-պարտէզը ասկէ ճիշդ 30 տարի առաջ խամ ու

խոսքի արտ արտ մըն էր, որ այն ատեն նորակազմ Հ.Մ.Ը.Մ.-ի վարչութիւնը վարձեց ֆութպոլի դաշտ մը շինելու համար:

1928-ին Հալէպի առաջին ֆութպոլի դաշտին հիմը կը դրուէր կարգ մը անձնուէր ու զոհաբերող Հ.Մ.Ը.Մ.-ականներուն միջոցաւ:

Տարեկան 18 օսմ. ոսկիով վարձուած այդ գետինը, ֆութպոլի դաշտի մը վերածելու համար Վարչութիւնը նիւթական որեւէ միջոց չունէր, բացի իր անդամներու զոհողութեան ոգիէն եւ սիրայօժար աշխատելու պատրաստակամութենէն: Նորակազմ Հ.Մ.Ը.Մ.-ին ուռճանալուն, զարգանալուն համար անհրաժեշտ էր մարզադաշտը:

Հերթիւեան աշխատանք եւ մեծ գումար պէտք էր, քիչ շատ ներկայանալի մարզավայր մը ունենալու համար:

Անկարելին կարելի դարձաւ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայրներու անձնագոհողութեան: Ամիսներ շարունակ հարիւրաւոր մարզիկներ, սկաուտներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ գիշեր ցերեկ բանուորութիւն ըրին, ոմանք փորեցին, ոմանք հող կրեցին, ուրիշներ փշաթելերով շրջապատեցին դաշտը: Մինչեւ ուշ գիշերներ իրենց առօրեայ գործէն վերադարձող մեր արհեստաւոր ու բանուոր եղբայրները երգելով, ուրախութեամբ կ'աշխատէին, որպէսզի օր առաջ լմնայ իրենց տունը, վայելելու համար հոն քաղցրութիւնը իրենց աշխատանքին: Այսօր այդ սերունդի զաւակները աւելի բախտաւոր են, բայց ոչ իրենց հայրերուն չափ զոհաբերող:

Որովհետեւ այդ սերունդը ընչազուրկ եւ տառապած, հազիւ ճողոպրած մահուան ճիրաններէն, ինքզինք շատ երջանիկ կը զգար իր միութեան համար թափուած քրտինքին ու յոգնութեան համար: Կը յիշեմ Գափլանեան եղբայրներու, Միսաք Բարսեղեանի, Ատուրի ու Սահակի, Վոսմ Ոսկեանի փշաթելերէն արիւնտտած ձեռքերն ու ոտքերը: Ալիշանի Յ. Աճէմեանի, Օննիկի, Նշանի, Ազատ

Շուկայեանի փոշերթաթաւ դէմքերն ու ձեռքերը: Առաքելեան եղբայրներու, երկու սկաուտ խմբապետներ Բարգէնի ու Եզեկիէլի իրենց սկաուտներով հող կրելը:

Պատմութիւն ունի Հ.Մ.Ը.Մ.-ի պարտէզ-մարգարանը: 1928-էն մինչեւ 1946, տասնութը տարի շարունակ այդ դըպրոց, դաշտին վրայ տեղի ունեցան անթիւ ու անհամար մրցումներ, ողիմպիականներ սկաուտական խարուկահանդէսներ, որոնց ներկայ գտնուեցան նուագազոյն հարիւր հազար հանդիսականներ: Այս դաշտին վրայ հասակ նետեց անցեալի Հ.Մ.Ը.Մ.-ը: Այսօր կրկին ներկայ սերունդը Հ.Մ.Ը.Մ.-ական հասակ կը նետէ եւ կ'ուռճանայ այս դաշտին վրայ, աւելի լաւ պայմաններու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութիւնը ներկայ մարգարան-պարտէզը նիւթական ու բարոյական մեծ գոհողութիւններով կրցաւ յաջողցնել: Նուագազոյն 40 հազար ս.ուսկի ծախսեց զայն ներկայանալի վիճակի մը հասցնելու համար:

Բախտաւոր է ներկայ սերունդը: Ան գուրգուրանք կը տեսնէ ամէն տեղ: Ծնողք, դպրոց, միութիւններ, պետութիւն բոլորանուէր աշխատանքի լծուած են, նոր սերունդին հանգիստը, սնունդը, ֆիզիքական ու բարոյական կրթութիւնը ապահովելու համար:

Սիրելի Հ.Մ.Ը.Մ.-ականներ, ձեզի ընծայուած ընտանեկան, կրթական, միութենական եւ մարզական հոգածութեան արժէքը արդէ՞՞ք կը գնահատէք: Այսքան գոհողութեան փոխարէն, ծնողքները, միութիւնները, պետութիւնը ձեզմէ կը պահանջէ մի քանի էական պարտաւորութիւններ ու պարտականութիւններ, որոնց պիտի անդրադառնանք յաջորդ թիւով:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 40

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Լ. Մասպանաճեան

Մեր նախորդ յօդուածը կը վերջացնէինք հետեւեալ եզրակացութեամբ, թէ ծնողաց, միութեանց, կրթական հաստատութեանց, ազգի եւ պետութեան գորգուրանքի ու հոգածութեան միակ առարկան նոր սերունդի ֆիզիքական, մտային ու բարոյական զարգացման խնդիրն է: Այս ուղղութեամբ եղած գոհողութեանց փոխարէն, նոր սերունդէն կը պահանջուի մի քանի պարտաւորութիւններ ու պարտականութիւններ, որոնց պիտի անդրադառնանք այսօր:

Որո՞նք են այդ պարտաւորութիւններն ու պարտականութիւնները:

Ա. Կարգապահութիւն

Անկարգապահ որեւէ հաւաքականութիւն, ֆիզիքական թէ բարոյական տեսակէտով անարժէք եւ վնասակար տարր մըն է իր իսկ պատկանած շրջանակին:

Բանակի մը զինուորները, կրթական հաստատութեան մը աշակերտութիւնը, միութեան մը անդամները, ծնողքի մը զաւակները երբ անկարգապահ են, չունին անհրաժեշտ պարագաներուն իրենցմէ պահանջուած կարգապահութեան ենթարկուելու պատրաստակամութեան ոգին, անոնք վնասակար տարր են, անմիջապէս կը դառնան խուժան, անգուսպ ամբոխ, որ ի վիճակի է ամէն ծայրայեղութեան դիմելու:

Ամբողջ տիեզերքը կարգապահութեան սկզբունքին վրայ հիմնուած է: Երկվայրկեանի մը անկարգապահու-

թինը, զայն բաղկացնող տարրերէն ռեւէ մէկուն, կրնայ հիմնայատակ կործանել ամբողջութիւնը:

Կ'ուզե՞ս հասկնալ ժողովուրդներու, բանակներու, դպրոցներու եւ միութեանց քաղաքակրթութեան մակարդակը, հետեւի՞ր անոնց հաւաքական փորձերուն, պատերազմներուն, մրցումներուն ժամանակ ցուցաբերած կարգապահութեան:

Որեւէ հաւաքականութեան գոյատեւումը, զարգացումն ու յառաջդիմութիւնը առաւելաբար կախում ունի զինք բաղկացնող տարրերու կարգապահութեան չափանիշէն:

Առաւելաբար մարզական միութիւններ, որոնք կոչուած են կարգապահութիւն սորվեցնել իրենց անդամներուն, պէտք ունին դաստիարակուած կարգապահ անդամներուն:

Կարգապահ մարզիկը զուսպ է, չի տարուի՞ր զգացումներէ, ամբոխին չի հետեւի՞ր, այն դէպքերը կը վերլուծէ պաղարիւնութեամբ:

Մեր մարզիկները, սկաուտները ու անդամները կարգապահութեամբ միայն կրնան օգտակար ըլլալ միութեան:

Կարգապահութիւնը կ'ենթադրէ բարձր նկարագիր, ազնիւ հոգի եւ մշակուած միտք:

Չենք կրնար ակնկալել ռեւէ անհատէ կամ հաւաքականութենէ ինքնագիտակից կարգապահութիւն, որ զուրկ է վերոյիշեալ երեք առաքինութիւններէ:

Կարգապահ անդամներ ու հաւաքականութիւններ հասցնելու համար պէտք է մշակենք մեզի յանձնուած սերունդին նկարագիրը, հոգին ու միտքը:

Բռնագրօսիկ կարգապահութիւնը վախի արտայայտութիւնն է, որ տեւական չէ: Իսկ ինքնագիտակից կարգապահութիւնը արտայայտութիւնն է քաղաքակրթուած, ազնուացած ու մշակուած նկարագրի, որ տեւական է եւ դաստիարակիչ:

Մեր բոլոր ձեռնարկներու եւ հաւաքոյթներու ատեն պէտք ունինք կարգապահ ու օրինապահ հաւաքականութեան:

Մարգական մրցումները, հասարակական հաւաքոյթները փորձաքարն է մեր կարգապահութեան չափանիշին:

Միրելի մարզիկ, ֆութպոլիստ եւ սկաուտ կարգապահ եղի՛ր դաշտի վրայ, մրցման ժամանակ փորձի ատեն, դպրոցիդ եւ գործիդ մէջ: Կարգապահ եղի՛ր պատկանած միութեանդ ու ծնողքիդ հանդէպ:

Կարգապահութիւն կը պահանջեն քեզմէ ծնողքդ, միութիւնդ, ազգդ ու պետութիւնը:

Եւ դուն սիրելի հայ ժողովուրդ, կարգապահութեամբդ բարի օրինակ եղի՛ր քու զաւակներուդ:

Կարգապահութիւն, այս է օրուան կարգախօսը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 41

ՆԿԱՐԱԳԻՐ

Լ. Մասպանաճեան

Նախորդ յօդուածով, ուղղելով մեր խօսքը մարզիկներուն, կ'ըսէինք, *կարգապահութիւնը կ'ենթադրէ բարձր նկարագիր, ազնիւ հոգի եւ մշակուած միտք:*

Մարդու մը մտային եւ ֆիզիքական կարողութիւնները կրնան բնածին կամ ստացական ըլլալ, իսկ նկարագիրը մարդ ինքն է, որ կը կերտէ:

Երագելով ու բաղձալով չենք կրնար բարձր նկարագրի տէր դառնալ, պարտաւոր ենք զայն դարբնել ու շինել:

Աշխարհի վրայ մարդ արարածէն մեծ ստեղծագործութիւն, եւ մարդու մէջ նկարագրէն բարձր ու վսեմ ճշմարտութիւն գոյութիւն չունի:

Լաւ նկարագիրը մեծ հարստութիւն մըն է, եւ անոր կարենալ տիրանալու համար անհրաժեշտ է ազնիւ աշխատանք եւ զօրաւոր կամք:

Մաքուր նկարագիրը մեծ ոյժ մըն է, ան քեզի կ'ապահովէ լաւ շրջանակ: Ան մեծ դրամագլուխ մը, եւ առաջնորդ մըն է յաջողութեան:

Անշարժ, վստահելի նկարագիր մը կեանքի մէջ ամենէն թանկագին իրականութիւնն է, անկասկած:

Մեզմէ իւրաքանչիւրը մեր անձէն դուրս ազդեցութեանց տակն է զանազան միջավայրերու եւ բարեկամներու:

Եթէ պատկանած միութիւնդ, շրջանակդ եւ բարեկամներդ քու նկարագրի ազնուացման չեն սատարեր, ընդհակառակն քեզ դէպի անկում կ'առաջնորդեն, հեռու մնացիր անոնցմէ:

Ինչպէ՞ս կրնանք ապառաժեայ եւ վստահելի նկարագիր մշակել մեր մէջ:

Վստահելի նկարագիր ունենալու համար պարտաւոր ենք հետեւեալ կէտերուն ուշադրութիւն դարձնել:

ա- Զօրաւոր կամք պէտք է ունենաք: Այս է առաջին քայլը:

Զօրաւոր կամք կը նշանակէ դուն քու անձիդ տէրը ըլլալ, դուն քու վրադ կարենալ իշխել: Զօրաւոր կամք ունենալու համար պէտք է սկսիլ փոքր տարիքէն: Չափա-հասներու համար չափազանց դժուար է այդ: Մեծ մարդոց, կուսակցութեանց, բանակներու ոյժին եւ տոկունութեան գաղտնիքը կը գտնուի անոնց գլուխը կեցող մարդոց նկարագրին եւ կամքին մէջ:

Զօրաւոր կամք մշակել քու մէջ, որպէսզի կարողանաս դիմադրել փորձութեանց, որպէսզի կարողանաս յաջողիլ կեանքի պայքարին մէջ: Զօրաւոր կամքը հիմնաքարն է մաքուր նկարագրի: Նկարագիր մը, որ զօրաւոր կամք չարտայայտեր պակասաւոր է:

բ- Պատասխանատուութեան գիտակցութիւնն է լաւ նրկարագիր կերտելու երկրորդ ազդակը: Պատասխանատուութիւններ ստանձնել, եւ աշխատիլ տառացիօրէն գործադրել զանոնք: Պատասխանատու գործերն են, որ պիտի բանան առջեւդ մեծութեան դռները: Պատասխանատուութիւն ստանձնել եւ աշխատել կատարել զանոնք, այն ատեն կ'ունենաս մեծ ու անդրդուելի նկարագիր:

գ- Ուրիշներու օգնութեան մի դիմեր, եւ մի վստահիր:

Վստահիր քու կարողութեանդ վրայ: Ինքնաշխատութեամբ զարգացուր միտքդ: Նիւթական եւ բարոյական նեղ կացութեանց առջեւ մի վիատիր, աշխատիր առանձինն յաղթահարել դժուարութեանց: Այն ճիգն ու եռանդը որ կը սպառես յաղթահարելու համար անոնց, կը դարբնես նկարագիրդ եւ կ'ուժեղնայ կամքդ:

դ- Ուրիշներու ծառայելու պատրաստակամութիւն, ահա նկարագիր կերտելու մեծագոյն գաղտնիքը: Կրնա՞ս քու անձէդ, քու եսէդ, քու ժամանակէդ ու շահէդ գոհելով ուրիշներուն, միութեանդ, ազգիդ, հայրենիքիդ, հայրենակցիդ ծառայել, ահա հոս է մեծագոյն առաքինութիւնը մարդ էակին: Աշխարհ, մանաւանդ մեր ազգը գոհաբերող, ուրիշներու ծառայող մարդոց կը պարտի իր գոյութիւնն ու մեծութիւնը: Մաքուր եւ տոկուն նկարագիր ունեցող մարդոց, մանաւանդ երիտասարդութեան պէտք ունին մեր միութիւնները, դպրոցները եւ ազգը:

Մշակէ՛ նկարագիրդ:

Զօրաւոր կամք, պատասխանատուութեան գիտակցութիւն, ինքնավստահութիւն եւ գոհաբերելու ու ծառայելու հոգի, ահա գլխաւոր չորս ազդակներ նկարագիր կերտելու համար:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 42

ԱԶՆԻԻ ՀՈԳԻ ԵՒ ՄՇԱԿՈՒԱՑ ՄԻՏՔ

Լ. Մասպանաճեան

Որեւէ արժէքէ եւ օգտակարութենէ զուրկ են այն մարզիկները, որոնք ըլլալով հանդերձ լաւ ֆութպոլիստ կամ պասքէթպոլիստ, վագող կամ ցատկող չունին իրաւ մարզիկէ մը պահանջուած բարոյական առաքինութիւնները:

Սկառուութեան, աթլէթ խաղերու ու մարմնակրթութեան նպատակը նոր սերունդի ֆիզիքական կրթութեան հետ զուգընթաց անոր բարոյական եւ հոգեկան արժէքներու մը-շակման ձգտումն է:

Բարոյապէս ինկած, ծխող, խմող, ստող, կռուազան, անկարգապահ եւ շփացած մարզիկներ իրենց պատկանած միութեան, ազգին, հայրենիքին ու ընտանիքին ի՞նչ օգտակարութիւն ունին:

Անոնց շահած յաղթանակներն ու բաժակները խաբուսիկ երեւոյթներ են:

Դժբախտաբար էական յաղթանակը, բարոյական եւ նկարագրի մաքրութեան եւ դաստիարակութեան կարեւորութիւնը կ'անտեսուի:

Թերեւս կեանքի տարբեր մարզերուն մէջ, օրինակ արհեստի, արուեստի կամ գրականութեան հետեւող ոեւէ մէկը կրնայ բարոյական երկու հակադիր ըմբոնումներու ու կենցաղավարութեան դիմելով յաջողութիւններ արձանագրէ: Բայց անըմբոնելի եւ անկարելի է, որ մարզական կեանքի մէջ մարզիկ կամ մարզական միութիւններ յաջողութիւններ արձանագրեն եւ օգտակար հանդիսանան երբ կը տարուբերին բարոյական ըմբոնումներու կիրառման մէջ:

Մեր շուրջը կեանքի գրեթե բոլոր երեւոյթներուն մէջ մարդոց խօսքն ու գործը, կենցաղն ու ընթացքը դիմակաւորուած են:

Աստուծոյ ծառաներէն սկսած մինչեւ քաղաքագէտները, պարզ արհեստաւորէն մինչեւ արուեստագէտը, դիմակաւոր դերասաններ դարձած են, օրուայ եւ պահանջին համաձայն դերերն ու գործողութիւնները փոխելու միշտ պատրաստ:

Բարոյական անկում, նկարագրի փլուզում կը նշմարուի գրեթե ամենուրեք:

Թող ստեն, խարդախեն, դաւեն ու հայիոյեն մարդիկ, որոնցմէ կ'ակնկալուի միայն ու միայն պարկէշտութիւն, հեզութիւն ու բարիք:

Թող կեղծեն, մատնեն ու դաւաճանեն անոնք, որոնք օրն ի բուն բարոյական արժանիքներէ կը ճառեն:

Թող աշխարհի քաղաքագէտներն ու դիւանագէտները խաղաղութիւն, հաւասարութիւն ու ազատութիւն հռչակեն, իրենց իսկ ցուցմունքներով ու սադրանքներով քառսի վերածուած ներկայ աշխարհին հանդիսատեսները ըլլալու հաճոյքով արբեցած:

Գոնէ մենք, մարզական միութիւններս ու մարզիկներս ըլլանք ու գործով ցոյց տանք թէ մենք ե'նք այն ինչ որ կը քարոզենք: Գործնականապէս փաստենք, ինչ որ մեր սկզբունքն ու ծրագիրը կը պարտադրէ մեզ: Որովհետեւ եթէ մենք ալ հետեւինք աշխարհի ներկայ բարեկենդանի դիմակաւոր խեղկատակ բեմադրութեան, կը դառնանք չարիք մենք մեզի եւ մեր շուրջիներուն:

Իրական մարզիկը պէտք է ունենայ ազնիւ հոգի եւ մշակուած միտք:

Անկեղծ, համարձակ ու պարկէշտ եղի'ր:

Մարգական ոգի կրող ամեն մարզիկ, մարգական միութեան անդամակցող ամեն ֆուրթուլիստ թէ արթլթ, պէտք է ըլլայ նկարագրով մաքուր: Այլապէս ի՞նչ կը շահինք մենք անձնապէս, ինչո՞վ կրնանք օգտակար դառնալ մեր ընտանիքին, միութեան եւ հայրենիքին:

Կրնա՞ս չարիքը փոխադարձել բարիքով, կրնա՞ս անիրաւութիւնը դարմանել անյիշաչարութեամբ, կրնա՞ս հնազանդիլ ու ենթարկուիլ տրուած հրահանգներուն ու օրէնքներուն, կրնա՞ս քու մարզիկ եղբայրդ, հայրենակիցդ, թէկուզ հակառակորդդ յարգել ու սիրել:

Ահա իրաւ մարզիկի յատկանիշները:

Հեռացի՛ր անբարոյութեան ապականիչ վայրերէն, մի՛ ընկերանար բարոյապէս ինկածներուն: Աշխատի՛ր դուն քեզ պահել հոգիով բարձր, նկարագրով մաքուր:

Մարմնէդ առաջ եւ աւելի մշակէ՛ միտքդ ու հոգիդ:

Բոլոր ցաւալի դէպքերը, կորուստներն ու վնասները կրնան կանխել, եթէ մեր մարզիկները ըմբռնէին այս ճշմարտութիւնը:

Տարիներու նիւթական ու բարոյական այսքա՛ն գոհողութեանց որպէս վարձատրութիւն, նկարագրով մաքուր, հոգիով ազնիւ պարկեշտ ու տիպար մարզիկներու բանակ մը պէտք էր ունենայինք այսօր:

Դժբախտաբար պէտք է խոստովանինք, որ սակաւաթիւ են անոնք, որոնք բաց ճակատ կրնան ներկայանալ:

Ահա իրաւ մարզիկներ պատրաստելու խիստ կարելոր է կենսական հարցը, որ կը ներկայանայ մեր առջեւ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 43

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Լ. Մասպանաճեան

Երբ կորսնցուցած ես առողջութիւնդ, ոչ հարստութիւն, ոչ սէր եւ ոչ ալ կարողութիւններդ քեզի վայրկեան մը իսկ ուրախութիւն չեն կրնար պատճառել:

Աշխարհի բոլոր գեղեցկութիւնները քու ունեցած բոլոր առաւելութիւններդ անարժէք են, երբ քայքայուած է առողջութիւնդ:

Երբ կատարեալ առողջութեան մէջ ես, կեանքդ ինքնին կը դառնայ իրական երջանկութիւն եւ իսկական վայելք, մեծագոյն բանը որ աշխարհ կրնայ ընձեռել քեզ:

Առանց առողջութեան եւ զօրաւոր մարմնի, կեանքի մէջ յաջողութիւնը դժբախտաբար դժուար իրագործելի է:

Որեւէ գործի մէջ տաղանդդ ու կարողութիւններդ ի յայտ բերելու եւ արդիւնաւորելու համար անհրաժեշտօրէն կը կարօտիս ոյժի եւ առողջութեան, հետեւաբար իրագործելու համար զանոնք ֆիզիքական ու իմացական ոյժ է հարկաւոր:

Առողջութիւնը անվթար պահելու համար կանոնաւորութիւնը նախապայման է: Այսօրուան քունդ շիշի մը մէջ խցելով չես կրնար ուրիշ օրուան համար գործածել, կամ վաղուայ կերակուրը այսօրուանին հետ միասին լեցնել ստամոքսիդ մէջ, երկու երեք օր զիշեր ցերեկ անընդհատ չես կրնար աշխատիլ յաջորդ օրերը հանգիստ ընելու համար:

Առողջութեան եւ յաջողութեան ամենաշատ նպաստողը զօրաւոր եւ կորովի կամքն է: Հաստատուն կամքը ֆիզիքական ու բարոյական ոյժի համար յարատեւ ու կազդուրիչ սնունդ է:

Հիւանդութեանց, դժբախտութեանց եւ յուսախաբութեանց տոկալու միակ միջոցը առողջ մարմնի մէջ զօրաւոր կամքի մը գոյութիւնն է:

Կեանքի յաջողութեան մեծագոյն գաղտնիքը պէտք է փնտռել ֆիզիքական առողջութեան մէջ:

Առօրեայ զբաղումը, աշխատանքը, մարմնի արտադրութիւնն է: Եթէ ֆիզիքապէս, մտային կամ հոգեպէս որեւէ տկարութիւն մը ունիս, անխուսափելիօրէն ուշ կամ կանուխ երեւան պիտի գայ ան, եւ իր ներկայութիւնը զգացնէ քեզ:

Առողջ մարդը կեանքի բոլոր երեւոյթները լաւատեսութեամբ դիմաւորելու տրամադրութիւն ունի միշտ:

Տիզիքական առողջութիւնը, նկարագրի վրայ զօրաւոր ներգործութիւն ունի, որ յարատեւօրէն կը պահէ յստակատեսութիւնը գործին, տունին եւ դպրոցին մէջ:

Ատելութիւն, անձնասիրութիւն, անուղղամտութիւն, նախանձ, հոգեկան տագնապ եւ վերջապէս բոլոր անկարգ մտատանջութիւնները կը ձգտին աններդաշնակութիւն եւ անհաւասարակշռութիւն ստեղծել առողջութեան կանոնաւորութիւնն ու ապահովութիւնը երաշխաւորող տարրերու միջեւ:

Երիտասարդ մը պահեստի ոյժ եւ առողջութիւն պէտք է ամբարէ իր յառաջացեալ տարիքին համար:

Քու ապագայ կեանքի երջանկութեան եւ յաջողութեան առնչութեամբ, առողջութեանդ ապահովութիւնն ու խընամքը, բարոյական պարտականութիւն մը պէտք է ըլլայ քեզ համար, տոկալու ու դիմագրաւելու դժուարութեանց եւ նաեւ իրականացնելու համար ձգտումներդ:

Իրաւունք չունիս, եւ շիտակ ճամբու մէջ չես, երբ մարմնիդ առողջութեան մշակումը կը ձգես ճակատագրին:

Առողջութեան պահանջներն են, մաքուր օդ, լաւ սննդառութիւն, մաքրութիւն եւ մարզական փորձեր:

Օդ, ջուր եւ արեւ երեք մեծագոյն ազդակներ են առողջապահութեան, որոնք ձրի են, եւ ամէն տեղ լեցուն:

Առողջութիւն, ոյժ եւ երկարակեցութիւն անյեղլի օրէնքներ ունին, որոնց կիրարկումով միայն կարելի է իրագործուին: Հոս բախտ կամ պատահականութիւն գոյութիւն չունի:

Առողջ մարմինը քու կեանքի ապագայ գործունէութեան առանցքն ու ողնայարն է:

Տիզիքական կատարեալ առողջութիւնը ամենակարեւոր հարցը պէտք է ըլլայ կեանքիդ:

Կորով, աշխատանք, ճիգ կամ պատեհութիւն չեն կըրնար փոխարինուիլ առողջութեամբ:

Առողջութեանդ գաղտնիքը փնտռէ՛ աշխատանքի, մաքուր կենցաղի, նկարագրով բարձր ընկերներու եւ բարոյական շինիչ մթնոլորտի մէջ:

Տաղանդը, գեղեցկութիւնը եւ ոյժը արժէք են, երբ առողջ ես:

Երիտասարդութեանդ օրերուն պէտք է գուրգուրաս առողջութեանդ վրայ:

Քայքայուած առողջութիւնը վերադարձնել գրեթէ անկարելի է:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 48

ՄԻ՛ ՎՀԱՏԻՐ

Լ. Մասպանաճեան

Մի՛ վիատիր պատանի, եղբայր երիտասարդ, երբ դըպրոցական, մարզական եւ անհատական գործերուդ մէջ ձախողութեան եւ դժուարութեան հանդիպիս:

Կրնայ ըլլալ, որ տարեվերջի քննութեան մէջ ձախողած ես, կամ ձեռնարկած գործերուդ մէջ որոշ դժուարութեանց դէմ յանդիման կը գտնուիս, եռանդով եւ սիրով սկսուած արհեստի կամ արուեստի ճիւղին մէջ պահանջուած յարատեւութիւնն ու կամքը կը պակսի քեզի:

Մի՛ վիատիր եւ մի՛ յուսալքուիր:

Երիտասարդները իրենց կեանքի սկզբնաւորութեան կը զգան վիատութիւն եւ յուսախաբութիւն: Իսկ եթէ անոնց նկարագիրը ուղիղ եւ պարկեշտ դաստիարակութիւն ստացած է, անոնք քաջութեամբ եւ կորովով կրնան պայքարիլ եւ յաղթահարել բոլոր ձախորդութիւններն ու անյաջողութիւնները:

Առողջ հիմունքով պատրաստուած նկարագիր մը որ-եւէ ձախողութեան պատճառաւ չի կրնար յուսահատութեան մատնուիլ:

Դժբախտութիւնները կրնան ծանրօրէն հարուածել, եւ անոնք կրնան շարունակուիլ մեզ յուսահատութեան հասցնելու աստիճան:

Բայց երբ արթուն է մեր միտքը եւ հաստատուն է կամքն ու նկարագիրը, լոյսի նշոյլի մը առաջին իսկ երեւումին առանց վիատելու, վերահաստատուած յոյսով մը կրնանք շուտով վերականգնիլ:

Ձախողած կամ ընկճուած մէկը պէտք չէ յուսահատի, այլ ան պարտաւոր է հասկնալ թէ ներկայ ընթացքին մէջ

անբնական եւ անճիշդ կացութիւն մը կայ, որուն հետեւանքն է անյաջողութիւնը: Առանց այդ ախտաճանաչումին անկարելի է ճիշդ գործել եւ յաջողիլ:

Երիտասարդ մը կը ձախողի, եւ իր կեանքի ուղղութիւնը կը կորսնցնէ երբ հոսանքէ տարուած է, եւ իր ոյժերը բաւարար չեն զինք կասեցնելու սխալ ու կործանարար ընթացքէն:

Կա'ց վայրկեան մը, յորձանքին մէջէն դուրս ելիր, եւ դիտէ շուրջդ, աչքիդ առջեւը բեր ընկերներդ, կեանքիդ ընթացքը, անդրադարձիր սխալներուդ, որոնք քեզ ակամայ կը տանին դէպի կործանում: Մի' յուսահատիր, եթէ կրցար կացութիւնդ լաւապէս բնորոշել, փրկուած ես:

Ծաղրանքը, չունենորութիւնը եւ արհամարհանքը քեզ յուսահատութեան թող չմատնեն: Մի' ընկրկիր, երբ հարագատներդ իսկ քեզ լքեն եւ կարողութիւններուդ մասին անպաստ արտայայտուին:

Յոյց տուր անոնց, որ դուն կրնաս յաջողիլ:

Պարտութիւններն ու անյաջողութիւնները մեր ճամբու կայաններն են, վերսկսելու համար նոր ճամբորդութեան՝ դէպի յաջողութեան հանգրուանը:

Կեանքի մէջ ձախորդութիւնները անխուսափելի են: Կեանքի պայքարը իսկապէս դժուար է: Մարդոց մեծամասնութեան կեանքին մէջ պարագաներ կը հանդիպին, ուր կեանքը իր իմաստն ու երգը կը կորսնցնէ:

Բայց յաղթական են անոնք, որոնք արհամարհելով բոլոր տեսակի դժուարութիւնները չեն վհատիր, եւ կեանքի այդ ծանր պայքարին մէջ կը գտնեն իրական հաճոյքը եւ կեանքի երգը:

Յուսահատութիւնը ջլատող եւ քայքայիչ ոյժ է: Ան հիւանդութիւն մըն է, որ քու բոլոր ֆիզիքական ու բարոյական ոյժը կը քամէ:

Քայքայուած առողջութիւն ունեցող մարդիկ աւելի շուտ կը յուսահատին քան առողջները:

Դժուարութեանց ու հարուածներու տոկալու համար եթէ չունիս զօրաւոր եւ առողջ մարմին, աւելի շուտ կ'իյնաս յուսահատութեան գիրկը: Այն աստէն ամէն բան քեզի կ'երեւայ մութ, կեանքդ ծանր բեռ կը դառնայ, ապրիլը տաժանք:

Յուսահատութիւնը կենսունակութեան հիւթը ծծող հիւանդութիւն մըն է:

Եթէ կամք եւ հաստատ նկարագիր ունիս, ձախորդութիւնները, դժուարութիւնները, չքաւորութիւնն ու նոյնիսկ բնածին պակասութիւնները երբեք արգելք չեն կրնար ըլլալ քու յառաջխաղացքին:

Այս ուղղութեամբ մեծ մարդոց կեանքերն ու յաջողութիւնները լաւագոյն օրինակներ են:

Տեղ մը հասնելու, ընտանիքիդ, ազգիդ եւ մարդկութեան օգտակար մէկը ըլլալու հաստատամտութեամբ ճամբայ ելիր: Անպայման կը յաջողիս:

Մի՛ վհատիր:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 49

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լ. Մասպանաճեան

Մի՛ ըսէք թէ ասպարէզ չունիք, թէ առիթները կը պակսին յաջողելու համար: Սուտ խօսած կ'ըլլաք ու միանգամայն ինքզինքնիդ կը խաբէք:

Կեանքի համեստ սկզբնաւորութիւններ կան ու եղած են, որոնք նոյնիսկ Միացեալ Նահանգներու նախագահութեան հասած են:

Ճոն Ատամս Միացեալ Նահանգներու երկրորդ նախագահը, խիստ համեստ միջոցներ ունեցող նպարավաճառի մը տղան էր, միակ հարստութիւնը որ ուներ լաւ դաստիարակութիւնն էր:

Էնտրիս Ճոնսըն դերձակի մը քով դրուեցաւ իր այրիացեալ մօրը կողմէն: Երբէք դպրոց չգնաց եւ ասկէ անկէ հաւաքած էր իր գիտցածը: Կռանդ՝ գիւղացի տղայ մը թշուառ կեանք ապրեցաւ անշուք տան մը մէջ՝ Օհին գետին ափունքը մինչեւ տասնըեօթ տարեկան: Կրօսըր Քլիվլենտի ընտանիքը չքաւոր էր, եւ առջի օրէն իր ապրուստը ճարելու հարկին մէջ էր:

Ինչո՞ւ հեռուները կ'երթանք: Դեռ երկու ամիս առաջ մեր մէջ հիւրասիրեցինք այն մեծ հայր եղբ. Ճորճ Մարտիկեանը, որուն կեանքը սկսած է գաղթականութեան գրկանքներով, որբանոցներու թշուառութեամբ եւ ճաշարաններու մէջ աման լուալու սկզբնաւորութեամբ:

Ասոնց նման դեռ ուրիշ օրինակներով կարելի է հաստատել սա իրողութիւնը թէ մարդ կարող է նոյնիսկ ամենաբարձր աստիճաններու հասնիլ *ինքնաշխատութեամբ*:

Մրցակցութեան, ելեկտրականութեան, գիտական հրրաշալի նորութիւններու, առետրական հսկայ ձեռնարկ-

ներու, եւ վերջապէս տնտեսական այս դժուարին ժամանակաշրջանին՝ որքան հետեւինք հոյակապ դէմքերու օրինակին, այնքան աւելի խանդավառօրէն կը փարինք մեր աշխատութեան, կը սիրենք զայն՝ անտարբեր շատ անգամ մեր առջեւ ցցուող ապառաժներուն, որոնց վրայէն սակայն կա յճարը մագլցելու:

Եւ որո՞նք պիտի կրնային ամենէն աւելի իբր առաջնորդ ծառայել կեանքի այլեւայլ ասպարէզներու մէջ անփորձ սկսնակներու եթէ ոչ առեւտրական, գեղարուեստական, դիւանագիտական, գրական, գիտական եւ ամէն ճիւղերու մէջ յաջողած անձնատրութիւններ, որոնց մեծագոյն մասը անցած է իր նախնական քայլերուն մէջ թշուառութեան ու զրկանքի անխուսափելի շրջանէ մը, որմէ ետքը միայն ձեռք ձգած է յաղթանակը:

Կեանքի պայքարին մէջ յաղթանակելու համար կամք եւ յարատեւ աշխատանք պէտք է: Յաջողութիւններն ու յաղթանակները զանոնք ձեռք ձգելու մտադրութեամբ թափուած քրտինքի չափով են պայմանաւորուած:

Իւրաքանչիւր հայ երիտասարդ կրնայ յաջողիլ կեանքի ասպարէզին մէջ, եթէ սիրէ իր սկսած գործը եւ յարատեւէ:

Շնորհիւ մեր ցեղային առաքինութիւններուն, աշխատասիրութիւնը, հնարամտութիւնը, ճաշակն ու գեղարուեստի հանդէպ մեր սերն ու ընդունակութիւնը, որոնք մեզի փոխանցուած են ժառանգականօրէն, մեծագոյն ազդակներ են մեզ դէպի յաջողութիւն առաջնորդող:

Մենք մեզ արժեցնելու, մեր ցեղը որակով բարձր պահելու, կեանքի այս դժնդակ պայմաններուն տոկալու եւ գոյատեւելու համար իւրաքանչիւր հայ երիտասարդ պարտաւոր է արժէք մը ըլլալ:

Յաջողութեան համար հետեւեալ խրատները կը կարծենք թէ օգտակար կ'ըլլան մեր երիտասարդ ընթերցողներուն:

Ա- Ուշադրութեամբ քննէ՛ գործիդ, դասերուդ եւ արհեստիդ ամէն մէկ մանրամասնութիւնը:

Բ- Մի՛ յետաձգեր այսօրուայ գործդ վաղուան, այսօր ըրէ՛:

Գ- Առաջ քալէ՛, եւ եթէ սխալ քայլ մը առնես, վերադարձի՛ր եւ ճշդէ՛:

Դ- Պատուաւոր եղի՛ր:

Ե- Պարտքերդ իսկոյն վճարէ՛:

Զ- Անօգուտ յարաբերութիւններ մի՛ մշակեր:

Է- Ոգելից ըմպելի մի՛ գործածեր:

Ը- Ամէնուն հետ քաղաքավար եղի՛ր:

Թ- Մի՛ յուսահատիր:

Յաջողութիւնը գաղտնիք մը կամ բախտ մը չէ, այլ կամքի եւ յարատեւութեան պտուղը:

Միրելի ընթերցող աշխատի՛ր գործադրել վերոյիշեալ տասը խրատները:

Անպայման կը յաջողիս:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 50

«ԱՐԵՒԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ»Ի ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Տարի մը եւ մէկ ամիս եղաւ «Արեւելք Մարգաշխարհ»ի հրատարակութեան: Անցնող 13 ամիսներու ընթացքին 52 թիւ «Մարգաշխարհ» լոյս տեսած է 26 մեծ ծաւալով եւ 26 ներկայ ձեւին մէջ փոքր ծաւալով:

«Մարգաշխարհ»ի հրատարակութեան օրէն առաջ եւ մանաւանդ վերջը, մարգական կեանքը Սուրիոյ մէջ շնորհիւ քաղաքական դէպքերու գրեթէ դադրած է: Արտասահմանի, նոյնիսկ դրացի երկիրներու հետ յարաբերութիւններն ու շփումները դժուարացան, եւ այս պատճառաւ մարգական մրցումներն ու հանդիպումներն ալ որոշ սահմանափակումներու ենթարկուեցան:

Եւ ահա այս դժուարին կացութեան մէջ «Արեւելք Մարգաշխարհ»ը շարունակուեցաւ հրատարակուիլ ի գին նիւթական եւ բարոյական մեծ զոհողութեանց:

Կրցա՞ւ «Մարգաշխարհ»ը իրմէ ակնկալուած մարգական, սկառուտական եւ բարոյական մթնոլորտը ստեղծել:

Կրցա՞ւ մարգասէր երիտասարդութեան ինքզինք պարտադրել ու սիրցնել:

Յաջողեցա՞ւ իրաւ մարզիկներ յառաջացնել ի խնդիր տարուած աշխատանքով տեղ մը հասնիլ:

«Մարգաշխարհ»ը իր ներկայ բովանդակութեամբ բաւարարութիւն չի տար խստապահանջ ընթերցողներուն:

«Մարգաշխարհ»ը պէտք չէ բաղդատել եւրոպական մարգական հանդէսներու հետ: Մենք ոչ հնարաւորութիւն եւ ոչ ալ կարելիութիւն ունինք նման թերթեր հրատարակելու:

Որովհետեւ անապատի մէջ նստած, գետերու, գեղեցիկ լիճերու, գոյնգոյն ծաղիկներու եւ անտառներու մասին մըտածել կարելի չէ:

«Մարգաշխարհ»ը անապատի մէջ գտնուած փոքրիկ ովասիս մըն է, գրեթէ կտրուած աշխարհէն, որ կը բաւարարուի իր փոքր ածուով:

Այսուամենայնիւ «Մարգաշխարհ»ը իր 52 յաջորդական թիւերով աշխատած է իր ընթերցողներուն ծանօթացնել միջազգային մարզական կեանքը, եւ ի մասնաւորի Հայաստանի եւ սփիւռքի հայ մարզիկներու եւ արուեստագետներու յաջողութիւնները:

Մենք աշխատեցանք օրը օրին տեղեակ պահել մեր ընթերցողները միջազգային կարելոր հանդիպումներու ֆութպոլի, պասքէպոլի, աթլէթիք խաղերու, հեծելարշաւի եւ այլեւայլ խաղերու, տալով մանրամասնութիւններն ու արդիւնքները:

Շարժանկարի եւ գեղարուեստի մարզին մէջ ալ հնարաւորութեան չափով ներկայացուցինք ծանօթ արուեստագետները, դերասան դերասանուհիները եւ մանաւանդ հայ արժէքները:

«Մարգաշխարհ»ը առաւելաբար իր էջերը լայն բացաւ Սուրիոյ մարզական կեանքը եւ ի մասնաւորի Հ.Մ.Ը.Մ.-ի գործունէութիւնը ներկայացնելու համար:

Հայաստանի, հեռաւոր գոյգ Ամերիկաներու, Եգիպտոսի, Յունաստանի, Ֆրանսայի, Իրաքի, Պարսկաստանի, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ տեղի ունեցող մարզական եւ գեղարուեստական որեւէ շարժում, յիշատակի արժանի որեւէ նուաճում ուրախութեամբ եւ հպարտութեամբ արձանագրած ենք «Մարգաշխարհ»ին մէջ, ցոյց տալու համար, որ հայ ժողովուրդը մարզական եւ գեղարուեստական մարզին մէջ ալ կրնայ արժէքներ տալ մեծերու կողքին:

Մենք աշխատեցանք սկաուտին, ֆութպոլիստ եւ պասքէթպոլիստին, մարզիկին եւ ընթերցողին օգտակար եւ առաջնորդող նիւթեր եւ գիտելիքներ տալ:

Մեր միակ նպատակը եղաւ նկարագրով մաքուր ազնիւ ու վեհանձն սկաուտներու եւ իրաւ մարզիկներու փառանգ մը ստեղծել:

Մենք հետամուտ եղանք սկաուտի, մարզիկի եւ հասարակութեան մէջ թիրիմացութեան մը հետեւանքով արմատացած մտայնութիւն մը յեղաշրջել: Այսինքն շեշտեցինք ու կրկնեցինք թէ մարզական կեանքի մէջ կարելորը ոգին եւ նպատակն է, ոչ թէ յաղթութիւնը կամ պարտութիւնը:

«Մարզաշխարհ»ի միամեայ կեանքը, ի հարկէ բաւարար չէ սպասուած արդիւնքին հասնելու համար:

Բոլորս ալ կը փափաքինք, որ այս թերթը շարունակուի, յարատեւէ, որովհետեւ կարիք կայ անոր առաջնորդութեան: Այս իրագործելու համար պէտք է մեկտեղուին ոյժերը: Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.-ական պէտք է բաժանորդագրուի, բարոյապէս եւ նիւթապէս աջակցի անոր:

* * *

«Արեւելք Մարզաշխարհ» Ա. տարի, թիւ 52

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՒՆԸ ՄԻՇՏ ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ

«Կամբ»

Մքանչելի երիտասարդութիւն ունինք մենք:

Առանց վարանումի կրնանք յայտարարել, որ հայոց նորագոյն պատմութեան կերտողները եղած են մեր նոր սերունդները:

Անցեալ դարու երկրորդ կիսու գաղափարական տոգորումները, հանրային շարժումները, քաղաքական խմբումները եւ յեղափոխական խոյանքները երիտասարդութեան մտայղացումներ էին եւ անոնց ոգեկան ու իմացական ստեղծագործութիւնները:

Երիտասարդ սերունդները ոչ միայն կը ստեղծէին ու կը հրահրէին այդ շարժումները, այլ նաեւ մինչեւ վերջ կը մնային պատնէշին վրայ՝ պայքարի յառաջաւոր խրամատերուն մէջ:

Ոչ մէկ ժողովուրդ իր ազգային դատին եւ ազատութեան գաղափարին՝ այնքան երիտասարդ զոհեր տուած է, որքան որ հայութիւնը: Եւ պայքարի բոլոր ճակատներուն վրայ՝ ռազմական, յեղափոխական, կրթական ու գաղափարական:

Եւ հայ երիտասարդութեան հետ ոչ ոք կրնայ մրցիլ անդրդուելի կամքի եւ անձնուիրութեան մէջ: Անոնք միշտ ալ գերադասած են գիտակցական մահը եւ երբեք զլուխ չեն խոնարհած բռնութեանց ու բռնակալներուն առջէն:

Թերթեցէք մեր վերջին հարիւրամեայ պատմութիւնը՝ անցեալ դարու վաթսունական թուականներէն սկսեալ եւ պիտի համոզուիք, որ հայոց պատմութեան անիւր դարձընողները եղած են երիտասարդ սերունդները, յաճախ ալ անողորքաբար կոխկոտուելով այդ անիւնէն:

Ներկայիս այ, երբ վայրկեան մը դիտենք մեր շուրջը, Հայաստանէն մինչեւ Հարաւ. Ամերիկա, պիտի տեսնենք, որ ազատութեան գաղափարի եւ ազգային գոյամարտի յառաջաւոր դրօշակիրները կը հանդիսանան հայ երիտասարդները:

Որպէս օրինակ բերենք Պ. Այրէսի Արմենիա Երիտասարդաց Միութիւնը, որ տասնըեօթը տարիներէ ի վեր հաւատաւոր ու աննահանջ լծուած է հայապահպանման կարեւորագոյն աշխատանքին, միշտ բարձր բռնած գաղափարական այն դրօշը, որ տարագիր հայերուն պիտի առաջնորդէ դէպի Ազատ ու Անկախ Հայրենիք:

Մենք մեր ողջ էութեամբ կ'ընդվզինք բոլոր այն թերահաւատներու եւ յոռետեսներու դէմ, որոնք կը ստորագնահատեն մեր երիտասարդներուն գաղափարական կեցուածքը եւ ազգային նկարագիրը: Եթէ գոյութիւն ունին երիտասարդներ, որ դուրս մնացած են մեր ազգային հունէն, ապա յանցաւորը այդ նոյն թերահաւատութիւն ու յոռետեսութիւնն է:

Պարտուողական հոգեբանութեամբ եւ յուսաբեկ, անոնք հեռու պահած են իրենց զաւակները հայ դպրոցներէն, ազգային կեանքէն ու գաղափարական մթնոլորտէ: Հայ մնալով ի՞նչ պիտի շահի զաւակս, երբ օտար միջավայրին մէջ յառաջանալու այնքա՛ն հնարաւորութիւններ կան, այս սխալ տեսակէտը ունին կարգ մը հայրեր:

Սակայն անոնք պէտք է գիտնան, որ մէկը միւսին չի խանգարեր: Այլ՝ ընդհակառակը, մէկը կը լրացնէ միւսը: Որովհետեւ՝ իրենց զաւակները հայկական նկարագիր ունենալով է որ պիտի յաջողին ապագայ կեանքին մէջ: Իսկ այդ նկարագիրը կը դարբնուի միայն հայ կրթարաններէն ներս եւ Հայ Երիտասարդաց Միութեանց մէջ:

Հայ մանուկը կը ծնի իր ցեղային արիւնը կրելով երակներուն մէջ: Բնութեան գաղտնի ոյժով մը, ան իր հոգիին մէջ թաքնուած ունի հայուն ազատատենչ ոգին, ստեղծագործական միտքը եւ աշխատանքի հրաշագործութիւնը:

Մեծերուն եւ աւագներուն կը մնայ, տարիքին հետ զուգընթաց, դրսեւորել ու հովանաւորել իրենց զաւակներուն հայկական այդ յատկութիւնները ու դրոշմել անոնց ճակտին ազգային գաղափարական կնիքը:

Եթէ կ'ուզենք որ մեր երիտասարդները քալեն իրենց նախորդներու հետքերով:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ա. տարի, թիւ 52

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լ. Մասպանաճեան

Ֆիզիքականի հետ զուգընթաց նաեւ պէտք է դաստիարակուի նկարագիրն ու միտքը:

Մեր մարզիկները, ֆութպոլիստներն ու սկաուտները ֆիզիքապէս դաստիարակելու միջոցին պէտք չէ մոռացութեան տրուին անոնց մտքի եւ հոգիի դաստիարակութիւնը:

Նկարագրի, մտքի ու հոգիի դաստիարակութենէն զուրկ մարզիկները դժբախտաբար ակնկալուած արդիւնքներուն չեն հասնիր եւ առհասարակ որեւէ օգուտ եւ ծառայութիւն չեն կրնար ունենալ իրենց շրջապատին:

Փոքր տարիքէն սկսած մտային եւ հոգեկան դաստիարակութիւնը հրաշքներ կը գործէ:

Դաստիարակութեան մեծագոյն դպրոցը ընտանեկան յարկն է:

Հիմնական եւ ամբողջական դաստիարակութիւնը կը սկսի փոքր տարիքէն, կարելի է ըսել օրօրոցէն:

Ընտանեկան յարկէն ներս, իր փոքր տարիքին յոռի դաստիարակուած փոքրիկը, ապագային որքան ալ լաւ պայմաններու մէջ բախտը ունենայ դպրոցի եւ համալսարանի մէջ իր ուսումը կատարելագործելու, չի կրնար ձերբազատուիլ այն գէշ եւ յոռի մոլութիւններէն, որոնք ստացած է իր ծնողքէն:

Առհասարակ ծնողքները աններելի թիրիմացութեան մէջ են իրենց զաւակներու դաստիարակութեան խիստ կարեւոր խնդրին մէջ: Շատ մը ընտանիքներ կը կարծեն, թէ իրենք որեւէ պարտականութիւն չունին իրենց զաւակներու դաստիարակութեան մէջ: Անոնք իրենց զաւակներու դաս-

տիարակութեան ամբողջ հոգը կը ձգեն դպրոցներու եւ զանազան միութեանց ուսերուն վրայ:

Այս դժբախտ իրողութեան մեծագոյն փաստը դպրոցներ եւ միութիւններ առաջնորդուած փոքրիկներու ցուցաբերած երեւոյթներէն ի յայտ կու գան:

Հինգէն վեց եւ տասէն տասներկու տարեկան հազարաւոր փոքրիկներ դպրոց եւ մարզական միութիւն կ'առաջնորդուին: Առաջին իսկ վայրկեանին այս անմեղ փոքրիկներու մեծամասնութեան մօտ կը նշմարուին ընտանեկան յոռի դաստիարակութեան գիծեր: Գողնալու, հայհոյելու, կոտրել-թափելու, աղմկելու գէշ բնաւորութիւններ, որոնք անպայմանօրէն սորված են իրենց ծնողներէն: Բթամտութիւնը, յարգանքի պակասը, աղտոտութիւնը, անճարակութիւնը անոնց, կը մատնանշեն իրենց ընտանեկան յարկի իրական պատկերը:

Մեր զաւակներու նկարագիրը կը սկսի կերտուիլ իրենց ծնած օրէն: Անոր անխօս լեզուն, լսող ականջն ու տեսնող աչքերը մեր բոլոր շարժումներուն, խօսքերուն եւ արարքներուն ուշադրութեամբ կը հետեւին: Անոնք կ'ընդօրինակեն մեր լաւ կամ գէշ բոլոր արտայայտութիւնները:

Փոքրիկի դաստիարակութեան նուիրական գործին մէջ ծնողները մեծ բաժին ունին: Ուշադիր պէտք է ըլլալ անոնց ներկայութեան մեր բոլոր արտայայտութեանց վարուելակերպի եւ կենցաղի մէջ: Ոչ թէ միմիայն ուշադիր ըլլալ, այլ զանոնք փոքր տարիքին պէտք է դաստիարակել հոգեկան, իմացական եւ նկարագրի բարձր սկզբունքներով:

Ծնողներ եթէ անհոգ են իրենց զաւակներու առօրեայ կեանքի առնչութեամբ, չեն մտահոգուիր անոնց հոգեկան եւ ֆիզիքական տազնապներով եւ դժուարութիւններով, ձգած են զանոնք սանձարձակ, աներեւոյթ ձեռք մը կայ, որ այդ մանուկները կ'առաջնորդէ դէպի վատ բաները:

Միրելի պատանի եթէ դժբախտութիւնը ունեցած եւ եւ ունիս ծնողքէդ յոռի դաստիարակութիւն ստանալու, ջանայ զանոնք ուղղել դպրոցիդ, Հ.Մ.Ը.Մ.-ի եւ արհեստանոցիդ մէջ ընդօրինակելով ուսուցիչիդ, ղեկավարիդ եւ վարդապետիդ լաւ յատկութիւնները:

Մեր ներկայ սերունդը հիմնական առողջ դաստիարակութեան պէտք ունի: Ուսուցիչներ, վարիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարներ եւ արհեստաւոր վարպետներ պէտք է լրջօրէն մօտենան այս խնդրին:

Ժողովուրդի մը քաղաքակրթութեան աստիճանաչափը իր դաստիարակութենէն կախում ունի:

Մարգադաշտերու մէջ, մրցումներու եւ նոյնիսկ փորձերու միջոցին առհասարակ կռիւները, անտեղի վիճաբանութիւնները ու անվայել հայիոյութիւնները արդիւնք են դաստիարակութեան պակասին:

Որքա՛ն դժուարութիւններ, նիւթական վնասներ, հակառակութիւններ եւ թշնամութիւններ խնայուած պիտի ըլլային եթէ՝ մեր մարզիկները նկարագրի եւ հոգիի հիմնական դաստիարակութիւն ունենային:

Միրելի մարզիկ, Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանեկան յարկը քեզ դաստիարակելու համար յարմարագոյն վայրն է:

Հ.Մ.Ը.Մ.-ի մէջ դուն կը գտնես զոհաբերութեան եւ հնազանդութեան հոգի. պարտականութիւն, իրարօգնութիւն, սէր եւ յարգանք: Մկաններդ զօրացնելու միջոցին մի՛ մոռնար նաեւ նկարագիրդ բիրեղացնել: Առանց հոգեկան եւ նկարագրի դաստիարակութեան կարելի չէ կատարեալ մարզիկ դառնալ:

Ահա այս է Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնական նպատակը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 2

ՄԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.-ԷՆ ՆԵՐՄ

Լ. Մասպանաճեան

Քառասուն տարի առաջ 1 Նոյեմբեր 1918-ին Գրիգոր Յակոբեաններու եւ նմաններու հիմնած Հ.Մ.Ը.Մ.-ը իր սկաուտական եւ մարզական ճիւղերով համակեց որբացած, այլասերած ու մարդկային ընկերութենէ դուրս նետուած մեր ազգին վերապրող մնացորդները:

Հ.Մ.Ը.Մ.-ը եւ սկաուտական շարժումը, առաւելապէս, այնքան ճշգրտօրէն պատշաճեցաւ մեր ինքնապաշտպանութեան պայքարին ու այնքան յարմար ժամանակի մը զուգադիպեցաւ իր յայտնութիւնը, որ ան այսօր ալ դեռ կը մնայ հզօրագոյն ազդակներէն մին մեր ցիրուցան եւ հայրենավտար մեր բեկորներուն ազգապահպանման:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնարկութենէն քառասուն տարի անցած է, ու հայ ժողովուրդի ծոցին մէջ գործող այս միութիւնը, շնորհիւ իր անշահախնդիր եւ ցեղադրոշմ գործունէութեամբ կրցաւ ինքզինք արժեցնել ու պարտադրել:

Հ.Մ.Ը.Մ. եւ Սկաուտութիւն նոյնացած, իրար միաձուլուած կ'ուզէ ամուր բարոյական մը, տոկուն նկարագիր մը տալ Մփիւռքի հայ կեանքին մէջ հասակ նետող մեր դեռատի սերունդին:

Ազգասէր, անձնագոհ, պատուախնդիր, պարտաճանաչ, հնազանդ ու կարգապահ պատանիներու բանակ մը, օժտուած առողջ ֆիզիքականով եւ մաքուր նկարագրով, հայ ցեղին գոյատեւման մեծագոյն երաշխիքն է:

Ցեղին տեւականացումն ու գոյութիւնը երաշխաւորող այս բանակը Հայ ժողովուրդը յանձին հայ սկաուտութեան ունի այսօր եւ աւելի ուժեղ կրնայ ունենալ վաղը, եթէ մենք

նիւթապէս եւ բարոյապէս աւելի աջակցինք այս մեծ կազմակերպութեան:

Սկաուտը մարդկային բարձրագոյն տիպի նախագիծն է: Սկաուտութիւնը երկար շրջան մըն է, հաստատուն եւ ամէն փորձութեան դիմացող նկարագրի մը պատրաստութեան եւ կազմութեան:

Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտին առաջին ստորոգելին՝ ծառայութեան անսահման ոգին է:

Ազգին, հայրենիքին եւ եկեղեցիին ծառայելու ուխտով երդուած հայ սկաուտներու բանակ մը նիւթեղէն զէնքերով օժտուած բանակներէն աւելի զօրաւոր է:

Սկաուտութեան անարգել, անկաշկանդ զարգացումը մեր կեանքի պայմաններէն մէկը պէտք է նկատուի:

Սփիւռքի թէ՛ Հայրենիքի մէջ անոր պէտք ունինք:

Անոր պէտք ունինք մասնաւորաբար այսօր, երբ բովանդակ Հայութեան աչքերը յառած են նոր սերունդին վրայ, որ զանազան երկիրներու աննպաստ պայմաններու մէջ հասակ կը նետէ եւ կ'ուռճանայ:

Բազում զրկանքներով եւ զիկզակ ճամբաներով քառասուն տարուայ ճամբայ մը կտրեց հայ սկաուտութիւնը:

Այն պայմաններուն մէջ ուր կը գտնուինք, անոր անարգել զարգացման առջեւ բնական արգելքներ շատ կան արդէն:

Եթէ ամէն հայ քիչ մը խորհի գոնէ, սկաուտական խնդրին մէջ ներքին արգելքներէ պիտի խուսափի, նոր դժուարութիւններ պիտի չյարուցանէ:

Սկաուտ՝ անգլերէն բառ մըն է: Ան կը մասնաւորէ այն խելացի եւ յանդուգն զինուորը, որ իր բանակը կ'առաջնորդէ, թշնամիի շարժումներուն շուրջ իր կատարած խուզարկութիւններուն օգնութեամբ:

Սկաուտին հայերէն բառացի թարգմանութիւնն է *հետախոյզ* կամ *դէտ*: Հայոց մէջ սկաուտութիւնը շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.-ի , մեծ ընդունելութիւն գտաւ:

Սկաուտութիւնը՝ հայրենասիրութեան մասնաւոր ըմբռնում եւ գիտակցութիւն կը ջանայ ներշնչել պատանիին, կը հրահրէ զայն գործելու ոչ թէ միմիայն իրեն այլեւ ուրիշներու համար:

Հայ սկաուտը՝ այն իտեալ պատանին է, որ կը ձգտինք ունենալ մեր տուներէն, դպրոցներէն ներս:

Ահա այս ձգտումէն առաջնորդուած, քառասուն տարիէ ի վեր Հ.Մ.Ը.Մ. եւ սկաուտութիւն որպէս անբաժան գործակիցներ կրցան մեծ դեր մը կատարել հայ կեանքին մէջ:

Այսօր 1 Նոյեմբեր 1918 ճիշդ քառասուն տարի առաջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.-ը իր սկաուտական եւ մարզական կազմակերպութեամբ կը ներկայանայ հայ ժողովուրդին եւ ճակատաբաց կը յայտարարէ:

Հայ ժողովուրդի յարատեւման եւ ուժեղացման ի խնդիր չորս տասնամեակ աշխատեցանք նոր սերունդի ֆիզիքական, հոգեկան եւ բարոյական դաստիարակութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.-ը եւ սկաուտութիւնը այսօր որպէս ուժեղ եւ կազմակերպուած միութիւն պատրաստ է աւելի եռանդով եւ զոհաբերութեամբ նուիրուիլ այն վեհ նպատակի, այն բարձր սկզբունքի իրագործման, որ հիմնադիրները մեզի ժառանգ ձգեցին:

Բարձրացի՛ր եւ Բարձրացո՛ւր:

Յարգանք Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիրներուն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 3

ՓՈՔՐ ԲԱՆԵՐ

Լ. Մասպանաճեան

*Քիչ մը համբերութիւն մութ ճամբան կը լուսաւորէ,
Քիչ մը սէր ընտանեկան յարկը կ'երջանկացնէ,
Քիչ մը յոյս անձրեւոտ օդը կը պայծառացնէ,
Քիչ մը կարեկցութիւն յոգնածը կը կազդուրէ:*
Էնոն

Փոքր, աննշմար պարտականութիւններ հաւատարմօրէն, անձնագոհութեամբ, սիրով եւ համբերութեամբ կատարուելով է, որ կը կերտուին մանուկներու նկարագիրը:

Փոքր պարտականութիւններ կատարելու այս առիթները, որոնք մեզի կ'ընծայուին, մեր կեանքը օրըստօրէ կը դարձնեն ալ աւելի հաճելի:

Եթէ կեանքիդ ընթացքին փուճ բաներով ժամանակ չանցնես, միշտ զբաղուիս օգտակար բաներով, կեանքդ կը ներդաշնակուի եւ ուրախ տրամադրութիւն մը կ'ունենաս:

Ուսուցիչիդ, ծնողքիդ, վարպետիդ եւ սկաուտ աստիճանաւորիդ քեզի տուած փոքր պարտականութիւնները սիրով եւ բժախնդրութեամբ կատարէ՛, մի՛ յետաձգեր, մի՛ տրտընջար: Փոքր տարիքին կատարուած փոքր պարտականութիւններ քեզ կը պատրաստեն ապագային մեծ գործեր կատարելու կատարելիութեան:

Այսօր քեզ համար չնչին եւ անկարելոր երեւցող պարտականութեանց թերացումով, կրնաս ապագայ կեանքիդ ընթացքը բոլորովին փոխել:

Դպրոցական վերամուտի այս շրջանին հրճուանքով կը դիտեմ հազարաւոր հայ մանուկներուն, որոնք պատեհու-

թինը ունին դպրոց յաճախելու՝ իրենց ուսումը շարունակելու համար:

Բախտաւոր մանուկներ, ձեր ծնողքը յանձն առած ամեն տեսակ զոհողութիւն, դպրոց կը դրկեն ձեզ, որպէսզի դուք դառնաք ուսեալ, կրթուած երիտասարդներ:

Ձեր դպրոցական կեանքի սկիզբի օրերէն սկսեալ դուք պարտականութիւններ ունիք կատարելիք: Դաս պէտք է սորվիք, ճիշդ ժամանակին դպրոց պէտք է ներկայ ըլլաք: Եթէ առաջին օրէն չվարժուիք կանոնաւորութեան, փոքր պարտականութիւններ կատարելու սովորութեան, ձեր կեանքին մինչեւ վերջը պիտի շարունակէք մնալ անկանոն եւ ծոյլ:

Եթէ այսօրուան շատ թեթեւ դասերդ չսորվիս, վաղը երբ որ մեծնաս այն ծանր պարտականութիւնները երբեք պիտի չկրնաս կատարել:

Արհեստաւոր հայ պատանի մի՛ անտեսեր վարպետիդ քեզի յանձնած փոքր պարտականութիւնը, կատարէ սիրով եւ բժախնդրութեամբ, այն փոքր բաներու իրագործումով դուն կը բարձրանաս, կը վարժուիս աւելի մեծ գործեր տանելու դժուարութեանց:

Այսօրուան փոքր բաները սիրով եւ ինքնավստահութեամբ կատարէ, մեծ բաները ինքնաբերաբար պիտի յաջորդեն անոնց: Կեանքի մէջ մեծ պատեհութիւններ եւ գործեր անոնց հանդիպած են, որոնք փոքր տարիքին փոքր գործերը չեն արհամարհած:

Բոլոր մեծ մարդոց, մարզիկներու, ֆուրպոլիստ եւ պասքէթպոլիստներու կեանքը երբ ուսումնասիրէք, կը տեսնէք, կը համոզուիք, որ անոնց յաջողութեան գաղտնիքը կը կայանայ միմիայն իրենց փոքր տարիքին փոքր աննշան համարուած փորձերուն, պարտականութեանց տրուած կարեւորութեանց մէջ:

Գեշ սովորութիւններ, մեծ մեղքեր, նոյնիսկ ոճիրներ եւ գողութիւններ հետեւանք են փոքր տարիքին սկսուած եւ յաճախ աննկատելի փոքր մեղքերու: Փոքր մեղքերու, փոքր սուտերու կրկնութիւնն ու շարունակութիւնը, քեզ անզգալար կը մղեն մեծ յանցանքներու եւ մեղքերու: Փոքր սկարութիւններ, աննշան ցաւեր, յաճախ մեծ եւ ծանր հետեւանքներ կ'ունենան, երբ մեր ուշադրութենէն վրիպին:

Յաջողութեան մեծագոյն գաղտնիքը, փոքր տարիքին փոքր նկատուած պարտականութեանց ընծայուած կարեւորութենէն կախում ունի:

Այն պատանին, որ փոքր տարիքին կը վարժուի կարգ ու կանոնի, փոքր բաներու կարեւորութիւն տալու, փոքր պարտականութիւնները սիրով կատարելու, այդ պատանին կը խոստանայ մեծ ապագայ:

Միրելի հայ պատանի այսօրուան կեանքդ հայելին է քու ապագային: Մի՛ արհամարհեր այսօրուան քու փոքր պարտականութիւններդ, կատարէ զանոնք կանոնաւորութեամբ:

Ծնողքներ, ուսուցիչներ, արհեստաւոր վարպետներ, Հ.Մ.Ը.Մ.-ի եւ միութեանց վարիչներ մեծ դեր ունին պատանիները առաջնորդելու, զանոնք կանոնաւոր աշխատանքի մղելու, անոնց մէջ պարտականութեանց գիտակցութիւնը զարգացնելու, փոքր բաներուն մեծ ուշադրութեամբ հետեւելու սովորութիւնը արմատացնելու դժուարին գործին մէջ:

Մանուկներն ու պատանիներն են մեր վաղուան յոյսը: Մենք ծնողներս եւ անոնք մեր զաւակները, որքա՛ն բախտաւոր ենք այսօր բաղդատելով երէկին:

Գիտնանք այս ոսկի ատաղձը լաւագոյնս դաստիարակել:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 5

ԶՈՂՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՄՔ

Լ. Մասպանաճեան

*Թեւեր չունինք, չենք կրնար թռչիլ
Բայց ոտքեր ունինք, կրնանք մագլցիլ
Աստիճաններէն ելլելով կամաց,
Կը հասնինք գագաթին ամպամած:*

ԼՕՆԿՖԷԼԼՕ

Յաջողութեան մեծագոյն գաղտնիքը զոհողութեան մէջ կը կայանայ:

Բարոյական, ընկերային, գիտական ու մշակութային յառաջդիմութիւններն ու բարեշրջումները արդիւնք են մեծ զոհողութեանց:

Մարդիկ, որոնք կրօնքի, գիտութեան, ազատութեան եւ ճշմարտութեան համար պայքարեցան եւ զոհուեցան, անոնց անունները կը յիշուին պատմութեան մէջ:

Մարդկային, ազգային եւ հաւաքական կեանքի մէջ չկայ որեւէ վերելք, յաջողութիւն եւ յաղթանակ, որ չպահանջէ կամք, հաւատք եւ զոհողութիւն:

Յաջողութեան մասին հաւատք չունեցող վարանոտ մարդիկ մեծ գործեր չեն կրնար կատարել:

Կամքին պէտք է ընկերանայ նաեւ հաւատքն ու զոհողութիւնը: Այս երեք նախադրեալներէն ոեւէ մէկուն տկարացումն ու բացակայութիւնը կը տկարացնէ ու յաճախ ձախողութեան կը մատնէ առաջադրուած նպատակի իրագործումը:

Զուրկ են անոնք թոյ՛չքէն, որոնք չունին զոհաբերելու առաքինութիւն, երկաթեայ կամք եւ անսասան հաւատք:

Հայոց պատմութեան էջերը գեղեցիկ դրուագներով զարդարող բոլոր մեծ յաղթանակներն ու շքեղութիւնները արդիւնք են հաւատքի, կամքի եւ գոհողութեան մեծ ոյժին:

Աւարայրի բարոյական մեծ յաղթանակը, Մահակ-Մեսրոպի մեծ գիտը, Ապրիլ 24-ի մեծ աղետէն հրաշքով ազատուած հայութեան Յարութիւնը, Մայիս 28 փառայեղ յաղթանակը, Վանի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի, եւ Մուսա լեռան հերոսամարտերը, արդիւնք են հայու կամքին, հաւատքին եւ մեծ գոհաբերութեան:

Հ.Մ.Շ.Մ.-ի հիմնադրութիւնը, եւ անոր քառասնամեայ գործունէութիւնը միթէ չե՞ն փաստեր վերի հաստատումները:

Կամքի, հաւատքի ու գոհողութեան երեք սիւներու վրայ հաստատուած այս միութիւնը, շնորհիւ իր հիմնադիրներու եւ ղեկավարներու անձնագոհողութեան, կամքին ու հաւատքին կրցաւ քառասուն տարուայ մէջ սերունդ մը հասցնել, որ պարծանքն է հայութեան:

Մե՛ր անհատական, հաւաքական եւ ազգային կեանքին մէջ, եթէ կ'ուզենք հասնիլ առաջադրուած նպատակակետին, նախապայման է հաւատալ անոր իրագործումին, երկրորդ անխախտ կամքով հետապնդել զայն, եւ երրորդ՝ գոհողութեանց առջեւ կանգ չառնել:

Հաւատքէ եւ կամքէ պարպուած մարդիկ եւ ցեղեր դատապարտուած են մահուան: Անոնց կարծեցեալ յաջողութիւնները խափուսիկ երեւոյթներ են:

Չոհաբերութեամբ ձեռք բերուած յաջողութիւնները թանկագին են: Եթէ ունեցածդ, վայելածդ քու արդար քրրտիւնքի եւ գոհողութեան արդիւնք չեն, շուտով կը սպառին եւ կը չքանան անոնք՝ քեզ յուսահատութեան մատնելով:

Աշխատի՛ր քու սեփական միջոցներով քեզի համար տնտեսութիւն ստեղծել: Այս ընելու համար միայն ու միայն

պիտի ապաւինիս քու կարողութեանդ վրայ: Առանց յուսահատելու հետապնդէ զայն, անպայման կը յաջողիս, երբ միանայ անոր նաեւ հաւատքը, կամքը եւ զոհողութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.-ը իր անդամներուն նկարագրին մէջ կրցած է արմատացնել կամքի, հաւատքի ու զոհողութեան սկզբունքները: Հ.Մ.Ը.Մ.-ը կամքի տէր մարզիկի, հաւատք եւ զոհողութեան ոգի ունեցող անդամներու շնորհիւ կրցաւ փրկարար դեր կատարել գաղթաշխարհի հայութեան երիտասարդութեան մէջ:

Հայ երիտասարդ, քու կամքի, հաւատքի եւ զոհողութեան չափանիշը, երաշխիքն է անձիդ, միութեանդ եւ ազգին գոյատեւման եւ յաղթանակին:

Աւելի զօրացո՛ւր այս երեք առաքինութիւններդ, որպէսզի ապահովես երջանկութիւնը անձիդ եւ մանաւանդ ցեղիդ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 6

Հ.Մ.Ը.Մ.-Ի ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԸ

Լ. Մասպանաճեան

Քառասուն տարի առաջ, առաջին համաշխարհային պատերազմի վերջաւորութեան, զինադադարի առաջին օրերուն, երբ վերապրող Հայութիւնը արիւնի եւ աքսորի ճամբաներէն ետ կը վերադառնար իր քանդուած ու անբակուած օճախը վերաշինելու, Պոլսոյ մէջ խումբ մը երիտասարդներ հաւաքուեցան Գրիգոր Յակոբեանի գրասենեակը, կազմելու համար **Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.)**:

Գիշատիչ, բզքտող, հայ ժողովուրդը բնաջնջել ուզող այդ սեւ օրերէն ետք, իրարու քով, իրարու հետ, համերաշխ եւ անբաժան ապրելու ծարարը իր ծայրայեղ սաստկութեան հասած էր:

Դառն փորձառութիւնը մեզ հասկցուց, ամէն ցեղ իր փրկութիւնը իր ողնայարին վրայ միայն կրնար կանգուն պահել:

Ազգերու ժամանակակից կեանքին մէջ մարզանքն ու մարզախաղերը գրաւած են կարեւորագոյն տեղերէն մէկը:

Այսօր բոլոր քաղաքակիրթ ազգերու ղեկավարներ, պետական պատասխանատու անձեր կ'ընդունին, որ ժողովուրդի մը տոկալու եւ յարատելելու պայմանները մեծապէս կախում ունին նոյն ժողովուրդին անհատներուն ֆիզիքական եւ առողջապահական պայմաններէն: Ահա թէ ինչո՞ւ մարմնակրթական շարժումը, քաղաքակիրթ ժողովուրդներու մօտ, կը վայելէ պետական պաշտպանութիւն ու օժանդակութիւն:

Բայց ափսո՛ս, որ հայ ժողովուրդը եւ մանաւանդ անոր ղեկավարութիւնը այս բացարձակ ճշմարտութիւնը մինչեւ

այսօր չկրցաւ հասկնալ: Փաստ կ'ուզէք, շատերէն մէկը միայն կ'ուզենք մատնանշել: Նկատի առէք մեր դպրոցները, որ ցեղին ողնայարն է, հոն գրեթէ անտեսուած է մարմնակրթութիւնը:

Անուրանալի իրականութիւն մըն է այժմ, որ յետպատերազմեան մարդկութիւնը, երիտասարդութիւնը մասնաւորապէս, բոլորովին փոխուած է: Այժմ, նոր մարդը կու գայ մարզական շարժումներուն միջոցով եւ անոնց հետ:

Աշխարհի մէջ ոչ մէկ ժողովուրդ թերեւս այնքան պէտք չունի մարզական շարժման, որքան հայ ժողովուրդը: Դարեր սահեր անցեր են մեր ցեղին վրայէն, տառապանքի, ֆիզիքական ու բարոյական խոր ակօսներ ձգելով:

Քառասուն տարիէ ի վեր Հ.Ս.Ը.Մ.-ը մեր իրականութեան մէջ, իր սահմանափակ միջոցներով, այդ պակասն է որ կը լրացնէ:

Սփիւռքի մէջ չունինք հայրենի հող մեր ոտքին տակ, որ մշտնջենական սնունդ մատակարարէր մեր նորահաս սերունդներուն, բայց ունինք ապրելու եւ տեւականալու զօրաւոր կամք, ունինք հայ մնալու հզօր հաւատք եւ բարոյական մեծ արժէքներ: Այդ արժէքներէն հզօրագոյնն է Հ.Ս.Ը.Մ.-ը, անոր վսեմ նպատակը եւ աննուաճ ոգին, ու անոր հանդէպ հայ ժողովուրդի անվերապահ ու ջերմ համակրանքը:

Քառասուն տարի...:

Հ.Ս.Ը.Մ.-ի հիմնադիր սերունդը գրեթէ անյայտացաւ, բայց միութիւնը հետզհետէ ուռճացաւ, ծաւալեցաւ ու դարձաւ համազգային: Հիմնադիրներու անշահախնդիր ու անբասիր նկարագիրը, անոնց հաւատին ու զոհաբերութեան ոգին, Հ.Ս.Ը.Մ.-ի նպատակի իրագործման ի խնդիր անոնց ցուցաբերած կամքն ու յարատեւութիւնը մնաց եւ պիտի մնայ մեծ ժառանգութիւն յաջորդ սերունդներուն:

Քառասնամեակի առթիւ մեր խօսքը ուղղելով բոլոր Հ.Ս.Ը.Մ.-ական եղբայրներուն կոչ կ'ուղղենք անոնց, շարունակել գործը աւելի մեծ եռանդով ու հաւատքով, փաստել միութեան նպատակը ամուր եւ ընթանալ հիմնադիրներու ուղիով:

Քառասուն տարի ետք, մանաւանդ այսօր, աւելի քան երբեք հայ ժողովուրդը, սփիւռքի հայ երիտասարդութիւնը պէտք ունի ֆիզիքական եւ բարոյական առողջ դաստիարակութեան, տոհմային ու ազգային խոր գիտակցութեան:

Երբեք չբաւականանալ ներկայով եւ չհպարտանալ անցեալով:

Քանի հայ ժողովուրդը կ'ապրի պէտք ունի Հ.Ս.Ը.Մ.-ին: Քանի Հ.Ս.Ը.Մ.-ը կայ, հայ ժողովուրդը կ'ապրի:

Նոյն թափով եւ նոյն եռանդով քառասուն տարի եւս, եւ դուք պիտի տեսնէք հրաշքը:

Յիր ու ցանուած, հազար ու մէկ փորձութիւններուն ենթակայ հայ երիտասարդութիւնը պէտք է փրկել ապականութեանց, այլասերման բերաններէն: Յանուն մեր ցեղի գոյատեւման պէտք է գերմարդկային ճիգ թափել օրըստօրէ գունատուող մեր նոր սերունդը փրկելու համար:

Հ.Ս.Ը.Մ.-ին վիճակուած է այս ծանր պարտականութիւնը ազնիւ, պատուաբեր եւ վեհ պարտականութիւնը:

Ան քառասուն տարի իր միջոցներուն ներած չափով կատարեց զայն, եւ այսօր երկրորդ քառասնամեակի սեմին կրկին պատրաստ է կատարելու զայն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 11

ԻՆՉ ՈՐ ԿԸ ՑԱՆԵՆՔ, ԶԱՅՆ ՊԻՏԻ ՀՆՁԵՆՔ

Լ. Մասպանաճեան

Դեռատի եղբայրներ.

Կեանքի մէջ պատահական բան չկայ:

Ամէն դէպք, արարք, յաջողութիւններ եւ ձախողութիւններ իրենց պատճառը ունին:

Արագ սուրացող ինքնաշարժը անզգուշութեան մը հետեւանքով կը շրջի, կեանքի եւ նիւթական մեծ վնասի մը պատճառ կ'ըլլայ:

Դիւրավառ կարգի մը բռնկելուն կայծ մը կը բաւէ, որ մեծ հրդեհ մը յառաջացնէ:

Այս բոլորը պատահմամբ տեղի չեն ունենար: Ամէնը իրենց պատճառը ունին:

Նաեւ մեր կեանքի մէջ, յաջողութիւններ, փայլուն դիրքի մը տիրանալ, հարստանալ, առողջ կազմ ունենալ, հասարակութեան մէջ պատուաւոր տեղ մը գրաւել, աշխատութեան եւ նախապատրաստութեան արդիւնք են:

Յաջողութիւնները իրենք իրենց չեն գար: Յարատեւութեան, զօրաւոր կամքի եւ գոհողութեան միջոցաւ կը կերտուին անոնք:

Անակնկալներ կրնան պատահիլ, մեր կամքէ անկախ ազդակներ կրնան իրենց բաժինը ունենալ մեր ձախողութեանց եւ յաջողութեանց մէջ: Սակայն անոնք չեն կրնար ազդել մեր վրայ, եթէ ներքնապէս անոնց մէջ մենք կարելոր բաժին մը չունինք:

Կեանքը սքանչելի իրականութիւն է, իսկապէս: Դուք բազմաթիւ պատեհութիւններ ունիք կեանքը վայելելու եւ զայն յաջողութեան, յաղթանակի վերածելու:

Ձեր ներկայ ընտանեկան, ազգային միութենական շրջանակը ձեզի մեծ առիթներ կ'ընծայեն յաջողելու, յառաջ-
դիմելու եւ բարձրանալու համար:

Սակայն մէկ պայմանաւ: Պատրաստ պիտի ըլլանք
պատեհութիւնները դիմագրաւելու:

Նախապատրաստութիւն, ահա՛ այս է կեանքի մէկ կա-
րեւոր օրէնքը:

Նոր տարուայ մը սկիզբը կը գտնուինք: Մեր առջեւ
տարի մը ունինք: Ան ինչ պիտի բերէ չենք գիտեր, բայց մէկ
բան որոշ գիտենք: Գիտենք թէ ամէն մէկս կը ցանենք
կեանքի հունտեր, չար կամ բարի, որոնց արդիւնքը օր մը
ուշ կամ կանուխ պիտի հնձենք:

Մեզմէ ոմանք սուտեր, խարդախութիւններ, փոքր գո-
ղութիւններ, անզգոյշութիւններ կը ցանեն: Անկասկած պի-
տի հնձենք անոնց արդիւնքը: Ուրիշներ ալ կը ցանեն փոքր
ծառայութիւններ, ժպիտներ, բարի սովորութիւններ եւ վեհ
նկարագիր: Անոնք եւս պիտի հնձեն իրենց ցանածին ար-
դիւնքը:

Մին ձախողութիւն եւ դժբախտութիւն պիտի հնձէ,
միւսը՝ յաջողութիւն եւ խնդութիւն:

Զգո՛յշ ըլլանք թէ ի՞նչ կը ցանենք: Պատճառ եւ արդիւնք
անփոփոխելի, անյողողող օրէնքն է կեանքի:

Ինչ որ կը ցանենք, զայն պիտի հնձենք:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 12

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Լ. Մասպանաճեան

Մարդկային կեանքը պարտականութեանց երկար ճամբայ մըն է: Մեծ թէ փոքր, ուսեալ թէ անուս, կամայ թէ ակամայ պարտաւոր ենք քալել, վազել եւ տքնիլ, հասնելու համար անոր վախճանին:

Մեր կեանքը շրջապատուած է պարտականութիւններով, սկսած մեր փոքր հասակէն մինչեւ մահը: Պարտականութիւն հանդէպ մեծերուն եւ փոքրերուն, պարտականութիւն մեր նմաններուն, պարտականութիւն Հայրենիքին եւ ազգին, պարտականութիւն մարդոց եւ Աստուծոյ:

Պարտականութեան տեւական զգացումը մաքուր նկարագրի մը արտայայտութիւնն է:

Պարտականութեան զգացումը մարդիկ եւ անոնց բարոյական կառուցուածքը իրար կը միացնէ:

Առանց պարտականութեան գիտակցութեան, բոլոր ոյժերը, բարիքները, իմացականութիւնը, ճշմարտութիւնը, երջանկութիւնը եւ սէրը չեն կրնար հաստատուն եւ տեւական ըլլալ:

Կեանքը արժէք է, երբ ան պարտականութեանց նուիրուած է:

Պարտականութենէն խուսափում, կը նշանակէ ինքնաչեզոքացում:

Պարտականութիւնը արդարութեան, իրաւունքի զգացումի եւ բարոյական հասկացողութեան վրայ հիմնուած է:

Սիրով գործադրուած պարտականութիւնը բարութենէն աւելի բարձր եւ կատարեալ է:

Պարտականութեան զգացումը մեզի դժուարութեանց յաղթահարելու ոյժ եւ փորձառութեանց դիմակալելու ստույնութիւն կու տայ:

Մեր ստանձնած պարտականութիւնները իրականացնելու ջանքը մեզ կ'ազնուացնէ:

Պարտականութեան զգացումը մեր կեանքին ուղին կը հարթէ: Ան մեզի սորվիլ, հնազանդիլ, տոկալ եւ գիտնալ կը սորվեցնէ:

Պարտականութիւնը իր յատուկ ձեւին մէջ այնքան հարկադրող է, որ երբեք չենք դժկամիր եւ մտածեր զայն գործադրելու ժամանակ:

Անշահախնդրութեամբ գործադրուած որեւէ պարտականութիւն մեզի երջանկութիւն կը պատճառէ:

Մեզմէ իւրաքանչիւրը բացի իր անհատական եւ ընտանեկան պարտականութիւններէն, ստանձնած է նաեւ հասարակական, ազգային եւ միութենական պարտականութիւններ: Կան նաեւ կեանքի մէջ պարտադրուած պարտականութիւններ:

Արժեքաւորն ու գնահատելին մեր կամովին ստանձնած պարտականութեանց գործադրութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ.-ին անդամակցած ենք մեր յօժար կամքով, եւ այդ վայրկեանէն սկսեալ ստանձնած ենք պարտականութիւններ, որոնք պէտք է կատարենք:

Գայիկ թէ սկաուտ, վարիչ թէ խմբապետ, մարզիկ թէ ֆութպոլիստ, անդամ թէ վարչական, իւրաքանչիւրը պարտականութիւն ունի կատարելիք:

Հ.Մ.Ը.Մ.-ի մէջ մեր աստիճաններու բարձրացումը, ֆութպոլի Ա. խումբի անդամակցութիւնը, վարչական աթոռներ գրաւելը մեր պարտականութիւնները կը ծանրացնէ եւ կը շատցնէ:

Պարտականութեանց ծանրացումը կը նշանակէ պատասխանատուութեան յաւելում:

Հ.Մ.Ը.Մ.-ի անդամներ ենք: Կամովին մենք մեր անձը տրամադրած ենք անոր:

Արդարացիօրէն իրաւունք ունինք անկէ պահանջելու առաջադրուած նպատակի իրագործման միջոցները:

Բայց այդ պահանջներու առընթեր ունինք պարտականութիւններ, որոնք պարտադրուած ենք գործադրել: Ահա այդ պարտականութեանց գործադրութեամբ կ'իրագործուին նաեւ պահանջները:

Ուրեմն նախ կատարենք մեր պարտականութիւնները անշահախնդրօրէն եւ առանց ակնկալութեան: Եթէ բոլոր անդամները գիտակցօրէն մօտենան եւ անսակարկ նուիրուին իրենց ստանձնած պարտականութիւններուն, գայլիկէն սկսած մինչեւ վարչութեան անդամները, այն ատեն միութեան մէջ կը ստեղծուի ներդաշնակ գործունէութիւն:

Պարտականութեանց գործադրութեամբ ստեղծուած հոգեկան գոհունակութիւնը, վարձատրութեան մեծագոյն ձեւն է: Այս կը պահանջէ բացարձակ հաւատք եւ համոզում, մեզ պարտականութեան եւ գոհողութեան մղող նպատակին հանդէպ:

Մենք պարտականութիւններ ստանձնած ենք հայրենիքի, ազգի եւ միութեան համար:

Երբ ունինք այդ հաւատքը, երբ համոզուած ենք, որ այդ պարտականութեանց գործադրութեամբ ազգի, հայրենիքի եւ միութեան տեսականացման ու բարգաւաճման կը սատարենք, որեւէ ոյժ կամ արգելք չեն կրնար շեղեցնել մեզ ճամբէն:

Պարտականութենէն խուսափելով մենք կը փաստենք մեր տկարութիւնն ու հաւատքի պակասը: Իսկ պարտա-

կանութիւնը ստանձնելով եւ չգործադրելով կը դաւաճանենք նախ մենք մեզի եւ նաեւ նպատակին:

Յաջողելու միակ եւ ապահով միջոցը պարտականութեանց գործադրումն է: Բարձրանալու եւ բարձրացնելու միակ ճամբան զոհողութիւն եւ նուիրումն է:

Նախ կատարենք մեր պարտականութիւնները, եւ վերջը պահանջենք:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 14

ԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ ԵՂՔՕՐՄ ՀԵՏ

Գեորգ Տոնապետեան

«Օիծեռնակը բոյն կը շինէ
Ե՛ւ կը շինէ ե՛ւ կ'երգէ
Ամէն մէկ շիւղ որ կ'պցնէ
Իր հին բոյնը կը յիշէ»

Միրելի՛ կրտսեր եղբա՛յր,

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութենէն ի վեր բազմաթիւ միութիւններ եկեր ու անցեր են, չտոկալով աննախատեսելի դժուարութիւններուն, զորս մենք ալ ունեցեր ենք: Քառասուն տարուան մեր գոյութիւնը կու գայ ապտակելու այն չարամիտները եւ հոգիով ստրուկները, որոնք մեր ժամանակաւոր պարտութիւններուն մէջ մեր տկարութիւնը կ'ուզեն տեսնել: Պարտութիւններ՝ որոնք միմիայն ժամանակաւոր բնոյթ կը կրեն եւ անպայմանօրէն յաղթանակներու դուռ կը բանան:

Թերեւս երեց եղբայրներդ պատմած ըլլան որ Հ.Մ.Ը.Մ. իր անցեալի պատմութեան մէջ արձանագրած է ե՛ւ յաղթանակներ ե՛ւ պարտութիւններ: Ուրախացած՝ յաղթանակներով, սակայն երբեք չլացած: Յաւած պարտութիւններով՝ բայց եւ այնպէս երբեք ք յուսալքուած:

Այսօր սիրելի եղբայր, նոյն յանկերգն է որ կը կրկնուի: Հ.Մ.Ը.Մ. կը մնայ նոյն կազմակերպուած եւ զօրաւոր միութիւնը, նոյն կազմակերպութիւնը աւելի առոյգ եւ հաւատաւոր: Պարտութիւններ կրնանք թերեւս արձանագրել, սակայն միշտ այն համոզումով որ պայծառ արշալոյս մը մեզ պիտի դիմաւորէ:

Ամէն անգամ որ թերի մը կը սրբագրուի՝ շիւղ մը կ'աւելցուի բոյնի շաղախին վրայ եւ միշտ հինը կը յիշենք: Այո՛, սիրելի եղբայր, ժամանակը պիտի գայ որ դուն եւ քու եղբայրներդ, գործակցութեամբ, պիտի կերտեք այն կառոյցը, որուն մենք կը ցանկանք տասը տարիէ ի վեր:

Ամէն անգամ որ յիշես վերի քառեակը, ունեցիր Հ.Մ.Ը.Մ.ականի աննկուն հաւատքը, որ դուն հաստարմատ կաղնիին վրայ, տասնմէկ մարզիկներու բազուկները որպէս գերան եւ սրունքները որպէս սիւն գործածելով պիտի հաստատես ամբոց մը:

Միրելի եղբայր, առաքինին այն է, որ կը տեսնէ իր սխալը, կ'ընդունի զայն եւ կը ջանայ սրբագրել: Տգէտ է ան՝ որ չ'ուզեր տեսնել իր թերութիւնները եւ կը կարծէ անսխալական եւ անթերի ըլլայ: Մենք՝ քեզի կը մատնանշենք մեր սխալը, կը ջանանք սրբագրել: Չյաջողելու պարագային յուսահատ չենք, որովհետեւ քեզի նման հաւատաւոր եղբայրներու բանակ մը ունինք, որ այս մեծղի Միութեան ողնայարն է: Ժամանակը ի վերջոյ կու տայ իր լաւագոյն վճիռներն ու որոշումները: Մէկ բան միայն կը մնայ մեզի՝ ըլլալ պայծառատես եւ զուսպ: Ըլլալ քաջ՝ սակայն երբեք կռուական: Ըլլալ վեհանձն՝ բայց երբեք վախկոտ:

Տարիներէ ի վեր Հ.Մ.Ը.Մ.-ի անդամ ես, ապրած ես օրեր տաք ու պաղ, երջանիկ, ուրախ ու տխուր: Կը տեսնես նաեւ որ միութեանդ շարքերը միշտ կ'ուռճանան եւ աւելի կազմակերպուած հրապարակ կու գաս: Որքա՛ն ուռեցաւ կուրծքդ, երբ Արաբ Միացեալ Հանրապետութեան տարեդարձի տողանցքին, հպարտ ու խրոխտ տեսար անցքը քու եղբայրներուդ՝ որոնք այնքան ծափահարութիւններ իլեցին: Մէկ բան ունեցիր մտքիդ մէջ.- Այնտեղ ուր կ'ուզես վարդ մը տնկել՝ մարդիկ կը ջանան փուշերով շրջապատել,

առանց գիտնալու որ այդ փուշերը դատապարտուած են չորնալու արեւի կիզիչ շողերուն տակ: Սակայն քու տնկած վարդդ կը մնայ միշտ խնդումերես եւ բուրումնաւետ:

Այո՛, սիրելի եղբայր, ծիծեռնակներ կու գան շինելու ա՛յն, որուն դուն կը ցանկաս: Ծիծեռնակներ՝ որոնք մօտալուտ գարունը պիտի աւետեն՝ նոր կեանք, նոր աւիշ սփռելով չորսդին: Նոր ծաղիկներ տնկած ես արդէն եւ այժմ ես ալ քու կարգիդ կ'երգեմ վերի քառեակը եւ կը սպասեմ գարնան: Եւ դուն ունեցի՛ր այն հաւատքն ու կամքը՝ զորս մեզի տուեր են մեր նախորդները: Հաւատքը՝ շուսահատելու եւ կամքը՝ զօրանալու:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 18

Հ.Մ.Ը.Մ.-Ի ՓԱՌԱՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ ԱՅՍ ԴՐՕՇԸ

Մինաս Թեօլեօլեան

Ո՞վ արցունք բերաւ մեր աչքերուն, երբ Հ.Մ.Ը.Մ.-ի Նաւասարդեան հանդիպումին մեր ծաղիկ երիտասարդութեան շարքերը տողանցք կատարեցին երեսուն հազարի հասնող մարդկային ծովու մը առջեւ:

- *Մեր պատմութի՛ւնը:*

Անոնց ձիգ հասակին եւ բարձրաճակատ յառաջընթացքին մէջ, մեզմէ ամէն մէկը ժամանակակից իր պատմութեան վերապրումը գտաւ,- գտաւ պարտութիւնը ոճիրին, ու առ յաւետ նահանջը՝ բոլոր տեսակի վատութիւններուն:

Անոնց մէկ ժամուան տողանցքին մէջ տողանցեցին դարե՛րը,- իրենց յաղթանակի դափնիներով ու գիտակցուած պարտութիւններու վերանորոգիչ շունչով: Ակնթարթային վերապրումով մը, մեզմէ ամէն մէկը զգաց, թէ ճակատամարտներ կորսնցուցած ենք, բայց երբեք՝ պատերազմը: Զոհեր տուած ենք, սակայն չենք մեռած: Կրցած ենք մեր նահատակներու եւ անթիւ մեռելներու աճիւնը կամուրջ ու օղակ դարձնել՝ փառաւոր անցեալէ մը դէպի շքեղ ապագայ:

Ինչո՞ւ արցունք տամկացաւ մեր կոպերուն տակ, երբ մանուկ, պատանի ու երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.-ականներու բանակը, հպարտ եւ պղնձադէմ, ծփացող բազմութեան ծափերու որոտին ու կոկորդներու մէջ բռունցք դարձող յուզումին դէմ յանդիման, իր դրօշներուն վրայ պտտցուց ապրելու *ուխտը* մեր ժողովուրդին:

- Որովհետեւ՝ մեզմէ ամէն մէկը խոովքը ունեցաւ անմեռ ու մեծ ժողովուրդի մը շարունակութիւնը ըլլալու խոր գիտակցութեան:

Ո՞վ չզգաց, ժամերու այդ յուզումէն եւ խոովքէն վերջ, իր հոգիին ու մտքին մէջ արմատացող այն հաւատքը, թէ փշրուած անօթը,- հայ ժողովուրդը – իր ապրումներով ու իտեալներով, իր ուխտով ու պայքարով, իր բոլոր անկորուստ արժանիքներով, կը մնայ հարազատ ու անայլայլ *երկարաձգումը՝* յաւերժափառ Հայոց Պատմութեան, արիւնագիր անցեալի՛ն, որուն շաւիղներուն մէջ մեր արժանապատուութիւնը կը շարունակէ եռալ ու պղպջալ, եւ ուրկէ՛ մեր նոր սերունդները կ'ըմպեն ազգ մը արժեւորող ոգեկան աւիշը: Կ'ըմպեն կտակը մեռնողներուն,- միշտ արի ու բարձր մնալու, արատ չբերելու իրենց «գիտակցեալ մահու» դրօշին, եւ հաւատալու՝ Փոքր Ածուի պատմական կոչումին եւ յաւերժօրէն գոյատեւելու իրաւունքին:

Հ.Մ.Ը.Մ.-ի հրաշքը, իբրեւ Յայտնութեան Գիրքը հայ ժողովուրդի, կը խտացնէ ցեղային մեր կենսունակութեան, առոյգութեան եւ գաղափարական խոյանքներուն հոգեկան ու բարոյական էատարբերը: Ասոր համար է, որ *հայութեան* գծով ապրող ամէն մարդու համար՝ այդ կազմակերպութիւնը *մարդէրու* միախառնում մը կամ մէկտեղում մը չէ, այլ՝ այլապէս տօգունելու դատապարտուած ազգային կենսական արժանիքներու փայլատակում մը, վերանորոգ ընձիւղում մը,- *կոթողո՛ւմ* մը:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.-ականի մէջ՝ աճիւն մը կայ մեր հերոսներէն, որովհետեւ՝ ամէն մէկ անգամ, ծառայութեան կոչուած է՝ հերոսներու մահով անմահացած ազգային իտեալներու:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.-ականի մէջ անմահութեան մէկ գաղտնիքը կայ մեր փոքր ժողովուրդին, որովհետեւ՝ ամէն

մէկ անգամ կանչուած է *որակ* մը դառնալու, իր հայրենիքին ու ցեղին համար:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.-ականի մէջ՝ *պատմութիւնը կայ Հայ-յոց ժողովուրդին*, - որովհետեւ Պատմութիւնը անցեալ մը չէ միայն, այլէ՝ ներկայ մը, ու մանաւանդ ապագայ:

Չեն ծերանար ժողովուրդները, երբ երիտասարդութիւն ունին: Ա՛յն երիտասարդութիւնը, որ մեր զաւակներու տասը կամ քսան տարիքին հետ՝ կը բերէ արիութեան, հաւատքի, բարոյական սկզբունքներու, բայց մանաւանդ գոհագործումի ուխտ մը: Հ.Մ.Ը.Մ.-ականը նոյնքա՛ն մարդկայնական է, որքան ազգային: Ու ասո՛ր համար է, որ մոլեռանդ չէ իր աստելութիւններուն մէջ, սակայն անխախտօրէն մոլեռանդ է իր սերերուն մէջ, իր հայրենասիրութեան մէջ, իր ազատասիրութեան մէջ, իր այլասիրութեան մէջ, իր գաղափարապաշտութեան մէջ:

Ատելութեան եւ թշնամանքի ովկիաններէ անցաւ մեր ժողովուրդը: Թիւ տուաւ: Ինչք եւ նիւթական հարստութիւններ կորսնցուց: Քառասուն կտորի վերածուեցաւ, - դաղրեցաւ նոյնտեղ կամ միատեղ ապրելէ, իբրեւ ազգային ամբողջ: Սակայն չտուաւ իր որակը, չտուաւ իր ոգեկան ու բարոյական արժանիքները, ոգեղէն հարստութիւնները: Ու կը շարունակէ ապրիլ, - հակառակ սփիւռքեան իր ցանուցիւր պատկերին- գաղափարականօրէն *մէկ ժողովուրդ իբրեւ*, նո՛յն ազգային տենչերով, իր հայրենական պաշտամունքով, եւ ազգն ու հայրենիքը գոյաւորող հոգեկան բոլոր ստորոգելիներով:

Հ.Մ.Ը.Մ.-ականին համար չկան քաղաքական պատնէշներ, վարչակարգային արգելակներ, զինուորական փշաթելերու ցանցեր: Կան *ազգ եւ հայրենիք*: Եւ եթէ ան այսօր ֆիզիքապէս ներկայ չէ Հայաստանի մէջ, սակայն ներկայ եղած է միշտ, ու ներկայ է այսօր, ու ներկայ պիտի

ըլլայ վաղը՝ գաղափարական իր դրօշով,- *բարձրանալու եւ բարձրացնելու* ուխտով:

Հ.Մ.Ը.Մ. երեսուն կամ քառասուն տարի առաջ չծնաւ: Ինչպէս բոլոր հարազատ ծնունդները մեր փառապանծ պատմութեան եւ ժողովուրդին, ան եւս կար մեր հայրենիքին մէջ եւ մեր ժողովուրդի հոգիին մէջ, մերթ իբրեւ զսպուած տենչ ու թռիչք, մերթ իբրեւ արտայայտութիւն եւ խիզախում,- հերոսներու խոյանքի ճամբուն վրայ, գոհագործումի սեղաններու վրայ:

Ու այսուհետեւ ալ, ինչ որ ալ ըլլան պայմանները եւ ժամանակները, Հ.Մ.Ը.Մ.-ը պիտի շարունակէ, անկախաբար իր շարքերէն, ամբողջ մեր ժողովուրդը ունենալ Հ.Մ.Ը.Մ.- սկանութեան դրօշին տակ,- մանուկ հայորդիէն մինչեւ ալեւոր հայ ծերունին:

Հալէպի դաշտերուն վրայ Միութեան դրօշը պտտցնող Հ.Մ.Ը.Մ.-ական շարքերը, աներեւոյթ բայց յաւերժօրէն *իրական* ուրի՛շ դրօշ մըն ալ կը պտտցնէին իրենց բարձր ճակատներուն վրայ,- *Հայրենիքի երկու միլիոն հայ ժողովուրդի փառքը*: Այն փառքը, որ լուռ բայց խոր երկունքով մը կը խմորուի, իբրեւ ազատութեան եւ ինքնօրէն գոյութեան պաշտամունքով ապրող ժողովուրդի մը դարաւոր ուխտը: Եւ մենք, բազմահազար ներկաներս, *մանաւանդ ա յդ դրօշն էր որ կ'ողջունէինք մեր արցունքը մեր հաւատքին խառնած*:

Անցաւոր գոյութիւն մը, պարագայական խմբաւորում մը միայն պիտի ըլլար Հ.Մ.Ը.Մ.-ը, առանց համահայկական եւ յաւիտենական գաղափարներու: Պիտի ըլլար ու մնար... շատերէն մէ կը միայն, բուստային եւ արուեստական ծնունդ մը:

Չայն մենք գտանք անապատի աւազներէն, եւ յանուն գաղափարի աճիւնացած սերունդի մը երկունքէն ծնած

իբրեւ *կոչ* ու *պատգամ*: Հրաւեր՝ վերապրումի, եւ ուղեցոյց՝ նոր կերտումներու, նոր խոյանքներու եւ ճախրի: Անոր մէջ փնտռեցինք, կարենալ բարձրանալու, կարենալ ուղիղ եւ անդեղեւ քալելու, անկարելի վերելքներ նուաճելու հոգեկան ոյժը – եւ գտանք:

Կը հաւատանք, որ նաեւ ազգային մեր ամբողջական յարութիւնը Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշին տակ պիտի կերտենք, անոր երիտասարդութիւնը մեզի աւիշ դարձնելու համար:

Հա՛յ կնքելու համար մեր գաւակները:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 23

Հ.Մ.Ը.Մ.-Ը՝ ԾՆՈՒՆԴ ԱՊՐԻԼ 24-ԻՆ

Հ.Մ.Ը.Մ.-ականը

Երէկ սգատօն էր Ապրիլ 24-ը, այսօր մէկ միլիոն նահատակաց Յարգանքի Տօնն է ան:

Երէկ լաց ու կոծը, թշուառութիւնն ու ամայութիւնը շրջապատած էր մեզ, այսօր վերակենդանացած ամուր կեցած ենք ոտքի:

Երէկուան լացի պատը այսօր եղած է մեզ համար յոյսի, հաւատքի եւ յարգանքի պատուանդան:

1915 Ապրիլ 24...:

Վերապրողներս, որպէս ականատես վկաները այդ զարհուրելի աղէտին, այսօր իսկ սարսուռով եւ սարսափով կը յիշենք այդ թուականը:

Ապրիլ 24-ի եղեռնը մեզմէ իսկ ցեղի քան մէկ միլիոն անմեղ զոհ:

Ազգերու պատմութեան մէջ աննախընթաց այդ զարհուրելի ոճիրը, որ յղացաւ ու գործադրութեան դրաւ թուրք կառավարութիւնը, բնաջնջելու եւ վերջնականապէս մահացնելու համար հայ ցեղը: Երեք տարի շարունակ ան ջարդեց, գնդակահարեց, աքսորեց, տեղահանեց, հրկիզեց եւ տրորեց:

Ըստ երեւոյթին հրէշը յաջողեցաւ իրագործել իր դիւա-յին ծրագիրը...:

Պահ մը մենք յուսահատ ու գրեթէ կքած հոգեվարքի ճիչեր կ'արձակէինք: Իսկ անոնք մոլեգնած, պար կը բռնէին մեր դիակներուն շուրջ: Գութ եւ օգնութիւն հայցող մեր տասնեակ հազարաւոր անմեղ կոյսերու եւ երիտասարդ-ներու աղիոողորմ պաղատանքներուն անոնք կը պատաս-խանէին կացիններով եւ դաշոյններով:

Ապրիլ 24-ը հայ ժողովուրդին նիւթական եւ ֆիզիքական մեծ գոհողութիւններ պարտադրեց: Կորսնցուցինք գրեթէ ամէն ինչ: Զրկուեցանք մեր սիրելիներէն, ծնողներէն, հազարաւոր եկեղեցիներէն եւ դպրոցներէն, տուներէն եւ պապենական օճախներէն: Մնացորդացր 1918-ի վերջերը կը ներկայացնէր սրտաճմլիկ տեսարան: Որբեր, որբեւայրիներ բոպիկ, հիւանդ, թշուառ եւ օրուան հացին կարօտ:

Այսօր հազիւ կէս դար չանցած այդ ոճիրէն, հայ ժողովուրդը հրաշքի համազօր յայտնութեամբ մը, արդէն ոտքի կանգնած է: Ապրիլ 24-ին յաջորդեց Մայիս 28-ը:

Հ.Մ.Ը.Մ.-ը ծնունդն է Ապրիլ 24-ին: Հայ մնալու, հայ ցեղը տեսականացնելու, Նահատակաց կտակը իրագործելու, վիրաւորուած մեր արժանապատուութիւնը փրկելու, անդունդի եզրին հասած մեր ժողովուրդը ազատելու կոչուած Հ.Մ.Ը.Մ.-ը, այսօր քառասուն հինգ տարի վերջ, իր տասնեակ հազարաւոր մարզիկներով, սկաուտ եւ գայլիկներով, Արծուիկ եւ Արենայշներով կը տօնէ Ապրիլ 24-ի նահատակաց տօնը եւ կը յայտարարէ:

Ո՛վ սիրելի նահատակներ, ո՛վ սրբազան եւ առաքելատիպ մեծութիւններ, այսօր Ձեր մէկ միլիոն աճիւններուն առջեւ խոնարհաբար ծնրադիր, կու գանք մեր յարգանքը մատուցանել Ձեզ, եւ կրկին կ'ուխտենք շարունակել այդ ուղին, որ դուք Ձեր ողջութեան քալեցիք եւ սորվեցուցիք մեզ, եւ Ձեր նահատակութեամբ մեզի կտակեցիք զայն իրագործել:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 24

ՄԱՅԻՍ 28 ԵՒ ԱԶԱՏԱՏԵԼՉ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Մարգպետ

Անկախութեան եւ ազատութեան գաղափարն ու ձրգտումն է ազգերու յաւերժութեան գաղտնիքը:

1918 Մայիս 28...,

Պէտք է գուրգուրալ, պահել, ամուր փարիլ հայ ժողովուրդի ազատ եւ անկախ ապրելու զօրաւոր կամքն ու հաւատքը խորհրդանշող այս թուականին, որ հայոց պատմութեան էջերուն մէջ արձանագրուեցաւ այդ փառաւոր յաղթանակը կերտող տասնեակ հազարաւոր ազնիւ եւ քաջարի հայ մարտիկներու մաքուր արիւնով:

Պատրանք եւ առասպել մը չէ Մայիս 28-ը: Ան կրանիթեայ յուշարձան մը, ազատ եւ անկախ ապրելու վճռակամութեամբ քանդակուած կոթող մըն է, զետեղուած Երեւանի Աբովեան պողոտայէն մինչեւ սփիւռքի լուսաշող ոստանները:

Պահ մը շարժանկարի ժապաւենի նման Ձեր երեւակայութեան առջեւ բերէք 1900-ական թուականներէն մինչեւ 1918 Մայիս 28-ի դէպքերը: Քսանութը տարիներու ընթացքին մեր ժողովուրդը տառապեցաւ, զոհուեցաւ, տրորուեցաւ, համատարած տեղահանութեան եւ սպանութեան ենթարկուեցաւ: Պահ մը ամբողջ աշխարհ պատրաստուեցաւ դամբանականը լսել հայ ժողովուրդի մահացումին:

Բայց ահա կրանիթեայ կոթողը, հայ ցեղի ազատ եւ անկախ ապրելու անխորտակ կամքը յարութիւն առաւ, ցցուե-

ցաւ, նուիրաբերումի, գոհողութեան գերագոյն չափով ի մի հաւաքեց իր ոյժերը, հրաշքի համագօր եւ նահատակութեան համարժէք խոյանքով մը յարգանք պարտադրեց երկնուան իր ոսոխին, անարգ եւ ջարդարար թուրքին:

Մայիս 28-ը ոչ պատահականութեան եւ ոչ ալ պարագաներու նպաստաւոր դասաւորման արդիւնք է: Ան հայ ժողովուրդի ապրելու, տեւականանալու անխորտակելի կամքի արտայայտութիւնն է:

Մայիս 28-ը ոչ Լենինի բարեացակամութեան եւ ոչ ալ Քարա Քազիմ Պեքիրի գթութեան նուերն է: Ան հայ ժողովուրդի ծոցէն ծնած Անդրանիկներու, Դրօներու, Ռուբէններու, Արամներու եւ տասնեակ հազարաւոր կամաւոր հայ մտաւորականներու եւ ֆետայիներու արեան գինն է:

Մայիս 28-ը քսաներորդ դարու Վարդանանցն է:

Իրար տասնեւհինգ դարեր բաժնող այս թուականներուն միջեւ որքան մեծ նմանութիւն կայ, ազգովին ծառանալու հասարակաց թշնամիին դէմ: Երկուքին մէջ ալ կը գտնենք զինուորականն ու կրօնաւորը, ազգի եւ կրօնքի, հայրենիքի եւ սրբութիւններու պաշտպանութեան ի խնդիր աներեւակայելի գոհողութիւն եւ խիզախութիւն:

Մայիս 28-ի ծնունդը մենք կը պարտինք մեր նախնեաց դիւցազնական մարտնչումներուն եւ հերոսութեանց, սկըսած հեռաւոր թուականներէն մինչեւ Մասունցի Դաւիթ: Իսկ այսօրուան Հայաստանի գոյութիւնը կը պարտինք Մայիս 28-ին:

Երէկ թէ այսօր կարգ մը մարդիկ գիտակցաբար կ'ուրանան այս պատմական ճշմարտութիւնը, եւ անամօթաբար այդ հրաշալի թուական կերտող անհամար նահատակները անարգանքի սիւնին գամելով զանոնք կ'անուանեն աւազակներ եւ արկածախնդիրներ:

Ստրկութեան հոգեբանութեան ախտէն վարակուած մարդիկ են անոնք, որոնք պարպուած հայկական բոլոր առաքինութիւններէն, իրենց գոյութիւնը կ'ուզեն զգալի դարձնել ծառայելով իրենց կարմիր տերերուն:

Երկու պատմական թուականներ միեւնոյն տարին ստեղծուած, հարազատ երկուորեակներ են Մայիս 28-ը եւ Հ.Մ.Ը.Մ.-ը:

Մէկը 1918 Մայիս 28, միւսը՝ 1918 Նոյեմբեր 1-ին:

Հայ ժողովուրդի անկախութեան եւ ազատութեան աւագանէն մկրտուած Հ.Մ.Ը.Մ.-ի սերունդը, անսայթաք հետեւեցաւ եւ կը հետեւի Մայիս 28-ի խորհուրդին եւ ուղիին:

Մայիս 28-ի այս հանդիսաւոր ժամուն մենք Հ.Մ.Ը.Մ.-ականներս կը խոնարհինք այդ գեղեցիկ կոթողը իրենց արիւնով ներկող բիր բիրաւոր նահատակներու անյայտ շիրիմին առջեւ:

Անոնք մեզի աւանդեցին յաւերժութեան դաժան բայց հաճելի ճամբան: Անկախութիւնն ու ազատութիւնն է գրաւականը մեր ցեղի տեւականացման: Ով որ կը շեղի այս ճշմարտութենէն, ով որ կը նահանջէ այս ազնիւ պայքարին՝ կը դաւաճանէ իր ցեղի գոյութեան:

Մայիս 28-ի կոթողը Հ.Մ.Ը.Մ.-ականներուս լուսատու ջահն է: Մեր կենսանորոգ ոյժն է: Մայիս 28-ը յաւերժութիւն է:

Կեցցե՛ն Մայիս 28-ի կերտիչները:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 29

ՊԱՇԷ՛ ԶԱՅՆ ԲԱՐՁՐ ԵՒ ԱՆԱՂԱՐՏ

Լ. Մասպանաճեան

Դրօշակը հայրենիքին խորհրդանիշն է, անոր պատկերը: Ան ոչ միայն հայրենիքը կը խորհրդանշէ, այլ ցեղին առաքինութիւններուն եւ հոգեկան արժէքներուն ամբողջութիւնը:

Հայրենասէր ժողովուրդներ չափազանց նախանձախնդիր են իրենց երկրի դրօշակին, անկախութեան եւ պատուին:

Հայրենիքի ազատութիւնը, դրօշակն ու պատիւը պաշտպանել հայրենասէրի մը աւագ պարտականութիւնն է:

Կեանքի մէջ միակ երջանիկ պահը ազատութեան, հայրենիքին եւ դրօշակին համար մղուած պայքարի ժամանակն է:

Գիտակից, զարգացած ոեւէ անհատ իր ազգային դրօշակին հանդէպ պէտք է ունենայ անսահման սէր ու յարգանք:

Դարերու ընթացքին հայ ժողովուրդը ունեցած է իր անկախութիւնը ու հայրենիքը եւ զայն խորհրդանշող դրօշակներ, որոնց հայրենի երկրի կատարներուն վրայ յաւիտենական ծածանումին ի խնդիր հարիւր հազարաւոր մարտիկներ, իշխաններ, կրօնաւորներ եւ թագաւորներ մարտնչած եւ պայքարած են:

Հայրենքը, անկախութիւնն ու ազատութիւնը խորհրդանշող ազգային դրօշակը ամէնէն թանկագին ու նուիրական մասունքն է ժողովուրդին, որովհետեւ ան արիւնով, զոհողութեամբ եւ պայքարով իրականացած եւ նուիրագործուած է:

Իր ազգային դրոշակին հանդեպ սեր ու յարգանք, երկիրաձուլթիւն ու պաշտամունք չունեցող ունէ անհատի մէջ ի գուր է փնտռել հայրենասիրութիւն, նկարագիր եւ սկզբունք:

Իսկական հայրենասէրները անոնք են, որոնք գիտեն զոհաբերել ու զոհուիլ արդարութեան եւ ազատութեան համար:

Ազգային դրոշակին իմաստն ու յարգը գիտեն անոնք, որոնք իրական հայրենասէրներ են:

Հայ ազգային դրօշը շնորհիւ Հայաստանի Միացեալ եւ Անկախ Հանրապետութեան հռչակումով 1918 Մայիս 28ին, կրկին ծածանեցաւ համայն հայութեան գլխուն վերէ:

Մայիս 28-ի եռագոյն Դրօշակը բացարձակապէս ազգային է, որովհետեւ ան փաստօրէն եւ պատմականօրէն մեր անկախութիւնը կը խորհրդանշէ, որովհետեւ ան հայ ժողովուրդի ամբողջականութեան կամքի արտայայտիչն է:

Եռագոյնը ուրիշներէն փոխ առնուած կամ բռնագրբաւուած դրօշ մը չէ, այլ ան՝ հայ արիւնի, հայոց անկախութեան եւ յաղթանակի ծիածանն է, որ ներկուած է հայ զինուորի մաքուր արիւնով, հայրենիքի երկրակամարի լազուարթ կապոյտով եւ Կիլիկեան հարստութիւնը յիշեցնող նարնջագոյնով:

Հայաստանի Հանրապետութեան դրօշակը եռագոյն է, հորիզոնական կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն:

Ան հաստատուած է Հայաստանի առաջին Օրէնսդրական ժողովին կողմէ, *Հայաստանի Խորհուրդ* անունով:

Հ.Մ.Ը.Մ.-ի 3-րդ Շրջանային պատգամաւորական ժողովը կայացած 7 Յունուարի 1931-ին, որպէս միութեան պաշտօնական դրօշակ միաձայնութեամբ ընդունած է եռագոյնը:

Բռնագրաւուած Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշակը Հ.Մ.Ը.Մ.-ի Գերադաս ժողովը որպէս իր պաշտօնական դրօշը ընդունելով, բնորոշեց եւ յայտարարեց իր գաղափարական վարդապետութիւնը:

Դրօշակները իրենց այդ պարզ երեւոյթին մէջ մեծ խորհուրդ եւ իմաստ ունին:

Որեւէ երկրի կատարներուն վրայ ծածանող դրօշակը կ'ապահովէ այդ երկրի սահմանները եւ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը: Ան՝ մամուլի, խօսքի եւ մտածումի ազատութեան խորհրդանիշն է: Ան է նաեւ ժողովուրդի մշակութային եւ տնտեսական բարգաւաճման մեծագոյն արտայայտիչը:

Պէտք է յարգել փոքր թէ մեծ ազգերու դրօշակները, որոնք կը խորհրդանշեն այդ ազգերու անկախութիւնն ու ազատութիւնը, մեծութիւնն ու փառքը: Որովհետեւ այդ դրօշակները արդիւնքն են գոյատեւման համար թափուած արեան եւ պայքարի:

Հայկական եռագոյնը աշխարհի դրօշակներու ամենէն սուղ վճարուածն է: Ան իր մէջ կը պարփակէ պատկերը հայրենասէրի, ազատութեան եւ անկախութեան ծարաւի հոգիներու մեծ խորհուրդը: Ան իր մէջ ունի գոյատեւման եւ պայքարի, զոհողութեան եւ նուիրման մեծ գաղտնիքը: Ամուր բռնէ՝ զայն, պահէ զայն բարձր եւ անաղարտ, հաւատա՝ անոր ոյժին եւ խորհուրդին:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 28

ԿԱՐԴԱ՛, ՄԻՇՏ ԿԱՐԴԱ՛

Լ. Մասպանաճեան

Սուրիոյ եւ մանաւանդ հեռաւոր շրջաններու մեր երիտասարդութիւնը դժբախտաբար գրկուած է ազգային, հասարակական եւ գիտական դասախօսութիւններէն:

Պարագաներու բերմամբ եւ կամքէ անկախ պատճառներով շատ մը հայաշատ կեդրոններու մէջ իսկ հնարաւորութիւն չկայ հաւաքոյթ-հանդէսներ կազմակերպելու եւ հոն դասախօսութիւններ եւ բանախօսութիւններ տալով մշակելու նոր սերունդին միտքն ու հոգին, զիրենք հետաքրքրող շատ մը հարցերով:

Ի՞նչ պէտք է ընել այս զգալի պակասը մասամբ լրացնելու համար:

Մեր երիտասարդութեան կը թելադրենք ընթերցասիրութիւն:

Ունինք մշակուած եւ խորապէս ուսումնասիրուած գրականութիւն մը, որ ամէնէն դժուարահաճ ընթերցողներուն կրնայ գոհացում տալ ամէն ուղղութեամբ:

Գիրք մը ապրող եւ ներշնչող էակ մըն է, անիկա զինք կարդացողին համար լաւ ընկեր մըն է:

Ընթերցանութեան սովորութիւնը ժամանակի ընթացքին կը դառնայ ամէնէն հաճելի աղբիւրը հաճոյքի եւ վայելքի, շատ մը օգտակար արդիւնքներով:

Անոնք, որոնք գիրքերը կը սիրեն, հաւատարիմ ընկեր եւ բարեկամներու կարօտը չունին, որովհետեւ գիրքերը լաւ առաջնորդներ եւ ընկերներ են քեզի ուղղութիւն տալու համար:

Չկայ որեւէ բան, որ այնքան խորապէս ազդէ եւ տպաւորութիւն գործէ նկարագրիդ վրայ որքան կարդացած գիրքերդ:

Մեծագոյն օգուտը եւ առաւելութիւնը գիրքերուն, որոնք կը կարդաս, այն չէ թէ ինչ կը յիշես եւ կը մտաբերես անոնցմէ, այլ աւելի անոնց ներշնչած ազդեցութիւնն է:

Բազմակողմանի եւ ուսումնական լաւ պաշարով օժտուելու համար ուսումնատենչ եւ լաւ ընթերցող մը ըլլալու է:

Նոր սերունդը ուսումնասիրութեան շատ պէտք ունի: Ան առհասարակ առօրեան կ'ապրի: Անձանօթ է մեր ազգային, եկեղեցական, գրական եւ յեղափոխական պատմութեան:

Ինքնաշխատութեամբ եւ յարատեւ ընթերցանութեամբ կարելի է իմացական, գիտական եւ բարոյական հմտութիւն ձեռք ձգել:

Պէտք չէ մտածել թէ գիրքերու ընթերցումով կատարելիութեան կը հասնինք: Չանոնք կարդալով պարզապէս մեր ուսումը կ'աւելցնենք:

Ինչպէս որ կեանքիդ ընթացքը եւ նկարագրիդ յարաբերութիւն մշակած բարեկամներուդ եւ շրջանակիդ ազդեցութեան կ'ենթարկուի, նոյնպէս ալ կարդացած գիրքերդ կ'ազդեն քու հոգեկան եւ իմացական կառոյցին:

Ընտրուած գիրքերը, կերտելու, հարթելու եւ շինիչ յատկութիւններ ունին: Անոնք, զանոնք ուշի ուշով ուսումնասիրողներուն կ'ընծայեն կեանքի պայքարին համար անհրաժեշտ բոլոր տուեալները:

Գիրքերու աշխարհին մէջ, ամէն մարդու ասպարէզին, հոգեկան եւ իմացական կառուցուածքին յարմար գիրքեր կան:

Լաւագոյն գիրքերը անոնք են, որոնք քեզ կը բարձրացնեն, կ'առաջնորդեն եւ օգտակար կ'ըլլան:

Յաջողելու, կեանքի պայքարին տոկալու, հանրային եւ հաւաքական ասպարէզին մէջ օգտակար դառնալու համար ընդհանուր ծանօթութիւն անհրաժեշտ է: Եւ այս կրնաս միմիայն ընթերցանութեամբ...

Օգտակար եւ լաւ պատրաստուած մարդիկ առհասարակ լաւ կարդացողներ եղած են:

Ի՞նչ որ կարդաս, կարդա՛ յափշտակութեամբ, ամփոփուած եւ ուշադրութեամբ:

Ընթերցանութեան համար ընտրէ եւ փնտռէ այսպիսի գիրքեր, որոնք քեզի հաճոյք պատճառելէ աւելի, քեզ առաջնորդելու, բարձրացնելու կը ծառայեն:

Հայ երիտասարդութիւնը շատ պէտք ունի կարդալու: Կարդալով է, որ պիտի ծանօթանանք մեր պատմութեան:

Ընթերցանութեամբ է, որ պիտի յաջողինք ընդհանուր գաղափար կազմել հայ արժէքներու, հայ մշակոյթի եւ հայկականութեան մասին:

Որքա՛ն հարուստ է մեր գիրքերու աշխարհը: Գանձ մըն է ան, ուր կրնանք գտնել գրական, գեղարուեստական, պատմական, կրօնական, գիտական, բանասիրական, բանաստեղծական, ընկերային, ազգային եւ յեղափոխական ամէն տեսակ գիրքեր:

Գիրքերը ամէնէն հաւատարիմ եւ անկեղծ ընկերներն են: Գիրքերու շնորհիւ է, որ մեզի առիթ կ'ընծայուի մտերմանալու եւ ծանօթանալու մեր հին ու նոր գրագէտներու եւ բանաստեղծներու հետ:

Կեանքի մէջ ամէնէն երջանիկ պահը լաւ գիրքերու ընթերցանութեան պահն է:

Ժամանակդ պարապի մի՛ վատներ: Կարդա՛ միշտ կարդա՛:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 30

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՌԹԻԻ

Լ. Մասպանաճեան

Ձեր մէջ անոնք որոնք դպրոցի աշակերտներ են, արդէն լրացուցին իրենց դպրոցական պարտականութիւնները, եւ իրենք զիրենք գտան երկար արձակուրդի մը առջեւ:

Ի՞նչ պիտի ընէք ամառուան աւելի քան երեք ամիսներու ընթացքին:

Հանգի՞ստ... Բայց պարապ կենալով հանգիստ ընել չ'ըլլար: Օրեր շարունակ փողոցները պտտիլ հանգիստ ընել չի նշանակեր: Խաղե՞ր, լոգանք, պտոյտ... ասոնք կարելոր են եւ իրենց տեղն ունին, սակայն ամբողջ 100 օրեր միայն *սփռոռի* յատկացնել իմաստութիւն չէ:

Հայ աշակերտը իր արձակուրդը պէտք է օգտագործէ: Մարզանքի, պտոյտի եւ զուարճութեան հետ նաեւ այս երեք ամիսները յատկացնէ ինքնազարգացման եւ ընթերցանութեան:

Կրնաք արհեստի մը հետեւիլ:

Մեր դպրոցական պատանիները արհեստներու ցած աչքով նայելու վտանգին մէջ կը գտնուին յաճախ: Պատուաւոր գործեր են մեր արհեստները, բոլորն ալ, այն աստիճան որ կը ծառայեն մարդկութեան բարօրութեան:

Ամէն արհեստ նաեւ ազնիւ է այն համեմատութեամբ, որ գեղարուեստ եւ գեղագիտական ճաշակ կը պարունակէ իր մէջ:

Այժմ որքա՞ն գեղագիտական զարգացում կայ ներկայ երկաթագործութեան, ատաղձագործութեան, դերձակութեան, մեքենագիտութեան, տպագրական գործերու եւ այլ արհեստներու մէջ:

Մի՛ արհամարհէք արհեստները: Ձեզմէ շատեր մի քանի տարի վերջ, նախակրթարանի շրջանաւարտ ըլլալէ յետոյ, կամայ ակամայ պիտի ստիպուին նետուիլ արհեստներուն:

Երբ վաղը պարագաներու բերումով բժշկական, երկրաչափական, փաստաբանական կամ որեւէ մասնագիտութեան վկայական առնելու բախտաւորութենէն զրկուիք, ձեր հետեւած արհեստը կ'ըլլայ ձեր վկայականը, ոսկի ապրջանը, որ ամէն ատեն ու ամէն տեղ պատուաւոր եւ հանգիստ կրնաք ճարել ձեր ապրուստը: Միրելի պատանի ժամանակդ պարապի մի՛ վատներ, արհեստի մը հետեւիր:

Իսկ անոնք որոնք շրջանաւարտներ են եւ նիւթական եւ այլ պատճառներով ի վիճակի չեն ուսումը շարունակելու, ի՞նչ պիտի ընեն:

Ձեր կեանքին մէջ վճռական հանգրուան մըն է շրջանաւարտութեան այս ամիսը: Յարդ կեանքի ճամբորդութեան ձեր հորիզոնը շատ նեղ էր եւ ձեր ծնողներն ու ուսուցիչները առաջնորդեցին ձեզ: Անոնք ձեր մօտ քալեցին միշտ եւ ձեր քայլերը իրենք ուղղեցին ամէն քայլափոխին: Սակայն այս ամիս վերջ կը գտնէ այդ մտերմիկ յարաբերութիւնը, եւ դուք կը նետուիք կեանքի լայն ու խորունկ ասպարէզը: Այլ դուք լայն հորիզոններ պիտի ընդգրկէք, եւ առանձինն: Ձեր ծնողներն ու ուսուցիչները միայն կարգ մը թելադրութիւններ կրնան տալ, սակայն կեանքի անսահման ճամբան դուք առանձինն պիտի քալէք:

Այս պատճառաւ շրջանաւարտութեան հանդէսները ուրախութեան եւ ցնծութեան տօնակատարութիւններ չեն: Ձեր ուսուցիչները եւ ծնողները հրաժեշտի մաղթանքներ տալու համար է որ ամավերջի հանդէսներ կը սարքեն, եւ բաժանումը միշտ տրտմութիւն կը պարունակէ իր մէջ:

Բուն իրական կեանքը ուր կը թեւակոխէք այս ամիսէն սկսեալ բարդ իրականութիւն մըն է: Մեծ ովկիանոս մըն է ան, ընդարձակ եւ խորունկ: Նոյնպէս անապատի մը կը նմանի, մանաւանդ դժբախտութեանց եւ ձախողութեանց ժամանակ:

Կեանքը ճամբորդութիւն մըն է եւ մենք ճամբորդներ ենք, կեանքի ամբողջ տեւողութեան:

Ոչ միայն կը ճամբորդենք, այլ նաեւ ամէն օր նոր ճամբաներ ու անցքեր կը խուզարկենք: Նոր դէմքեր եւ դէպքեր, շարժումներ եւ հոսանքներ, քաղաքական ընկերային եւ տնտեսական անակնկալներ միշտ կը դիմագրաւեն մեզ:

Ամէնէն էական ու վճռական կէտը ճամբուն ուղղութիւնը ճշդելն է: Ճամբան գիտնալ անհրաժեշտ չէ, յաճախ կարելի ալ չէ, սակայն անոր ընթացքը, ուղղութիւնը ճշդել անխուսափելի է: Վա՛յ այն նաւապետին, որ իր գացած նաւահանգիստին ուղղութիւնը չի գիտեր:

Սիրելի շրջանաւարտ պատանի,

Եթէ ուսումդ շարունակել անկարելի է այլեւս, մի՛ յուսահատիր: Քաջ եղի՛ր:

Վստահութեամբ եւ յաջողելու հաստատ կամքով ճշդէ՛ եւ որոշէ՛ ճամբադ եւ նետուի՛ր կեանքի պայքարին մէջ:

Աշխատանքդ, յարատեւութիւնդ եւ պարկեշտութիւնդ քեզ անպայման կ'առաջնորդեն դէպի յաջողութիւն եւ յաղթանակ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 33

Հ.Մ.Ը.Մ.-Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ

Լ. Մասպանաճեան

Միջակութեանց այս գռեհիկ միջավայրին մէջ որքա՛ն փառայեղ երեւոյթ մըն է Հ.Մ.Ը.Մ.-ի իրականութիւնը:

Շահամոլութեանց, աղտոտ մրցակցութեանց, իրար դաւելու եւ վնասելու տխուր պատկերին քով, իրարօգնութեան, համագործակցութեան «Բարձրացի՛ր- Բարձրացո՛ւր»ի վեհ սկզբունքներու մարմնացումը եղող Հ.Մ.Ը.Մ.-ի շուրջ համախմբուած տասնեակ հազար երկսեռ երիտասարդութեան այս փաղանգը հաւատք եւ յոյս կը ներշնչէ բոլոր անոնց, որոնք կը ձգտին մեր ցեղի գոյատեւման:

Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքի անդամներ ենք:

Համախմբուած ենք այս մեծ միութեան շուրջ իր առողջ սկզբունքներու եւ վեհ նպատակի իրագործման համար:

Անդամակցելով այս միութեան կը ստանձնենք պարտականութիւններ եւ պարտաւորութիւններ, որոնց գործադրութեամբ կ'աջակցինք անոր զարգացման եւ տարածման:

Միութիւններ, կազմակերպութիւններ եւ անհատներ իրենց գործերով կը գնահատուին, ոչ թէ իրենց դիտաւորութեամբ: Անոնց արժէքը կը գնահատուի, իրենց մատուցած ծառայութեան, օգտակարութեան եւ գոհողութեան գնով, ոչ թէ տարիներու համրանքով:

Հ.Մ.Ը.Մ.-ականը միութենական, հասարակական եւ անհատական կեանքի մէջ կը գործէ միմիայն ծառայելու եւ օգտակար ըլլալու խոր գիտակցութեամբ:

Ի՞նչ պիտի ըլլար Հ.Մ.Ը.Մ.-ի վիճակը եթէ անոր անդամները մտածէին միմիայն անկէ օգտուելու մասին:

Հ.Մ.Ը.Մ.-ականը միշտ վեր կը կր մնայ շահամուլական զգացումներէ, անձնասիրական մղումներէ: Ան միշտ բարձր կը մնայ կեանքի վեհ ոլորտներու մէջ:

Շահամուլ, մարդկային թէ ազգային առաքինութիւններէն պարպուած մարդիկ կը ծաղրեն Հ.Մ.Ը.Մ.-ը եւ Հ.Մ.Ը.Մ.-ականը:

Սակայն ի՛նչ փոյթ թէ մարդիկ կը ծաղրեն մեզ եւ երբեմն ալ կը խղճան մեր վրայ «խեղճ», «իրենց գործը չգիտցող» որակելով մեզ:

Հ.Մ.Ը.Մ.-ը եւ Հ.Մ.Ը.Մ.-ականը ադամանդի պէս կը ցոլայ մեր ազգային թէ հասարակական կեանքին մէջ՝ կամք, յարատեւութիւն եւ հաւատք ներշնչելով մեր ցեղին:

Յաւիտենապէս կ'ապրին անոնք, միութիւններ, կազմակերպութիւններ եւ անհատներ, որոնք վեհանձնօրէն կը ծառայեն, բարիք կը գործեն եւ լաւագոյնս կը նուիրուին:

Հ.Մ.Ը.Մ.-ականը միշտ բարձր դիրքի վրայ կը կենայ, զօրաւոր ու անխորտակելի: Ան միշտ յաղթական է կեանքի պայքարին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-ի քառասնամեայ կեանքն ու գործը մեծագոյն փաստն է այս իրողութեան:

Մենք անդամները այս մեծ ընտանիքին պէտք է զիտակցինք, որ ծանր պարտականութիւններ յանձն առած ենք, իրագործելու համար զանոնք միութենական, ազգային թէ անհատական կեանքին մէջ: Մեր գործունէութեան ընթացքին մեզ առաջնորդող ոյժը պիտի ըլլայ զոհողութեան եւ նուիրման ոգին, բարձրանալու եւ բարձրացնելու վեհ սկզբունքը: Օգտուելով հանդերձ միութեան մեզի ընծայած բարոյական, մտային եւ ֆիզիքական կարելիութիւններէն, պէտք է մտածենք նաեւ օգտակար դառնալու միջոցներու մասին: Այս փոխադարձ հասկացողութեամբ է, որ Հ.Մ.Ը.Մ.-ը կրցած է յարատեւել եւ ուռճանալ:

Օգնել եւ օգտուիլ, բարձրանալ գիտնալ ու բարձրացնել, ծառայել սորվիլ ու ծառայել այս է եղած Հ.Մ.Ը.Մ.-ի սկզբունքը: Մեզ առաջնորդող, մեզի թոյ՛չք տուող եւ գոհողութեանց մղող, կենսունակութիւն եւ կեանք պարգեւող միակ ոյժը Հայ Ժողովուրդն է:

Մեր կենցաղով եւ գործնական կեանքով աշխատինք տիպար օրինակը ըլլալ մաքուր ու անշահախնդիր Հ.Մ.Ը.Մ.-ականի:

Ամէն տեղ ու ամէն պարագայի մէջ ըլլանք օրինապահ, կարգապահ եւ հնազանդ:

Նուիրումն ու գոհողութիւնը մեզի հոգեկան բաւարարութիւն եւ հաճոյք պատճառող մոլութիւն պէտք է դառնայ, որպէսզի անշահախնդրօրէն գործադրենք շատերուն զարմանք եւ հիացում պատճառող գործեր, որոնք յաճախ մեզմէ պիտի պահանջեն նիւթական, ֆիզիքական եւ հոգեկան հատուցում:

Հ.Մ.Ը.Մ.-ը լաւագոյն դպրոցն է այս առաքինութեանց ուսուցման եւ դաստիարակութեան:

Ուշի ուշով հետեւի՛ր այս դպրոցին:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 35

ԱՆՅԵՂԼԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Լ. Մասպանաճեան

Քսաներորդ դարը հիմնովին փոխեց աշխարհի եւ մարդկութեան կենցաղն ու դիմագիծը: Վաթսուն տարուան ընթացքին գիտական, ճարտարարուեստական եւ բժշկական մարզերու մէջ գլխու պտոյտ պատճառող գիտեր կատարուեցան: Անբուժելի հիւանդութիւններէն շատերը, մանաւանդ մեծ համաճարակները գրեթէ անյայտացան:

Ձեթի ճրագի լոյսին տակ Մեսրոպեան տառերը սորվող մանուկը այսօր ելեկտրական լոյսին տակ հանգստաւէտ բազկաթոռին վրայ կը սերտէ իր դասերը:

Ջորիով, ձիով կամ լաստերով տաժանելի եւ յոգնեցուցիչ ճամբորդութիւնները, այսօր պալատանման նաւերով շոգեկառքերով, ինքնաշարժերով եւ արագաթռիչք օդանաւերով տեղի կ'ունենան:

Այսօր շատերը երբ ընկերային, ընտանեկան, ազգային եւ հասարակական հարցերու կապակցութեամբ հրապարակ կ'իջնեն եւ կը սկսին քաղաքակրթութեան եւ գիտութեան չափանիշով մօտենալ եւ վերլուծել սկզբունքներ եւ բարոյական հարցեր, կը մոռնան էականը, թէ կեանքի մէջ անյեղի օրէնքներ եւ սկզբունքներ կան, որոնք կարելի չէ գիտութեան եւ քաղաքակրթութեան կշիռքով կշռել ու ձեւել:

Միութենական եւ հասարակական կեանքի մէջ երբ նոր սերունդի մօտ կը փնտռենք յարգանք դէպի իր գերադասը, զոհողութեան ոգի դէպի նպատակ եւ սկզբունք, կարգապահութիւն եւ հնազանդութիւն օրէնքի եւ կանոնագրի հանդէպ, յաճախ կը լսենք հետեւեալ նախադասութիւնը: «Անցած են հին օրերը, քսաներորդ դարու երկրորդ կիսուն այլեւս անհեթեթ եւ անիմաստ են այդ բառերը, ամէն ինչ

փոխուած է, փոխուած են նաեւ փոխյարաբերութիւններն ու յարաբերական կեանքը»:

Չափազանց կը սխալին անոնք, որոնք կը շփոթեն մարդկային անյեղի ճշմարտութիւններն ու սկզբունքները, գիտութեան ու ճարտարարուեստի յառաջդիմութեանց եւ փոփոխութեանց հետ: Եթէ գիտութիւնը ինքնաշարժն ու օդանաւը հնարելով ձիու եւ ձիաքարշ կառքերու տիրապետութեան վերջ դրաւ, ինչպէս նաեւ ելեկտրական լոյսը չքացուց ճրագի եւ քարիւղի լոյսը, ասիկա մեզի իրաւունք չի տար յայտարարելու որ կեանքը փոխուած է եւ բարոյական սկզբունքները ժամանակավրէպ դարձած են:

Ճրագի լոյսը չքացաւ ելեկտրական լոյսին առջեւ: Արագութեան եւ փոխադրութեան հին միջոցները տեղի տուին ինքնաշարժի ու օդանաւի գերակայութեան: Մէկը միւսին լրացումն ու կատարելագործումն է: Ասոնք զիրար ժխտող երեւոյթներ չեն բնաւ:

Որքան ալ յառաջդիմէ քաղաքակրթութիւնն ու արուեստը, անոնք մազաչափ չեն կրնար ազդել ու փոխել մարդկային կեանքի անյեղի սկզբունքները:

Մուտի եւ կեղծիքի զանազան ճարպիկ ձեւերը չեն կրնար ճշմարտախօսութեան եւ անկեղծութեան սկզբունքը խախտել:

Անկարգապահութիւնն ու անկարգութիւնը չեն կրնար հակազդել կարգ ու կանոնին եւ օրինապահութեան:

Անհնազանդութիւնն ու ծուլութիւնը չեն կրնար արժեքազրկել հնազանդութեան եւ աշխատասիրութեան արժանիքները:

Անբարոյականութիւնն ու գեշ մոլութիւնները, անբասիր նկարագիրն ու բարոյական բարձր սկզբունքները չեն կրնար ոտնակոխել:

Ազգին ու հայրենիքին համար հերոսներու թափած մաքուր արիւնը կեղծ հայրենասէրներու հայհոյութիւններն ու անարգանքը չեն կրնար արատաւորել:

Որովհետեւ ժխտական երեւոյթները չեն կրնար դրական ճշմարտութիւններն ու հաստատուն սկզբունքները քանդել ու ոչնչացնել:

Մարդկային խիղճէն, հոգիէն եւ նկարագրէն բխած, ազգերու պատմութենէն առնուած ճշմարտութիւններ կան, որոնք ժամանակի եւ քաղաքակրթութեան թաւալումին հետ որեւէ առնչութիւն չունին:

Մեծ են այն ազգերը, որոնք պատշաճելով ներկայ քաղաքակրթութեան պահանջներուն, անխախտ կը պահեն հոգեկան, բարոյական եւ նկարագրի անյեղի սկզբունքները իրենց ընտանիքներու, միութեանց եւ հաստատութեանց մէջ:

Հ.Մ.Ը.Մ. իր քառասնամեայ գոյութիւնը կը պարտի նկարագրի եւ հոգիի վրայ կառուցուած բարձր սկզբունքներուն:

Պարկէշտութիւնը, ճշմարտախօսութիւնը, հայրենասիրութիւնը, յարգանքն ու համեստութիւնը, կարգապահութիւնն ու հնազանդութիւնը, զոհողութիւնն ու նուիրումը, բարեգործութիւնն ու այլասիրութիւնը ժամանակի, շրջանակի եւ ազդեցութեանց ենթակայ սկզբունքներ չեն:

Փոխուած չեն ժամանակները եւ անցած չեն հին օրերը: Պէտք է ամուր կառչիլ ազգային, ընկերային եւ ընտանեկան կեանքը հաստատուն պահող անյեղի սկզբունքներուն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 38

Հ.Մ.Ը.Մ.-ը Եւ Անոր Գաղափարականութիւնը

Մուշեղ Իշխան

Ստորեւ կու տանք եղբ. Մուշեղ Իշխանի 17 Օգոստոս 1959-ին Զմմառի սկաուտական դպրոց-բանակումի մասնակցող սկաուտներուն տուած խիստ շահեկան դասախօսութիւնը:

Միրելի եղբայրներ,

Առանց նստարանի, մայրիներու ծառերուն տակ այս անպաշտօն հաւաքոյթը, որ հիանալի է, ինծի կը յիշեցնէ այն տարիները, երբ ես ալ ձեզի նման սկաուտ էի եւ կը մասնակցէի սկաուտական կարգ մը բանակումներուն:

Այն միութիւնները, որոնք արուեստականօրէն կը ծնին եւ չունին ներքին մղում մը գաղափարի մը հանդէպ՝ դատապարտուած են մեռնելու կամ անուանական կերպով մնալու: Սակայն Հ.Մ.Ը.Մ.-ը կը տարբերի անոնցմէ: Անիկա Մերձաւոր Արեւելքի ամենագորաւոր եւ կենսունակ միութիւնն է, եւ իր գործունէութիւնը ցոյց կու տայ թէ ան հարազատ միութիւնն է հայ ժողովուրդին եւ պահանջք մը, զոր կը զգայ մեր ազգը:

Ի՞նչ է ոյժը, որուն ակնարկեցինք քիչ առաջ: Արդէտօք միայն մարզական շարժումն է, որ կը գրաւէ մեր ժողովուրդը: Եթէ միայն մարզականը ըլլար, շատ դժուար պիտի ըլլար բացատրել այդ խորհուրդը, ոյժը, որ այս միութիւնը կապած է Հայ Ազգին: Այն հարազատութիւնը, որ կայ հայ ժողովուրդին եւ այս միութեան միջեւ, արդէօք միայն մարզանքն է ատոր պատճառը:

Կրնանք պատասխանել, թէ այս միութեան ամբողջ գործունէութիւնը՝ մարզական թէ սկաուտական շարժումին

տակ ունի ուրիշ խորհուրդ մը, որ Հ.Մ.Ը.Մ.-ի ոյժն ու հմայքը կը կազմէ:

Հ.Մ.Ը.Մ.-ը պարզ մարզական միութիւն մը ըլլալէ անդին աւելի բան մըն է, անիկա մեր ազգային իտեալներուն եւ բաղձանքներուն արտայայտիչն է:

Ինչպէ՞ս ծնաւ Հ.Մ.Ը.Մ.ը: Կը բաւէ, որ վայրկեան մը անոր ծննդեան մասին մտածենք եւ կը համոզուինք, որ ան մեր ազգային իտեալները իրագործող կազմակերպութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ.-ը ծնաւ այն շրջանին, երբ կը կարծուէր թէ հայ ժողովուրդի ողնայարը կոտորուած էր, Ապրիլ 24-ը անցած էր մեր վրայէն եւ ընդհանուր յուսախաբութիւն մը կը տիրէր հայութեան մէջ: Ան արիւնաքամ եղած էր, երակները պարպուած էին: Այս շրջանին մի քանի երիտասարդներ քով քովի եկան եւ վերականգնումի ձգտող միութիւն մը հիմնեցին: Անոնք մեծ մարդիկ ալ չէին: Անոնք միայն կը հաւատային, որ պէտք է ապրէր ու կազմակերպուէր հայ ժողովուրդը այն ոստայնին մէջ, ուր սարքուեցաւ եղեռնի ոճիրը: Եւ ասի ստեղծուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ը: Անոնք չէին կրնար երեւակայել, որ իրենց հիմնած միութիւնը պիտի ընդհանրանար այնքան, որ պիտի լեցնէր չորս կողմերը:

Թերեւս ներքին ձայն մը կ'ըսէր այդ բանը իրենց:

Այս պայմաններուն տակ ստեղծուած միութիւն մը կըրնանա՞ր միմիայն մարզական բնոյթ ունենալ: Անոր հիմնադիրները մարզանքի միջոցով կ'ուզէին մեր երիտասարդութեան կորովը բարձրացնել եւ հայ ժողովուրդի հոգին վերականգնել:

Եւ այդպէս ալ եղաւ:

Հ.Մ.Ը.Մ.-ի շարժումը բացառիկ բան մը եղաւ, ինչպէս հայ ժողովուրդի բոլոր շարժումները, որովհետեւ ջարդէն ճողոպրած ժողովուրդ մը կըրցաւ նոր երիտասարդութիւն ստեղծել, նոր սերունդ եւ նոր յոյս ներշնչել:

Մեր աքսորական ժողովուրդը կրցաւ այս միութիւնը հետը տանիլ աքսորի ճամբաներէն եւ Հ.Մ.Ը.Մ.-ը տարածուեցաւ եւ դարձաւ մեծ միութիւն, որովհետեւ հայ ժողովուրդը զօրավիգ կանգնեցաւ անոր:

Հ.Մ.Ը.Մ.-ը կրցաւ Հայաստանի իւրաքանչիւր գաւառէն կամ գիւղէն եկած երիտասարդներ, պատանիներ եւ մանուկներ մէկ դպրոցի մէջ առնել եւ անոնցմէ կազմել մէկ միութիւն եւ մէկ կազմակերպութիւն: Հ.Մ.Ը.Մ.-ական սերունդ մը կայ այսօր, որ ունի նոյն գաղափարը, նոյն նկարագիրը եւ նոյն ձգտումները: Ապագայ պատմութիւնը, եւ վստահ եմ, որ պիտի արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.-ի այս մեծ դերը մեր ազգապահպանման գործին մէջ:

Տարօրինակ ազգ ենք: Ինքնապաշտպանութեան բնագոյն մղուած, պահելու համար մեր կրօնական, մշակութային եւ մարզական բոլոր շարժումները մենք դարեր շարունակ աշխատած ենք ազգայնացնել զանոնք: Առաջին քրիստոնէայ ազգն ենք, ինչպէս նաեւ առաջինը մեր եկեղեցին ազգայնացնող:

Հ.Մ.Ը.Մ.-ը մեր մարզական շարժումը հայացուց, ազգայնացուց: Անոր տուաւ հայ հոգի, հայ դիմագիծ: Հ.Մ.Ը.Մ.-ը հայացուց նոյնիսկ սկառուտական նշանաբանը «Միշտ պատրաստ»ը փոխելով «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր»ի:

Հ.Մ.Ը.Մ.-ը իր հիմնադրութեան օրէն ի վեր մեր մարզական եւ սկառուտական շարժումները ազգայնացուց, եւ այդ պատճառաւ հայ ազգը ինքզինք հարազատ կը զգայ այս միութեան:

Հ.Մ.Ը.Մ.-ը երբ հազարներով կը տողանցէ, հայ ժողովուրդը ձեր մէջ կը տեսնէ հայկական բանակը, անկախութիւնը եւ զայն խորհրդանշող եռագոյնը: Անոնք ձեր մարզական մրցանիշերով եւ յաղթանակներով շատ ալ չեն հետաքրքրուիր, այլ անոնք ձեզ կը տեսնեն ուխտաւորները

այն բանակին, որ զինուորն է հայոց պայքարին, որուն նպատակն է հայ մնալ եւ հետապնդել Ազատ Անկախ Հայաստան ստեղծելու իտեալը:

Երբ դուք կ'ուխտեք եւ երդում կը կատարեք եռագոյնի, հայրենիքի եւ պատուոյ վրայ, դուք կը դառնաք գաղափարապաշտ զինուորները հայ դատին:

Ճշմարիտ Հ.Մ.Ը.Մ.-ականը ուխտեալ զինուորն է հայ դատին: Ֆետայիի փափախին տեղ այսօր սկաուտի գլխարկը ձեր գլխուն, վաղը որպէս ուսուցիչ, բժիշկ, արհեստաւոր կամ գործաւոր միակ մէկ նպատակին պէտք է ձգտինք, մնալ ու ապրիլ որպէս հայ եւ նուիրուիլ անկախութեան պայքարին:

Այս բոլոր ըսուածները ամփոփելով պիտի եզրակացնեմ: Հ.Մ.Ը.Մ.-ը ծնաւ ամենադժուարին պայմաններուն տակ: Ան իր նպատակը դարձուց վերականգնել ընկճուած հայութիւնը եւ դարձաւ ազգային միութիւն մը, բխած հայ հոգիէն եւ հայ միտքէն:

Եւ եթէ դուք, ձեր մարզական եւ սկաուտական շարժումներէն եւ գործունէութենէն դուրս, պիտի չմտածեք հայութեան եւ հայապահպանման գործի մասին, պիտի ըսեմ, որ դուք իրաւ Հ.Մ.Ը.Մ.-ականներ չէք:

Ձեր ուխտն է ծառայել ժողովուրդին եւ զայն դէպի անկախութիւն տանող դժուար ճամբուն վրայ մնալ ուխտեալ զինուորներ:

Եթէ այս ըսածներէս փոքրիկ նշոյլ մը առկայծի ձեր հոգիներուն մէջ, վստահ եղէք, որ դուք պիտի տոչորուիք ազգայնականութեամբ եւ ալ աւելի պիտի սիրեք եւ պիտի փարիք այն մեծ միութեան, որն է Հ.Մ.Ը.Մ.-ը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Բ. տարի, թիւ 47

ԵՐԳԵՐԴ ՀԱՅԱՑԱՆ, ԻՄԿ ԼԵԶՈՒԴ...

Լ. Մասպանաճեան

Ցաւալի երեւոյթ մը, հայ անուան ամօթ եւ անպատուութիւն բերող դառն իրականութիւն մը կրկին կը պարտաւորուինք մեր ընթերցողներու եւ մանաւանդ հայ մարզիկներու ուշադրութեանը յանձնել:

Ասկէ երեք տասնեակ տարիներ առաջ երբ մամուլ ու հայկական կարգ մը կազմակերպութիւններ թրքախօսութեան դէմ պայքար կը մղէին, շատեր այդ ախտը կը վերագրէին հին սերունդին, որոնք հայերէն չէին գիտեր եւ պարտադրաբար կը գործածէին թրքերէն լեզուն:

Այսօր երբ հին սերունդը անհետացած է, քառասուն երկար տարիներ անցած են այն դժբախտ օրերէն, երբ հայ ժողովուրդը դուրս շարտուած է իր հայրենի օճախներէն, հոն ձգելով ամէն ինչ: Դժբախտաբար Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր քաղաքներու եւ աւաններու մէջ, մենք կը հանդիպինք նոր սերունդին, որոնք թրքերէն կը խօսին հանրային վայրերու, փողոցներու եւ տուններու մէջ:

Թուրքերը արաբական հողամասերուն տիրապետած են երկար ժամանակ եւ իրենց մշակոյթն ու լեզուն պարտադրած արաբ ժողովուրդին: Սուրիա, Յորդանան, Լիբանան եւ Իրաք ազատագրուեցան եւ թուրքերը արաբական հողամասերէն քշուեցան այն թուականին երբ հայ ժողովուրդի մնացորդացը պարտադրուեցաւ լքել Թրքահայաստանը:

Արաբ եւ հայ ժողովուրդի թրքական տիրապետութենէն ազատագրման թուականը նոյնն է: Քառասուն տարի է ի վեր հեռու ենք անոնց չարաղէտ ներկայութենէն, մշակոյթէն ու լեզուէն:

Արաբ հայրենակիցները շատոնց մոռցած են թրքերէնը: Չէք հանդիպիր երկու արաբի, որոնք իրարու հետ թրքերէն խօսին:

Իսկ մենք, մանաւանդ նոր սերունդը, որոնք գէթ նախակրթարան մը աւարտելու բախտաւորութիւնը ունեցան, ականջ դրէք անոնց փողոցներու, արհեստանոցներու, մարզավայրերու եւ շարժանկարի սրահներու մէջ, հետեւեցէք խումբ առ խումբ եկեղեցի, շուկայ կամ հիւրասիրութեան գացող մեր նազելի հարսերու եւ աղջիկներու մայթէ մայթ կանչերուն եւ խօսակցութեանց:

«Կ'երեւայ թրքուհիներ են, որոնք եկած են մեր երկիրը տեսնելու», այսպէս կ'արտայայտուէր պետական արաբ պաշտօնեայ մը երբ հանդիպեցանք իգական շքախումբի մը, որոնք բարձրաձայն թրքերէն կը խօսէին:

Արաբ բարձրաստիճան պաշտօնատար մը իր հայ պաշտօնեաներուն ուղղելով խօսքը կ'ըսէ. «Իրարու հետ արաբերէն չէք խօսիր, չենք ալ ստիպեր, բայց գոնէ հայերէն խօսեցէք, ինչո՞ւ թրքերէնը»:

Նոր սերունդ, հայկական դպրոց ու կրթութիւն տեսած, հայոց պատմութիւն եւ գրականութիւն սերտած երիտասարդութիւն, ներկայի եւ ապագայի հայ մանուկներու դաստիարակիչ հարսեր եւ աղջիկներ ինչպէ՞ս կրնաք արդարանալ թրքախօսութեան համար:

Հայ նոր սերունդ եւ թրքախօսութիւն, ի՛նչ զարհուրելի հակադրութիւն, ի՛նչ անհաւոր երեւոյթ:

Թրքախօսութիւնը ախտ մըն է, ոչ թէ պահանջ կամ պարտադրութիւն: Պէտք է արմատախիլ ընել այդ ախտը, պէտք է անխնայ պայքարիլ այդ վարակիչ հիւանդութեան դէմ:

Միահամուռ ճիգով, հաւաքական գործակցութեամբ գործի լծուիլ, թրքախօս հայուհին եւ երիտասարդը, որոնք

դեռ կը յամառին հայ ժողովուրդի եւ հայ հայրենիքի դահիճին ու բռնատէրին լեզուն գործածել, հանրային վայրերու, փողոցներու, մարզադաշտերու ու հաւաքատեղիներու մէջ անարգանքի սիւնին քամելու վճռակամութեամբ հրապարակ իջնել, հալածել, անարգել ու անպատուել պէտք է:

Շնորհիւ հայկական երգապնակներու, հայ երաժիշտներու կազմակերպած համերգներուն եւ մանաւանդ Երեւանի ռատիօ-կայանի ամէն գիշեր ձայնասփռած հայ երգերու ու երաժշտութեան, մեր երգերը Հայացան, իսկ մեր լեզուն դեռ շատ մը տեղեր կը մնայ թրքերէն:

Հայ մարզիկներ, սկաուտներ, գայլիկներ եւ արենոյշներ, որ միութեան ալ պատկանիք, թրքախօսութեան դէմ պայքարը ձեր աւագ պարտականութիւնը պէտք է ըլլայ:

Մեր երգերը հայացան, պէտք է հայանայ նաեւ մեր լեզուն: Ներելի չէ այլեւս թրքախօսութիւնը: Այդ լեզուի գործածութիւնը մեր մէկ միլիոն նահատակներուն նախատինք, իսկ վերապրող հայ սերունդին կը բերէ ամօթ եւ անարգանք:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 4

ՊԷՏՔ Է ԱՅՐԻԼ, ՈՉ ԹԷ ՄԻԱԼ

Լ. Մասպանաճեան

Պարտականութեան գիտակցութեան շարունակական զգացումը մաքուր նկարագրի արտայայտութիւնն է: Այդ գիտակցութեան շնորհիւ է, որ մարդկային օրէնքներն ու առաքինութիւնները միշտ բարձր դիրքերու վրայ մնացած են:

Բարոյական բոլոր արժէքները զիրար շաղկապող ոյժը պարտականութեան գիտակցութիւնն է: Առանց անոր, բոլոր ոյժերը, բարիքները, իմացութիւնները, ճշմարտութիւնը, երջանկութիւնները նոյնիսկ սէրը տեւական եւ հաստատուն պիտի չըլլային:

Պարտականութեան գիտակցութենէն եւ նուիրումէն զուրկ կեանք մը անարժէք է:

Պարտականութիւնը մեզ կը պաշարէ կեանքի մուտքէն մինչեւ կեանքի ելքը, պարտականութիւն գերադասներուն, պարտականութիւն ստորադասներուն եւ հաւասարներուն: Պարտականութիւն Աստուծոյ եւ մարդոց:

Պարտականութիւնը բարձր նկարագրի տէր մարդոց կեանքի նպատակն ու նաեւ ամէնէն մեծ հաճոյքն է: Երբ անիկա կը բխի վեհ իտեալի մը իրագործման գիտակցութենէն:

Պարտականութեան գիտակցութիւնը անպայման քեզի տեղ մը կ'առաջնորդէ: Պարտականութիւնդ կատարելով նկարագիրդ եւ կեանքիդ ազնուագոյն իտեալը իրագործած կ'ըլլաս:

Մեզմէ իւրաքանչիւրը մեր ընտանեկան, դպրոցական եւ արհեստական պարտականութիւններէն դուրս, ունինք նաեւ հասարակական, միութենական եւ ազգային պար-

տականություններ: Կան առօրեայ եւ անխուսափելի պարտականություններ, որոնք ըստ սովորութեան եւ յաճախ անզգալաբար կը կատարենք, որովհետեւ անոնք մեզի համար դարձած են ունակություն:

Երկու տեսակ պարտականություն կայ, առաջինը անխուսափելի պարտականություններ, որոնք կապ ունին մեր անհատական կեանքին հետ, իսկ երկրորդը մեր կամովին ստանձնած պարտականություններն են հասարակական, ընկերային եւ ազգային կեանքի մէջ:

Առաջինին մէջ թերացողը կը վնասէ եւ քայքայման կ'առաջնորդէ իր անհատական եւ ընտանեկան կեանքը, իսկ երկրորդին մէջ թերացողը կը վնասէ հանրային, միութենական եւ ազգային գործին:

Հ.Մ.Ը.Մ.-ականներ ենք, կամովին անդամագրուած ենք եւ բնականաբար պարտականություններ ստանձնած այդ միութեան մէջ:

Եթէ իւրաքանչիւր անդամ իր պարտականութեանց գիտակցությունը ունենայ եւ զանոնք աշխատի լիուլի իրագործել, միութեան նիւթական եւ բարոյական ոյժը կ'աւելնայ: Անդամները իրենց պարտականությունները կատարելով նկարագրով եւ հոգիով կը բարձրանան, միութեան մէջ կը ստեղծուի եղբայրութեան, անկեղծութեան եւ համագործակցութեան մթնոլորտ մը:

Որքան պարտականություններ կան մեզմէ իւրաքանչիւրին համար այս միութեան մէջ: Ատենապետէն սկսած մինչեւ համեստ գործաւոր անդամ, սկաուտ խմբապետէն սկսած մինչեւ գայլիկ, ֆութպոլի խմբապետէն սկսած մինչեւ սկսնակ ֆութպոլիստ:

Հնազանդիլ եւ հնազանդիլ սորվեցնել, յարգել եւ յարգուիլ ուսուցանել, ճշդապահ ըլլալ եւ ճշդապահություն պահանջել, զոհուիլ եւ զոհաբերություն ակնկալել պարտա-

կանութիւններ են, որոնք գործնականապէս պէտք է իրագործուին այս միութեան մէջ պարտականութիւն ստանձնած իւրաքանչիւր անդամի առօրեայ կեանքին մէջ, օրինակ ծառայելով ուրիշներուն:

Պարտականութեան գիտակցութիւն ունեցողը, պէտք է սպառի ոչ թէ ծրարուի: Կրակ ըլլալէ վերջ սպառիլը անխուսափելի է, բայց ան ալ այս կամ այն հաշուով փոխանակ բռնկելու կը միսայ, կը խնայէ իր ունեցածը: Ան որ պարտականութեան եւ ծառայութեան մէջ խնայողութիւն կը փորձէ՝ կը ձախողի: Ծառայութիւնը ապարդիւն կը հանէ:

Պարտականութեան գիտակցութիւնը զգացողական չէ, ընդհակառակը ան մեր ազատ կամքով եւ որոշումով առնուած քայլ մըն է. մարդկային, ընկերային եւ հասարակական կեանքէ ներս թափանցումի:

Ահա այս իսկ պատճառաւ պարտականութեան գիտակից Հ.Մ.Ը.Մ.-ականը կամովին պարտաւորութիւններ ըստանձնած է, որ անոնց իրագործումով ան միսալէ կը դադրի եւ կը սկսի ապրիլ:

Թէպէտեւ միացող կամ այրող որեւէ նիւթ մոխիր կը դառնայ, բայց այրող նիւթը ոյժ, լոյս եւ տաքութիւն կու տայ, իսկ միացողը՝ ոչինչ:

Պէտք է այրիլ, ոչ թէ միսալ օգտակար դառնալու համար:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 17

ՀԱՅ ՊՍՏԱՆԻ ՄԻՐԷ՝ ՀԱՅՐԵՆԻՔԴ ԵՒ ԱԶԳԴ

Լ. Մասպանաճեան

Այժմ Սփիւռքի Հայութիւնը մտահոգող մեծ հարցերէն մին ազգապահպանումն է: Ինչպէ՞ս կրնանք աշխարհի չորս ծագերուն մէջ մեր ազգային գոյութիւնը պահպանել մեզի սպառնացող այլազան հոսանքներուն դէմ: Ինչպէ՞ս կրնանք մեր նոր սերունդը հեռու պահել իր նկարագիրն ու բարոյականը խաթարող շրջանակէն: Ինչպէ՞ս կրնանք մեր պատանեկութեան եւ երիտասարդութեան հոգիներուն մէջ վառ պահել հայութեան ու Հայրենիքի սէրն ու գաղափարականութիւնը:

Ասոր համար կը խորհրդակցինք, դասախօսութիւններ կը սարքենք, Հայ Գրականութեան եւ մշակոյթին ոյժ կուտանք:

Սակայն մէկ կէտ զանց կ'ընենք: Ազգի մը յաւերժացման եւ գոյատեւման մեծագոյն ազդակն է իր իսկ գոյապատճառի գիտակցութիւնը: Մեր ազգին զաւակները յստակօրէն գիտե՞ն թէ մենք ինչո՞ւ իբր ուրոյն ազգ գոյութիւն ունինք եւ ի՞նչ է մեր գոյութեան պատճառը:

Նոր սերունդին մեր մատուցանելիք առաջին հարցը մեր գոյութեան պատճառին ճշդումն է: Եթէ այս կրնանք յստակօրէն գծել, եւ մեր երիտասարդութիւնը համախմբել սոյն իստեալին շուրջ, ոչ միայն մեր ուրոյն գոյութիւնը կը պահենք, այլ կը զօրանանք, կը բարգաւաճինք, եւ անկասկած կը հասնինք արդիւնքին:

«Մեծ» ազգի մը զաւակ ըլլալու գիտակցութիւնը նախանձելի առանձնաշնորհում մըն է: Ոչ միայն հոգեկան վայելք մըն է ան, այլ նաեւ ներքին ոյժի աղբիւր է ան՝ կեանքի պայքարը դիմագրաւելու ստեն: Այդ գիտակ-

ցութիւնը վստահութիւն, արկածախնդրական ոգի եւ ազնուական կեցուածք կու տայ մարդուն:

Սակայն ո՞վ է մեծ ազգը: Ի՞նչ են ազգի մը մեծութիւնը բնորոշող յատկութիւնները-ժողովուրդին թիւը, բանակին կազմը, երկրին սահմանները, բնական հարստութիւնները...:

Զարմանալի է որ համաշխարհային քաղաքակրթութեան ռահվիրայ հանդիսացող մեծ ազգեր փոքր եղած են իրենց ժողովուրդին թիւովը եւ տկար՝ քաղաքական եւ տնտեսական մարզերու մէջ:

Ազգի մը մեծութիւնը կարելի է կշռել հետեւեալ չորս կէտերու մէջ,-

ա- Ի՞նչ են այդ ազգին հոգեկան եւ մշակութային արտադրութիւնները:

բ- Ժողովուրդը ազգային ի՞նչ իտեալներ կը հետապնդէ:

գ- Ժողովուրդը որքա՞ն գոհողութիւն յանձն կ'առնէ իր ազգային իտեալին իրագործման համար:

դ- Սոյն ազգը որքա՞ն խորունկ հաւատք ունի իր անցեալի եւ մանաւանդ ապագային նկատմամբ:

Ահա՛ ազգի մը մեծութեան իրական հիմերը: Քաղաքական եւ տնտեսական նպաստաւոր պայմաններ կարելոր են, սակայն մեծութիւնը հոգեկան իրականութիւն մըն է, եւ առաւելաբար կապ ունի ազգին զաւակներուն իտեալին, նուիրումին եւ հոգեկան արտադրութիւններուն հետ:

Մենք կը պատկանի՞նք մեծ ազգերու շարքին: Անկասկած այո՛, եթէ գիտակցինք մեր ժառանգած հոգեկան ոյժին, եւ յօժար ըլլանք ամեն գոհողութիւն յանձն առնել մշակելու եւ մարմնացնելու համար զայն:

Հայ ազգի գոյութեան պատճառը եւ մեծութիւնը անցեալին թէ ներկայիս իր յայտնաբերած հոգեկան, մտային եւ բարոյական արժէքներուն մէջն է:

Հայ պատանի, հայ երիտասարդ սիրելիքու ազգդ եւ հայրենիքդ: Հայ ապրել ամբողջ կեանքիդ մէջ, անոր լեզուովը խօսել՝ միշտ, սիրել անոր պատմութիւնը, վերջապէս պատուաւոր մէկ զաւակը եղիրքու ցեղիդ, որ տուած է շատ մեծ մարդիկ ու թագաւորներ, զօրավարներ, հայրապետներ, գիտնականներ, բանաստեղծներ եւ արուեստագէտներ:

Ներկայիս հայրենիքդքու արիւնդ չի պահանջերքեզմէ, բայց աւելի դժուար բան մը կը պահանջէքեզմէ, *Քու Հայ ապրիլդ*: Ան որ չի գիտեր իր ազգին եւ հայրենիքին համար զոհուիլ, անոր ազատութեան եւ տեսականացման համար կեանք ու արիւն տալ՝ սողուն մըն է երկրաքարջ: Դիւցազն մըն է ան, որ իր կեանքը կը զոհէ մեծ նպատակի մը, ու ինչ աւելի գերագոյն նպատակ կը փնտռէք՝ քան ազգն ու հայրենիքը:

Հայ պատանի, սիրելիքու հայրենիքդ եւ ազգդ, չէ՞ որքու մայրդ է ան, ու բնաւ մի՛ ամչնար անոր համար, որովհետեւ ՄԵԾ է ան եւ արժանի՝ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ եւ ՓԱՌՔԻ:

Ամբողջ կեանքիդ մէջ կրկնէ աշխարհահռչակ դերասան Պետրոս Ադամեանին խօսքը- «Հայ ծնելիս ինձ համար կը համարեմ պարծանք ու բախտ»:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 18

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍԸ

Լ. Մասպանաճեան

Հերոսի մը մահուան քառասունքն է այսօր:

Հեռաւոր Սան Ֆրանսիսքոյի մէջ 23 Մայիս 1960 Երկուշաբթի երեկոյեան ժամը 7.30ին իր մահկանացուն կնքեց Սողոմոն Թէլիլիբեան՝ Հայ Յեղափոխութեան ձեռքը, Հայոց Նեմեսիսը որ մօտ քառասուն տարի առաջ 1921 Մարտ 15-ին Պերլինի փողոցներէն մէկուն մէջ գետին փռեց՝ մէկ միլիոն հայութեան դահիճը, թուրք ոճրագործը՝ Թալէաթը:

Ազգերու պատմութեան մէջ դէպքեր եւ դրուագներ կան, որոնք կը յատկանշեն մեծութիւնն ու արժէքը այդ պատմութիւնը կերտող ժողովուրդին: Կան նաեւ ազգեր, որոնց պատմութիւնը ամբողջութեամբ շարանն է բռնութեանց եւ ոճիրներու:

Պատճառ եւ արդիւնք, ահա ազգերու, կազմակերպութեանց եւ անհատներու արժէքը գնահատելու միակ միջոցը:

Սողոմոն Թէլիլիբեան, հայ ժողովուրդի ազնիւ եւ քաջ ներկայացուցիչը, դէմ դիմաց թուրք ոճրագործ ցեղի անարգ զակկին՝ Թալէաթին:

Մէկ միլիոն անմեղ զոհերու զազան դահիճը ընդդէմ Հայ Յեղափոխութեան վրիժառու ձեռքին:

1915 Ապրիլ 24-ի ահաւոր եւ աննախընթաց նախաճիրը պատճառ է 1921 Մարտ 15-ի Պերլինի արդիւնքին:

1915 Ապրիլ 24-ը յղացող հրէշային միտքին մէջ պէտք է փնտռել թուրք ժողովուրդի արժէքն ու նկարագիրը:

Մարդասպան եւ ոճրագործ, թալլող ու յափշտակիչ, անգութ եւ վայրագ թուրք ժողովուրդի եօթը հարիւր տարուան պատմութիւնը յստակօրէն կը դրսեւորէ իր նկարագիրն ու արժէքը:

Տասնեակ հազարաւոր ոճրագործներէն միմիայն մէկ տասնեակին Պերլինի, Հոռմի, Պոլսոյ եւ Թիֆլիսի փողոցներուն մէջ տրուած արդարութեան հարուածը, դատավճիռն է թուրք ժողովուրդի արիւնոտ պատմութեան, որ կախուեցաւ Թալէաթներու, Էնվերներու, Ճէմալներու, Պէհաէտտին Շաքիրներու եւ այլոց վիզէն:

Անմահն հերոս Սողոմոն Թէլիբեան, հայ երիտասարդութեան կուռքը, հայ ժողովուրդի կամքի եւ նկարագրի արտայայտիչը, հայ վրիժառու բազուկի արժանի ներկայացուցիչը, այսօր մահուան քառասունքին առթիւ հեռաւոր Սան Ֆրանսիսքոյի եկեղեցւոյ մէջ կատարուող հոգեհանգստեանդ արարողութեան, մենք սփիւռքի հայ երիտասարդութիւնը երկիւղածութեամբ ծունկի կու գանք քու գերեզմանիդ առջեւ եւ կը խորհրդածենք: Հերոսութիւնը կը յատկանշէ մեծութիւն: Հերոսութիւնը կ'ենթադրէ զոհողութիւն, կամք եւ անձնուրացութիւն:

Հերոսութիւնը կը պարտադրէ յարգանք:

Սողոմոն Թէլիբեանի կեանքն ու գործունէութիւնը, անոր յայտնաբերած զոհողութեան, վճռակամութեան, եւ նկարագրի ոյժը, հայ երիտասարդութեան համար պէտք է ըլլայ ուղեցոյց:

Ծառայելու, արժեցնելու, նուիրուելու եւ զոհուելու համար անհրաժեշտ է Սողոմոն Թէլիբեանի նման անբասիր նկարագիր եւ վեհանձն հոգի ունենալ:

Պատճառ եւ արդիւնք:

Հոգիով ցած, նկարագրով ախտավարակ թուրք ժողովուրդի արժանի զաւակները՝ Թալէաթներու դիակները

Եւրոպայի մայրաքաղաքներու փողոցներուն մէջ քաշկըտտուեցան որպէս ոճրածին ժողովուրդի մը ներկայացուցիչները, իսկ հայ ժողովուրդի աննման հերոսները՝ Թէհլիրեանները գնահատուեցան, որպէս արդարութեան ախոյեաններ:

Ահա ժողովուրդներու եւ զանոնք ներկայացնող անհատներու մասին պատմութեան տուած դատավճիռը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 32

Ս. ՕԳՆ. ԽԱՉԻ ԱՐԾՈՒԻԿՆԵՐԸ

Լ. Մասպանաճեան

Սուրիոյ տարածքին վրայ Սուրիահայ Օգնութեան Խաչի երկու տասնեակ մասնաճիւղերը իրենց մէջ կը հաշուեն 2500 անդամուհիներէ գատ նաեւ 1000 արծուիկներ, որոնք իրենց ներքին կազմակերպական կառոյցով յար եւ նման են Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտներուն:

Մտահոգուած հայ ժողովուրդի ապագայ իգական սեռի ֆիզիքական, բարոյական եւ ազգային դաստիարակութեամբ, Ս. Օգն. Խաչի ղեկավարներ երեք տասնեակ տարիներ առաջ գեղեցիկ գաղափարը յղացան խաչուհիներու կողքին ստեղծել նաեւ արծուիկներու կազմակերպութիւնը:

Այսօր հպարտութեամբ կրնանք արձանագրել, թէ Սուրիոյ մէջ ունինք տիպար եւ օրինակելի արծուիկներու կազմակերպութիւն մը, որ իր կարգապահ եւ կուռ շարքերով պատիւ մըն է Ս. Օգն. Խաչին եւ անոր միջոցաւ հայ ժողովուրդին:

Ի՞նչ կը հետապնդեն եւ ի՞նչ են արծուիկները:

Արծուիկները աղջիկ սկաուտներ են, որոնք իրենց անչափահաս տարիքին մէջ կը վարժուին չարքաշութեան, տոկունութեան մարզանքի եւ այլեւայլ գործնական եւ ձեռային աշխատանքներու, որոնք անհրաժեշտ եւ օգտակար են ապագայ առօրեայ կեանքին մէջ:

Արծուիկները վաղուան խաչուհիներն են, որոնք այդ կազմակերպութեան մէջ կը սորվին զոհողութիւն, նուիրում,

հնազանդութիւն եւ կարգապահութիւն, եւ զրահուած այդ բարոյական զէնքերով ասպարէզ կը նետուին Ս. Օգն. Խաչին միջոցաւ ծառայելու համար հայ ժողովուրդին, հայ ընտանիքին եւ հայ հասարակական կեանքին:

Արծուիկները մեր, ապագայ ընտանիքներու մայրերն են, որոնք «Առողջ միտք առողջ մարմնի մէջ» ասացուածքի ճշմարտութիւնը լիովին իւրացուած, պիտի պատրաստեն առողջ, գեղեցիկ եւ տոկուն սերունդ մը:

Արծուիկները մեր վաղուան մարզիկուհիներն են, որոնք յառաջդիմելով մարզական եւ այլ խաղերուն մէջ, հայ ժողովուրդը պիտի ներկայացնեն դպրոցներու, մարզադաշտերու եւ մարզական հանդիսութեանց մէջ:

Արծուիկները Ս. Օգն. Խաչի փոքրիկ խաչուհիներն են, որոնք զոհողութեան եւ նուիրումի ոգին խորհրդանշող խաչը իրենց կուրծքին վրայ, յառաջապահը պիտի հանդիսանան հայ իգական սեռին, օգնութեան հասնելով կարօտեալին ու թշուառին:

Արծուիկները մեր, հայ ժողովուրդի սեւաչուի աղջիկ նուիրեալներն են, որոնք Հ.Ս.Ը.Մ.-ի տողանցքներուն հրպարտ եւ ուղղաձիգ կը տողանցեն փաստելով, որ իրենք հարազատ ժառանգորդներն են մեր աննման հերոսուհիներուն՝ Շաքէներուն, Սօսէներուն եւ Շուշանիկներուն:

Ս. Օգն. Խաչի Արծուիկները եւ Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտները հարազատ քոյր եղբայրներ են, որոնք ծնան հայ ժողովուրդի Գողգոթայէն ու տառապանքէն:

Երկու մեծ կազմակերպութեանց՝ Ս. Օգն. Խաչի արծուիկներու եւ Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտներու աւելի սերտ գործակցութեամբ կարելի է ամբողջ հայ անչափահաս սերունդը բոլորել եւ տալ անոնց ֆիզիքական, բարոյական եւ հոգեկան առողջ դաստիարակութիւն:

Երկու մեծ կազմակերպություն առիթ էլ պատեհություն ընծայեց ՏԷՐ և ՏԻԿ. Տօքթ. Աւետիս Ինճէճիկեաններու Քեսապի ամէնէն գեղեցիկ բլուրին վրայ սկաուտ և արծուիկներու բանակումի և կազդուրման կայանի մը շինութեան նպատակաւ նուիրած մեծ տարածութեամբ հողամաս մը:

Հ.Մ.Ը.Մ. և Ս. Օգն. Խաչ որոշած են անմիջապէս գործի անցնիլ և սկսիլ կայանի շինութեան: Կը յուսանք, որ մօտ ապագային այդ գեղեցիկ և օգտակար ձեռնարկը կը յաջողի, և այդ ձեւով հիմը կը դրուի Սկաուտ-Արծուիկներու դպրոցին:

Այդ դպրոցին շնորհիւ ամրան երեք ամիսներուն կարելի պիտի ըլլայ շրջաններէն մաս առ մաս սկաուտներ և արծուիկներ համախմբել հոն, և խնամուած յայտագրով մը տալ անոնց սկաուտական և արծուիկներու յատուկ դաստիարակություն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 33

ՄԵՐՈՒՆԴԷ ՄԵՐՈՒՆԴ

Լ. Մասպանաճեան

Կեանքը ըստ էութեան փոխանցման գործունէութիւն մըն է: Այսօրը կը փոխանցուի վաղուան: Մանկութեան կը յաջորդէ երիտասարդութիւն, չափահասութիւն, վերջը ծերութիւն եւ ի վերջոյ մահ, եւ այսպէս շարունակաբար:

Կեանքի իրերայաջորդ չորս շրջանները անվրէպ կը շարունակուին եւ ապրող մարդկութիւնը առանց զգալու կ'ընթանայ նոյն ուղիէն, պահելով գոյավիճակը, շնորհիւ դերակատարներու փոփոխութեան:

Նոյնն է պարագան նաեւ հաստատուն սկզբունքներու եւ գաղափարներու առնչութեամբ: Կ'անցնին տարիներ, տասնամեակներ եւ դարեր, իրենց հետ բերելով եւ յաջորդներուն ժառանգելով անյեղլի ճշմարտութիւնները, հաստատ եւ անփոփոխ գաղափարները:

Կեանքի եւ սկզբունքներու փոխանցման գործունէութեան մէջ ամենէն կարեւոր ու հիմնական դեր կատարողը երիտասարդութիւնն է:

Երիտասարդութիւն .. ի՞նչ առինքնող եւ գեղեցիկ բառ:

Երիտասարդութիւնն է, որ սերունդէ սերունդ կը փոխանցէ մեր ազգային, հասարակական եւ մշակութային արժէքները: Երիտասարդութիւնն է, որ իրեն յաջորդող սերունդին կը սորվեցնէ ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը: Երիտասարդութիւնն է, որ զոհաբերութեան, անձնուրացութեան եւ անբասիր նկարագրի կենդանի օրինակը պիտի ըլլայ զինք ընդօրինակող պատանեկութեան:

Քաղաքակիրթ ու յառաջադեմ ազգեր ունին բազմա-տեսակ երիտասարդական շարժումներ եւ կազմակերպու-թիւններ՝ առիթ տալու համար երիտասարդին զար-գանալու, զուարճանալու եւ պատրաստուելու՝ որպէս տի-պար եւ օգտակար քաղաքացի:

Երիտասարդութիւնը մեծագոյն ոյժն է ազգի մը: Պէտք է զայն օգտագործել գիտնալ, առաւելագոյն արդիւնքը ստա-նալու համար անկէ:

Պէտք է մեր երիտասարդութեան լայն առիթներ տրուին արտայայտուելու եւ գործելու համար:

Երիտասարդութիւնը կեանքն իսկ է:

Երիտասարդութիւնը յաւիտենական պայքարող ոյժն է ի ինդիր ճշմարիտին, գեղեցիկին եւ բարիին:

Երիտասարդը միշտ աւելի անկեղծ եղած է, աւելի անձնուէր, աւելի անշահախնդիր, աւելի իտէլալապաշտ եւ յառաջդիմական: Երիտասարդը աւելի զոհաբերող է, աւելի եռանդուն ու աւելի գործունէայ:

Երիտասարդը այս յարափոփոխ աշխարհին մէջ աւելի ճկուն է, աւելի խիզախ եւ պատրաստակամ, ինքզինք պատ-շաճեցնելու համար ստեղծուած նոր պայմաններուն եւ միջավայրին:

Երիտասարդը տարեցներու ճամբուն վրայ սպասող պահակն ու առաքեալն է, անոնց ծանր բեռը իր ուսերուն վրայ առնելու մեծ պատրաստակամութեամբ, եւ անոնց կիսաւարտ ձգած գործերը աւելի մեծ թափով շարունակելու անխորտակելի վճռականութեամբ:

Եւ, օր մը, երբ ներկայ դերակատարները հանգստեան կոչուին եւ շուրջերնիս նայինք նոր դերակատարներու համար, ուրախութեամբ կրնանք դիմաւորել մեր երի-տասարդ կամաւորներու բանակը, որ պատրաստ է

շարունակելու իրեն աւանդ ձգուած ազգային, հայրենասիրական եւ մշակութային նուիրական մեծ գործը:

Հ.Մ.Ը.Մ.-ը յարմարագոյն վայրն է երիտասարդութեան գործունէութեան: Երիտասարդը հոն կը գտնէ հարիւրաւոր եւ հազարաւոր մատղաշ հոգիներ, որոնց կրնայ ամէն տեսակէտով ձեռն ու մարմին տալ:

Մեր ազգային դատի, մեր ցեղային առաքիւնութեանց ջահը վեր բռնած կեանքի յորձանուտէն դէպի յառաջ խոյացող դեկավարութիւնը զայն սերունդէ սերունդ փոխանցելու եւ միշտ վառ պահելու համար պէտք ունի երիտասարդութեան եւ ան ալ իր կարգին պատանեկութեան:

Դրօշարշաւի մը արագութեամբ, կանոնաւորութեամբ եւ զգուշութեամբ, հայ ժողովուրդի իտէալի դրօշակը սերունդէ սերունդ պէտք է փոխանցուի:

Եւ, այս փոխանցման եւ մանաւանդ յաղթանակի առնչութեամբ մեծ դեր վերապահուած է երիտասարդութեան:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 38

ՊԱՏՐԱՍ, ՄԻՇՆՆ ԴԱՏՐԱՍ

Լ. Մասպանաճեան

Անուրանալի իրականութիւն մըն է այժմ, որ յետպատերազմեան մարդկութիւնը, երիտասարդութիւնը մասնաւորապէս, բոլորովին նորոգուած եւ փոխուած է: Այժմ նոր մարդը կու գայ մարզական շարժումներուն միջոցով եւ անոնց հետ:

Հ.Մ.Ը.Մ.-ը մեր իրականութեան մէջ, իր սահմանափակ միջոցներով, այդ պակասն է որ կը լրացնէ:

Աշխարհի մէջ ոչ մէկ ժողովուրդ թերեւս պէտք չունենար մարզական շարժման, որքան հայ ժողովուրդը:

Դարեր սահեր անցեր են մեր ցեղին վրայէն, տառապանքի, ֆիզիքական եւ բարոյական սպառման խոր ակօսներ ձգելով:

Հին ու նոր ժամանակները մեր ազգային մարմինը խորշումներով ու սպիներով ծածկեր են: Վայրենի եւ կիսակիրթ ժողովուրդները պղտոր հոսանքի պէս անցեր են ու տակաւին կ'անցնին մեր հայրենիքին վրայէն, ոտնակոխ են ըրեր եւ կ'ընեն մեր ժողովուրդը, կարծելով որ այլեւս դատապարտուած ենք անհետանալու պատմութեան բեմէն: Անոնք ամէնքն ալ սխալած էին ու դեռ եւս կը սխալին իրենց հաշիւներուն մէջ:

Մեր ցեղը կայ ու կ'ապրի հայրենիքի եւ սփիւռքի մէջ եւ նոյնիսկ սնունդ կու տայ այն շարժումներուն, որ մեծ ժողովուրդներու մենաշնորհը կը նկատուի:

Դէպի նորն ու դէպի լաւագոյնը ձգտելու մեր ցեղային ոգիին արդիւնքը պէտք է նկատել, անշուշտ, որ նաեւ մարզական շարժումը հայոց մէջ վերսկսած է գրեթէ այն թուականներուն, երբ Եւրոպայի մէջ դեռ միայն երկու մեծ

ազգերու մէջ ծայր տուած էր ան, ճիշդ այնպէս՝ ինչպէս հին դարերուն, Աթէնքի ու Հռոմի հետ միաժամանակ Հայաստանի մէջ, անկախ բուն հայկական բազմաթիւ խաղերէն:

Այսպէս ողորմալիականներ կազմակերպելու գաղափարը Եւրոպայի մէջ ծնունդ առաւ 1891 թուականին: Քանի մը տարի վերջ, Պոլսոյ Բոպէրթ Քոլէճի հայ տղաքը վարակուած էին մարզական շարժումով:

Սկսուտական շարժումը Ֆրանսայի մէջ կը սկսեր 1912-ին: Մեր մէջ՝ նոյն թուականին, ու 1913-էն վերջ Պոլսէն կ'անցներ գաւառ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեր ցեղի ֆիզիքական յարութեան ջահակիրն է, որ չի վիատիր եւ չընկրկիր անհնարին դժուարութիւններուն առջեւ:

Իր նշանաբանն իսկ պերճախօս է եւ շատ բան կ'ըսէ արդէն.- «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր»: Բարձրացի՛ր՝ ֆիզիքական ու բարոյական անկումէ մը: Եւ ոչ միայն բարձրացի՛ր դուն հա՛յ մարդ եւ հայ երիտասարդ, այլեւ ուրիշ հայորդիներ ալ բարձրացո՛ւր քեզի հետ:

Հ.Մ.Ը.Մ.-ը վստահութիւն, քէն ու ոխ, հոսանք ու խտրութիւն չի ճանչնար: Ան կ'ուզէ հայ ապրիլ, ֆիզիքապէս առողջ, հոգեպէս՝ տոկուն, որ կարենայ դիմագրաւել դժուարութեանց եւ ազատ ու անկախ շնչել:

Բաւ է ակնարկ մը նետել Հ.Մ.Ը.Մ.-ի տեւականացման ու ուռճացման համար ցարդ կատարուած թանկագին ճիգերուն ու չսակարկուած զոհողութեանց վրայ, չափելու համար մեծութիւնն ու գեղեցկութիւնը այն մեծ շարժումին, զոր մեր նախորդները այնքան խանդով ու հաւատքով ստեղծեցին ու յանձնեցին հայ երիտասարդ սերունդին, որ նոր շունչով եւ պիրկ կամքով զօրացած դիմագրաւէ ապագան, ի խնդիր նորանոր նուաճումներու:

Այսօր կայ ամբողջ սերունդ մը Հ.Մ.Ը.Մ.-ական սկաուտներու, մարզիկներու, երեցներու, գայլիկներու եւ արծուիկներու, որ իր հոգիին խորը պահած ցեղին իտէալներն ու կարօտը հայրենի երկրին՝ կը թափառի աշխարհէ աշխարհ, կը հիւծի օտար ամբերուն վրայ, բայց չի մոռնար ու պիտի չմոռնայ երբեք իր վերացնող երդումը «*ճառայել ազգին ու հայրենիքին*», եւ դարերու փորձառութեամբ թրծուած շունչը իր պապերուն որ կը թելադրէ «Պատրաստ, մի՛ շտ պատրաստ»:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Գ. տարի, թիւ 48

Յ. ՀԻՆՂԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Լ. Մասպանաճեան

Պոլսոյ «Նոր Դպրոց»ի հիմնադիր տնօրէններէն ու ծանօթ մանկավարժ Յովհաննէս Թ. Հինդլեան հայոց մէջ մարմնակրթական ու մասնաւորապէս սկսուտական շարժման գաղափարախօսներէն եղած է:

Յ. Թ. Հինդլեան ըլլալով հմուտ եւ բազմարդիւն ուսուցիչ դաստիարակ մը՝ ան մարմնակրթանքը կ'ըմբօնէ իբրեւ ազդակ մը հայ երիտասարդութեան բարոյական դաստիարակութեան: Ինքն էր, որ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ» թերթին մէջ սկսուտիզմի էութիւնը պարզեց եւ Ա. Ընդհանուր պատերազմէն վերջ գաղափարախօսը եղաւ անոր: Իր այդ գրութիւնները պրակներու վերածուած, հայութեան մէջ մղիչ ազդակները եղան սկսուտական շարժումներուն:

Անզլիացի զօրավար Պէյտն Բաուլի սկսուտական շարժումին արձագանգը տակաւին եւրոպական բազմաթիւ երկիրներէ ներս չթափանցած, հայ ֆիզիքական, մտային եւ հոգեւոր կեանքի առաջապահ մշակները, կրցան ըմբօնել այդ շարժման կարեւորութիւնը ու դարձան գաղափարախօսները մեր մէջ: Յ. Թ. Հինդլեան, հայ ազգին հասնող սերունդներուն դաստիարակչական գործին նուիրուած առաքելներէն մէկը, առաջինը կը հանդիսանայ մեկնաբանելու «Մարմնամարզ»ի էջերուն մէջ տարածուող սկսուտական շարժման էութիւնը:

Յ. Թ. Հինդլեան անդրադառնալով սկսուտութեան էութեան հետեւեալ ձեւով կը պատկերացնէ անոր անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը:

«Ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս ձեռնարկին կարեւորութիւնը...: Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ բարեկեցութեան զարգացումը կը վտանգէ բարոյական հաւասարակշռութիւնը եւ քաղաքացիական արժէքները:

Գերաքաղաքակրթութիւնը, կամքը, ձեռներեցութեան ոգին տկարացուցած է: Մտաւորականներու եւ դիւրագացներու, արուեստագէտներու, գիտուններու, քննադատներու սերունդներ կ'արտադրէ ան, բայց գործելու, ճգնելու, վտանգը դիմագրաւելու եռանդը երթալով կը պակսի, կորովը, նկարագիրը կը փճանայ...: Աւելի կը սիրենք վայելել քան թէ ստեղծել:

Հայ նորահաս սերունդին մէջ գործելու, ճգնելու եւ դժուարութիւնները դիմագրաւելու ոյժն ու կորովը զօրացնելու, բարոյական հաւասարակշռութիւնը եւ նկարագրի բարձրութիւնը պահելու մտադրութեամբ Յ. Թ. Հինդլեան կոչ կ'ուղղէ հայ ծնողներուն եւ երիտասարդութեան օգնելու եւ գործօն մասնակցութիւն բերելու սկաուտութեան:

Յ. Թ. Հինդլեան իր վարժարանին մէջ կազմեց 1913-ին, առաջին հայ սկաուտական խումբերէն մին: Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութենէն վերջ եղաւ անոր գլխաւոր զօրավիզներէն մէկը: Մանկավարժի իր անվիճելի կարողութիւնը, հանրային իր դիրքը, ու իր մէջի բարոյական ուժեղ անձը միացած մարմնակրթական շարժման մասին իր ցոյց տուած անվերապահ աջակցութեան, ոչ միայն օգտակար եղան նախապատերազմեան մեր մարմնակրթական կեանքին, եւ պատերազմէն վերջ Հ.Մ.Ը.Մ.-ին, այլեւ նպաստեցին սկաուտութեան տարածման:

Յ. Թ. Հինդլեան ասկէ յիսուն տարի առաջ լիովին ըմբռնած սկաուտութեան օգտակարութիւնը, ցեղի մը նոր սերունդին ազնուացման եւ կրթութեան առաջադրութեամբ

ի գործ դրուած միջոցներէն որպէս լաւագոյնը: Ան իր յօդուածներով, սկաուտական գիրքերու թարգմանութեամբ աշխատած է գետին պատրաստել սկաուտութեան ծաւալման եւ զարգացման համար: Հակառակ իր բազմազբաղ վիճակին ան նահատակ Շ. Քրիսեանի հետ կողք կողքի գրչով, խօսքով եւ գործքով աշխատած է հայ ժողովուրդի մէջ մարմնակրթութեան եւ սկաուտութեան անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը շեշտել եւ 1918-ին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան կազմութեան ժամանակ որպէս միջոց միութեան վեհ նպատակի իրագործման յաջողած է ծրագիր կանոնագրի մէջ սկաուտութիւնը առաջնակարգ տեղ դնել:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 42-րդ տարելիցի վերջաւորութեան կը զգանք եւ յարգանքով կը վերլիջենք այս միութեան հիմնադիրներու եւ ի մասնաւորի Յ. Թ. Հինդլեանի անունը, որոնք կրցան նախատեսել հայ երիտասարդութեան ֆիզիքական եւ բարոյական զարգացման համար Հ.Մ.Ը.Մ.-ի նման ամրակուտ միութեան մը անհրաժեշտութիւնը:

Հինդլեան եւ նմանները հայ հասարակական, սկաուտական եւ մարզական կեանքի մէջ գնահատելի գործ կատարած են:

Փաստ, ահա սփիւռքի Հ.Մ.Ը.Մ.-ը, իր տասնեակ հազարներու հասնող սկաուտներով, գայլիկներով, արենոյշներով, արծուիկներով եւ մարզիկներով:

Յարգանք անոնց անմեռ յիշատակին:

* * *

«Արեւելք Մարզաշխարհ» Գ. տարի, թիւ 49

ՄԻՐԷ՛ ԳՈՐԾՊ

Լ. Մասպանաճեան

Սիրելի պատանիներ եւ երիտասարդներ.-

Վստահ ենք, որ գործով մը զբաղուած էք: Ձեզմէ շատեր դպրոց կը յաճախեն: Կան նաեւ մեծ թիւով արհեստաւորներ եւ պաշտօնեաներ ձեր մէջ: Այդ գործերուն առընթեր միութենական, մշակութային եւ հասարակական գործերով ալ կլանուած էք: Ձեզմէ ոմանք սկառու են, շատեր մարզական կեանքին կը հետեւին, քիչ չէ թիւը նաեւ գրական, մշակութային եւ գեղարուեստական կեանքով հետաքրքրուողներուն:

Բոլոր հոգիովդ սիրէ՛ այն գործը որ կ'ընես, թէկուզ անիկա շատ չնչին եւ պարզ ըլլայ: Ամբողջ էութեամբդ փարիր այն գործին որ կ'ընես եւ երբեք զայն քեզ համար ամօթալի մի՛ նկատեր եւ մի՛ մտածեր որ ուրիշ գործ մը ընելով աւելի պատուաբեր գործ մը ըրած պիտի ըլլաս: Քեզ համար յստակ եւ հասկնալի պէտք է ըլլայ, որ եթէ գործդ չսիրես, չես կրնար յաջողութիւն եւ յառաջացում արձանագրել:

Կեանքի մէջ յաջողած են անոնք, որոնք իրենց գործը սիրած են, որոնց համար գործը պարտականութենէն աւելի հաճոյք եղած է:

Առհասարակ մարդիկ իրենց սիրած գործը լաւ կ'ընեն: Տեսնուածէ մտաւորաբար աշխատանքը թէ դժուար է եւ թէ անկատար:

Առտու կանուխ արթննալով դասերը սերտող, ուրախութեամբ եւ լաւ տրամադրութեամբ դպրոց յաճախող աշակերտը անպայման կը յաջողի: Իւրաքանչիւր անցող

օրուան ընթացքին բան մը ասելի սորվելու փափաք ունեցող, սիրելով եւ հաճոյքով գործի լծուող արհեստաւոր աշակերտը արդէն յաջողութեան ճամբան գտած է: Գեղարուեստին, նուագին եւ նկարչութեան հետեւող պատանիին համար յարատեւ եւ դժուար փորձերը հաճոյքի պահեր պէտք է դառնան, որպէսզի յետագային տեղ մը հասնի: Տութպոլի, պասքէթպոլի եւ աթլէթ խաղերու ոչ թէ մրցումներուն, այլ փորձերուն կանոնաւոր եւ ճշդապահ ներկայ գտնուող մարզիկն է, որ սիրելով եւ ենթարկուելով այդ փորձերու ընթացքին իրեն պարտադրուած եւ յոգնեցուցիչ հրահանգներուն կրնայ յաջողութիւն արձանագրել:

Ուժեղ, արթուն եւ հաստատ կեցի՛ր: Մի՛ տկարանար փորձերուդ մէջ: Բոլոր կարողութիւնդ յառաջ մղէ՛: Աշխատի՛ր գէթ մէկ անգամ յաղթանակը ապահովել, այն ատեն արդէն յաջողած ես, եւ դուն ասելի ինքնավստահ պիտի դառնաս եւ ուրիշներ նաեւ յաջողութեանդ մասին լաւ պիտի արտայայտուին:

Կեանքիդ մէջ ամենէն ուրախ ժամերը աշխատանքիդ ժամերը պէտք է ըլլան: Արժէք ներկայացնող գործ մը, կատարեալ յաջողութեամբ պսակուած մտքի յղացում մը, ձեռքի աշխատանք մը արտադրելու համար պէտք է նուիրուիս եւ կեդրոնանաս եւ բոլոր ոյժերդ ի սպաս դնես:

Ուսումնասիրէ՛ մեծ յեղափոխականներու, կրօնքի եւ եկեղեցւոյ քարոզիչներու եւ մարտիրոսներու, երաժիշտներու, բանաստեղծներու, գիտնականներու, արհեստաւորներու եւ մարզիկներու կեանքը թէ անոնք ինչպիսի ծանր աշխատանքներու եւ գոհողութիւններու գնով հասած են այդ բարձրունքներուն: Այդ հսկաներու յաջողութեան մէջ կը տեսնէք աննկուն եւ զօրաւոր կամք, անխոնջ եւ անդուլ աշխատանք, աննահանջ յարատեւութիւն եւ մանաւանդ

անսահման սեր եւ գուրգուրանք առաջադրուած նպատակին հասնելու ճիգին մէջ:

Յաղթականը ան է, որ իր բոլոր հոգիով նուիրուած է իր գործին: Ան որ պարտականութիւնն ու գործը սիրով ու խանդավառութեամբ չի կատարեր, պէտք չէ ակնկալէ արժէքաւոր արդիւնք: Դանդաղութիւն, թուլացում եւ անտարբերութիւն կը կեցնէ գործին յառաջացումը: Աշխատած, գրած եւ խաղցած ատեն միտքդ, ձեռքերդ եւ ոտքերդ պէտք է ներշնչուիին հոգիէդ:

Յաջողութեան, բարձրացման եւ յաղթանակներ շահելու համար չեն բաւեր մեքենական եւ սովորական աշխատանք: Գործիդ պէտք է ընկերանայ անձնուիրութիւն եւ սեր: Առանց այս առաքինութեանց կարելի չէ իրական արժէք ներկայացնող բարձրացում եւ յաղթանակ ապահովել:

Միրէ՛ գործդ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 3

ՅԱՆԴՈՒԳՆ ԵՒ ՔԱՉԱՍԻՐՏ ԵՂԻՐ

Լ. Մասպանաճեան

Համարձակութիւնն ու քաջութիւնը նկարագրի եական յատկանիշներն են, որոնք քեզի ոյժ եւ յանդգնութիւն կը ներշնչեն նպատակիդ հասնելու համար:

Քաջասիրտը միշտ կը յաջողի եւ կը յաղթէ, թէկուզ դժբախտութիւններն ու ձախողութիւնները իրար յաջորդեն: Մրցանակը միշտ համարձակն ու տոկացողը կը շահի: Աշխատողն ու աննահանջ յառաջացողն է յաղթականը:

Աշխարհը քաջասիրտ եւ յանդուգն մարդոց վրայ կը հիանայ: Անոնց համար անյաղթահարելի արգելքներ չկան: Աշխատի՛ր զանոնք հրապարակէն քշել, անուանարկել եւ ամբաստանել, պիտի տեսնես, որ անոնք անսայթաք կը շարունակեն քալել: Փորձուի՛ր անոնց առջեւ խութեր եւ փշաթելեր դնել, խոր փոսեր փորել ու թաղել, նորէն պիտի տեսնես, որ անոնք ոտքի են եւ կը շարունակեն գործել: Անկարելի է այս տեսակ մարդիկ վար պահել, անոնք միշտ դէպի վեր կը մագլցին:

Քաղաքական, տնտեսական եւ մշակութային ասպարեզներուն մէջ նման մարդիկ են, որ յեղափոխութիւններ կը յաջողցնեն, դպրոցներ ու հիւանդանոցներ կը շինեն, ովկիանոսները նաւերով կը լեցնեն եւ երկինքը մուխով կը ծածկեն:

Տկար ու անկայուն նկարագիր ունեցողը երկչոտ է, ան չի յանդգնիր մեծ ու բարձր գործերու:

Համարձակութիւնը հակառակն է երկչոտութեան: Համարձակն ու քաջասիրտը ունին ամուր նկարագիր եւ երկաթեայ կամք:

Ան կը ճանչցուի իր գործերով: Հայ ժողովուրդի պատմութիւնը եւ մասնաւորաբար վերջին եօթանասուն տարուան անցքերը ամէնէն ցայտուն վկան է քաջասիրտ եւ յանդուգն հայ անմահներու հրաշալի գործունէութեան: Այդ յանդուգն ու քաջ հերոսներն են, որոնք հիմնեցին եւ ձեռնարկին տուին Հայաստանին: Անոնց պողպատեայ բազուկն է, որ հայ ժողովուրդի վրէժը լուծեց: Անոնց յանդգնութեան եւ համարձակութեան շնորհիւ է, որ այսօր գաղթաշխարհի Հայութիւնը ունի հարիւրաւոր եկեղեցիներ, դպրոցներ, ճեմարաններ, ակումբներ, բուժարան, թանգարան, մայրանոց եւ ծերանոցներ:

Հասարակական թէ անհատական կեանքի մէջ յաջողութեան մեծագոյն գաղտնիքը յանդգնութեան եւ համարձակութեան մէջ կը կայանայ:

Համարձակութիւնը, զայն ունեցողի ճակտին անպայման դափնի մը կը դնէ: Ուսումնասիրէ՛ մարդկային կեանքը, պիտի համոզուիս, որ համարձակ եւ յանդուգն մարդիկն են, որ յաջողած են ամէն ասպարէզի մէջ:

Ըսել չենք ուզեր, որ ամէն համարձակ եւ յանդուգն մարդ կը յաջողի: Համարձակութեան եւ յանդգնութեան պիտի միանայ ճշմարտութիւն, պարկեշտութիւն, յարատեւութիւն, մաքուր եւ անբասիր նկարագիր:

Յաճախ մեզ կը դիմագրաւեն ձախողութիւններ եւ անյաջողութիւններ, ահա այն ատեն է, որ մեր քաջութիւնն ու համարձակութիւնը պէտք է յաղթահարէ անոնց եւ այդ ձախողութիւնները որպէս մղիչ ոյժ պէտք է ծառայեն մեզ դէպի յաջողութիւն:

Կեանքի մէջ ֆիզիքական թէ բարոյական դժուարութիւններ յաղթահարուած են յանդգնութեան եւ համարձակութեան շնորհիւ:

Յանդգնութեան եւ քաջութեան մեծագոյն օրինակներ չե՞ն ափ մը հայ ֆետայիներու օրհասական կռիւները կանոնաւոր թուրք զինուորներու դէմ, Ուրֆայի, Շապին Գարահիսարի, Վանի, Տարօնի եւ Մուսա Լերան հերոսամարտերը:

Հայ երիտասարդ, Հ.Մ.Ը.Մ.-ական մարզիկ թէ սկաուտ համարձակ եւ յանդուգն եղի՛ր արհեստիդ, դպրոցիդ եւ ամէն տեղ:

Վազքի, մրցման մէջ կը շահի ան, որ կը համարձակի, կը յանդգնի եւ կը տոկայ:

Հայ ժողովուրդը իր խիզախութեան, յանդգնութեան եւ քաջութեան շնորհիւ տեւականացաւ եւ պիտի տեւականանայ:

Դուն անոր ժառանգորդն ես:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 4

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՆ ՄԵՄԻՆ

Լ.Մասպանաճեան

Նո՛ր տարի:

Հարցուցէք այս աշխարհի պէտք իմաստուններուն, կրնա՞ք ստանալ անելի յուսադրիչ, անելի լաւատես աշխարհահայեացք մը:

Նոր քան չկայ- այս է եզրակացութիւնը «արեւի տակ» ապրող իմաստուն մահկանացուներուն:

Կա՞յ արդեօք այնպիսի քան մը, որու համար կրնայ ըսուիլ «Ահա ասիկա նոր է»: Ահա մեզմէ առաջ եղած դարերուն մէջ Անիկա արդէն եղած էր: (Ժող. Ա. 10):

Եւ իմաստունը կը պատասխանէ իր իսկ հարցումին.- Արեւուն տակ նոր քան չկայ: Այո, նոր տարի, եթէ զայն կ'ընդունինք նոր հարցումով, եթէ զայն կը սկսինք նոր հրահանգով, եթէ զայն կը շարունակենք նոր պատուերով:

Նոր տարի չկայ անոնց համար, որոնք իրենց կեանքը կը շարունակեն նախկինին նման եւ չեն անդրադառնար իրենց սխալներուն, մոլութեանց եւ ձախողութեանց վրայ:

Նոր տարին դիմաւորելու, այդ յատկանշական թուականէն լաւապէս օգտուելու համար պէտք է ինքնամփոփուիլ, պէտք է խորապէս գիտակցիլ հոգեկան, բարոյական եւ նիւթական ներկայ կացութեանդ եւ վերջը որոշում մը տալ նոր կեանքի համար:

Նոր տարին, իւրաքանչիւր մարդուն համար իր անձնական, ընտանեկան, դպրոցական թէ միութենական գործունէութեան եւ ընթացքին վերաքննութեան օրն է: Նոր տարին ինքնաքննադատութեան, հարց ու պատասխանի պահն է:

Նոր տարին չէ, որ մեզի նորություն եւ յաջողություն պիտի բերէ: Նոր տարին մեզի կը թելադրէ ինքնաքննադատություն: Պահ մը առանձնացի՛ր, դուն քեզի հետ, դուն քեզի համար, մտածէ՛ եւ որոշէ՛:

Նոր տարուան առթիւ կրնա՞ս ծխելու, խմելու եւ այլ մոլութիւններէ ձերբազատուիլ: Կրնա՞ս շահած դրամդ ընտանիքիդ եւ օգտակար բաներուն յատկացնել: Կրնա՞ս դպրոցին, արհեստանոցին եւ միութեանդ մէջ հնազանդ մաքուր եւ կարգապահ ըլլալ:

Նոր տարուան կրնա՞ս որոշել եւ գործադրել այն բաները, որոնք օգտակար են քեզի եւ շուրջիններուդ: Կրնա՞ս վերջնականապէս ձգել այն բոլոր գէշ ունակութիւններդ, որոնք բարոյական եւ նիւթական մեծ վնաս կը պատճառեն քեզի եւ պարագաներուդ:

Նայեցէ՛ք սա դժբախտ պատանիներուն եւ երիտասարդներուն, որոնք գերի են ծխախոտին-չեն կրնար չծխել: Որքան խեղճ են սա արհեստաւորները, որոնք դրամ կը շահին, բայց իրենց շահածը կը յատկացնեն օղիի եւ անբարոյ կենցաղի, մինչ իրենց ընտանիքներն ու զուակները անօթի իրենց կը սպասեն տունը:

Հերոսներ եւ դժբախտներ, յաղթականներ եւ պարտուածներ...իրարու մօտ, իրարու հետ...: Նայէ՛ սա երկու երիտասարդներուն, որոնք նոյն աշխատանոցին մէջ կը գործեն...մին յաղթական հերոս մը, իսկ միւսը պարտեալ թշուառական մը:

Որքան մեծ է թիւը անոնց որ կը ձախողին կեանքի մէջ: Շատեր որքան շուտ կը յուսահատին դժուարութեան մը առջեւ եւ կ'իյնան: Որքան մեծ է թիւը անոնց որոնք գերիներ են իրենց կիրքերուն եւ մոլութեանց: Որքան մեծ թիւով տաղանդներ իրենք զիրենք փճացուցած են օղիի, բախտախաղի եւ բարոյական փորձութեան մը առջեւ:

Ո՞ր կը կայանայ գաղտնիքը ձախողութեան եւ յաղթանակի, հերոսութեան եւ պարտութեան: Հերոսութեան եւ յաղթանակի գաղտնիքը մարդոց հոգիին, կամքին եւ մտքին մէջն է:

Նոր տարի է :

Կ'ուզե՞ս օգտակար ըլլալ նախ դուն քեզի եւ վերջը ընտանիքիդ, ազգիդ, միութեան եւ մարդկութեան, պահ մը յորձանքէն դուրս ելի՛ր, անդրադարձի՛ր կենցաղիդ եւ դիտե՛ շուրջդ, տրամաբանե՛ եւ որոշե՛: Օգտակար կեանք մը վարելու համար պէտք ունիս ազնիւ եւ մաքուր հոգիի, որոշումներդ գործադրելու համար զօրաւոր կամքի, իսկ ճամբադ անսայթաք շարունակելու համար արթուն մտքի: Նոր տարի է, օգտուի՛ր այս պատեհութենէն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 6

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Լ. Մասպանաճեան

Մանուկներու դաստիարակութեան հարցին շուրջ յաճախ գրած ենք այս սինակներուն մէջ եւ կրկին աւելորդ չենք գտներ անդրադառնալ այս խիստ այժմեական նիւթին:

Կրօնական հաստատութիւնները, դպրոցներն ու միութիւնները բաւարար չեն եւ չեն կրնար մանուկներուն տալ այն անհրաժեշտ դաստիարակութիւնը, որ կարելոր է անոնց նկարագրի կազմութեան սկզբնական շրջանին մէջ:

Մանուկին դաստիարակութեան առաջին եւ հիմնական դպրոցը իր տունն է:

Նկարագրի ողնայարը տան մէջ կը կազմուի: Բարիի եւ չարի ձգտումը հոն կը հաստատուի:

Ընտանեկան յարկը մեծի եւ փոքրի նկարագրի կազմութեան համար առաջին եւ կարելոր վայրն է: Հոն է, որ պատանին եւ երիտասարդը կը սորվին կեանքի համար եական բոլոր սկզբունքները:

Յատկապէս տան մէջ է, որ հոգին կ'ազնուանայ, սովորութիւնները կը կազմուին, իմացականութիւնը կ'արթննայ եւ նկարագիրը կը կադապարուի լաւին եւ չարին համար:

Տունը սիրոյ, ուրախութեան եւ խաղաղութեան ժամադրավայրն է: Ուրախ տուն մը, երջանիկ եւ գուարթ ընտանիք մը աւելի դաստիարակիչ հաստատութիւն է քան որեւէ դպրոց:

Մեր փոքրիկներու դաստիարակութեան խնդրին մէջ արդեօք որքանո՞վ կ'օժանդակենք դպրոցներու եւ միութեանց գործին:

Մեր ընտանեկան յարկերը պէտք է աշխատինք ընտանիքի բոլոր անդամներուն համար դարձնել կեդրոնաձիգ

սրբավայր մը, ուր ստեղծելով մաքուր մթնոլորտ մը կարողանանք մեր զաւակներուն տալ հոգեկան, ազգային եւ առողջ դաստիարակութիւն:

Ընտանեկան դաստիարակութեան պակասը մեծ աւեր կը գործէ նոր սերունդի եւ մանաւանդ արհեստաւոր դասակարգի երիտասարդութեան մէջ:

Մարգավայրերու, հաւաքատեղերու եւ արհեստանոցներու մէջ յաճախ կը հանդիպինք նոր սերունդին, որոնք դժբախտաբար զուրկ են տարրական քաղաքավարութենէն, թերեւս կը խօսին թրքերէն լեզուն իր լպիրշ եւ գռեհիկ դարձուածքներով, կը կռուին, կը պոռան եւ կ'աղմկեն:

Եթէ կարելիութիւն ստեղծուի այս սերունդի իւրաքանչիւրին ընտանեկան յարկը մտնել եւ ուսումնասիրել հոն տիրող մթնոլորտը, ապահովաբար պիտի հաստատուի, որ անոնց թրքախօսութեան, անքաղաքավարութեան, կռուազանութեան եւ այլ եւ այլ գէշ ունակութեանց աղբիւրը իրենց ծնողներն ու ընտանեկան յարկերն են:

Իրական, ճշմարիտ տուն մը սրբավայր մըն է, ուր մարդ հեռու կը մնայ կեանքի ամէն տեսակ գռեհկութենէն եւ հոն դաստիարակուող պատանին եւ երիտասարդը մաքուր նրկարագրի, տոհմային եւ հոգեկան արժանիքներու տէր կը դառնայ:

Տունը մարմնի հանգիստի կայանէն աւելի հոգիի ազնուացման վայրն է, հանգիստի վայրն է ան, ուր յոգնած մարմինդ ու ջիղերդ կը հանգստանան եւ վաղուան կեանքի պայքարին դիմագրաւելու համար ոյժ կը հաւաքես:

Հոն տան գահին վրայ նստողը ընտանիքի մայրն է: Անոր գահակալութիւնը՝ կատարեալ, բարոյական եւ հոգեկան իշխանութիւնը ճշմարիտ է, եթէ կարողանայ ընտա-

նիքի բոլոր անդամները իր շուրջ համախմբել եւ հոն ստեղծել սիրոյ եւ համերաշխութեան գեղեցիկ մթնոլորտ մը:

Որքան ալ դպրոցները եւ այլ հաստատութիւններ ազդեն մեր նկարագրի եւ հոգիի վրայ, այսուհանդերձ տան դաստիարակութիւնը նկարագրի կազմութեան մէջ շատ էական է:

Լաւ եւ կատարեալ տունը լաւագոյն դպրոցն է, ոչ թէ միայն մանուկներու եւ երիտասարդներու այլ նաեւ չափահասներու համար: Հոն մանուկն ու երիտասարդը, չափահասն ու ծերը հաւասարապէս կը սորվին համբերութեան, ինքնագիտակցութեան, ծառայութեան ոգի եւ պարտականութեան գիտակցութիւն:

Նոր սերունդի դաստիարակութեան, հասակ նետող հայ երիտասարդութեան հոգեկան, բարոյական եւ իմացական զարգացման միակ ապահով վայրն է ընտանեկան յարկը, որուն կատարած փրկարար դերը դժբախտաբար անտեսուած է շատերուն կողմէ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 8

ԱԻԱՐԱՅՐԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԿՏԱԿԸ

Լ. Մասպանաճեան

Վարդանանցը...

Գոյութեան պայքարն է հայ ժողովուրդի ընդդէմ բռնակալներու, յափշտակիչներու եւ աշխարհակալներու:

Աւարայրը յանուն ազգի եւ հայրենիքի, կրօնքի եւ եկեղեցւոյ, մշակոյթի եւ լեզուի տեւականացման ի խնդիր մղուած պատերազմ մըն է գերազանցապէս զօրաւոր ոյժի մը դէմ:

Ասկէ տասն եւ հինգ դարեր առաջ Տղմուտի ամերուն մօտ, հայ ժողովուրդի պարսիկ ոյժերու դէմ մղած կռիւը եւ հոն թափուած տասնեակ հազարաւոր հայ քաջերու արիւնը գրաւականը եղաւ յետագայ սերունդներուն իր բոլոր առաքինութիւններով հայ մնալուն:

Հայրենիքի ազատութեան, եկեղեցւոյ եւ կրօնքի սիրոյն թափուած Վարդաններու, Ղեւոնդ Երեցներու, Շուշանիկներու եւ անձնուրաց հայ մարտիկներու սուրբ արիւնով մկրտուեցաւ հայ ժողովուրդը:

Վարդանն ու իր ընկերները, Տղմուտն ու Աւարայրը եղան լուսատու փարոսը հայ ժողովուրդին, ուխտավայրը հաւատացեալներուն եւ փառատօնը ցեղին:

Հայ ազգի գոյութեան սպառնացող Յազկերտը Աւարայրի դաշտին վրայ իր դէմ գտաւ հայ ժողովուրդի անսասան հաւատքը, աննկուն կամքն ու միասնական զոհաբերութիւնը:

Կրօնաւորն ու իշխանը, զօրավարն ու զինուորը, հարուստն ու աղքատը միաձուլուած ծառացան թշնամիին դէմ: «Զարկին զարկուան»: Տղմուտ գետին գոյնը պահ մը կարմրեցաւ, հայ զինուորին «ազատութիւն կամ մահ»

կանչը Աւարայրի հորիզոնը արձագանգեց: Ճիշդ է Վարդանն ու իր բանակը կորսնցուց պատերազմը, բայց շահեցաւ յաղթանակը:

Տիզիբակսան պարտութեան յաջորդեց հոգեկան յաղթանակը:

Զօրաւորին դէմ արդարօրէն ծառանալու յանդգնութիւնը հայ ժողովուրդին տուաւ ապրելու յոյս: Հայոց պատմութեան մէջ մղուած պատերազմներու մէջ Աւարայրի պատերազմը առանձնայատուկ նշանակութիւն ունի:

Այդ պատերազմին յաջորդող դէպքերը, յաղթողի եւ պարտուողի փոխարաբերութիւնները ցոյց կու տան, որ յաղթականը արդէն պարտուած տեղի տուած է պարտուողի հոգեկան եւ իմացական պահանջներուն առջեւ:

Վարդանանց պատերազմը երկար դարերէ ի վեր կը ներշնչէ հայ ժողովուրդը: Չկայ պատանի մը, որ փորձած չըլլայ Քաջն Վարդանի դիմանկարը գծել:

Այսօր թերեւս գոյութիւն ունի մեր եկեղեցւոյ եւ կրօնքին, հայրենիքին ու ազգութեան, լեզուին եւ մշակոյթին ըստպառնացող վտանգ:

Այս հարստութեանց պաշտպանութեան համար այսօր անհրաժեշտ են Վարդաններ, Ղեւոնդ Երեցներ եւ Շուշանիկներ:

Աւարայրի դաշտին վրայ մեր զինուորներուն վրայ յարձակող փիղերուն զանգակներուն ձայները հայրենիքէն սկսած մինչեւ հեռաւոր գաղութներուն դռները հասած մեզի կը յիշեցնեն Աւարայրին նախորդող օրերը:

Անաղմուկ եւ անշշուկ վտանգ մը կը սպառնայ մեր լեզուին, կրօնքին, մշակոյթին եւ տոհմիկ բարքերուն: Թշնամին դարանակալ կը հալածէ մեզ ամէնուրեք:

Աներեւոյթ թշնամին կը մտնէ մեր ընտանիքներէն, միութիւններէն եւ գաղութներէն ներս եւ աւեր կը գործէ:

Ուժացման եւ այլասերման վտանգ է այդ՝ աւելի զօրաւոր քան Յազկերտի բանակները:

Նկարագրի եւ բարոյականի խաթարումն է, հաւատքի եւ յոյսի նուազումն է այդ սարսափելի թշնամին, որ կամաց կամաց տեղ կը գտնէ մեր մէջ զգետնելու համար դարաւոր կաղնին:

Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ հայ ժողովուրդի այսօրուան խափուսիկ խաղաղութիւնը պէտք չէ քնացնէ եւ օրօրէ մեզ: Հայ ժողովուրդը դադարի եւ խաղաղութեան ատեն սկարացած է առհասարակ: Մեր ժողովուրդի տււականացման գաղտնիքը կը կայանայ իր գոյութեան պայքարին մէջ:

Այսօր մեր կրօնական, ազգային, մշակութային եւ մարզական կազմակերպութիւնները եւ անոնց գործունէութեան միջոցները մի գուցէ բաւարար չեն վաղուան վտանգը դիմակալելու համար:

Պէտք է աւելի կազմակերպուիլ, կարենալ միասնաբար դիմագրաւելու համար սպառնացող վտանգը: Բարեբախտաբար ունինք երիտասարդ գիտակից եւ առողջ սերունդ մը, որ ի վիճակի է հրաշքներ գործել: Ունինք անձնագոհ եւ ազգասէր ժողովուրդ մը, որ պատրաստ է ամէն զոհողութեան:

Աւարայրի մեծ ասպետին սուրը, Ղեւոնդ Երէցի խաչը եւ հայ զինուորի վահանը կը յատկանշեն յարատեւ պայքար յանուն հայրենիքի, կրօնքի եւ հայ ժողովուրդի պաշտպանութեան:

Աւարայրի նահատակները մեզի կը կտակեն պահել եւ պաշտպանել հայրենիքը, կրօնքն ու եկեղեցին, լեզուն ու մըշակոյթը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 11

ՄԷԿ ՆՊԱՏԱԿ, ՄԷԿ ԻՏԷԱԼ

Լ.Մասպանաճեան

Ներկայ երիտասարդութեան եւ պատանիներու մեծամասնութիւնը իրենց դպրոցական եւ առօրեայ գրադումներէն զատ կը ձգտին եւ կ'աշխատին մէկէ աւելի նպատակներու իրագործման:

Անոնք կը հետեւին մարմնակրթանքի գրեթէ բոլոր ճիւղերուն, ֆութպոլի, պասքէթպոլի խումբերուն մաս կազմելէ դուրս կը մասնակցին նաեւ աթլէթիք խաղերուն: Կը փորձեն նուագել, նկարել ու նաեւ գրել:

Բժշկական, գեղարուեստի, ճարտարարուեստի ու գրական մարզերուն մէջ յաջողած մեծ գիտնականները իրենց գիւտերն ու յաջողութիւնները կը պարտին միակ նպատակի մը իրագործման ի խնդիր թափուած երկար տարիներու յարատեւ փորձերուն եւ աշխատանքին:

Մեծ երաժիշտներու, նկարիչներու, գիտնականներու եւ քանդակագործներու կեանքը երբ ուսումնասիրենք կը հաստատենք, որ անոնք այդ մեծութիւններուն եւ գագաթներուն հասնելու համար զոհած են գրեթէ իրենց կեանքին կէտը:

Վերջապէս բոլոր մեծ մարդիկ նուիրուած եւ զոհուած են մէկ նպատակի իրագործման, ոչ թէ անոր համար թէ անոնք անձեռնհաս եւ անկարող եղած են մէկէ աւելի նպատակներ իրագործելու, այլ առաջադրուած իտեալը լաւագոյնս իրագործելու համար:

Մարդ մը եթէ իր կեանքի տեւողութեան յուսայ եւ աշխատի միակ նպատակ մը իրագործել, անպայման կը յաջողի: Իսկ եթէ շատ բաներ կատարել եւ իրագործել փորձէ, ոչ մէկը կրնայ յաջողցնել եւ յուսահատութիւնը զինք կ'ընկճէ:

Միակ նպատակի մը իրագործման հետապնդումը աշխարհի կերպարանքը փոխած է: Տես հիանալի կամուրջները, լեռներու տակէն անցնող երկար փապուղիները, մտիկ ըրէ հոգիդ ազնուացնող երաժշտութիւնը, պահ մը կանգ առ հոյակապ տաճարներուն եւ շէնքերուն առջեւ, ասոնք բոլորը արդիւնք են տքնաջան եւ յարատեւ աշխատանքին, որ միակ նպատակի մը իրագործման ձգտումն է:

Ուեւէ մարդ, ծնունդով խոնարհ կամ ազնուական, հարուստ կամ աղքատ, եթէ միակ նպատակի մը իրագործման համար նուիրուի, որ այդ իտեալը իր անձը, իր տունը, իր հայրենիքը եւ մարդկութիւնը կը հետաքրքրէ, անպայման կը յաջողի:

Աշխարհի վրայ չկայ աւելի մեծ երեւոյթ քան մեծ ու վսեմ գաղափարով եւ իտեալով տոգորուած երիտասարդութեան յայտնութիւնը: Ան անպայման յաղթելու եւ շահելու սահմանուած է: Աշխարհ անոնց առջեւ մէկ կողմ կը կենայ եւ ճամբայ կը բանայ անոնց յառաջխաղացքին:

Մեր մօտ անցեալի ազգային պատմութիւնը հրաշալի փաստն է այս իրականութեան:

Հայ երիտասարդութեան Անկախ եւ Ազատ ապրելու, հայրենիք եւ սեփական դրօշակ ունենալու սրբազան ուխտին եւ իտեալին առջեւ ջարդ եւ փշուր եղան բոլոր արգելքները եւ ստեղծուեցաւ Մայիսի 28-ը:

Նպատակիդ վրայ մի՛ ծիծաղիր եւ մի՛ դանդաղիր: Եթէ աշխարհի վրայ ապրող կենդանի ոյժ մը կը նկատես ինքզինքդ, պէտք է որոշ նպատակ մը հետապնդես, հակառակ պարագային երբեք պիտի չկարողանաս յաջողիլ:

Առանց որոշ իտեալի եւ նպատակի գործող անձը կը նմանի առանց դէկի նաւուն, որ յանձնուած է ալիքներու եւ փոթորիկներու քմահաճոյքին:

Հաստատ եւ լրջութեամբ հետապնդուած նպատակ մը հակառակ յարուցուած արգելքներուն եւ դժուարութեանց միտքը կը մշակէ եւ իրեն հետ կը բերէ ոյժ, գոհունակութիւն եւ երջանկութիւն:

Առաքելութիւն մը, հետապնդուած նպատակ մը անթերի իրագործելու համար պէտք է անսայթաք եւ անայլայլ յառաջանալ այն ուղիէն, որ իտեալին յաջողութիւնը կը պարտադրէ մեզ:

Մէկ նպատակ, մէկ իտեալի կարգախօսը մեր կեանքին ուղին պէտք է ըլլայ:

Ներկայ հայ հասարակութեան զանազան ասպարէզներու մէջ գործող հանճարներ, Խաչատուրեաններ, Համբարձումեաններ, Մամուլեաններ, Սարոյեաններ, մեծ գիտուններ, նկարիչներ, գրագիրներ, բժիշկներ եւ արթիւններ իրենց յաջողութիւնը կը պարտին միակ նպատակի մը իրագործման ճամբով երկար տարիներու անխոնջ աշխատանքին:

Բնատուր ձիրքերով օժտուած ժողովուրդի մը զաւակներն ենք: Մեր ժառանգած տաղանդներն ու ձիրքերը լաւագոյնս օգտագործելու միակ միջոցը նպատակի մը հասնելու հաստատակամութիւնն է:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 14

Հ.Մ.Ը.Մ.-ի ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Լ.Մասպանաճեան

Ազգային կեանքին մեջ չկայ աւելի յուզիչ տեսարան, չկայ աւելի տպաւորիչ պահ, ինքնամփոփման եւ ազգային հպարտանքի առիթ քան այս շքերթը արհներու սերունդին, որ մեզի կը ներշնչէ անցեալի եւ ներկայի ազատատենչ հայութեան հոգեկան եւ իմացական ապրումները ու մեր անխորտակ հաւատքը գալիքի պայծառ օրերուն: Քառասուն տարի առաջ, մեզմէ զատ ամէն մարդ կը հաւատար, որ թուրքի եաթաղանը անվերականգնելիօրէն զգետնած էր մեզ, ու կնքած մեր դամբանը, կը կարծուէր որ տակաւ պիտի ամլանան մեր սերունդները, ու շղթան վերջնականօրէն պիտի փշրուի:

Այսօր քառասուն տարի վերջ, երբ յետադարձ ակնարկով մը վերյիշենք Հ.Մ.Ը.Մ.-ի քառասնամեայ պատմութիւնը, կրնանք վստահօրէն յայտարարել, որ կատարուածը հրաշքի համազօր իրականութիւն մըն է:

1918-ին վերապրող Հայութիւնը, տասնեակ հազարաւոր բոպիկ, հիւանդ, հիւծած եւ անօթի որբերը գրեթէ յուսահատ, կեանքի բոլոր դառնութիւնները ճաշակած ապաւէն մը, փրկութեան լաստ մը, յոյսի եւ լոյսի փարոս մը կը փնտռէին:

Իսկ անդին, նոյն օրերուն, եւ նոյն սերունդին պատկանող մի քանի անձնագոհ երիտասարդներ, ի տես այս թշուառութեան հիմը կը դնէին *Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան*:

Պոլսոյ Վիթալ Խանի Գրիգոր Յակոբեանի գրասենեակի մէջ հիմնադրուած Հ.Մ.Ը.Մ.-ը շուտով դարձաւ փրկութեան լաստն ու յոյսի եւ լոյսի փարոսը հայ երիտասարդութեան:

Տասնեակ մը երիտասարդներէ կազմուած, գրասենեակի մը անկիւնը ժողովատեղի եղած Հ.Մ.Ը.Մ.-ը տարիներու ընթացքին դարձաւ ազգային արժանապատուութեան եւ առաքինութեանց նախանձախնդիր ուխտեալներու բանակ մը, անոնց հոյակապ ակումբները դարձան երիտասարդութեան ազգային եւ հոգեկան ներշնչումի շտեմարան:

Այսօր Քառասնամեակին մեր հոգեկան աչքերուն առջեւէն կը տողանցեն Հ.Մ.Ը.Մ.-ի առողջ եւ խրոխտ նոր սերունդը, հպարտ իր անցեալով ու ներկայով, հաւատքով գօտեպնդուած վաղուան նուաճումներուն համար:

Մփիւռքին տարածքին ցրուած Հ.Մ.Ը.Մ.-ի յիսունէն աւելի մասնաճիւղերու քսան հինգ հազարէ աւելի սկառուներու, մարզիկներու, արենոյշներու, արծուիկներու եւ գայլիկներու փաղանգը արտասահմանի հայութեան գոյատեւման մեծագոյն գրաւականն է:

Ահա թէ ինչու տարուէ տարի հայ ժողովուրդը խուռնեւրամ կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.-ի միջ-մասնաճիւղային հանդիպումներուն, տօնակատարութեանց եւ հանդիսավայրերուն, հաղորդուելու հուրով եւ գօտեպնդուելու համար Հ.Մ.Ը.Մ.-ականներու փառաւոր շքերթով:

Եթէ Հ.Մ.Ը.Մ.-ի տողանցքները զերծ ըլլային ազգային դիմագիծէ, եթէ անոնք չյայտնաբերէին հայ ժողովուրդի ազգային զգացումներն ու յոյսերը Հ.Մ.Ը.Մ.-ը վաղուց պիտի դադրէր խանդավառութիւն եւ յուզում ստեղծելէ:

Պէտք է գնահատել Հ.Մ.Ը.Մ.-ի Քառասնամեայ բեղուն գործունէութիւնը: Ան մեր ազգային պատմութեան մէջ նոր էջ մը բացաւ, արժեւորելով հայ երկսեռ երիտասարդու-

թիւնը, տեղ տալով անոնց ազգային կեանքի բոլոր մար-
զերուն մէջ: Ան է որ կազմակերպեց, ձեռն ու մարմին տուա-
նոր սերունդին, առաջնորդեց զայն եւ տեղ մը հասցուց:

Տարաշխարհի հայ ժողովուրդը պէտք ունի Հ.Մ.Ը.Մ.-ին:
Պէտք է թեռն ու թիկունք կանգնիլ այս միութեան, նիւթապէս
եւ բարոյապէս աջակցիլ անոր, որպէսզի գոյատեւման եւ
յարատեւման անհաւասար եւ դժուար պայքարէն
կարողանանք յաղթական դուրս գալ, որպէսզի օտար
ափերու վրայ հասակ նետող նոր սերունդը չայլատերի եւ
չխաթարուի:

Քառասնամեակի առթիւ կոչ կ'ուղղենք Հ.Մ.Ը.Մ.-ական
սերունդին: Պէտք է քառասպատկել ոյժերը, պէտք է աւելի
հետեւողականութեամբ եւ կազմակերպուած ձեւով զարկ
տալ Հ.Մ.Ը.Մ.-ին:

Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայ սերունդը աւելի բախտաւոր է եւ
աւելի լաւ լայն միջոցներ ունի ծառայելու համար այս
միութեան եւ անոր միջոցաւ հայ ժողովուրդին:

Յանուն նոր սերունդի ազնուացման, յանուն հայ
երիտասարդութեան առողջ դաստիարակութեան ու բարո-
յական բարձրացման Հ.Մ.Ը.Մ.-ի քառասնամեակի կարգա-
խօսը պէտք է ըլլայ յարատեւ աշխատանք, նուիրում եւ
գոհողութիւն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 15

ԳՈՒՐԳՈՒՐԱ՛ՆՔ ԱՅՍ ՄԻՈՒԹԵԱՆ

Ս.Մկրտիչեան

Տարիներ առաջ...

Հայ կեանքին տխուր ու արինոտ ջարդէն վերջ, 1918 թուականին Հայը իր Յարութեան շրջանը կը բանար: Քանի, հակառակ այլազան դժուարութիւններու, ան կը յաջողէր իր մեռելներուն դիակին վրայ իսկ իր վերածնունդի շէնքը կանգնել:

Ու փաստը այդ Յարութեան, ան կու տայ գործնականօրէն:

Հայրենի հողի վրայ, Մայիսեան գեղեցիկ առաւօտ մը, երբ արելը տերեւներուն հետ կը խաղար, կտրիճ ծնած հայը մահուան մագիլներուն մէջ տուայտող իր արեան գնով հայուն ազատութեան գունագեղ ծիածանը կը կամարէր հայրենիքին վրայ: Մայիս 28 կը ծնէր հայ արեան երկունքէն: Ու հայը վեց հարիւր տարուայ ստրկութեան շղթաները կոտորտելէն՝ Հայ Պետութեան հիմը կը դնէր:

Նոյն օրերուն...

Բայց, այս անգամ Վոսփոքի արինոտ ավերուն վրայ, թուրք եաթաղանին նենգութեան օճախ Պոլսոյ մէջ, մահուան ճամբաներէն հրաշքով ազատած իրաւ հայորդիներ մոռցած իրենց անձը, իրենց սուգը, որպէս աւագ պարտականութիւն կը մտածեն նոր հայը կերտելու մասին: Ու Հ.Ս.Ը.Մ.ի գեղեցիկ գաղափարը ծնունդ կ'առնէ:

Հայը թէւ պզտիկ ու տկար, թէւ անտէր ու անօգնական բայց թէ ապրելու, յարատելելու աննկուն կամքին շնորհիւ կը յաջողէր յաղթութեան դրօշ պարզել հոն ուր մարդիկ իր ոչնչացման վճիռը նիւթեցին: Հ.Ս.Ը.Մ.-ը ընդունուեցաւ ընդհանուր խանդավառութեամբ: Թէւ մարդիկ

խորթ նայեցան անոր ծնունդին, բայց ան մեծցաւ իր խորհուրդով: Ան բարձրացաւ իր հայութեամբ: Հասաւ մինչեւ սիրտը ամէն հայու, մինչեւ հայրենիքը հայուն: Ու «Արարատի ծեր գմբեթից» իր լուսաւոր ճաճանչները արձակեց չորս կողմն աշխարհի: Մինչեւ հեռաւոր այն ավերը ուր հայու սիրտ մը կը ձգուէր, ու հայ մը ուրիշ հայու մը ծնունդին համար կ'ապրէր:

Հ.Մ.Ը.Մ. անհուն խորհուրդի դրօշակիր: Ապրելու, շինելու գաղափար: Գեղեցիկին, ազնիւին խորհրդանիշ: Հ.Մ.Ը.Մ. չորս գիր բայց մէկ մարմին ինչ գեղեցիկ համադրութիւն, ամբողջացած հայութիւն: Ու մինչեւ այսօր 42 տարի ամբողջութեամբ պայքար հայութեան համար:

42 տարի աշխատանքի քրտինքը ճակտին՝ ան Հայութիւնը, հայրենիքը, հայ գիրը փառաբանեց, սիրցուց, ներմուծեց հոգիներէն ներս:

42 տարի՝ օտար հորիզոններու, օտար մարզադաշտերու վրայ ան հայ անուան դրօշակիր եղաւ ու իր մկաններուն յաղթանակով հայ անունը պանծացուց:

42 տարի՝ առանց կառավարական հովանիի, բայց որպէս հաւատքի քուրմ ան շրջեցաւ զինք ծնող ժողովուրդին հետ երկրէ երկիր որպէս հաւատարիմ առաջնորդող:

42 տարի՝ ժողովուրդով մեծցաւ ան նոյն ժողովուրդին համար՝ աչքերը յառած հայրենիքին:

Փառք զինք ծնող ու սնուցող ժողովուրդին: Փառք սերմնացան իր արդար վաստակին, հայրենի յոյսով, գաղափարով, եղբայրական սիրով տոգորուած հազարաւոր ուխտեալներուն բազինին:

Ու՝ այսօր, 42 տարի վերջ երբ յաղթանակի դափնեպրսակը իր ձեռին կը մօտենանք անոր յաղթ ճակատը պսակելու, հարկ է ըսել.-

Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայր, Հայ մարդ, որքան արդար է ժառանգորդողի մեր իրաւունքով հպարտանալ, նոյնքան եւ արդար է ժառանգորդողի մեր պարտականութեան անդրադառնալ:

Այն ինչ որ մեր երեքները իրենց քրտինքով փոխան-
ձեցին, հարկ է քրտինքի յաւելեալ տոկոսով ժառանգել
գալիք սերունդին:

Օրերու հիմնական պահանջքն է աւելի խտացնել
շարքերը եւ աւելի եռանդով փարիլ աշխատանքին: Հարկ է
աշխատիլ առանց աշխատանքը ցոյց տալու: Չսպասել
հրաւերի հոն ուր լուռ անձայն աշխատողի մը պէտքը կայ:
Ու պէտք է զոհուիլ զիտնալ հաւաքականութեան համար,
իր անձէն ալ առաջ:

Հարկ է պատնէշին վրայ ըլլալ միշտ արթուն:
Մանուկներ կան նորածին, յուսալքեալներ կան դերահա-
ւատ, կորուստեալներ կան օտար բարքերով յարբեցած,
հարկ է ջամբել, ջամբել ու միշտ ջամբել հուրը, հաւատքին
սէրը հայրենիքին մինչեւ որ օրերը բիրեղանան ու հայը
դառնայ տուն:

Մինչ այդ՝ հա՛յ մարդ, գուրգուրա՛նք այս միութեան,
որքան ատեն որ գաղթական ենք ու կառավարական
հովանի չունինք մեր գլխուն վերեւ: Գուրգուրա՛նք այս
միութեան քանի՛ ան է որ առաւելագոյնս պիտի սատարէ
ազգապահպանման գործին: Գուրգուրա՛նք այս միութեան
քանի՛ ան է որ պիտի կերտէ սերունդը մեր վաղուան:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 15

ԻՆՉ ՈՐ ՑԱՆԵՍ՝ ԱՅՂ ԿԸ ՀՆՁԵՍ

(Ապրիլ 24-ի Առթիւ)

Լ.Մասպանաճեան

Ազգային թէ անհատական կեանքի մէջ իւրաքանչիւր արարք իր համապատասխան արդիւնքով կը փոխադարձուի:

Ոճրագործի մը կեանքը վերջ կը գտնէ ոճիրով: Գողի եւ աւագակի վերջին կայանը բանտն է: Ստախօս, աննկարագիր եւ խաբեբայ մէկը վերջ ի վերջոյ կը ձախողի եւ կը թշուառանայ: Անհաւատարիմ եւ անպարկեշտ մէկը կրնայ ժամանակաւոր յաջողութիւն արձանագրել, բայց դատապարտուած է անպայման ձախողութեան:

Ժողովուրդ մը, որ իր կեանքի գոյութիւնը հիմնաւորած է ոճիրներու, սպանութեան, աւագակութեան, անբարոյութեան, կողոպուտի եւ թալանի վրայ, դատապարտուած է մահուան եւ ոչնչացման:

Ապրիլ 24-ի հրէշային ծրագրի հեղինակները եւ զայն գործադրութեան դնող թուրք ժողովուրդը պատմութենէն ուրիշ արդիւնք չեն կրնար ապասել:

Քառասուն վեց տարի առաջ, 1915 Յունիս 11-ին, Այնթապու Ամերիկեան Գոլէժի կէսօրուան արձակուրդին, դպրոցի հիւսիսային կողմը Մարաշի ճամբու ձախ եզերքի արտին վրայ փռուած մարդկային զանգուած մը տեսանք: Հակառակ արգելքին եւ դռնապանի ընդդիմութեան 4-5 դասընկերներով վազելով հասանք հոն: Մեզմէ առաջ հոն հասած էին նաեւ Գոլէժի ուսուցիչներէն մի քանին:

Սուինաւոր թուրք զինուորներով շրջապատուած Զէյթունցի Հայերու առաջին տարագրուած կարաւանն էր: Ծերեր եւ անչափահաս մանուկներ էին բոլորը, երիտա-

սարդութիւնը հնձուած էր...: Արգիլուեցաւ մեզի մօտենալ եւ խօսիլ անոնց հետ:

Թուրքը սկսած էր իր դիւային ծրագրի գործադրութեան: Շինարար, աշխատասէր, հաւատարիմ եւ պատուախնդիր հայ ժողովուրդը բնաջնջելու համար գործադրութեան կը դրուէր տարագրութեան դաժան ու քստմնելի ծրագիրը:

Տեսարանը սահմոկեցուցիչ էր: Արձանացած կեցանք ու արցունքոտ աչքերով դիտեցինք այս սարսափելի տեսարանը: Վերադարձին ուսանողներս միացանք ուսուցիչներուն: Լուռ էինք բոլորս: Տեսարանը ահաբեկած էր մեզ: Մանուկներու ճիչերը դեռ կը հասնէին մեր ականջներուն: Կարաւանէն դէպի երկինք բարձրացող ձայն մը, աղերս եւ անէծք, օգնութիւն եւ վիշտ, վրէժ եւ բարկութիւն յատկանշող այդ ձայնը եւ նման հազարաւոր կարաւաններէն արձակուած այդ ահարկու կանչը մինչեւ այսօր կը շրջի Թուրքիոյ մթնոլորտին մէջ:

Յանկարծ մեր հայերէն լեզուի ուսուցիչներէն Տիգրան Յարութիւնեան (Ուրֆացի) կանգ առաւ, դարձաւ դէպի կարաւանը եւ արցունքոտ աչքերով ըսաւ.-

«Կը լսէք այս ձայնը, այս մահերգը, հայ ժողովուրդի ցաւէն, վիշտէն եւ տառապանքէն ծնած մահերգն է, որ նուիրուած է Թուրք ժողովուրդին: Այս մահուան համանր-լագը Թուրք երկնակամարին վրայ ձայնագրուած պիտի մնայ եւ միշտ պիտի նուագուի այս մահերգը, մինչեւ որ իրականանայ անոր մէջ խտացուած Հայ մամիկի, Հայ մանուկի անէծքը: Պիտի մահանայ Թուրք ժողովուրդը, այս է պատմութեան դատավճիռը»:

Այսօր քառասուն եւ վեց տարի յետոյ, երբ դժբախտութիւնը ունենաք Թուրքիոյ սահմաններուն մէջէն ճամբորդելու անպայման կը լսէք Թուրք երկնակամարի վրայ անդադար շրջող սկաւառակի համերգը:

Թուրքը 46 տարիներ է ի վեր անելիով կը հատուցանէ իր արարքներուն եւ ոճիրներուն փոխարժէքը: Պատմութեան դատավճիռը անյեղլի է:

Ապրիլ 24-ի մէկ միլիոն նահատակներու յօրինած մահերգը թող Թուրք երկնակամարին վրայ անվերջ նուագուի: Թուրքը շատոնց սկսած է իր նախորդներուն ցանածը հնձել: Մահուան սկաւառակը եւ անոր մահերգը Թուրքը ի վիճակի չէ կասեցնել:

Ապրիլ 24-ի սուգը այլեւս վերջացած է հայութեան համար:

Ապրիլ 24-ը մէկ միլիոն հայ ժողովուրդի մարտիրոսութեան եւ խաչելութեան թուականն է: Ան այլեւս սուգի, ողբի եւ հառաչանքի թուական ըլլալէ դադրած է:

Ապրիլ 24-ին նուիրուած գրութիւններով, հրապարակային հանդիսութիւններով վեր պէտք է առնենք հայրենիքի եւ Սփիւռքի մէջ ապրող հայ ժողովուրդի Ապրիլ 24-էն վերջ, քառասուն վեց տարուան ընթացքին կատարած նուաճումները, հրաշքի համագօր յաղթանակները ու նաեւ ապագայի հաւատքը:

Հայ երիտասարդութիւնը պէտք չէ մոռնայ Ապրիլ 24-ը: Պէտք է ուսումնասիրէ հայոց պատմութիւնը, ու նաեւ լսէ հայոց երկնակամարին վրայ յաւիտեանս դարձող ձայնապնակի համանուագը, այսինքն՝ միասնականութեան եւ համագործակցութեան, կեանքի եւ կենդանութեան դէպի յաղթանակի եւ փառքի հոյակապ «քոնչերթոն»: Երեւանէն մինչեւ հեռաւոր գաղութները հայ ժողովուրդի յաղթանակի այդ երգը ամէն ժամ եւ ամէն վայրկեան մեր ականջներուն, մեզ պէտք է մղէ դէպի կեանք եւ կենդանութիւն, դէպի յաղթանակ եւ փառք:

Մենք կ'առաջնորդուինք յաղթանակի եւ փառքի քայլերգով, իսկ Ապրիլ քսան չորսերու հեղինակները

կամայ ակամայ պիտի ենթարկուին ոճիրներու, արքայ-ներու, արցունքներու եւ վայրագութեան յօրինած մահերգին:

Ինչ որ ցանես, այդ կը հնձես:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 20

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Լ.Մասպանաճեան

«Որ կամիցի ի ձէնջ մեծ լինել եղիցի ձեր պաշտօնեայ,
եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել եղիցի ձեր ծառայ:»

Այն երիտասարդը որ չունի առաջնորդող մտատիպար մը կը նմանի անդէկ նաւու մը, որ ալիքներու խաղալիք կը դառնայ, երբեմն յառաջ կը մղուի տեղատուութենէն, երբեմն ժայռերու կը բաղխի մակընթացութենէն: Չունի նպատակ մը որուն դիմէ: Չունի գաղափար մը՝ զոր իրագործել ջանայ: Հոս ու հոն կը տարուբերի առանց գիտնալու թէ ո՞րն է ապահով նաւահանգիստը ուր պիտի ուզէր հասնիլ:

Տիպար հայ երիտասարդի, իրաւ Հ.Մ.Ը.Մ.-ականի միակ նպատակը պէտք է ըլլայ ծառայել ու սիրել, բարձրանալ եւ բարձրացնել: Մականյն գիտցէք որ ծառայելու եւ սիրելու, բարձրանալու եւ բարձրացնելու համար չի բաւեր ցանկալ եւ յօժարիլ, լերան ստորոտը կենալ եւ նայուածք մը նետել: Ծառայելու եւ բարձրանալու համար զոհողութիւն եւ մագլցում պէտք է եւ մագլցումի համար կամք, որ հաստատուած ըլլալու է լաւատեսութեան եւ լոյսի պատուանդանին վրայ:

Միտքդ պահէ թէ դուն քեզի օգնած կ'ըլլաս, երբ ուրիշին կ'օգնես, եւ երբ վնաս մը հասցնես մէկուն դուն քեզի է որ կը վնասես, եւ երբ ուրիշները սիրես եւ անոնց ծառայես՝ թէ՛ ուրախ կ'ըլլաս եւ թէ՛ առողջ:

Ցից ժայռերով ծածկուած է ձեր մագլցելիք բարձրունքը, մի՛ յուսահատիք: Չոհողութեան եւ ծառայութեան ճամբուն վրայ խութեր կա՞ն, անվեհեր կոխկոտէ զանոնք եւ արհամարհէ բոլոր խոչընդոտները:

Անյուսութեան մէջ յուսալ գիտցէք: Ձեր յոյսը թող աննահանջ ոյժի փոխուի: Ապրելու յոյսով ապրեցաւ մեր ցեղը: Մի՛ նմանիք անոնց, որոնք կը խանդավառուին մեր յաջողութիւններով: Մեր ցեղին յուսահատութիւնն ու յուսավառութիւնը հաւասարապէս թող ոգեւորեն ձեզ, եւ երբեք մի՛ մեղանչէք մանաւանդ ազգին ծառայելու ուխտին դէմ:

Պայքարեցէ՛ք մարմնացնելու համար ձեր կարելի յոյսերը, պայքարեցէ՛ք որովհետեւ պայքարը սրբազան պարտականութիւնն է:

Կռիւէ մը ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ աւելի առոյգ եւ ինքնավստահ:

Պայքարեցէ՛ք եթէ ոչ վերելք մը սկսելու նպատակով, գէթ գահավիժումը կասեցնելու յոյսով: Պայքարեցէ՛ք մանաւանդ այսօր, երբ անդունդներու եզերքէն կը քալէ դարձեալ մեր ցեղը: Օգնեցէ՛ք եւ ծառայեցէ՛ք ձեր նմաններուն, որպէսզի կարողանաք մեր ցեղին մէջ ամրապնդել ապրելու յոյսը: Մի՛րեցէ՛ք զիրար որպէսզի ստեղծուի միակամ երիտասարդութիւն մը, հայ ցեղի նաւը ապահով նաւահանգիստ առաջնորդելու համար:

Ծառայութեան եւ իրար օգնութեան պարտականութիւնը կ'ազնուացնէ ոզին: Բարձրանալ եւ բարձրացնելու ձգտումը ոյժ է կենդանութիւն կու տայ երիտասարդութեան եւ քանի որ մեր հայրենիքէն դուրս ըլլալուն հետեւանքն է մեր հոգիներուն այս խռովքը, անոր խաղաղութեան համար, մեր սիրտերուն մէջ տեղ տանք մեր հայրենիքին:

Այսպէս եթէ մեր չար բախտէն մեր հայրենիքէն դուրս ենք, հայրենիքը մեր հոգիներուն մէջ թող ապրի:

Եթէ ձեր հաւատքը ամրապնդելու համար հայ ցեղին տառապանքը միայն կը ներկայանայ ձեզի, հպարտացէ՛ք

անոր գոյութեամբ, որովհետեւ մեր ցեղին միութեան
մեծագոյն փառքը իր գոյութիւնն իսկ է:

Այդ գոյութիւնը տեւականացնելու միակ միջոցը նը-
ւիրում եւ ծառայութիւն, օգնութիւն եւ սէրն ի հանդէպ մեր
ազգակիցներուն, հայրենիքին եւ ազգին:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 21

ԳԻՏՆԱՆՔ ԳՈՒՐԳՈՒՐԱԼ ԱՆՈՆՑ ՎՐԱՅ

(Մայրերու Օրուան Առթիւ)

Լ. Մասպանաճեան

Մայիս 14-ը Մայրերու Օր հռչակուած է, եւ այդ առթիւ աշխարհի չորս ծագերուն հանդէսներ, հաւաքոյթներ եւ իրախճանքներ կազմակերպուած են օրուան իմաստն ու նշանակութիւնը բացատրելու ու նաեւ մայրերուն ընծայելու համար պատշաճ եւ արդար յարգանքն ու մեծարանքը:

Մայրը բոլոր ազգերու մէջ առաւել կամ պակաս չափով եղած է ընտանիքի սինը, զաւակներու պահապան հրեշտակը, սիրոյ, գոհողութեան եւ առաքինութեան տիպարը:

Մանաւանդ հայ մայրը, որ հայ ժողովուրդի գոյատեւման մեծագոյն ազդակներէն մէկը եղած է, այսօր քսաներորդ դարու երկրորդ կիսուն կրկին պատնէշին վրայ է որպէս ընտանիք կազմող, սերունդ կրթող տիպար կին:

Ընտանիքը բարոյական մեծ դպրոց մըն է, ուր մանուկին կրթութեան հիմերը կը դրուին եւ անոր նկարագիրը կը կազմուի:

Աշխարհը իր բարոյական եւ հոգեկան յառաջդիմութիւնը կը պարտի ընտանիքի մօր: Ընտանիքի մայրը երբ տունը հաճելի, գեղեցիկ, մաքուր եւ սիրով կը պահէ, ան ամէնէն մեծ ծառայութիւնը կը մատուցանէ աշխարհին:

Կնոջ ազդեցութիւնը ընտանիքէ ներս ամէն տեղ նոյնն է: Անոր բարոյական, նկարագրի եւ կենցաղի ազդեցութեան պայմանները ամէն երկրի եւ ժողովուրդի մէջ նոյնն են: Եթէ ան սայթաքի եւ նուաստանայ, մարդկային ցեղը կը նուաստանայ: Երբ ան բարոյապէս մաքուր եւ հոգիով ազնիւ է, մարդկային ընկերութիւնը համեմատաբար աւելի բարձր է:

Հայ ժողովուրդը անցեալին թէ ներկային միշտ հպարտ է իր ընտանեկան մաքրութեամբ եւ կազմակերպութեամբ:

Հայ ցեղը մանաւանդ հպարտ է իր տիպար մայրերով: Մայրերու Օրուան տօնակատարութիւնը ամէնէն աւելի կը պատշաճի հայ ցեղին:

Հայ մայրը երկար դարերու ընթացքին հայ ընտանիքի ու մանաւանդ հայ մանուկներու կրթութեան, դաստիարակութեան եւ նկարագրի կազմութեան մէջ մեծ դեր կատարած է:

Հայ ընտանիքի շէնքին սիւնը միշտ եղած է մայրը: Անոր հոգածու ձեռքը, խորհող միտքը, սիրող սիրտը եւ գոհողութեան պատրաստակամ հոգին ընտանիքին մէջ միշտ ստեղծած է ներդաշնակութիւն, սէր եւ համերաշխութիւն:

Հայ մայրը յաճախ իր հանգիստն ու առողջութիւնը գոհած է իր զաւակներու սիրոյն համար:

Միբելի պատանիներ եւ երիտասարդներ, որքան բախտաւոր էք, որ հայ ընտանիքներու զաւակներ էք: Գնահատել գիտցէ՛ք ձեր մայրերուն արժէքը: Մայրերու Օրուան առթիւ, պահ մը անդրադարձէ՛ք, մտածեցէ՛ք թէ ինչպիսի դժուարութիւններով մեծցուցած են ձեզ ձեր մայրերը: Քանի գիշերներ անոնք ձեր սնարին առջեւ ծունկի եկած, աղօթքը իրենց շրթունքներուն հսկեցին ձեր վրայ: Ձեր ազգային, բարոյական եւ նկարագրի դաստիարակութեան համար որքան շունչ սպառեցին անոնք: Ձեզ ֆիզիքսպէս առողջ պահելու եւ մեծցնելու համար որքան գոհողութիւններ յանձն առին անոնք:

Միբեցէ՛ք ձեր մայրերը, գուրգուրացէ՛ք անոնց վրայ, հնազանդեցէ՛ք անոնց: Աշխարհի վրայ ամէնէն անկեղծ, հաւատարիմ եւ ձեզ սիրող անձիք ձեր ծնողները եւ մանաւանդ ձեր մայրերն են:

Մայրերու Օրուան առթիւ փոքր նուէրով մը, ըլլայ ան փունջ մը ծաղիկ, կամ ձեր նախընտրած որեւէ առարկայով ձեր մայրերուն ուրախութիւն պատճառեցէ՛ք:

Ձեր մայրերը, հայ մայրերը ձեզի եւ հայ ժողովուրդին ընծայուած ամէնէն արժէքաւոր պարգեւներն են:

Գիտնանք գուրգուրալ անոնց վրայ:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 24

ՊԷՏՔ Է ԱՍՈՒՐ ԿԱՌՉԻԼ ՄԱՅԻՍ 28-ԻՆ

Լ.Մասպանաճեան

Քառասուն Երեք տարի առաջ 1918 Մայիս ամսուն 28-ին յայտարարուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Անկախութիւնը:

Հայ ժողովուրդի ազատութեան համար մղած երկար ու դաժան պայքարի արդիւնքն էր այդ յաղթանակը:

Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ-Ապարանի օրհասական կռիւներով եւ հոն նահատակուող հազարաւոր հայ երիտասարդութեան սուրբ արիւնով նուիրագործուած է Մայիս 28-ի փառապանծ թուականը:

Երեքհազարամեայ հայոց պատմութեան մէջ կան շատ մը հերոսական դրուագներ, ճակատամարտեր, ազատութեան համար մղուած երկարատեւ պայքարներ, գաղափարական եւ կրօնական վեհ սկզբունքներու պաշտպանութեան ի խնդիր անսահման զոհողութիւններ, որոնք ի յայտ բերած են հայ ժողովուրդի մարտունակութիւնը, ապրելու եւ տեսականանալու վճռակամութիւնը:

Մայիս 28-ին նախորդող կռիւներուն եւ դէպքերուն առթիւ հայ ժողովուրդի յայտնաբերած աներեւակայելի քաջութիւնն ու անյաղթահարելի կամքը, գոյութեան եւ ազատութեան համար տարած անհաւասար պայքարը հայոց պատմութեան ամենէն փառաւոր էջերը կը կազմեն:

Մայիս 28 կերտելու, անկախութիւն եւ ազատութիւն ձեռք ձգելու, հայ ժողովուրդի վտանգուած գոյութիւնը ապահովելու եւ հայրենիքը փրկելու համար հայ ժողովուրդը այդ թուականներուն միահամուռ, կողք կողքի

եւ առանց տարակարծութեան կռուեցաւ, զոհուեցաւ եւ յաղթանակեց:

Մայիս 28-ի յաղթանակով փրկուեցաւ մեր հայրենիքը: Հայրենի հողերու փրկութեան համար մղուող պատերազմներով եւ յաղթանակներով վերականգնեցաւ հայ ժողովուրդի բարոյական կորովը: Թուրք դահիճին պարտութեամբ փրկուեցաւ հայ ժողովուրդի վիրաւորուած արժանապատուութիւնը:

Մեր պատմութեան մեջ չկայ թուական մը, չկան պատերազմներ եւ յաղթանակներ, որ իրենց տարողութեամբ եւ ճակատագրականութեամբ հաւասարին Մայիս 28-ին: Վտանգուած հայրենիքի գոյութեան հարցը, արիւնաքամ ժողովուրդի բարոյական կացութիւնը, մէկ միլիոնէ աւելի զոհ տուած արեւմտահայութեան ողբալի վիճակը դասալիք ռուս բանակին իր ետին ձգած բարոյական եւ նիւթական աւերը, այս բոլորը պահ մը ենթադրել տուին, թէ վտանգուած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի գոյութիւնը: Այդ օրերուն ուրախութեան քրքիջներ կ'արձակէր թուրք ճիւղը: Յուսահատութեան ճիչերով հրապարակը կ'աղմկէր հայ դասալիքը:

Բայց կար ապրելու եւ գոյատեւելու, կամքի եւ խիզախութեան արտայայտիչ հայ բազուկը, որ գիտցաւ ճիշդ ժամանակին եւ տեղին հարուածել: Ան՝ արհամարհելով մահ եւ զրկանք, կարողացաւ հայրենիքը փրկել: Ան ծունկի բերելով դարաւոր անարգ թշնամին՝ թուրքը պարտադրեց անոր ստորագրել *Մելրի* դաշնագիրը:

Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ-Ապարանի յաղթանակներու հարազատ ծնունդն է Ազատ եւ անկախ Հայաստանը:

Այսօր այդ թուականէն ասդին Քառասուն Երեք տարի յետոյ ալ Մայիս 28-ի արժէքն ու իմաստը կը մնայ նոյնը:

Ազատութեան եւ անկախութեան ծարաւի ժողովորդներու համար կարեւորութենէ զուրկ են ժամանակաւոր ձախողութիւնները:

Մայիս 28-ը Անկախ եւ Ազատ հայրենիքի գաղափարականութիւնը հայ ժողովուրդի գոյատեւման միակ ապաւենն է: Հրաժարիլ ազատութենէ եւ անկախութենէ կը նշանակէ հրաժարիլ ազգային թէ մարդկային իրաւունքներէն եւ յատկութիւններէն:

Ազատութեան եւ անկախութեան պաշտպան են միայն անոնք, որոնք պատրաստ են գերագոյն զոհողութեանց:

Ազատութիւն կամ ստրկութիւն, մէկը կը յատկանշէ ոյժ, զօրութիւն, կամք եւ զոհաբերութիւն, իսկ միւսը դասալքութիւն, թերութիւն եւ ուժացում:

Մայիս 28 Հայ ժողովուրդի ազատ եւ անկախ ապրելու կամքի արտայայտութիւնն է: Երեք հազարամեայ մեր պատմութիւնը չէ դաւած այդ վեհ սկզբունքին դէմ: 1918-ի սերունդը նաեւ չդաւեց հայոց պատմութեան հոլովոյթին:

Այսօր ալ հայրենիքի եւ սփիւռքի նոր սերունդը աւելի քան երբեք կառչած է անկախութեան եւ ազատութեան սկզբունքին:

Սփիւռքի թէ հայրենիքի մէջ մեզ հայ պահող մեր լեզուն, մեր մշակոյթը վառ պահող ոյժը՝ Ազատութեան եւ Անկախութեան կարգախօսն է: Պէտք է ամուր կառչիլ անոր:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 24

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԴ ԳԻՐՔԵՐՆ ԵՆ

Լ.Մասպանաճեան

Հայ նախակրթարանէն շրջանաւարտ երկսեռ աշակերտութեան հազիւ քսան հինգ առ հարիւրը առիթ եւ պատենհութիւն ունի իր ուսումը շարունակելու աւելի բարձր դպրոցներու մէջ:

Փոքր տարիքէն պարտադրաբար կեանքի պայքարի մէջ նետուող այս սերունդի նախակրթարանէն ստացած մտային եւ հոգեկան պաշարը անբաւարար է, մանաւանդ ներկայ պայմաններուն մէջ, մաքառելու համար տգիտութեան դէմ եւ յաջողութիւններ արձանագրելու անձնական թէ հասարակական ասպարեզին մէջ:

Այս զգալի պակասը կարելի է լրացնել միմիայն ընթերցանութեամբ: Հայ գրականութիւնը իր այլազան բովանդակութեամբ կրնայ բաւարար սնունդ տալ ընթերցողներուն:

Հոն պատանին թէ երիտասարդը կը գտնէ ազգային, պատմական, գրական, իմաստասիրական թէ գիտական լուրջ ուսումնասիրութիւններ, որոնք իր միտքը կը զարգացնեն, իր ազգային թէ հայրենասիրական զգացումներուն թռիչք կու տան ու նաեւ իր հոգին կ'ազնուացնեն:

Ոչինչ աւելի հաճելի եւ օգտակար է, քան ընտիր գիրքերու ընթերցանութիւնը: Գիրքը մեզ կը ծանօթացնէ բոլոր դարերու մեծագոյն գրագէտներուն, մտածողներուն եւ գործողներուն հետ:

Ան մեր իմաստուն առաջնորդն է, մեր ամենահաւատարիմ բարեկամը, որմէ երբեք չենք յուսախաբուիր: Լաւ գիրքի մը ընթերցանութեամբ մարդս կը խանդավառուի

եւ իր տրամադրութիւնները կը փոխուին: Շատ մը մեծագործութիւններ կատարուած են մեծ մարդոց կենսագրութեանց ազդեցութեան տակ: Օգտակար եւ լուրջ գիրքեր կը ճոխացնեն միտքդ ձգտումներով եւ մտածումներով:

Հանրաժանօթ իտալացի գրող Էտմոնտ Ամիչիս ըսած է.- «Առանց գիրքի տունը, առանց հոգիի տուն մըն է»:

Տնային գրադարանը՝ գիրքերու անձնական սեփականութիւնը՝ գեղեցկագոյն զարդն է տան մը: Գիրքերով հարուստ մարդը, զանոնք կարդացողը, նուազ կը ձանձրանայ քան դրամով հարուստը:

Ուրիշ գրագէտ մը, նոյնպէս ծանօթ, կը գրէ.- «Գիրքեր կան, որոնք լոյս եւ ջերմութիւն կու տան, միտքը եւ զգացումները կ'ընդլայնեն: Անոնք մարդուն առջեւ կը բանան նորը, անձանօթը, սէրը կը ստեղծեն դէպի գրագէտին կողմէ պատկերացուած մարդիկը, ապագայ ծրագիրներ կը յօրինեն, կը կապեն ձեզ այն բաներուն, զորս նախապէս անուշադիր ձգած էիք: Լաւ գիրքը ձեզի ցոյց պիտի տայ թէ հեռաւոր անցեալը եւ ներկան ու ապագան սերտօրէն կապուած են իրարու, մարդկութեան ընդհանուր աշխատանքով»:

Գիրքը կը ցոլացնէ բազմաթիւ սերունդներու կեանքը, անոնց տառապանքները, ուրախութիւնները, վիշտերը, յաջողութիւնները եւ ձախողութիւնները:

Գիրքը աւելի սրատես կը դարձնէ մարդս, կը բարձրացնէ անոր հոգին:

Աւելի յստակ եւ ոճով արտայայտուած է գիրքերու դաստիարակչական նշանակութիւնը անգլիացի գրագէտ Թոմաս Բարլայլ «Մեր ժամանակաշրջանին ճշմարիտ համալսարանը գիրքերու հաւաքածոն է» ըսած է ան:

Եթէ օտարները այսքան բարձր կը գնահատեն գիրքը, այդ գնահատանքը պէտք է առաւելագոյն չափով կատարենք մենք հայերս, որովհետեւ անձնական թէ հաւաքական կեանքի մէջ, գիտութեան եւ մարդկային փորձառութեան մեր այնքան զգալի եւ աղետաբեր պակասը պիտի կարենանք դարմանել կամ լրացնել, մանաւանդ ներկայ պայմաններու մէջ, գլխաւորաբար լաւ գիրքերու ընթերցանութեամբ:

Կը յանձնարարենք մեր երիտասարդ եւ պատանիներուն, մանաւանդ անոնց, որոնք դժբախտ պարագաներու բերումով զրկուած են իրենց ուսումը շարունակելու բախտաւորութենէն: Կարդալ եւ միշտ կարդալ: Խորասուզուիլ մեր պատմական, յեղափոխական եւ բանաստեղծական գիրքերուն մէջ, մտերմանալ անոնց հեղինակներուն եւ հոն ներկայացուած հերոսներուն եւ տիպարներուն հետ, հասկնալ հայ ժողովուրդի դարերու ընթացքին ապրելու եւ գոյատեւելու ի խնդիր մղած ահաւոր պայքարի ծալքերը:

Հայերէն գիրքերը ձեր լաւագոյն բարեկամներն են, ամուր պահեցէ՛ք այդ բարեկամութիւնը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 27

ՄԻՇՏ ՊԱՐԿԵՇՏ ԵՒ ՈՒՂՂԱՄԻՏ

Լ.Մասպանաճեան

Պատանեկութիւն եւ երիտասարդութիւն կեանքի ամենէն երջանիկ եւ կարեւոր շրջանն է: Այդ շրջանին առնուած առաջին քայլերը երիտասարդին յետագայ կեանքին համար մեծ նշանակութիւն ունին:

Երիտասարդի կեանքի սկզբնաւորութեան առած քայլերը կը բնորոշեն անոր ապագան: Առաջին քայլերուն կը յաջորդեն վերջինները եւ յետագային ալ այդպէս կը շարունակուին:

Ծնողներ, ուսուցիչներ եւ ղեկավարներ, որոնք ծանր պատասխանատուութիւն ստանձնած են իրենց խնամքին եւ հոգածութեան յանձնուած պատանեկութեան եւ երիտասարդութեան կեանքին ուղղութիւն տալու համար, պարտին ուշադիր ըլլալ եւ հետեւիլ անոնց առաջին քայլերուն:

Շիտակ ուղղութեամբ առնուած առաջին քայլերը շատ կարեւոր են, թէպէտեւ անոնք ոչինչ եւ անկարեւոր կը թուին մեզի:

Մի՛ արհամարհեր որեւէ գործ: Ապահով է ան, որ իր գործին կը հետեւի քայլ առ քայլ: Կեանքի առաջին աստիճաններէն քայլերդ ուշադրութեամբ նետէ, եւ ինչ որ ընես եւ ինչի որ կը հետեւիս պարկեշտութեամբ եւ ուղղամտութեամբ ըրէ:

Որեւէ գործին մեկնումը սկսիր ոչ թէ վերջաւորութենէն՝ այլ սկիզբէն: Այս ձեւով թէեւ աւելի պիտի աշխատիս եւ երկար ժամանակ տրամադրես ու նաեւ յոգնիս բայց անպայման պիտի յաջողիս:

Գեղարուեստի, արհեստի, գիտութեան եւ մարզական ճիւղերու մէջ բարձրանալու համար պարտիս առաջին աստիճաններէն վեր բարձրանալ: Նկարչութեան եւ երաժշտութեան մէջ տեղ մը հասնելու, աթլետիք խաղերու մէջ արդիւնքներ ձեռք ձգելու, արհեստի եւ վաճառականութեան մէջ յաջողելու համար պէտք է սկսիլ իւրաքանչիւր մասնագիտութեան առաջին փորձերէն:

Առաջադրած գործը ինքնավստահութեամբ, համարձակութեամբ եւ հաւատքով սկսիլ ու անպայման կը յաջողիս:

Բնականաբար պիտի հանդիպիս դժուարութեանց եւ ստիպուիս մաքառիլ՝ անոնց յաղթահարելու համար:

Գործի մը սկզբնաւորութեան պէտք է աշխատիլ չձախողիլ: Անյաջողութիւնը քեզ կրնայ յուսահատութեան մատնել եւ արժանապատուութիւնդ վիրաւորել ու շուրջիններուդ վստահութիւնն ու հետաքրքրութիւնը պակսեցնել:

Մեր կեանքի ոյժին կէտը կը վատնուի առանց գիտնալու թէ ի՞նչ կ'ընենք եւ դէպի ուր կ'ընթանանք: Յաջողութիւնը կախում ունի մեր աշխատանքի ուղիղ եւ պարկեշտ սկզբնաւորութենէն: Ազնիւ եւ բարի գործ ընելու միակ միջոցը լաւ սկսիլ եւ հետեւիլն է:

Գործի մը սկսելու լաւագոյն միջոցը հետեւեալ անյեղի օրէնքներուն գործադրութեան մէջ կը կայանայ:

Առաջին՝ գործիդ մէջ յստակ ուղղութիւն որդեգրես, երկրորդ՝ գաղտնապահ պիտի ըլլաս, երրորդ՝ խոստումներուդ եւ ժամադրութեանդ մէջ պիտի ըլլաս ճշդապահ, չորրորդ՝ հաւատարմութիւնն ու պարկեշտութիւնը քեզ համար պիտի ըլլայ կարգախօս եւ հինգերորդ՝ պիտի ըլլաս քաղաքավար եւ բարեկիրթ:

Միրելի երիտասարդ եւ պատանի.-

Բնականաբար կը փափաքիս յաջողիլ կեանքիդ մէջ: Կ'ուզես աթլէթիք խաղերու, պասքէթպոլի ֆութպոլի մէջ ըլլալ առաջնակարգ մարզիկ: Կ'երեւակայես ըլլալ նկարիչ, նուագող, բժիշկ, վաճառական եւ լաւ արհեստաւոր:

Այս փափաքներդ կ'իրականանան եթէ գործադրես քեզի համար թերեւս նշանակութենէ զուրկ, բայց հիմնական եւ անհրաժեշտ հետեւեալ տարրական սկզբունքները:

Ա. Որեւէ գործին ձեռնարկէ՝ հաւատքով եւ հաստատամտութեամբ:

Բ. Կեանքի եւ յաջողութեան աստիճաններէն վեր բարձրանալու ժամանակ մի՛ աճապարեր:

Գ. Յարատեւութեան ու բծախնդիր աշխատանքի մէջ փնտռէ՛ յաջողութեան գաղտնիքը:

Դ. Պարկեշտութիւնդ եւ պատուախնդրութիւնդ միացած հաւատքիդ ու հաստատականութեանդ անպայման քեզ կ'առաջնորդէ դէպի յաջողութիւն:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 32

ԵՂԲԱ՛ՅՐ...

«ՄԱՍԻՄ»

Հ.Ք.

Կա՛յ պատկեր մը աւելի յուզիչ՝ քան այն պատկերը, գոր կը պարզեն հայրենի յարկին տակ, նոյն ակութիւն շուրջ բոլորուած դեռատի էակները, որոնք զիրար եղբա՛յր կը կոչեն, որոնք իրարու հանդէպ առլցուած են անկեղծ եւ պատկառանքով կ'ողջունեն իրենց ծնողքները:

« Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն ».

Երգած էր, երբեմն ազնուասիրտ բանաստեղծը Մկրտիչ Պէշիկթաշլեան:

Երգը՝ այսօր եւս կը հնչէ մեծագօր եւ ազդեցիկ «յականջս՝ ո՛չ թէ մեռելոց», այլ ապրողներուն, վերապրողներուն, թէ՛ բնաշխարհի եւ թէ գաղթաշխարհի մէջ, ի սփի՛ւռս աշխարհի:

Ամո՛ւր է այն ընտանիքը՝ որուն փոքրածիր շրջանակին մէջ իրագործուած է նուիրական, սուրբ գօղը, սէրը միմեանց հանդէպ, յարգանքը մեծերու հանդէպ:

Անկորնչելի է այն ազգը՝ որուն բաղկացուցիչ տարրերը կը հանդիսանան նման ընտանիքները՝ միակո՛ւտ, անքակտելի:

Աւաղ, այսօր, քսաներորդ դարուս երկրորդ կէսին, շրջուած են բարոյական արժէքները, խոցուած է սէրը, պատկառանքը՝ չքացած, ուղիղ ըմբռնումները շեղած են իրենց շաւիղէն, բարբերը՝ խաթարուած, ընտանիքները սասանած են, մարդկութիւնը՝ տանջուած:

Եւ այս ողբալի իրողութիւնը հետեւանքն է մեծ աղետներուն, պատերազմներուն, հրաշէկ տագնապներուն, որոնք յարաժամ կը հարուածեն բանաւոր էակները:

Չկայ աղետ մը, չկայ պատերազմ մը, չկայ տագնապ մը, որ հարուածած չըլլայ մարդկութիւնը եւ որմէ գերծ մնացած ըլլայ մեր հնամենի ազգը:

Ո՛չ թէ գերծ մնացած, այլ կրած է սաստկօրէն, անողորօրէն հարուածին, հարուածներուն ամենէն անարդար հետեւանքը:

Ճայերը պարզ ապրողներ չեն, այլ վերապրողներու զաւակներ, արմատախիլ եղած, ցրուած ի սփիւռս աշխարհի:

Ճետեւաբար ամենէն աւելի հայ ազգին զաւակները պէտք ունին փոխադարձ սիրոյ եւ յարգանքի: Ամենէն աւելի հայ ազգին զաւակները պարտաւոր են զիրար ճանչնալու իբրեւ եղբայրներ, բնական եւ գերբնական կարգի մէջ՝ միայնգամայն: Բնական՝ արիւնի զօղով, գերբնական՝ հոգիի զօղով:

Միեւնո՛յն սերը եւ միեւնոյն հաւատքը կանգուն պիտի պահեն հայերը:

Երբ հաւատքը ամո՛ւր, սերը ջերմ՝ իրարու կը միացնէ խումբ մը մարդիկ, նոյն ազգի զաւակները, երբ իւրաքանչիւրը եղբա՛յր կը կոչէ միւսը, անխախտ համոզումով եւ նուիրումով, մարդերու այդ խումբը, այդ ազգը, չի կորսուիր, կը մնայ անյաղթ, իրագործելու համար ազնիւ եւ մեծ իղձերը:

« Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն »:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 33

ԱՅՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

(Հիներուն Պատգամը Նորերուն)

Մեր Պատմահայրը Մովսէս Խորենացի խօսելով մեր Հայկեան Արամի մղած պատերազմներուն մասին կը գրէ. «Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտից նահատակութեան, եւ ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. Յորոյ անուն եւ յաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիք եւ Ասորիք՝ Արմենիկք»: (Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», գիրք Ա., գլ. ԺԲ.):

Իմաստը այս է. «Արամի մասին պատմում են, թէ շատ քաջ գործեր է կատարել յաղթական պատերազմներում եւ ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպէս յոյները՝ Արմէն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ» (թրգմ. Ստ. Մալխասեանի):

Յաջորդ գլխուն մէջ դարձեալ խօսելով Արամի յաղթական պատերազմներուն մասին ընդդէմ Նիւբար Մադեսի եւ այլ թշնամիներու, Խորենացի կը վկայագրէ «Մա (Արամ) այր աշխատասէր եւ հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր (Մար-Աբաս Կատինա), լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն քան թէ տեսանել գորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն, եւ հարազատից արեան նորա տիրել առանց օտարաց» (անդ, գիրք Ա. ԺԳ.):

Իմաստը այս է. «Մա (Արամ) աշխատասէր ու հայրենասէր մարդ լինելով ինչպէս ցոյց է տալիս նոյն պատմագիրը, լաւ էր համարում հայրենիքի համար մեռնիլ, քան տեսնել, թէ ինչպէս օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները եւ օտարները տիրում

են իր արինակից հարազատների վրայ» (թրգմ. Ստ. Մալխասեանի):

Մեր կատարած այս կարճ քաղուածքին մէջ մեզ առաւելապէս կը շահագրգռէ սա մինակ բառը-«հայրենասէր»:

Մեր պատմահայրը «գեղապատշաճ եւ անձնեայ, քաջագանգուր, խայտակն եւ հաստաբազուկ» կ'անուանէ մեր առաջին նախահայրը՝ Հայկ, բայց «այր աշխատասէր եւ հայրենասէր» կը կոչէ մեր երկրորդ նախահայրը՝ Հայկեան Արամը:

Հայկի տրուած վերնագիրներուն մէջ չկայ «հայրենասէր» կոչումը:

Ինչո՞ւ չկայ: Հայրենասէր չէ՞ր ուրեմն Հայկը: Ո՛չ, ի հարկէ:

Հիմ առնելով մեր աւանդական պատմութիւնը կրնանք ըսել, թէ Հայկի ժամանակ մենք հայրենիք չունէինք, որպէսզի մեր առաջին նախահայրը ըլլար նաեւ հայրենասէր:

Եզրակացութիւնը պարզ է: Առաջին հայրենասէր հայր մեր երկրորդ նախահայրն էր՝ Հայկեան Արամը: Իր օրով մենք արդէն հայրենիք մը ունինք, ափ մը հող, գոր արեան գնով նուաճած էր մեր առաջին նահապետը եւ գոր ընդարձակեց ու պաշտպանեց մեր երկրորդ նահապետը:

Ալիշան, իր «Հայապահպանում» ին մէջ յիշատակելով Խորենացիի վկայութիւնը Արամի մասին,- «այր աշխատասէր եւ հայրենասէր»,- կը գրէ ծանօթութեան մը մէջ. «Առաջին անգամ է ի մեր պատմութեան՝ որ լսուի այս պանծալի, այլ եւ նորափառ կոչումը՝ «ՀԱՅՐԵՆԱՍԷՐ» («Հայապատում», Ա. Հատոր, էջ 29):

Մենք ալ, Ալիշանի հետ, անգամ մը եւս կրկնենք ուրեմն.-Առաջին հայր որ արդարօրէն կոչուեցաւ հայրենասէր, Հայկեան Արամն է:

Առաջին հայր, որ կոուեցաւ յանուն Ազատութեան, Հայկն է անկասկած, «այր գեղապատշաճ եւ անձնեայ, քաջագանգուր, խայտակն եւ հաստաբազուկ»:

Առաջին հայր, որ կոուեցաւ յանուն հայրենիքի, անտարակուսելիօրէն Հայկեան Արամն է, «այր աշխատասէր եւ հայրենասէր»:

ԱԶՍՏՈՒԹԻՒՆ եւ ՀԱՅՐԵՆԻՔ. այս երկու բառերուն մէջ խտացած է բովանդակ Հայոց Պատմութիւնը: Մնացածը մանրամասնութիւն է:

Հայրենիքի գաղափարը մենք ուրիշներէն փոխ չառինք, այլ փոխ տուինք ուրիշներուն:

Մեր Արամէն ետք էր, որ Լատին բանաստեղծները սկսան հայրենիքը կոչել *alma mater* (սնուցիչ մայր):

Դարձեալ մեր Արամ նահապետէն վերջն էր, որ լատին մեծ բանաստեղծը՝ Վիրգիլիոս սա պատգամը ուղղեց հռոմայեցի երիտասարդներուն. «Քաղցր է ու գեղեցիկ մեռնիլ հայրենիքին համար»:

Հին յոյները կ'ըսեն.- «Պատգամներուն ամենէն աներկբայելին այս է,- պաշտպանէ՛ հայրենիքը»:

Տրանսացի զօրավար մը՝ Քոլպեր՝ սա նշանաբանը ընտրած էր. «Արքային համար՝ ստեպ, հայրենիքին համար՝ միշտ»:

Հիմա, Հայկեան Արամէն դարեր ետք, մենք հաւատարիմ կը մնանք մեր հայրերէն մեզի աւանդուած պատգամին. -Սիրէ՛ հայրենիքը: Եղի՛ր «այր հայրենասէր»:

Ըլլալ «այր հայրենասէր».- հիները ասկէ աւելի գեղեցիկ, ասկէ աւելի պանծալի պատգամ չունին նորերուն տալիք:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Դ. տարի, թիւ 42

ՄԿԱՌԻՏ ՎԱՀԱՆԸ

Լ.Մասպանաճեան

Սիրելի Խմբապետ,

Դժբախտաբար այսօրուան սկաուտական ընդհանուր հաւաքոյթէն պիտի բացակայիմ, հիւանդութեանս պատճառով: Ձեր ներողամտութիւնը ինդրելով կը մնամ Յարգանօք

18/2/1935

Հ.Մ.Ը.Մ. Սկտ. Առաջնորդ Վահան

Սկաուտական ընդհանուր հաւաքոյթին, օրուան խմբապետը սկաուտները մէկ շարք պատրաստ վիճակի մէջ կեցնելէ վերջ եւ սկաուտական հրահանգները տալէ առաջ կարդաց վերոյիշեալ երկտող նամակը, որ դրկուած էր տիպար սկաուտի մը կողմէ:

Ճանչցայ Վահանը ութը տարեկանին, Կիրակի առաւօտ մը 1928-ին երբ մայրը ձեռքէն բռնած Հ.Մ.Ը.Մ.-ի Հոգետան ակումբը բերաւ եւ զայն յանձնեց սկաուտ խմբապետ՝ Բարգէն Վահրամեանին:

Վահանը չարաճճի, անհանդարտ, բերանը փողոցային հայհոյանքներու վարժուած, անգուսպ տղեկ մըն էր: Ընտանիքը փոքրիկի ապագայէն մտահոգ, նոյնպէս անկարող իր զակին անհրաժեշտ կրթութիւնը տալու, մտադրած էր զայն յանձնել սկաուտական շարքերուն:

Առաջին եռամսեակին, Վահանին առաջնորդը բաւական չարչարուեցաւ զայն վարժեցնելու համար սկաուտական կեանքին:

Անոր համար տանջանք էր նստիլ դասախօսութիւն մտիկ ընել, շարքի վրայ կեցած մարզանքի փորձեր

կատարել եւ սկաուտական զանազան հրահանգներուն ենթարկուիլ:

Օր մը սկաուտական Խորհուրդին ներկայացաւ Վահանը իր առաջնորդի առաջնորդութեամբ: Առաջնորդը յուսահատ խնդրանք ներկայացուց Խորհուրդին, որ Վահանը սկաուտական շարքերէն դուրս դրուի: Խորհուրդը տեղեակ էր Վահանի ընթացքէն:

Պահ մը լռութիւն տիրեց: Առաջնորդը մէկիկ մէկիկ թուեց Վահանին անառակութիւնները եւ իրեն հասակակից փոքրիկներու վրայ ձգած գեշ տպաւորութիւնները:

Որոշումը պէտք էր տրուէր իրենց բացակայութեան: Հրահանգուեցաւ, որ դուրս ելլեն:

Վահանը գլխահակ դէպի դուռը երկու քայլ առնելէ վերջ ետ դարձաւ եւ սկաուտական բարեւի կեցած ըսաւ.- «Խնդրեմ զիս մի՛ ձգէք, որ կրկին փողոցները մնամ, պահեցէք զիս իմ գայլիկ եղբայրներուս մօտ, կը խոստանամ հնազանդ եւ բարի ըլլալ»:

Խորհուրդի որոշումով Վահանը յանձնուեցաւ ուրիշ առաջնորդի մը հսկողութեան: Շատ չանցած, հազիւ վեց ամիս վերջ այս անգուսպ, անկիրթ եւ անհնազանդ մանչուկը հիմնովին փոխուեցաւ: Դարձաւ ճշդապահ, օրինապահ եւ բարի:

Երեք տարի վերջ Վահանը անցաւ Նոր Ընծայի շարքերը: Ան տասնեւմէկ տարեկանին գիտէր սկաուտական գետելիքները: Աւելին՝ ան առանց այլեւայլի կը գործադրէր իրեն տրուած բոլոր հրահանգները: Իր խումբին ամէնէն սիրուած եւ կարգապահ սկաուտն էր ան:

Բանակումներու ընթացքին ան յօժարակամ յանձն կ'առնէր ծանր աշխատանքներ: Կ'օգնէր բոլորին, կը սորվեցնէր, կ'առաջնորդէր եւ կը սիրէր սկաուտները:

Տասներկու տարեկանին ան նախակրթարանի վկայական ստացաւ, արժանանալով բարձր գնահատանքին:

Վահանի ապագայով մտահոգ, նիւթականով անձուկ եւ գրեթէ անուս ծնողքը ականատես իրենց զակին ֆիզիքական, բարոյական եւ իմացական յառաջդիմութեան, շնորհակալութեան խօսք կ'ուղղէին ՄԿ. Խորհուրդին, որ Վահանը սկաուտական քուրային մէջ տարալուծելով կրցած էին ոսկի տղայ մը ստեղծել:

Դժբախտաբար այս հրաշք տղուն չվիճակուեցաւ ուսման հետեւիլ: Մտիպուած էր արհեստ սորվիլ եւ օգնել իր ծնողքին: Ան արհեստին հետեւած շրջանին ալ նոյն հաւատքով ու եռանդով շարունակեց աշխատիլ սկաուտական շարքերուն մէջ: Մեքանիստի իւղոտ հագուստով, ան գործէն ուղղակի կը մտնէր իրեն սպասող սկաուտներուն մօտ, դասախօսելու համար անոնց:

Վահանը իր ապագան կերտեց սկաուտութեան հետեւելով: Վահանին ծնողքը մեծագոյն բարիքը ըրաւ իր զակին եւ անոր ձգեց մեծ ժառանգութիւն մը՝ զայն յանձնելով սկաուտութեան:

Այսօր Վահանը ունի դիրք, հարստութիւն, պարկեշտ եւ ուղղամիտ մարդու համբաւ: Ան բառին բովանդակ առումով « իրաւ հայ » է:

Հա՛յ մանուկներ, ձեզի ուղղուած է այս պարզ եւ իրաւ պատմութիւնը:

Հա՛յ ծնողքներ, Վահանի ծնողքին հետեւեցէ՛ք:

Սկաուտ առաջնորդներ եւ խմբապետներ կրկնապատկեցէ՛ք ձեր աշխատանքը Վահաններու թիւը շատցնելու համար:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 1

ՅՈՅԱԸ

Լ.Մասպանաճեան

Յոյսը պլպլացող ճրագի լոյսի կը նմանի
Որ կը լուսաւորէ եւ կը յարդարէ ճամբան,
Եւ քանի գիշերուան մութը թանձրանայ
Ան աւելի լոյս կ'արձակէ:

(Կոլտ Սմիթի)

Բնութիւնը մարդու բազմաթիւ յոյսեր կը ներշնչէ,
նոյնիսկ երբ նպատակակէտի հասնելու ժամանակ
վարանումի նշաններ ցոյց տանք, յոյսը մեզ կը յուսադրէ:

Անհոգութեան եւ տկարութեան պահուն յոյսը մեր
կէանքի բոլոր պայմաններուն մեր միտքը միշտ արթուն կը
պահէ եւ կ'ոգեւորէ: Ան սովորական հանդարտութիւն եւ լաւ
տրամադրութիւն կու տայ եւ հոգիի էական պահանջն է, որ
ուրախութիւն կը պատճառէ: Ան ցաւը կը մեղմէ եւ
աշխատանքը հաճելի կը դարձնէ:

Յոյսը տխրութիւն եւ մելամաղձոտութիւն չի ճանչնար:
Ան վաղուան կը նայի վստահութեամբ, սպասելով
ապագայի լոյսին, որ պիտի ծագի անպայման:

Կեանքդ դուն կը կերտես: Եթէ դուն ճակատագրէդ
դժգոհիս եւ չաշխատիս նուաճել դժուարութիւնները, որոնք
քեզ կը դիմագրաւեն կացութեանդ մէջ որեւէ բարւոքում չես
կրնար յուսալ: Յոյսը պէտք է առաջնորդ ըլլայ քեզ
վերսկսելու եւ գործադրելու համար ջանքերդ:

Զօրաւոր միտք մը միշտ կը յուսայ, եւ միշտ պատճառ
ունի յուսալու, որովհետեւ գիտէ մարդկային գործերու
փոփոխական ըլլալը, երբ չնչին պարագաներ կրնան
փոփոխութեան ենթարկել ամբողջ եղելութեան բնոյթը:

Հաստատուն հոգի մը մասնակի դեպքերով չտարութերիք, նոյնիսկ ծանր վտանգի դէմ յանդիման գտնուի: Մարդկային մտքի թռիչքները զուարճութիւններ եւ վայելքներ չեն, այլ յոյսերն են:

Իրական յոյսը հիմնուած է նկարագրի ոյժի վրայ: Առողջ մտածող մարդը յոյս ունի, որ պիտի յաջողի:

Յոյսը մարդկային ստեղծագործութեան վարիչ ոյժն է:

Յոյսը դժբախտութիւններէ չի սարսափիր: Ան հարուստին թէ աղքատին բարեկամն է: Ան բոլորին կ'առաջնորդէ, բոլոր ճամբաները կը լուսաւորէ, կ'երկարէ իր բազուկները տանջուողներուն, յուսահատներուն եւ անոնց յաղթանակ կը շեփորէ: Անոր յաղթանակները զօրավարներու յաղթանակներէն աւելի մեծ են: Ան վարանիլ չի գիտեր: Լեռները անոր համար դաշտագետիւններ են: Ան կը գօտեպնդէ ընկրկած սրտերը եւ կը հրահրէ ուժասպառ հոգիները:

Յոյսը շողոքորթ է, բայց աւելի ուղղամիտ եւ բարձր է քան մարդկային կեղծաւորութիւնը: Ան յաճախ չքաւորներու խրճիթները եւ մեծահարուստներու պալատները կ'այցելէ:

Յոյսը պատերազմը կորսնցնող քաջ զօրավարի մը կը նմանի, որ յուսահատիլ չի գիտեր, մինչեւ վերջը կը յուսադրէ եւ չի լքեր զինքը, մինչեւ որ երկուստեք ոչնչանան:

Յոյսը մեծագործութիւնները ներշնչող եւ կանգուն պահող ոյժն է: Յուսահատութիւնը հիմնովին կ'այլափոխէ նկարագիրը, եւ այս որեւէ ձեւով կարելի չէ դարմանել:

Աշխարհը շարժման մէջ պահող ոյժը յոյսն է:

Յոյսը իմաստութեան աղբիւրն է, ան որ յոյսին ամրապէս կառչած է, անոր մէջ կայ հրաշքի համազօր տաղանդ:

Յոյսը հաւատարիմ ընկեր է եւ կը մնայ մինչեւ վերջ: Յոյսը ամէն պարագաներու մէջ անհրաժեշտ է: Հիւանդու-

թին, աղքատութիւն, բանտարկութիւն եւ ստրկութիւն առանց յոյսի անտանելի են:

Միշտ արթուն եղի՛ր: Քայլերդ հաստատուն, աչքերդ սրած, քաջութեամբ ոգևորուած, ջիղերդ պրկուած ամբողջ կորովդ գործիդ յատկացո՛ւր, այն ատեն է որ լաւ արդիւնքի մը հասնելու յոյս պիտի ունենաս:

Յոյսը որքան ալ խաբուսիկ ըլլայ, ան քեզ կեանքի պայքարի մէջ կրնայ ապահով հանգրուան մը առաջնորդել:

Յոյսը աշխատանքի եւ յարատելութեան համար անհրաժեշտ է: Աշխատանքն ու յարատելութիւնը կը դադրի երբ յոյսը պակսի: Ամէն ազնիւ գործ եւ ձեռնարկ ներշնչուած է յոյսի յարատել շունչով:

Յոյսը աշխարհը աշխատանքի եւ տեւական շարժման մէջ պահող բարոյական մեծագոյն ոյժն է:

Յոյսը յուզուած հոգին կը հանգչեցնէ, անհանգիստ սիրտին անդորրութիւն կու տայ, յոգնածները կը զօրացնէ եւ խաւարը կը լուսաւորէ:

Յուսա՛ լաւագոյնին, մտածե՛ յոռեգոյնը եւ մարդկայինօրէն կրէ՛ կեանքի բոլոր պատահարները:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 2

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Լ.Մասպանաճեան

Խումբ մը երիտասարդներ հայրենիքի եւ հայրենասիրութեան մասին վիճաբանութիւն կ'ընէին: Երբ մօտեցայ անոնց, խօսակցութիւնը ընդհատեցին, ու պահ մը լուռ կենալէ յետոյ անոնցմէ մէկը հարցուց.

Ո՞րն է մեր հայրենիքը, մեր ծննդավայրը, մեր ապրած երկի՞րը թէ Հայաստանը: Ինչպէ՞ս կը բացատրէք հայրենասիրութիւնը:

Հաւանօրէն հարցասէր երիտասարդը գիտէ իր հարցումին պատասխանը: Բայց նկատելով որ տրուած հարցումը ու նաեւ տրուելիք պատասխանը էական հարց մըն է, որ կը շահագրգռէ հայ երիտասարդութիւնը, պիտի աշխատինք լուսաբանել:

Այս հարցումը իր մէջ կ'ընդգրկէ հոգեկան տազնապ մը, Սփիւռքի մէջ հասակ նետած, տարբեր մշակոյթներու եւ այլազան ժողովուրդներու լեզուին, սովորութեանց եւ յաճախ անոնց արհամարհանքի ենթակայ հայ երիտասարդի հոգիին մէջ հարցումէ մը աւելի, մղուող պայքարի մը արտայայտութիւնը:

Ի՞նչ է հայրենասիրութիւնը, ո՞րն է մեր հայրենիքը:

Հայրենիք չունեցող ժողովուրդներ հայրենասիրութեան մասին գաղափար չեն կրնար ունենալ: Երեքհազարամեայ հայ ժողովուրդը որ դարեր շարունակ պայքարած է ի ինդիր հայրենիքի եւ հայրենասիրութեան եւ երկար ժամանակ վայելած է հայրենիքի քաղցրութիւնը, բնականօրէն դարձած է գերազանցապէս հայրենասէր:

Հայրենասիրութիւնը մարդկային սիրտի ամենէն զգայուն կէտն է: Հայրենասէր ժողովուրդները նախանձա-

խնդիր են իրենց երկրի ազատութեան, պատուին եւ բարօրութեան:

Իրական հայրենասիրութիւնը կ'ենթադրէ անձնագոհողութիւն, պարկեշտութիւն, վեհանձնութիւն եւ անվերապահ սէր դէպի ազատութիւն:

Հայրենիքի, ընտանիքի եւ պատուի համար կ'արժէ կռուիլ եւ նահատակուիլ:

Պատմութիւնը ապրուած կեանքի ամբողջական մէկ պատկերն է, որուն ընդմէջէն կրնաս տեսնել ու սորվիլ հայրենիքի ու հայրենասիրութեան, ազատութեան ու անկախութեան, կրօնքի, մշակոյթի եւ քաղաքակրթութեան համար մղուած պայքարներու եւ նահատակութեանց նշանակութիւնը:

Հայրենասիրութիւնը ազնիւ ու անտեսանելի զգացում մըն է, որ կը զօրանայ եւ կ'ամրանայ մեր մէջ քանի խորանանք մեր ժողովուրդի պատմութեան եւ անցեալի կեանքին:

Հայրենասիրութիւնը իր ամենէն պարզ բացատրութեան մէջ գործնականապէս ամենէն դժուարն է:

Պարագաներ կան, որ հայրենասիրութիւնը մեզ կը մղէ մեծագոյն գոհողութեան՝ նահատակութեան:

Հայրենասիրութեան զգացումը բնականօրէն մեզ կը մղէ սեփական հայրենիք մը ունենալու գաղափարին:

Հայրենասիրութեան զգացումէ զուրկ մարդոց մօտ աւելորդ է փնտռել իրարօգնութեան, անձնագոհողութեան, վեհանձնութեան եւ նուիրումի ոգի:

Ո՞րն է մեր հայրենիքը.-

Սփիւռքի հայ ժողովուրդը իր բնական երկրի պարկեշտ եւ պարտաճանաչ քաղաքացին է: Մասնաւորելով մեր խօսքը Սուրիոյ մէջ ապրող հայութեան ու մանաւանդ երիտասարդութեան կրնանք անվերապահօրէն յայտա-

րարել, որ Սուրիան անոր սիրելի ու պաշտելի հայրենիքն է, որ պատրաստ է անոր պաշտպանութեան, զարգացման եւ բարգաւաճման ի խնդիր ամէն զոհողութիւն յանձն առնել: Այս բանաձեւումը կրնանք ընդհանրացնել Սփիւռքի բոլոր հայ գաղութներուն համար:

Բայց կայ նաեւ *Հայ հայրենիքը*, անոր կարօտը, Մասիսի ճերմակ գագաթը, դարերու դրոշմը կրող մեր նախնիքներու եւ ներկայ հայ ժողովուրդի օրրանը եղող Հայաստանը:

Պարկեշտ եւ իրաւ հայրենասէր մը ինչպէ՞ս կրնայ մոռնալ եւ ուրանալ ապրող եւ ուռճացող մայր հայրենիքը:

Ճակատագրի դժբախտ գուգադիպութեամբ մը այսօր Սփիւռքի Հայութիւնը ունի երկու հայրենիք, մէկը՝ շօշափելին իր ապրած երկիրը, միւսը՝ անտեսանելի Հայաստանը:

Այս երկու հայրենիքներու գոյութիւնը եւ անոնց հանդէպ մեր զգացումները իրար հակադրող դրութիւններ չեն:

Մենք կրնանք ծառայել եւ սիրել շօշափելին թէ անտեսանելին: Յաջորդ թիւով կու տանք փաստը այս ճշմարտութեան:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 6

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ (2)

Լ.Մասպանաճեան

«Մարգաշխարհ»ի մեր նախորդ յօդուածով խօսելով «Հայրենիք եւ Հայրենասիրութիւն» նիւթին շուրջ կ'եզրափակէինք:

«Ճակատագրի դժբախտ գուգադիպութեամբ մը այսօր Սփիւռքի Հայութիւնը ունի երկու հայրենիք, մէկը 2024-փետրին՝ իր ապրած երկիրը, միւսը անտեսանելին՝ Հայաստանը:

Այս երկու հայրենիքներու գոյութիւնը եւ անոնց հանդէպ մեր զգացումները իրար հակասող իրար հակադրող դրութիւններ չեն: Մենք կրնանք ծառայել եւ սիրել 2024փետրին թէ անտեսանելին»:

Գրեթէ կէս դարէ ի վեր հայրենիքէն դուրս օտար երկիրներու մէջ ապրող Հայութիւնը, անտեսանելի բայց իր սիրտին մօտիկ հայրենիքի՝ Հայաստանի սիրով ու կարօտով, անոր յոյսով եւ հաւատքով տոգորուած իր գոյութիւնը կը պահէ:

Սփիւռքի մէջ Ամերիկայէն սկսած մինչեւ Պարսկաստան, հին թէ նոր բոլոր գաղութներուն գոյութեան ու տեւականացման գլխաւոր եւ հիմնական ազդակներէն մէկը եղած է հայրենիք մը ստեղծելու գաղափարը եւ ներկայ Հայաստանի գոյութիւնը:

Ապրող, շնչող, աճող եւ զարգացող հայրենիքի մը գոյութիւնը սփիւռքի հայութեան ոյժ եւ կենսունակութիւն կու տայ: Այլապէս ինչո՞վ բացատրել Սփիւռքի հայութեան անսահման ու անչափելի գոհողութիւնները, որոնք կը ձգտին հայը հայ պահելու, նոր սերունդի հայկական դիմագիծը, հոգին ու նկարագիրը անաղարտ պահելու:

Հայրենիք մը ունենալու, ազատ եւ անկախ ապրելու բնական գաղափարը այսօր աշխարհի մեծ ու փոքր ժողովուրդները վարակած է: Իւրաքանչիւր ազգ, ճերմակ կամ սեւ, մշակոյթ եւ քաղաքակրթութիւն ունեցող թէ ոչ, զօրաւոր թէ տկար իր գոյութեան ապահովութեան եւ տեսականացման, իր բարօրութեան ու զարգացման միակ երաշխիքը կը գտնէ սեփական հայրենիք մը ստեղծելու գաղափարին մէջ:

Իր սեփական հայրենիքին հանդէպ յարգանք, սէր եւ գուրգուրանք ունեցող ժողովուրդներն են, որ գիտեն գնահատել ու սիրել ուրիշներու հայրենիքը:

«Ո՞րն է մեր հայրենիքը» հարցնող երիտասարդին միտքն ու հոգին տանջող այս հարցումը էական հարց մըն է, որ կը կարօտի յստակ պատասխանի:

Մեր պատմական, վաւերագրական եւ իրական հայրենիքը Հայաստանն է: Ոչ մէկ կասկած թէ Սփիւռքի հայութեան միակ յոյսը եւ ապաւենը Ան է: Անոր ներկայ վարչակարգը, նեղ սահմանները, հոն տիրող հոգեկան եւ տնտեսական պայմանները այսօր հնարաւորութիւն եւ կարելիութիւն չեն ընծայեր գաղութահայութեան հոն մէկտեղուելուն: Բայց այդ ժամանակաւոր դժուարութիւններն ու արգելքները պատճառ մը չեն, որ մենք միաբերան ջլայտարարենք թէ Հայաստանը մեր հայրենիքը չէ:

Ինչպէս որ ընտանիքի մը անդամներուն համար ամենէն ապահով, քաղցր ու հանգիստ վայրը տունն է, նոյնն է հայ մեծ ընտանիքին, հայ ժողովուրդին համար Հայաստանը:

Կայ նաեւ մեր ապրած, իրենց բոլոր բարիքները հաւասարապէս վայելած երկիրներ, ուր հայ ժողովուրդը կ'ապրի հարիւրաւոր տարիներէ ու մանաւանդ առաջին համաշխարհային պատերազմէն ի վեր:

Ի պատիւ հայ ժողովուրդին պէտք է յայտարարել, որ գաղութներու գոյութեան թուականէն մինչեւ այսօր, այն երկիրները, ուր Հայութիւնը ապրած է եւ կ'ապրի, եղած է օրինապահ, պարկեշտ եւ պարտաճանաչ քաղաքացի:

Բոլոր գաղութները իրենց ապրած երկիրներու զարգացման ու բարգաւաճման համար իրենց բաժին մասնակցութիւնը բերած են: Անոնք զիրենք հիւրընկալող երկիրներու ցաւերուն եւ դժուարութեանց բաժնեկից ըլլալով, տեղացի ժողովուրդին հետ կողք կողքի կուրծք տուած են երկրի անկախութեան սպառնացող վտանգներուն դէմ:

Հակառակ գաղութահայութեան ինքն իր մէջ պառակտուած ըլլալուն եւ յաճախ ծայրայեղութեան հասնող հակամարտութեանց, Հայութիւնը ինքզինք արժեցուցած է որպէս ամենէն հաւատարիմ քաղաքացիներ իր գտնուած երկիրներու մէջ:

Արդ՝ արդեօք հարցասէր երիտասարդութեան եւ այլոց համար յստակ չէ, թէ ո՞րն է մեր հայրենիքը եւ թէ ի՞նչ է հայրենասիրութիւնը:

Գաղութահայութիւնը երկու հայրենիք ունի, Հայաստանը եւ մեր ապրած երկիրը: Երկու հայրենիք ունենալու պարագան մեր վրայ կը դնէ կրկնակի պարտաւորութիւն: Սիրել եւ ծառայել երկուքին ալ հաւասարապէս: Անտեսանելի հայրենիքը սիրել եւ գուրգուրալ, մեզ համար արգելք չէ նաեւ սիրել մեր երկրորդ հայրենիքը Սուրիան:

Սուրիոյ մէջ ապրող հայ ժողովուրդը քառասուն տարիէ ի վեր սիրեց, կը սիրէ, պիտի սիրէ ու ծառայէ այս հայրենիքին:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 7

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Լ.Մասպանաճեան

Ժողովուրդի մը քաղաքակրթութեան բարձրութիւնը կարելի է հաստատել անոր ընթերցասիրութեան չափանիշով: Նոյնն է պարագան անձի, ընտանիքի եւ հաւաքականութեան համար: Թերթ, գիրք եւ գրականութենէն զուրկ ընտանիքներէն ներս հասակ նետող սերունդը կը նմանի առանց ջուրի, լոյսի եւ ջերմութեան աճող այն բոյսին, որ առհասարակ անպէտք եւ անօգուտ է:

Գիրքերը մտքի շտեմարան, իմաստութեան խտացում, առօրեայ կեանքի քաղցր զբօսանք եւ յաւերժութեան փաստն են:

Գիրքերը, ազնիւ եւ հաւատարիմ ընկեր, հանգստութեան գանձ եւ մտերիմ բարեկամներ են:

Մանաւանդ մեր գիրքերը, հայերէն գիրքերը, քանի կարդաս եւ խորանաս, ուսումնասիրես եւ ամփոփուիս անոնց մէջ, ապրիս եւ նոյնանաս հեղինակին եւ հերոսներուն հետ, այնքան աւելի կը փարիս եւ կը սիրես զանոնք:

Գիրքերը մեզ անցեալին միացնող ոսկի օղակներ են, որոնց ուսումնասիրութեամբ կարելի կ'ըլլայ եզրակացութիւններ ու դատումներ ընել եւ ներկայ պայմաններուն մեզի պարտադրած դժուարութիւնները յաղթահարել:

Չկայ որեւէ ազդակ, որ խորապէս կ'ազդէ եւ կը փոխէ նկարագիրը, որքան կարդացուած գիրքերը:

Աշխարհի գրեթէ բոլոր հանճարները, նկարիչները, իմաստասէրներն ու հերոսները գիրքերու իրենց վրայ ձգած ներշնչումի եւ տպաւորութեան ազդեցութեան տակ գործող անձիք եղած են: Գիրքերը անոնց ներշնչած է գեղարուեստի եւ ստեղծագործութեան, հերոսութեան եւ նուիրումի ոգի:

Ուսման, զարգացման, հոգիի եւ նկարագրի ազնուացման միակ եւ ազդու միջոցը ընթերցասիրութիւնն է: Ամբողջական եւ լման դաստիարակուած մարդ մը ըլլալու համար անհրաժեշտ է ընթերցասէր ըլլալ:

Գիրքերը լաւագոյն առաջնորդներ, գուարթ ընկերակիցներ եւ ազդու միւլթարողներ են: Անոնք որոնք գիրքերու սիրահարներ են, յաճախ ընկերներ չեն փնտռեր:

Նախակրթարաններէն դէպի շուկայի եւ արհեստի ասպարէզ նետուող սերունդին համար աւելի էական եւ անհրաժեշտ է ընթերցասիրութիւնը:

Կարդալու չափ աժան ժամանց եւ օգտակար հաճոյք չկայ: Երբ որ գործէդ վերադառնաս յոգնած եւ ուժասպառ, ականջներդ լեցուցած մեքենաներու աղմուկով եւ շուկայի խօսակցութիւններով, աչքերդ կուրցած փոշիով եւ տգեղ երեւոյթներով, հոգիդ սրտնեղած անարդարութեան եւ անմարդկային արարքներու ազդեցութեամբ, կազդուրուելու, հանգստանալու եւ ինքնամփոփուելու լաւագոյն միջոցն է կարդալը:

Կարդալով նախ անմիջական հաղորդակցութեան եւ մտերմութեան մթնոլորտ մը կը ստեղծես գիրքի հեղինակին հետ, երկրորդ՝ ընթերցումը քեզի մոռցնել կու տայ առօրեայի տաղտուկը եւ աւելի էականը, միտքիդ, հոգիիդ եւ նկարագրիդ պաշարը կ'աւելնայ:

Գիրքերը հարթիչ գլաններու կը նմանին: Անոնք կը չքացնեն շատ մը գէշ սովորութիւններ եւ մեզի կու տան ընկերային, հոգեկան եւ նկարագրի կազմութեան էական ստորոգելիները:

Ճշդուած եւ կանոնաւորուած ընթերցասիրութիւնը կրնայ մեծագոյն ազդակը ըլլալ հաճոյքի, ինքնազարգացման եւ նկարագրի կազմութեան համար:

Պետք չէ մտածել թե միայն գիրքերը կարդալ եւ ուսումնասիրել բաւական են, այլ կարդացածդ աշխատիլ իրագործել, տեսականը ճգնիլ գործնականացնել:

Գիրքերու ընտրութեան ատեն, փնտռէ այն գիրքերը, որոնք ոչ թէ միայն հաճոյք պատճառելու, այլ անոնք նկարագիրդ եւ բնատրութիւնդ բարձրացնելու, քեզի յաջողութեան եւ երջանկութեան առաջնորդելու ծառայեն:

Կարդա՛ միշտ կարդա՛:

Եթէ օտար լեզու չես գիտեր, հայերէն գիրքերը բաւարար պաշար եւ բովանդակութիւն ունին քեզ զարգացնելու եւ տեղ մը հասցնելու համար:

Արհեստիդ, ընտանեկան թէ ընկերային կեանքիդ մէջ յաջողելու, շրջանակիդ մէջ ինքզինքդ արժեցնելու, գտնուած միջավայրիդ օգտակար դառնալու, ազգիդ եւ հայրենիքիդ ծառայելու միակ միջոցը կարդալն է:

Որքան ճոխ բովանդակալից է հայ գրականութիւնը:

Եթէ մեր երիտասարդութիւնը կարդալ սորվի, որքան պիտի փոխուի մեր ընտանեկան, ընկերային, հասարակական եւ ազգային կեանքը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 13

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՈՒՄ

Լ.Մասպանաճեան

Միրելի պատանի կամ երիտասարդ, ապրուստի առօրեայ գործէդ դուրս, դպրոցական պարտականութիւններէդ զատ ուրիշ իտէլ մը ունի՞ս: Պարապ ժամանակդ ինչպէ՞ս կ'անցնես: Երբ որ գործէդ արձակուիս ո՞ւր կը յաճախես, որո՞նց կ'ընկերանաս: Արձակուրդի այս շրջանին, դպրոցական պարտականութիւններէ անհոգ, կը մտածէ՞ս ժամանակդ օգտագործել:

Եթէ իտէլդ ու ձգտումներդ գործնապէս յառաջացնելու եւ զարգացնելու միջոցները կը պակսին կամ պարագաներդ ու նիւթական կացութիւնդ չեն ներեր զանոնք իրականացնել դիմէ՛ ինքնազարգացման:

Ինքնազարգացման ձգտումը մեզ կը մղէ շրջապատող պարագաներու վերլուծման եւ քննութեան: Երբ որ ճշգրիտ կացութեան եւ կարելիութեան ծանօթանանք մեր հետեւելիք ճամբան կը յստականայ:

Երիտասարդ թէ պատանի, որ տրամադիր է ինքնազարգացման, կրնայ գտնել ժամանակ եւ կարելիութիւն իր կարողութիւնները զարգացնելու, գործածելու եւ իրագործելու համար:

Ինքնազարգացում կը նշանակէ անձիդ ուսուցիչը ըլլալ, անձդ յատուկ վարժութեան մէջ դնել, պարտականութիւն կատարել եւ հաւատարմօրէն գործադրել պարտքդ:

Ինչով բացատրել մեր արհեստաւոր հայրենակիցներու այսքա՞ն մեծ յառաջդիմութիւնը: Երէկուան համեստ երկաթագործը այսօր տէր է մեքենական արդիական գործարանի, պարզ լուսանկարիչ մը այսօր կը յաջողի լուսանկարներու ցուցահանդէս մը կազմակերպել, հիացում

պատճառելով հանդիսատեսներուն: Բարդ (պաթարիա) գործիքներու նորոգիչ մը այսօր ինքնատիպ բարդերով կը մրցի եւրոպական արտադրութեանց հետ: Մեր հայրենակիցներու արուեստի կամ արհեստի բոլոր մարզերուն մէջ յայտնաբերած յառաջդիմութիւնները առանց այլեւայլի արդիւնք են ինքնազարգացման:

Ինքնամփոփուիլ ու կեդրոնանալ զբաղումիդ մէջ եւ զայն կատարելագործելու ինքնավստահութեամբ ուսումնասիրութիւններ եւ փորձեր կատարել կը նշանակէ ինքնազարգացում:

Ինքնազարգացումը ոյժ կ'արտադրէ: Պէտք է օգտագործել այդ ոյժը: Իւրաքանչիւր դժուարութեան եւ հարցի լուծումը կ'օգնէ յաջորդի լուծման եւ այս ձեւով զարգացումը կ'ընդլայնուի եւ հորիզոնը կը յստականայ:

Ինքնազարգացման ամէնէն մեծ ազդակը հետաքրքրութիւնն ու բարի նախանձն է: Ինքնազարգացումը բաւական մեծ տարբերութիւն ունի պարզ հաճոյքի եւ ժամանցի համար եղած ընթերցասիրութենէն: Այդ կը պահանջէ լուրջ եւ երկար աշխատանք:

Մանկութեան շրջանին, մեր նկարագրի կազմութեան մէջ ծնողքը, ուսուցիչներն ու ընկերները մեծ բաժին ունին: Բայց վերջը մեր իմացականութեան զարգացման գծով ինքնազարգացումն ու յարատեւութիւնը միակ ազդու միջոցն է:

Ծանօթութիւն, գիտութիւն եւ տեղեկութիւն ամբարելու աշխատանքը, մեր միտքը կը զօրացնէ, տաղանդը կ'աւելցնէ եւ մեզի կ'ընծայէ անկախ մտածողութիւն եւ զօրաւոր նկարագիր:

Գիրքեր, ծնողքներ ու ուսուցիչներ մեզի կրնան օգնել, ինքնազարգացման բուն դերակատարները մենք ենք:

Ուսումնասիրեցէ՛ք գիտական, գրական, առեւտրական եւ այլ ասպարեզներու մէջ անուն շահած ու մարդկութեան մեծ ծառայութիւններ մատուցած տիտաններու կեանքը: Ձեր իսկ շրջանակի մէջ որոշ դիրքի տիրացած արհեստաւոր եւ արուեստագէտներու պարագան, որոնք դեռ երէկ ինքնաբաւ չէին, որոնումներու մէջ էին եւ գիշեր ցերեկ կ'աշխատէին կատարելագործել ու կանոնաւորել իրենց աշխատանոցներն ու գործերը: Անոնք յաջողութեան գաղտնիքը գտած են ինքնազարգացումի մէջ:

Պատանիներ եւ դպրոցական աշակերտներ, ձեր ժամանակը օգտագործել, ձեզի ընծայուած պատեհութիւններէն օգտուիլ գիտցէ՛ք:

Արհեստաւոր երիտասարդներ, մի՛ բաւականանաք ձեր գիտցածովը, աշխատեցէ՛ք յառաջդիմել, զարգացնել ձեր միտքն ու գործը:

Իտէալ մը, նպատակ մը, ձգտում մը որդեգրեցէ՛ք:

Որոշուած իտէալին ու նպատակին հասնելու միակ միջոցն է ինքնազարգացումը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 23

ՔԱՂՑՐ ՏՈՒՆ

Լ.Մասպանաճեան

Տունը սիրոյ, ուրախութեան, խաղաղութեան եւ լիութեան ապաստարան է:

(Թամարն)

Գործէր, զբաղումէր դուրս ազատ ժամերդ ո՞ւր կ'անցնես:

Ընտանեկան, սեփական տունդ քեզ համար անհրաժեշտ սնունդն ու հանգիստը, ուտելու եւ պառկելու յատկացուած վա՞յր է միայն:

Հոգեկան կապ մը, քեզ մագնիսացնող, քեզի դէպի տուն առաջնորդող մղում մը, ոյժ մը կա՞յ:

Ներկայիս առհասարակ երիտասարդներ տունը կը նկատեն տեսակ մը պանդոկ- ճաշարան: Անոնց համար տունը իր նշանակութիւնը կորսնցուցած է: Անոնք իրենց հանգիստը, վայելքը եւ ուրախութիւնը կը փնտռեն տունէն դուրս, ուրիշ վայրերու մէջ:

Օրըստօրէ ընդհանրացող այս մտայնութիւնը կրնայ աղէտալի հետեւանքներու հասնիլ: Օր մը կը քանդուի ընտանեկան հոյակապ շէնքը, քանդելով նաեւ անոր բնակիչներուն նիւթական եւ բարոյական կառոյցը:

Ծնողքները տունը հաճելի դարձնելու, զայն իրենց զաւակներուն սիրցնելու ուղղութեամբ մեծ դեր ու պարտականութիւն ունին: Աղտոտ, թափթփած, միշտ աղմուկ ու ընտանեկան վէճերով լեցուն տունը հաճելի չէ երիտասարդին: Ծնողքներուն միշտ բացակայութիւնը տունէն բնականաբար զաւակները կը մղեն դէպի դուրս, այլ վայրեր:

Տունը նկարագրի կազմութեան ամենէն էական եւ կարեւոր դպրոցն է: Նկարագրի ողնայարը տան մէջ կը կազմուի: Տան մէջ տիրող լաւ կամ գէշ պայմանները երիտասարդին վրայ իր անմիջական ազդեցութիւնը կ'ունենան: Տունը կամքին վրայ կը ներգործէ եւ որպէս կանոն ու սովորութիւն զայն գործունէութեան կը մղէ:

Փոքրիկը ինչ որ տեսնէ, լսէ կամ զգայ տան մէջ բնականօրէն զանոնք կ'իւրացնէ եւ ըստ այնմ ալ կը կադապարուի: Փոքրիկի հոգին տան մէջ է որ կը բացուի: Իր իմացականութիւնը հոն կ'արթննայ, սովորութիւնները գըլխաւորաբար հոն կը կազմուին եւ նկարագիրը – լաւ կամ վատ – ընտանեկան յարկին տակ կը կերտուի:

Ուրախ եւ երջանիկ տուն մը, ժպտուն ու գուրգուրանքի արտայայտութեամբ դիմագծեր՝ փոքրիկը դէպի լաւին ու բարիին կ'առաջնորդեն:

Մարդ էակին վրայ տան ձգած ազդեցութիւնը մշտնջենական է: Պարկեշտ, ճշմարիտ ու հարազատ տուն մը նուիրական տեղ մըն է: Ան ապահով ապաստանարան մըն է, ուր մարդ ինքզինք հեռու կը զգայ աշխարհի ապականութիւններէն, վտանգներէն եւ աղմուկէն:

Արտաքին աշխարհի կեանքի պայքարին դիմագրաւելու անհրաժեշտ ոյժն ու կորովը ստանալու համար տունը իտէպլ հանգստարան եւ կազդուրման կայան մըն է: Ան լաւագոյն դպրոցն է սիրոյ, կարգապահութեան եւ նկարագրի կազմութեան:

Տան թագուհին մայրն է: Անոր հոգեկան իշխանութիւնն ու հեղինակութիւնը կը ներդաշնակեն այդ սրբավայրի անդորրութիւնն ու երջանկութիւնը: Ընտանեկան յարկի գլխաւոր սիւնն է ան, որ առհասարակ իր ուսերուն վրայ կը կրէ ընտանեկան սրբութեան ու դաստիարակութեան գրեթէ ամբողջ պատասխանատուութիւնը: Եթէ մայրն է դաստի-

արակիչը, տան հայրն է իր զաւակներուն ընդօրինակելի տիպարը: Դաստիարակիչն ու տիպարը պէտք է ներդաշնակուին, ամբողջութիւն մը կազմեն փոխադարձաբար, որպէսզի զիրար չխաչաձեն:

Հոգեկան եւ նկարագրի էական ու առողջ դաստիարակութիւնը տունը կը պարզելէ: Ինչ որ ալ ըլլայ դպրոցի ազդեցութիւնը, օրինակը կը սկսի միշտ տունէն: Նկարագրի կազմութեան վրայ մեծագոյն ներգործութիւնը ընտանեկան յարկէն ներս է: Փոքրիկը տան մէջ է, որ կը սորվի բարիի եւ պարկեշտութեան, սիրոյ եւ իրերօգնութեան գեղեցիկ սկզբունքները: Իրական տան մէջ է, որ կը պատրաստուի ապագայ պարկեշտ ու հաւատարիմ, կարգապահ ու ազնիւ, հայրենասէր եւ գոհուող մարդը:

Լաւ տունը դպրոցներու լաւագոյնն է, ոչ թէ միայն փոքրիկներու եւ երիտասարդութեան, այլ նաեւ չափահասներու համար: Հոն մանուկն ու երիտասարդը, չափահասն ու ծերը գործնապէս կը սորվին համբերութիւն, պարտականութիւն ու նաեւ ծառայելու ոգին:

Ընտանիքները պէտք է լրջօրէն անդրադառնան այս էական հարցին: Ընտանեկան յարկը դրախտ կամ դժոխք դարձնելու մեծագոյն ազդակներն են ծնողները: Աշխատեցէ՛ք տան մէջ շնչելի ու բարոյական, կարգապահ եւ օրինակելի մթնոլորտ ստեղծել: Ահա այն ատեն է, որ ձեր զաւակներուն համար տունը պիտի դառնայ հանգիստի, հաճոյքի, դաստիարակութեան եւ հոգեկան բաւարարութեան վայր:

Մանուկներ եւ մանաւանդ երիտասարդներ, դուք ալ փողոցներէն, սրճարաններէն եւ այլ վայրերէն հեռու կենալով ձեր երեսը դարձուցէ՛ք դէպի տուն, քաղցր տուն, ուր պիտի գտնէք հոգեկան, իմացական եւ բարոյական դաստիարակութիւն:

Մայր ու աղջիկ, հայր ու երիտասարդ ձեռք ձեռքի տուած աշխատեցէ՛ք ձեր տունը դարձնել սրբավայր մը, դրախտավայր մը, որպէսզի հայ տունը մնայ անաղարտ եւ հայ ազգը՝ յաւիտենական:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 25

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԴԵՐՈՒ

Լ.Մասպանաճեան

Հայրենիքի թէ արտասահմանի մէջ 50-60 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող հայ մարզական միութիւններ դրական որոշ դեր մը կատարեցին ու կը կատարեն հայ իրակա՜նութեան մէջ: Այսօր դեռ կանխահաս է անոնց առաքելութեանց մասին յստակ դատումներ ընել եւ գնահատել կամ քննադատել իւրաքանչիւրին գործունէութիւնը:

Մեր նպատակն է հայ ժողովուրդի ծոցին մէջ ներկայիս գոյութիւն ունեցող հայ մարզական միութեանց վիճակուած պարտականութեանց եւ պարտաւորութեանց մասին գրել:

Հայ երիտասարդութեան մէջ բարոյական, ազգային եւ ֆիզիքական օգտակար ու դրական աշխատանք տանելու առաւելագոյն պատեհութիւն ու նաեւ պարտականութիւն ունեցողները մարզական եւ սկաուտական կազմակերպութիւններն են: Որովհետեւ անոնք հեռու են քաղաքական, ընկերային եւ կրօնական պայքարներէն ու տարակարծութիւններէն:

Բոլորին ծրագիրը գրեթէ իրարու յար եւ նման է: Անոնց էական եւ յստակ նպատակն է հայ սերունդին տալ ֆիզիքական եւ բարոյական առողջ դաստիարակութիւն:

Հիւրընկալ եւ օտար ափերու վրայ ցրուած հայ ժողովուրդի նոր սերունդը այլասերումէ, բարոյական անկումէ փրկելու, զանոնք հայ պահելու, անոնց մէջ ազգային գիտակցութիւնը արթնցնելու եւ հայրենի լեզուն ու հայրենիքը սիրցնելու պահանջքը տարուէ տարի աւելի անհրաժեշտութիւն կը դառնայ:

Բնաշխարհէն բնօրէն դուրս հանուած եւ աշխարհի չորս ծագերուն մէջ նոր բոյն եւ բնակութիւն հաստատած

մեծ հայրիկներու սերունդը գրեթէ անհետանալու վրայ է: Անոնց հայրենի շունչը, իրենց հետ բերած հայ առաքինութիւններն ու ւսանողութիւնները, կրօնական եւ բարոյական սկզբունքները անոնց անհետացումով մեծ հարուած կը կրեն:

Սփիւռքի հայ նոր սերունդին մէջ մարմաջ մը, ձգտում մը կայ՝ իր գտնուած միջավայրին յարմարելու: Առօրեայի հոգը, դպրոցներէն ներս ստացած դաստիարակութիւնն ու ազդեցութիւնը, մթնոլորտին ստեղծած հաճոյքն ու վայելքը զինք անզգալաբար կը հեռացնեն իր տոհմիկ շրջանակէն: Այլասերումը ամէն տեղ առաւել կամ նուազ չափով դամոկլէան սուրի նման կախուած է այսօր արտասահմանի հայ ժողովուրդի, նամանաւանդ նոր սերունդի գլխուն վրայ:

Ունանք մի գուցէ հաշտուած են այս ահաւոր իրակաւնութեան հետ մոռնալով հայ մնալու, հայ ապրելու համար երկար դարերէ ի վեր հայ ժողովուրդի մղած պայքարն ու զոհողութիւնները: Ներելի չէ ու միանգամայն դատապարտելի է այս մտայնութիւնն ու դասալքութիւնը:

Նոր սերունդին սպառնացող այլասերման, բարոյական անկման, ազգային ու հոգեկան տկարութեան ամէն վտանգ պէտք է կանխել եւ դիմագրաւել: Հայը հայ պահելու համար դարեր շարունակ մեր նախնիք պայքարած են, կրցած են տոկալ վերջին յիսնամեակին մէջ պատահած քստմնելի ու ահաւոր դէպքերուն, քաջաբար կուրծք տալով կրցած են յաղթական դուրս գալ պահելով իրենց հայկականութիւնը:

Այսօր մենք շատ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կ'ապրինք: Ունինք բարգաւաճող հայրենիք մը, որ իւրաքանչիւր հայու սիրտին կը խօսի: Ան ամէնէն զօրաւոր եւ հրապուրիչ ազդակն է արտասահմանի հայութեան գոյատեւման: Ան յոյսն ու ապաւենն է հայութեան: Ունինք հաղորդակցութեան եւ յարաբերութեան լայն պայմաններ:

Ունինք մամուլ եւ գրականութիւն, կրօնական, բարեսիրական եւ մշակութային կազմակերպութիւններ, որոնք մեծ դեր կը կատարեն այլասերման վտանգը կանխելու համար: Վերջապէս ունինք մարզական միութիւններ, որոնց վիճակուած է ամէնէն ծանր պարտականութիւնը այս փրկարար պայքարին մէջ:

Նոր սերունդը հրապուրելու եւ զայն ազգային ու բարոյական քուրայի մէջ տարրալուծելով իտէպ երիտասարդութիւն մը յառաջացնելու լաւագոյն միջոցներէն մէկն է մարմնակրթութիւնն ու սկաուտութիւնը:

Անցնող յիսնամեակին Սփիւռքի մէջ շինուեցան հոյակապ եկեղեցիներ, արդիական սարքաւորումով, ճեմարաններ, երկրորդական վարժարաններ եւ ակումբներ: Դժբախտաբար չունեցանք մարզարաններ, ուր նոր սերունդը իր ֆիզիքական դաստիարակութեան առընթեր ստանար նաեւ ազգային եւ հոգեկան բաւարարութիւն:

Մեր ազգային մարմինները, բարեսիրական միութիւնները, ազգային բարերարները նոյնիսկ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը մինչեւ այսօր չկրցան ըմբռնել հայապահպանման եւ զոյատեւման ճամբով գեղեցիկ եւ արդիական մարզարաններու վիճակուած մեծ դերը:

Եկեղեցիներու եւ դպրոցներու կողքին պէտք է կանգնին մարզարաններ, ուր պատանին եւ երիտասարդը կրօնական եւ մտային դաստիարակութեան հետ նաեւ ստանայ ֆիզիքական եւ հոգեկան բաւարարութիւն: Մարզական միութիւնները այսօր հայ իրականութեան մէջ աւելի մեծ դեր ունին հայ սերունդը հայ պահելու համար:

Մարզական միութիւնները պէտք է նոր եռանդով, հաւատքով եւ խանդավառութեամբ գործի լծուին, որպէսզի իրենց յաջորդ սերունդը մեծնայ եւ ուռճանայ հայու

առաքինութիւններով եւ հոգեկան բարձր ըմբռնումներով
օժտուած իրաւ հայեր:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 26

ՀԱՅ ԵՐԳՆ ՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Լ.Մասպանաճեան

Որքան գիրն ու գրականութիւնը, պատմութիւնն ու ասանդութիւնը, գիրքերն ու թերթերը ազգի մը յաւերժութեան, զարգացման ու դաստիարակութեան միջոցներ են, նոյնքան կարելոր է զօրաւոր ազդակ է երգն ու երաժշտութիւնը ցեղապահպանման համար:

Իւրաքանչիւր ժողովուրդի հոգեկան ապրումները, նկարագիրն ու ձգտումները յստակօրէն կ'արտացոլան իր երաժշտութեան եւ երգերուն ընդմէջէն: Հաւանօրէն երգն ու երաժշտութիւնը աւելի հին պատմութիւն ունին, քան թէ գիրն ու գրականութիւնը, որովհետեւ առաջինը կը բխի ուղղակի սրտէն, իսկ երկրորդը միտքէն:

Ազգ մը միաձուլելու, զայն ներդաշնակելու անոր մէջ միասնականութիւն եւ համագործակցութիւն ստեղծելու լաւագոյն միջոցներէն է երգն ու երաժշտութիւնը:

Որքան ճոխ ու բովանդակալից է հայ երգն ու երաժշտութիւնը: Ան հայ ժողովուրդի խօսուն պատմութիւնն է, իր ճոխ ու այլազան երանգաւորումներով:

Հայ երգն ու երաժշտութիւնը եւ անոր երկրէ-երկիր շրջան ընող ալիքները մեր ժողովուրդը իրար միացնող, զիրար շաղկապող ոսկի օղակներ են, որոնք անքակտելի ու անփշրելի կը մնան հակառակ տիրող աննպաստ պայմաններուն եւ ժամանակաւոր անհասկացողութիւններուն:

Հեռասփռումի կայաններէն ամէն օր հեռասփռուող հայ երգն ու երաժշտութիւնը, իւրաքանչիւր հայ եկեղեցիէն, դպրոցէն, տունէն, մանուկի, պատանիի եւ երիտասարդի, չափահասի ու մամիկի բերնէն լսուող կրօնական երգերէն

սկսած մինչև գեղջկական երգերն ու ձայնապնակները մեր ժողովուրդի կենսունակութեան, ապրումներուն ու կորովի յայտարարներն են:

Երգն ու երաժշտութիւնը հոգեկան ապրումի, ապրուած կեանքի, հերոսական պայքարի, աշխատանքի ու գեղեցիկի խօսուն եւ հնչին արտայայտութիւնն է:

Կրօնական ու յեղափոխական երգերէն սկսած մինչև գեղջկական ու ժողովրդային երգերը նկարագրութիւնն ու արտայայտութիւնն է մեր ժողովուրդի անցեալի թէ ներկայի կեանքին:

Կոմիտասի Կալի երգը, Սիւնիի Վուշ վուշը, Կանաչեանի Նանորն ու Օրօրը, Եկմալեանի Հայր Մերը, Խաչատուրեանի, Սպենդիարեանի, Թաթուլ Ալթունեանի, Պապաջանեանի եւ Տիգրանեանի աշխարհահռչակ ստեղծագործութիւնները, անոնց յօրինած երգերն ու երաժշտութիւնը հայ ժողովուրդի անկորնչելի հարստութիւններն են, որոնք յաւերժացուցած են մեր հերոսական եւ պատմական արժէքներն ու դրուագները:

Երգն ու երաժշտութիւնը ներշնչման, ինքնամփոփման եւ հոգիի ազնուացման լաւագոյն միջոցն է:

Հայ պատանի եւ երիտասարդ սիրէ՛ եւ լրջօրէն հետեւէ մեր սքանչելի ու հոգեպարար երգին ու երաժշտութեան: Հոն գանձեր կան պահուած, հոն ապրումներ կան, ձգտում ու խոյանք, պաշտամունք եւ հիացում կան: Հոն դարաւոր ժողովուրդի մը ամբողջ ողբերգութիւնը, յաղթանակները, անկումներն ու վերելքները, հայրենիքի եւ ազատութեան համար զոհուած բիրաւոր նահատակներու կանչը կայ:

Պարզ ու ժողովրդային երգ մը կը տանի քեզ հայրենի լեռներն ու ձորերը, աչքիդ առջեւ կը պատկերացնէ Սարդարապատը, Խանասորն ու Զէյթունը: Ուրիշ երգ մը կ'առաջնորդէ քեզ հայրենի երկիր, շինականի տնակն ու

արտը, կարծես ականատես կ'ըլլաս անոր հալալ աշխատանքին ու քրտինքին: Համանուագ մը, կամ երգչախումբի մը կրօնաշունչ երգեցողութիւնը անմիջապէս քեզ կը տանի երկրայինէն դէպի երկնային կեանքին:

Այսօր հայրենի երկրէն մեզի հասած երգերը յստակօրէն կը պարզեն հայ ժողովուրդի հոն տարած շինարար գործը, հայրենիքի, հայ լեզուի եւ հայ մշակոյթի պահպանման ի ինդիր տարուած աշխատանքին ամբողջական պատկերը:

Հայ երգն ու երաժշտութիւնը հայ մնալու, հայ ապրելու համար մեզի տրուած լաւագոյն զենքն է:

Հայ երգն ու երաժշտութիւնը ազգովին միաձուլուելու, իրարու հետ սիրով եւ համերաշխութեամբ ապրելու մեծագոյն ազդակն է:

Շնորհիւ այդ զենքին եւ զօրաւոր ազդակին մեր երիտասարդութիւնը հոգեպէս ու նկարագրով աւելի կը բարձրանայ ու անոր մէջ հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը աւելի կ'ուժեղանայ:

Փառք մեռած կամ ապրող այն անմահ հեղինակներուն, որոնք մեզի տուած են ու կու տան երգերու եւ երաժշտութեան այն ճոխ մթերքը, որ մեր պարծանքն է ու միանգամայն վահանը՝ ինքնապաշտպանութեան եւ յաղթանակին:

Հայ երիտասարդ սիրէ՛ եւ երգէ՛ հայ երգն ու երաժշտութիւնը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 34

ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ.Մասպանաճեան

Երջանիկ են անոնք, որոնք կեանքի նաւակի ցռուկին ամբօրէն կառչած, հաւատքով ու համբերութեամբ, սպասել, դիտել, գործել եւ հաստատ կենալ գիտեն, ճակատագրական վայրկեանին իրենց երկարող պատեհութեան ձեռքը բռնելու համար:

(Մէյրի Թաունսէնտ)

Կեանքի պայքարին մէջ մեզի ներկայացող պատեհութիւնները եւ զանոնք օգտագործելու մեր արթննութիւնն ու աշխատանքը մեզ կ'առաջնորդեն դէպի յաղթանակ եւ յաջողութիւն:

Մի՛ մտածեր, որ ուրիշներուն ներկայացող պատեհութիւնները քեզի ալ չեն ներկայանար: Պատեհութիւնը իւրաքանչիւր առողջ եւ տրամաբանող անհատի կ'այցելէ: Բայց երբ զինք դիմաւորողը պատրաստ չգտնէ, խոյս կու տայ անմիջապէս, ուրիշ մը բախտաւորելու համար:

Կեանքի մէջ առիթներ, բաց լուսամուտներ գտնել միշտ կարելի է, եթէ տեսնող աչքեր ունենանք: Յարատեւութիւն, աշխատանք եւ նպատակի հետապնդումը անպայման ճամբայ մը կը բանայ եւ յաջողութեան լոյսը կը ծագի:

Միշտ պատեհութիւններ եւ կարելիութիւններ կան, միայն թէ առանց վարանումի եւ տրտունջի պէտք է մագլցիլ դէպի վերելք, առանց դադարի ու յուսալքումի պէտք է յարատեւել եւ յառաջանալ:

Չենք կրնար սպասել ու ակնկալել, որ մեր կեանքի տեւողութեան կանոնաւոր ընդմիջումներով մեզի ներկա-

յանան պատեհութիւններ, ճամբու երկայնքին դրուած քիլոմէթրի ցուցաբերուն նման:

Պատեհութիւնները մեզի կը ներկայանան, մեզմէ իւրաքանչիւրի կարողութեան, նպատակին եւ յարատեւութեան համաձայն:

Աստուած բոլոր մարդոց տուած է բաւարար կարելիութիւն եւ պատեհութիւն զանոնք երջանկացնելու համար: Չախողութիւնները արդիւնքն են առհասարակ մեր սխալներուն եւ յանցանքներուն:

Օղյերուն համար ոսկի առիթներ եւ պատեհութիւններ ոչինչ կ'արժեն, բայց աշխատասէրն ու յարատեւողը ամենէն չնչին պատեհութիւնները ոսկիի կը վերածէ:

Նայեցէ՛ք ձեր շուրջը, արհեստաւորներէն սկսած մինչեւ ճարտարարուեստի մարդոց: Անոնք ժամանակին իրենց ներկայացող պատեհութիւնները լաւագոյնս օգտագործել զիտցողներն են, որոնք այսօր նախանձելի դիրքի հասած են, օգտակար դառնալով իրենց ընտանիքին, հայրենիքին եւ շրջապատին:

Ներկայացող պատեհութիւններէն օգտուելու յարմարագոյն տարիքն է պատանեկութեան եւ երիտասարդութեան շրջանը:

Ուսումը շարունակելու եւ տեղ մը հասնելու պատեհութիւն մը կայ այսօր, մի՛ փախցնէր առիթը: Անխուսափելի են նիւթական եւ բարոյական դժուարութիւնները, մի՛ յուսահատիր, կամքն ու յարատեւութիւնը կը յաղթահարեն բոլոր խոչընդոտները:

Պատեհ առիթ մը ներկայացած է քեզի, ասպարէզիդ մէջ աւելի զարգանալու եւ յառաջդիմելու, մի՛ արհամարհէր առիթը: Յոգնութենէն ու աշխատանքէն մի՛ վախնար, կեանքիդ նպատակը պէտք է ըլլայ միշտ դէպի յառաջ քալել եւ ներկայացող իւրաքանչիւր պատեհութիւնը օգտագործել:

Ներկայացող պատեհությունները մեզի դեպի աշխատանք կը մղեն: Անոնք որոնք ծանր, երկար եւ յարատեւ աշխատանքէ կը խուսափին, պետք չէ ակնկալեն յաջողութիւն եւ նպատակի իրագործում:

Պատեհութիւնը գիտնալ ու տեսնել նուրբ արուեստ է: Պատեհութիւն մը օգտագործել գիտցողը կը նմանի սերմնացուին, որուն արդիւնաբերութենէն կ'օգտուի ինք եւ ուրիշներ:

Պատեհութիւնը ինքզինքիդ մէջը փնտռէ՛, փոխանակ շրջապատիդ մէջ փնտռելու: Մի՛ սպասեր մեծ պատեհութեանց, օգտագործէ՛ չնչին պատեհութիւնները եւ զանոնք զարգացու:

Դիտել սորվիր: Այն բոլոր պատեհութիւնները որ կեանքիդ ընթացքին կը ներկայանան քեզի, սկզբնաւորութեան, յաջողութեան նոր ճամբայ մը կրնան բանալ դեպի լաւագոյնը:

Մի՛ գղջար կորսուածին համար, օգտուի՛ր նոր ներկայացող պատեհութենէն:

Պատեհութիւնը ամէնէն մեծ խթանող ոյժն է, որ մեզ կը մղէ դեպի աշխատանք եւ յարատեւութիւն:

Միրելի ուսանող, արհեստաւոր հայրենակից, արուեստի սիրահար պատանի կամ երիտասարդ, մարզիկ կամ ֆութպոլիստ, միշտ պատրաստ եղի՛ր, անակնկալօրէն եւ նոյնքան արագ անհետացող պատեհութիւններէն օգտուելու համար:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 38

ՄԻՐԷ՛ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Լ.Մասպանաճեան

Խումբ մը երկսեռ երիտասարդներ արդուզարդի եւ հագուստի բոլոր պահանջքներուն գոհացում տուած ըլլալու գոհունակութեամբ նստած են եւ կը խօսին շարժանկարի, հեռատեսիլի, արուեստագէտներու եւ արդիական պարերու տեսակներու մասին:

Հետաքրքրական է մտիկ ընել զիրենք, որովհետեւ անոնք առանց դժուարութեան եւ ճիգի կու տան անունները հարիւրաւոր դերասան-դերասանուհիներու, ժապաւէններու, ձայնապնակներու, երգիչ-երգչուհիներու, պարերու եւ անոնց հնարիչներուն:

Գոց գիտեն անուշահոտերու, եղունգի եւ մազի ներկերու, գուլպայ եւ փողկապներու, օճառ եւ քրէմներու հարիւրաւոր տեսակներու անունները եւ նոյնիսկ արտադրող երկիրներն ու ընկերութիւնները:

Անոնց մէջէն երիտասարդ մը, որ գրեթէ լուռ նստած էր, եւ ըստ երեւոյթին շատ ալ շահագրգռուած չէր խօսակցութեանց մաս կազմող նիւթերով, սկսաւ ուշի ուշով մտիկ ընել, երբ ներկաները սկսան զիրար վիրաւորելու աստիճան բուռն վիճաբանութեան, շարժանկարի դերասան-դերասանուհիներու մասին:

Երիտասարդը ստիպուած միջամտեց, կանխելու համար հաւանական անախորժութիւններն ու մի գուցէ վիրաւորանքները:

« Եղբայրներ եւ քոյրեր, գրեթէ երեք քառորդ ժամ է ի վեր ձեզ մտիկ կ'ընեմ: Չեմ մեղադրեր ձեզ, որ մօտէն ծանօթացած էք արդիական բոլոր նորոյթներուն: Գոց գիտէք

անունները բոլոր դերասան-դերասանուհիներուն, երգիչ թէ երգչուհիներուն: Արդեօք մեր ժողովուրդի անցեալի թէ ներկայի արուեստագիտուհիներէն քանինե՞րը կը ճանչնանք, որո՞նց անունները գիտէք»:

«Գիտե՞ք եւ ուսումնասիրա՞ծ էք Րաֆֆին ու Աբովեանը, Չօպանեանն ու Թէքէեանը, Վարուժանն ու Սիամանթոն, Ահարոնեանն ու Զարդարեանը: Ծանօ՞թ էք հայ գրողներու, երգիչներու, նկարիչներու, քանդակագործներու, ճարտարապետներու, իմաստասէրներու, պատմաբաններու, բանաստեղծներու եւ գիտուններու»:

«Ուսումնասիրա՞ծ էք մեր փառայեղ անցեալը: Ծանօթացա՞ծ էք մեր թատերագիրներուն, Շիրվանզադէին, Լ. Շանթին, Յ. Պարոնեանին: Լսա՞ծ էք Ադամեաններու, Աբելեաններու, Շահխաթունիի եւ Շահմուրատեանի, Կոմիտասի, Սիւնիի, Ալեմշահի, Կանաչեանի, Խաչատուրեանի եւ Հայաստանի հարիւրաւոր արուեստագէտներու մասին»:

«Գիտե՞ք հայ ժողովուրդի պատմութիւնը, անոր անցեալը»:

Երիտասարդին այս անակնկալ ելոյթը հաճելի չթուեցաւ շատերուն, որովհետեւ անոնց մեծամասնութիւնը անտեղեակ էր Հայոց պատմութեան եւ հայ արժէքներուն: Խօսակցութիւնները վերջ գտան եւ հաւաքոյթը ցրուեցաւ:

Ժողովուրդները իրենց պատմութեամբ կ'ապրին: Ժողովուրդի մը գիտակցութիւնն ու նաեւ հետաքրքրութիւնը դէպի իր անցեալին ու պատմութեան քանի տկարանայ, այդքան աւելի կ'արագանայ անոր այլասերումն ու անհետացումը:

Անցեալ ժամանակներուն թանձր մշուշին եւ լուրթեան տակ պահուած որքան զարմանալի, փառայեղ եւ ահարկու դէպքեր կան:

Պատմութեան ուսումնասիրութիւնը երիտասարդը չափահաս եւ իմաստուն կը դարձնէ, առանց կնճիռներու եւ ալեխառն մազերու:

Հայ արժէքներու եւ Հայոց պատմութեան ուսումնասիրութեամբ եւ ծանօթացումով մեր մէջ կը զօրանայ հայ ապրելու եւ հայ մնալու հաւատքն ու կամքը:

Հայոց պատմութիւնը մեզի կը ներկայանայ բազմակողմանի երեսներով: Հոն կը գտնենք հերոսութիւններ, հայրենասիրութիւն, նուիրում, զոհողութիւն, բարձր սկզբունքներու եւ վեհ նպատակներու իրագործում, երբեմն ձախողութիւն եւ յուսալքութիւն, յաղթանակ եւ պարտութիւն, համագործակցութիւն եւ երկպառակութիւն: Այս օրինակներն ու դէպքերը մեզ կ'առաջնորդեն դէպի բարձրացում:

Անցեալի մեծ ու բարի, առաքինի եւ խելացի, զոհուող ու նահատակուող մարդոց կեանքը երիտասարդութեան որպէս օրինակ կը ծառայէ:

Պատմութիւն եւ կենսագրութիւն՝ մարդոց նկարագրի զարմանալի էջերը կը բանան մեր առջեւ: Մեծ ու նուիրուած մարդոց կեանքի ուսումնասիրութիւնը եւ անոնց հիանալի գործերու երեւակայութիւնը մեզ կը քաջալերեն եւ կը յուսադրեն եւ այս ձեւով մենք կը սորվինք դժբախտութեանց եւ ձախողութեանց, յաջողութեանց եւ յաղթանակներու պատճառները եւ կ'եզրակացնենք թէ ինչ պէտք է ընէին եւ այսօր ինչ պէտք է ընենք մենք:

Ապրելու եւ տեւականանալու համար մեր նոր սերունդի անհրաժեշտ եւ կենսատու սնունդ հայթայթող շտեմարանը պէտք է ըլլայ Հայոց պատմութիւնը: Անցեալը մոռնալ եւ ուրանալ, անտեսելն ու արհամարհելը հոմանիշ են ներկայի ուրացումներուն եւ դասալքութեան:

Հայ երիտասարդ, *Միքէ՛ եւ Ուսումնասիրէ՛* Հայոց
պատմութիւնը: Հոն գանձեր կան պահուած:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 43

ԿԱՂԱՆԴԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Լ.Մասպանաճեան

Մանուկները Աստուծոյ այլակերպուած հրեշտակներն են, որոնց մազերուն հիւսկերուն մէջ արեւի ճառագայթները հանդարտօրէն կը նիւրհեն:

Անոնց աչքերուն մէջ Աստուծոյ մեծութիւնն ու շքեղութիւնը կը ճառագայթեն:

(Տիբրնսարն)

Մանուկը կեանքի յորձանքին մէջ կը մտնէ ծիծաղով: Կեանքը անոր համար հաճոյք եւ խաղ է: Մանուկները ընտանիքի պաշտելիներն են:

Կաղանդը առաւելաբար մանուկները ուրախացնելու համար է:

Հեթանոսական շրջանէն մնացած այս գեղեցիկ ու իմաստալից տօնակատարութիւնը նուիրագործուած է քրիստոնէական բարձր ոգիով եւ ըմբռնումով:

Ապրելու եւ տեսականալու կամքին տօնն է Կաղանդը:

Իր խորհրդանիշը մշտադալար ծառն է, որուն շուրջ հաւաքուած ընտանիքի մեծ ու փոքր անդամները զիրար կ'ողջունեն եւ բարի մաղթանքներով ու յոյսերով կը դիմաւորեն նոր տարին:

Գոյնզգոյն լոյսերով եւ գոյներով զարդարուած Կաղանդի ծառին մանուկի հոգիին առթած ուրախութեան եւ երջանկութեան չափ կը տպաւորուի նաեւ չափահասին ու ծնողքին հոգին:

Այդ շքեղութեան ու խրախճանքի մէջ պահ մը երեւակայութեանդ մէջ մերկացուր ծառը իր բոլոր շինծու զարդարանքներէն, այդ ծառին մէջ կը տեսնես ձմրան

հովերուն եւ ձիւնին տոկալով գարնան հետ վերածաղկող կեանքը:

Մենք ենք, որ կը հասկնանք ու կը զգանք զայն իր ամբողջական իմաստով, խորհուրդով, իր ուրախութեամբ եւ տխրութեամբ:

Ոչ մէկ ժողովուրդ մեզմէ աւելի պէտքը զգացած է Կաղանդին, երջանիկ, բարի, ապահով եւ ճոխ կաղանդին:

Հայ ժողովուրդը քանի կաղանդներ անցուցած է առանց լոյսի եւ ծուխի, առանց խայտացող մանուկներու: Բայց այդ օրերուն իսկ ապրելու կամքը դարերու խորէն եկող անխորտակելի ոյժ մը եղած է ու մեր մաքառումը եղած է մեծ ու եղերական:

Մեր նախնեաց ապրելու ու միշտ դալար մնալու կամքի ու պայքարի, լոյսի ու հաւատքի շնորհիւ է, որ կրկին մեզի առիթ կ'ընծայուի Կաղանդի ծառին շուրջ բոլորուիլ եւ դիմաւորել Նոր Տարին:

Հայ մանուկներ եւ երիտասարդներ, որքան բախտաւոր էք այսօր: Ձեր հարազատներու գիրկին եւ տաքուկ տուններու մէջ կը վայելէք սեր ու գուրգուրանք: Կ'ակնկալէք ու կը պահանջէք այն ամէնը, որ ձեզի հաճոյք կը պատճառէ:

Ձեր ծնողքները անկարելին կը փորձեն ձեզ երջանկացնելու եւ ուրախացնելու համար: Հայ ծնողքի իր զաւակներուն երջանկութեան եւ բարօրութեան համար յանձն առած զոհաբերութեան ու նուիրումի աստիճանաչափին մօտեցող ուրիշ ծնողներ կա՞ն արդեօք աշխարհի վրայ:

Թողունք, որ Կաղանդի ծառին շուրջ հաւաքուած տատիկն ու մամիկը մերկացնեն ծառը եւ անոր դալար ճիւղերուն մէջ տեսնեն մեր ցեղի կենսունակութեան գաղտնիքը: Պահ մը ձգենք, որ ծնողքները ձեր ուրախութեամբ երջանկանան ու յուսադրուին:

Հայ պատանի եւ երիտասարդ, դուն ալ պահ մը մէկդի ձգէ խաղալիքներն ու նուէրները, հաճոյքն ու վայելքը եւ ուշի ուշով դիտէ ծառը եւ կէս գիշերէն վերջ ձեզի այցելող Կաղանդ Պապուկը:

Իմաստ մը, պարագայ մը ուղղուած ձեզի չէ՞ք գտներ այդ բոլորին մէջ: Այդ գեղեցիկ մթնոլորտը քեզի յստակօրէն կը պարզէ զոհողութեան, ծառայութեան, սիրոյ եւ հայկականութեան չորս կարեւոր պատգամները:

Հայկական բոլոր գեղեցիկ եւ սքանչելի գործերը եւ ստեղծագործութիւնները արդիւնք են վերոյիշեալ չորս պատգամներու գործադրութեան:

Մի՛ մոռնար, որ հայ ես: Ամբողջ կեանքիդ ընթացքին սիրէ՛ հայրենիքդ ու եկեղեցիդ, սիրէ՛ ծնողքդ ու ցեղակիցներդ:

Միրոյ եւ ծառայութեան զգացումն է, որ քեզ պիտի մղէ զոհողութեան եւ նուիրումի, հայ մնալու եւ հայ ապրելու կամքն ու հաւատքը քեզ պիտի զօտեպնդէ եւ պիտի ապահովէ մշտնջենական Հայկական Կաղանդը:

* * *

«Արեւելք Մարգաշխարհ» Ե. տարի, թիւ 44

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ողջո՛յն Նաւասարդեան Խաղերուն	
Ա. Վրամեան.....	5
2. Մեր Ուղին	
Պ. Միսիրեան.....	9
3. Շուէտական Մարմնամարզի Մուտքը Հայոց Մէջ	
Կարօ Շահինեան.....	13
4. Զօրաւոր Ըլլալ	
Պ. Միսիրեան.....	17
5. Ֆիզիքական Դաստիարակութիւն	
Շաքէ Անտիլեան.....	20
6. Անձնուէր Ղեկավարներ	
Կարօ Շահինեան	23
7. Մարզական Մամուլի Կարեւորութիւնը	
Լ. Մասպանաճեան	25
8. Զայն Բարբառոյ Յանապատի	
Կարօ Շահինեան	28
9. Հ.Ս.Ը.Մ. Ոյժ Կենսունակութեան	
Լ. Մասպանաճեան	31
10. Յիշե՛՛ Մարզիկ	
Ե.	35
11. Կոթողը	
Լ. Մասպանաճեան	37
12. Մարմնակրթութիւնը Սուրիոյ Մէջ	
Լ. Մասպանաճեան	40

13. Յարատևություն	
Լ. Մասպանաճեան	43
14. Հ.Մ.Ը.Մ.ի Մարգարան-Պարտեզը	
Լ. Մասպանաճեան	46
15. Կարգապահություն	
Լ. Մասպանաճեան	49
16. Նկարագիր	
Լ. Մասպանաճեան	52
17. Ազնիւ Հոգի Եւ Մշակուած Միտք	
Լ. Մասպանաճեան	55
18. Առողջություն	
Լ. Մասպանաճեան	58
19. Մի՛ Վհատիր	
Լ. Մասպանաճեան	61
20. Յաջողութեան Պայմանները	
Լ. Մասպանաճեան	64
21. «Արեւելք Մարգաշխարհ»ի Տարեդարձին Առթիւ	
.....	67
22. Երիտասարդութիւնը Միշտ Պատնէշի Վրայ	
«Կամք»	70
23. Դաստիարակություն	
Լ. Մասպանաճեան	73
24. Սկաուտութեան Դերը Հ.Մ.Ը.Մ.-ին Ներս	
Լ. Մասպանաճեան	76
25. Փոքր Բաներ	
Լ. Մասպանաճեան	79

26. Զոհողութիւն Եւ Կամք	
Լ. Մասպանաճեան	82
27. Հ.Ս.Ը.Մ.ի Քառասնամեակը	
Լ. Մասպանաճեան	85
28. Ինչ Որ Կը ցանենք, Չայն Պիտի Հնձենք	
Լ. Մասպանաճեան	88
29. Պարտականութիւն	
Լ. Մասպանաճեան	90
30. Զրոյց՝ Հ.Ս.Ը.Մ.-ական Եղբօրս Հետ	
Գեորգ Տօնապետեան	94
31. Հ.Ս.Ը.Մ.-ի Փառատօնին Առթիւ Այս Դրօշը	
Սինաս Թէօլէօլեան	97
32. Հ.Ս.Ը.Մ.-ը Ծնունդ Ապրիլ 24ին	
Հ.Ս.Ը.Մ.-ականը	102
33. Մայիս 28 Եւ Ազատատենչ Երիտասարդութիւնը	
Մարգպետ	104
34. Պահէ՛ Չայն Բարձր Եւ Անաղարտ	
Լ. Մասպանաճեան	107
35. Կարդա՛, Միշտ Կարդա՛	
Լ. Մասպանաճեան	110
36. Դպրոցական Արձակուրդի Առթիւ	
Լ. Մասպանաճեան	113
37. Հ.Ս.Ը.Մ.-ի Մեծ Ընտանիքը	
Լ. Մասպանաճեան	116
38. Անյեղի Սկզբունքներ	
Լ. Մասպանաճեան	119

39. Հ.Մ.Ը.Մ.-ը Եւ Անոր Գաղափարականութիւնը Մուշեղ Իշխան	122
40. Երգերդ Հայացան, Իսկ Լեզուդ... Լ. Մասպանաճեան	126
41. Պէտք է Այրիլ, Ոչ Թէ Միսս Լ. Մասպանաճեան	129
42. Հա՛յ Պատանի Միրէ՛ Հայրենիքդ Եւ Ազգդ Լ. Մասպանաճեան	132
43. Անմահ Հերոսը Լ. Մասպանաճեան	135
44. Ս. Օգն. Խաչի Արծուիկները Լ. Մասպանաճեան	138
45. Սերունդէ Սերունդ Լ. Մասպանաճեան	141
46. Պատրաստ, Մի՛ շտ Պատրաստ Լ. Մասպանաճեան	144
47. Յ. Հինդլեանի Մահուան Տասնամեակին Առթիւ Լ. Մասպանաճեան	147
48. Միրէ՛ Գործդ Լ. Մասպանաճեան	150
49. Յանդուգն Եւ Քաջասիրտ Եղի՛ր Լ. Մասպանաճեան	153
50. Նոր Տարուան Սեմին Լ. Մասպանաճեան	156
51. Ընտանեկան Կրթութիւնը Լ. Մասպանաճեան	159

52. Աւարայրի Նահատակներու Կտակը	
Լ. Մասպանաճեան	162
53. Մէկ Նպատակ, Մէկ Իտէպ	
Լ. Մասպանաճեան	165
54. Հ.Ս.Ը.Մ.-ի Քառասնամեակին Առթիւ	
Լ. Մասպանաճեան	168
55. Գուրգուրա՛նք Այս Միութեան	
Ս. Մկրտիչեան	171
56. Ինչ Որ Ցաննես՝ Այդ Կը հնձես	
(Ապրիլ 24-ի Առթիւ)	
Լ. Մասպանաճեան	174
57. Ծառայութեան Ոգին	
Լ. Մասպանաճեան	178
58. Գիտնանք Գուրգուրալ Անոնց Վրայ	
(Մայրերու Օրուան Առթիւ)	
Լ. Մասպանաճեան	181
59. Պէտք է Ամուր Կառչիլ Մայիս 28-ին	
Լ. Մասպանաճեան	184
60. Հաւատարիմ Ընկերներդ Գիրքերն Են	
Լ. Մասպանաճեան	187
61. Միշտ Պարկեշտ Եւ Ուղղամիտ	
Լ. Մասպանաճեան	190
62. Եղբա՛յր...	
«Մասիս», Հ.Ք.	193
63. Այր Հայրենասէր	
(Հիներուն Պատգամը Նորերուն)	195

64. Սկաուտ Վահանը	
Լ. Մասպանաճեան	198
65. Յոյսը	
Լ. Մասպանաճեան	201
66. Հայրենիք Եւ Հայրենասիրութիւն	
Լ. Մասպանաճեան	204
67. Հայրենիք Եւ Հայրենասիրութիւն (2)	
Լ. Մասպանաճեան	207
68. Ընթերցասիրութիւն	
Լ. Մասպանաճեան	210
69. Ինքնագարգացում	
Լ. Մասպանաճեան	213
70. Քաղցր Տուն	
Լ. Մասպանաճեան	216
71. Հայ Մարզական Միութեանց Դերը	
Լ. Մասպանաճեան	220
72. Հայ Երգն Ու Երաժշտութիւնը	
Լ. Մասպանաճեան	224
73. Պատեհութիւններ	
Լ. Մասպանաճեան	227
74. Միրէ՛ Հայոց Պատմութիւնը	
Լ. Մասպանաճեան	230
75. Կաղանկի Պատգամը Հայ Նոր Մերունդին	
Լ. Մասպանաճեան	234

Կողքի ձեւաւորումը կատարեց՝ Եղբ. Յովիկ Փամփալեան

**Գրաշարութիւնը եւ համակարգչային ձեւաւորումը
կատարեցին՝**

Քոյր Նայիրի Ազարիկեան-Արոյեան

Քոյր Մարինա Զիլ Աբոշեան-Պօղիկեան